ԳՈՒՐԳԷՆ ՀՈՎՆԱՆ

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

891.71 (05) [Ք] 182.65
Յ-86 | Յովհաննէսյան, Գ.
Մաքսիմ Գորկին էկ
[illegible]

Հայ
ԱՍՏԱՆ

Академия наук Армянской ССР
Институт литературы

ГУРГЕН ОВНАН

МАКСИМ ГОРЬКИЙ И АРМЯНСКАЯ КУЛЬТУРА

Издательство Академии наук Армянской ССР
Ереван 1951

891.71,092[Գորկի]
Հ-86

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիա
Գրականության ինստիտուտ

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

A 18265 / 26408

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն
Երևան 1951



М. Горькій

Հայաստանը մեծ ապագա խոստացող երկիր է... Հայաստանի ժողովուրդը թողնում է գործունյա ժողովրդի տպավորություն, որն անկասկած գիտե, թե ինչ է ինքն անում, գիտե, թե ինչպիսի խընդիրներ են սպասում իրեն վճռելու։

Մ. ԳՈՐԿԻ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Դարերի պատմություն ունի հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը:

Այդ բարեկամությունն է՛լ ավելի ամրանում ու զարգանում է, հատկապես 19-րդ դարի սկզբներից սկսած, երբ պարսկական բռնության տակ հեծող Հայաստանի մի մասն ազատագրվում ու միակցվում է Ռուսաստանին: Ռուսական զորքերի հետ Հայաստան են գալիս Պուշկինը, Գրիբոեդովը, Մարլինսկին և ռուս առաջավոր ինտելիգենցիայի շատ ուրիշ ներկայացուցիչներ, որոնք մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայ ժողովրդի կյանքի, նրա հնադարյան, հարուստ կուլտուրայի նկատմամբ:

Հայ ժողովրդի համար սկսվում է մտավոր զարթոնքի նոր շրջան: Պուշկինի, Լերմոնտովի կենդանության օրոք իսկ հայերեն են թարգմանվում նրանց անմահ ստեղծագործությունները: Առաջին անգամ Երևանում է բեմադրվում Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիան: Նոր ստեղծված քաղաքական ու հասարակական իրադրության պայմաններում ավելի են սերտանում հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, ամուր կապեր ստեղծելով այդ ժողովուրդների առաջավոր ու ականավոր ներկայացուցիչների միջև: Ահա երկու ժողովուրդների բարեկամության փայլուն անուններից մի ամբողջ շարք՝ Միքայել Նալբանդյան ու Ալեքսանդր Գերցեն, Գաբրիել Սունդուկյան ու Ալեքսանդր Օստրովսկի, Եղիշե Թադևոսյան

ու Վասիլի Պոլենով, Ալեքսանդր Սպենդիարով ու Ալեքսանդր Գլազունով, Հովհաննես Թումանյան ու Վալերի Բրյուսով, Հակոբ Հակոբյան ու Անատոլի Լունաչարսկի, Ալեքսանդր Շիրվանզադե ու Մաքսիմ Գորկի...

Մեծ է ռուս հասարակական առաջավոր մտքի ազդեցությունը հայ ժողովրդի կուլտուրայի վերածնման ու զարգացման գործում: Հայ մեծանուն գրողներն ու նկարիչները, կոմպոզիտորներն ու արտիստները, գրեթե բոլորն էլ, այս կամ այն չափով կրել են ռուսական կուլտուրայի բարերար ու կենարար ազդեցությունը:

Երկու ժողովուրդների բարեկամության տարեգրության մեջ առանձնակի տեղ է գրավում Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին: Սովետական ժողովուրդների իսկական բարեկամն էր նա, այդ ժողովուրդների գրականության հանճարեղ առաջնորդը: Հայ առաջավոր ինտելիգենցիայի հետ Գորկին կապեր է ստեղծել դեռևս 1891 թ. իր ստեղծագործական կյանքի առաջին օրերից ու այնուհետև տասնյակ տարիներ, ընդհուպ մինչև իր կյանքի վերջին օրերը, մոտիկից զբաղվել, հետաքրքրվել է հայ ժողովրդի նյութական ու կուլտուրական կյանքով, նրա պայքարի ու վերելքի հարցերով:

«Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան» աշխատության մեջ մենք փորձել ենք ցույց տալ մի կողմից՝ այն խոշոր ու անգնահատելի դերը, որ կատարել է Գորկին հայ կուլտուրայի ուսումնասիրության, արժեքավորման, նրա առաջընթացի խթանման գործում, մյուս կողմից՝ Գորկու բացառիկ հմայքը, նրա մեծ ժողովրդայնությունը հայ իրականության մեջ:

Մաքսիմ Գորկու կապը հայ կուլտուրայի հետ երկու ժողովուրդների ջերմ բարեկամության մի պայծառ օղակն է կազմում: Հայ ժողովուրդը հպարտ է այդ բարեկամությամբ և երախտիքով լի՝ ռուս մեծ ժողովրդի ու նրա հանճարեղ զավակ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու հանդեպ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան վերացրեց դասակարգային և ազգային ճնշումը, արմատապես փոխեց փոքր ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կյանքը: Բոլշևիկների պարտիայի, հանճարեղ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ մեր երկրի ժողովուրդները ստեղծեցին այնպիսի հասարակարգ, որի մասին դարերի ընթացքում երազել են մարդկության լավագույն զավակները: Ստալինյան հնգամյակների ընթացքում ձեռք բերած մեծագույն հաջողությունները՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես և սովետական էկոնոմիկայի մյուս բնագավառներում, ստեղծեցին բոլոր նպաստավոր պայմանները ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց զարգացման համար:

Նախկինում ճնշված ու հալածված ժողովուրդները սովետական կարգերի գոյության մի քանի տասնամյակների ընթացքում ազգային կուլտուրայի, լուսավորու-

նավորապես այդ ժողովուրդների արվեստն ու գրականությունը ռուսական լեզվով մասսայականացնելու համար: Նրա ծառայությունները ուկրաինական, բելոռուսական, հայկական, վրացական, հրեական, լատիշական և սովետական մյուս ժողովուրդների գրականության անսահման մեծ են: Գորկին բազմաթիվ թելերով կապված էր այդ ժողովուրդների առաջավոր գրողների, արվեստագետների և լավագույն ինտելիգենցիայի հետ:

Իր հոդվածներից մեկում Գորկին հանդիմանում է նախառևոլյուցիոն ռուս գրականությանը նրա համար, որ վերջինիս տեսադաշտից դուրս է մնացել Ռուսաստանի մանր ժողովուրդների կյանքը, կենցաղը, գրականությունը և այլն: Գորկին նշում է, որ այդպիսի վերաբերմունք ցուցաբերվել է ոչ միայն այնպիսի ժողովուրդների հանդեպ, որոնք դեռ նոր էին ստեղծում իրենց գիրն ու գրականությունը, այլ նաև այնպիսի ժողովուրդների հանդեպ, որոնք ունեին բազմադարյան կուլտուրա, ինչպես օրինակ՝ հրեաները, վրացիները, հայերը և այլն: Այդ հանգամանքը Գորկին բացատրում է լուսավորության բնագավառում ռուսական ցարիզմի վարած մեծապետական-շովինիստական քաղաքականությամբ: «Չխոսելով այն մասին,— գրում է Գորկին,— որ թաթարները, մերձվոլգյան ֆիննական ցեղերը, մերձկասպյան տափաստանների թուրք-ֆիննական և բոլոր մյուս մարդիկ, որոնց հետ մենք ապրում ենք դարեր, մնացել են հին գրականության տեսադաշտից միանգամայն դուրս, նույնիսկ հին կուլտուրայի մարդկանց— հրեաներին, վրացիներին, հայերին— գրականությունն ընդհանրապես վերաբերվել է համարյա այնպես բթորեն ու ագիտորեն, ինչպես Եվրոպայի գրակա-

նագետները վերաբերվել են և վերաբերվում են մեզ, ռուսներիս»:[1]

Բայց այն, ինչ չէր արել անցյալի ռուս գրականությունը, արեց Գորկին, իր շուրջը համախմբելով Ռուսաստանի առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիային:

Գորկուն, նրա գրական, հրապարակախոսական ու քաղաքական գործունեության ընթացքում, շարունակ քաջալերել, աջակցել ու պաշտպանել են բոլշևիկյան պարտիայի մեծ առաջնորդներ Լենինը և Ստալինը: Իդեոլոգիական բոլոր հարցերում և հատկապես ազգային հարցում Լենինը և Ստալինը հսկայական ազդեցություն են ունեցել Գորկու աշխարհայացքի վրա: Գորկու լավագույն պամֆլետները, ցարիզմի նողկալի քաղաքականության, ազգամիջյան կոտորածների, ինչպես և ազգերի համերաշխության ու համագործակցության վերաբերյալ, գրված են Լենինի և Ստալինի ցուցումներով և իդեական խորը ազդեցությամբ:

Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների աշխատավոր մասսաների միջև բարեկամական սերտ համագործակցություն ստեղծելու ասպարեզում Գորկին հսկայական նշանակություն է տվել ազգային գրականությունների ժողովածուներ հրատարակելու գործին: Եվ իրոք, Գորկու նախաձեռնությամբ հրատարակված ժողովածուները հսկայական նշանակություն են ունեցել այդ իմաստով: Ռուս ընթերցողն առաջին անգամ հնարավորություն է ստացել լայնորեն ծանոթանալու ցա-

---

[1] М. Горький—Литературно-критические статьи, Москва, 1937 г., стр. 396.

րական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների կյանքին ու կուլտուրային, նրանց գեղարվեստական ստեղծագործության սքանչելի նմուշներին։ Դա անգնահատելի մի ներդրում էր ռուսական կուլտուրայի մեջ։

Այդ ժողովածուների հրատարակումն առաջին համաշխարհային պատերազմի և ազգային թշնամանքի մղձավանջային տարիներին բարոյական ու քաղաքական խոշոր մի օժանդակություն էր ճնշված ժողովուրդներին։ Գորկու բարեկամական վերաբերմունքը տարբեր ազգության գրողների, նկարիչների և կոմպոզիտորների նկատմամբ մեծ նշանակություն է ունեցել ազգային կուլտուրաների դեմոկրատական տրադիցիաների խորացման համար և նրանց ավելի սերտ մերձեցմանը ռուս առաջավոր կուլտուրային։

«Ռուս գրողներից և ո՛չ մեկը, թե՛ մինչև Գորկին, թե՛ նրա օրոք և թե՛ նրանից հետո, մեր երկրի տարբեր ազգերի գրողների հետ այնպիսի հաճախակի, սերտ, այնպիսի սիրով ու նրբազգաց շփման մեջ չի գտնվել, ինչպես Գորկին,— գրում է գորկիագետ Ն. Կ. Պիկսանովը։[1]

Առանձնապես սերտ են եղել Գորկու կապերը Անդրկովկասի ժողովուրդների հետ։ Այդ ժողովուրդների ծոցում է առաջին անգամ հնչել Գորկու հանճարի հուժկու ձայնը և այնուհետև էլ տասնյակ տարիներ Գորկու կապերն այդ ժողովուրդների և նրանց գրականության հետ ավելի ու ավելի խորացել ու լայն ծավալ են ընդունել։ Այսպիսով, սկսած իր գրական առաջին քայ-

---

[1] Н. К. Пиксанов — Горький и национальные литературы, Москва, 1946 г., стр. 90.

ջերից մինչև իր կյանքի վերջին օրերը, Գորկին սերտորեն կապված է մնացել Անդրկովկասի ժողովուրդների գրականության, արվեստի և ողջ հասարակական կյանքի հետ։

Անդրկովկասի և նրա ժողովուրդների մասին Գորկին գրել է. «Կարելի է կարծել, որ հենց այդ երկրի վեհասքանչ բնությունը և նրա ժողովրդի ռոմանտիկական մեղմությունը— հատկապես այդ երկու ուժերը խթան հանդիսացան, որ ես թափառաշրջիկից դառնամ գրականագետ»։ [1]

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո Գորկու գրական-կազմակերպչական գործունեությունն ավելի լայն ծավալ ու թափ է ստանում։ Ալեքսեյ Մաքսիմովիչին է պատկանում մի շարք ալմանախների, ժողովածուների, ինչպես և պարբերականների հրատարակման նախաձեռնությունը, որոնց մեջ լայնորեն արտացոլված են ազգային ռեսպուբլիկաների գրականության, կուլտուրայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության աճն ու ծաղկումը։ Իր շուրջը համախմբելով սովետական ժողովուրդների գրողներին, Գորկին հաջողությամբ լուծում է այն պատասխանատու ու պատվավոր խնդիրները, որ այն ժամանակ դրել էր բոլշևիկյան պարտիան սովետական գրականության ու գրողների առաջ։

Սովետական գրողների Համամիութենական առաջին համագումարի նախօրյակին Գորկու նախաձեռնությամբ Մոսկվայում կազմակերպվում են բրիգադաներ

1 „Заря Востока“, № 58, 1931 г.

գրողներից բաղկացած և ուղարկվում ազգային ռեսպուբլիկաները՝ տեղում ուսումնասիրելու ազգային գրականության վիճակը և օժանդակելու նրա զարգացմանը։

Գրողների Համամիութենական առաջին համագումարը, սովետական ժողովուրդների ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական գրականության նվաճումների ամփոփման, նրա հետագա զարգացման ուղիների նշման տեսակետից, պատմական խոշոր իրադրություն հանդիսացավ։ Համագումարին մասնակցում էին ավելի քան հիսուն ազգությունների ներկայացուցիչներ։ Համագումարում զեկուցումներ լսվեցին Ուկրաինայի, Բելոռուսիայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի և մյուս ժողովուրդների գրականությունների մասին։

Գորկին բազմիցս նշել է, որ «Սովետական գրականությունը միմիայն ռուսական լեզվի գրականություն չէ, դա համամիութենական գրականություն է... Եթե անցյալում մենք ունեցել ենք հսկա Պուշկին, այդ դեռ չի նշանակում, թե հայերը, վրացիները, թաթարները, ուկրաինացիները և մյուս ցեղերը ընդունակ չեն տալու գրականության, երաժշտության, նկարչության, քանդակագործության մեծագույն վարպետներ»։[1]

Գրողների Համամիութենական առաջին համագումարում Գորկին մի շարք պատմական մեծարժեք ցուցումներ է անում սովետական ժողովուրդների գրողներին։ Դրանցից ուշագրավ են հատկապես նրա հոյակապ մտքերը ժողովրդական ստեղծագործությունները հավա-

[1] Մ. Գորկի—Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, էջ 311.

քելու, ուսումնասիրելու ու մշակելու մասին: Գորկին ասում է. «Ես դիմում եմ մտերմական խորհրդով, որը կարելի է հասկանալ նաև իբրև խնդիրք ուղղված Կովկասի և Միջին Ասիայի ազգերի ներկայացուցիչներին: Ինձ վրա՝ և ես գիտեմ, որ ո՛չ միայն ինձ վրա— ցնցիչ տպավորություն գործեց աշուղ Սուլեյման Ստալսկին: Ես տեսնում էի, ինչպես այդ ծերունին, անգրագետ, բայց իմաստուն, նախագահության մեջ նստած շշնջում էր, հորինելով իր ոտանավորները և ապա նա, 20-րդ դարի Հոմերոսը զարմանալի կերպով կարդաց իր հորինածը: Խնամքով պահեցեք այն մարդկանց, որոնք ընդունակ են ստեղծելու պոեզիայի այդպիսի մարգարիտներ, որպիսիք ստեղծում է Սուլեյմանը: Կրկնում եմ՝ խոսքի արվեստի սկիզբը ֆոլկլորն է: Հավաքեցեք ձեր ֆոլկլորը, սովորեցեք նրանից, մշակեցեք այն: Ֆոլկլորը չափազանց շատ նյութ կտա թե՛ ձեզ, թե՛ մեզ, Միության բանաստեղծներիս ու արձակագիրներիս: Որքան լավ կճանաչենք անցյալը, այնքան ճիշտ, խորը կերպով և ուրախությամբ կհասկանանք մեր ստեղծող ներկայի նշանակությունը»:[1]

Գրողների այդ համագումարում Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անունից փայլուն ճառով հանդես է գալիս Ա. Ա. Ժդանովը: Նա տալիս է սովետական գրականության սքանչելի բնութագիրը, ցույց է տալիս նրա զարգացման ուղիները ու հեռանկարները: Խոսելով սովետական գրականության ստեղծագործական մեթոդի, սոցիալիստական ռեալիզմի մասին, ընկեր Ժդանովն

[1] Մ. Գորկի—Գրական-հրապարակախոսական հոդվածներ. Երևան, էջ 334—335:

ասում է. «Գեղարվեստական պատկերման ճշմարտությունը, պատկերման կոնկրետությունը պետք է զուգակցվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի ոգով գաղափարական վերափոխման ենթարկելու, դաստիարակելու խնդրին։ Գեղարվեստական գրականության, գրական քննադատության այդ մեթոդն է, որ մենք անվանում ենք սոցիալիստական ռեալիզմի մեթոդ»։[1]

Սովետական գրականության հիմնադիր Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին իր ելույթներում, հոդվածներում ու նամակներում բազմիցս նշել է սոցիալիստական ռեալիզմի նշանակությունը սովետական գրականության զարգացման համար։ «Սոցիալիստական ռեալիզմը,— ասում է Գորկին,— հաստատում է կեցությունը, որպես մի գործողություն, ստեղծագործություն, որի նպատակն է անընդհատ զարգացնել մարդու ամենաարժեքավոր անհատական ընդունակությունները, որպեսզի նա հաղթանակ տանի բնության ուժերի վրա, հանուն իր առողջության ու երջանկության, որպեսզի նա մեծ բախտ ունենա ապրելու այն հողի վրա, որը նա ուզում է իր պահանջների անընդհատ աճման համաձայն մշակել ամբողջովին, որպես մի ընտանիքում միավորված մարդկային հիանալի բնակավայր»։[2]

Սովետական ժողովուրդների գրողների համար Գորկու ստեղծագործական պրակտիկան փայլուն օրինակ ծառայեց սոցիալիստական ռեալիզմի մեթոդին տիրապետելու գործում։

---

1 А. Жданов— Советская литература—самая идейная, самая передовая литература в мире, Москва, 1934 г.

2 Մ. Գորկի— Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949 թ., էջ 319։

A 11/26408 +8.265

Սովետական բազմազգ ժողովուրդների գրականության, արվեստի ու կուլտուրայի հարաճուն զարգացմանն ու առաջընթացին Գորկու մատուցած ծառայություններն անսահման մեծ են, հարուստ ու բազմապիսի:

Այստեղ մեր նպատակն է լուսաբանել սովետական ժողովուրդներին Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մատուցած մեծագույն ծառայությունների միայն մի մասը, որը վերաբերում է նրա դերին ու նշանակությանը Հայ կուլտուրայի զարգացման ու ծաղկման գործում:

Մ. ԳՈՐԿԻՆ ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ 1891—1892 ԹԹ.

Դեռևս գրականությանը միանգամայն անհայտ, երիտասարդ Ալեքսեյ Պեշկովը 1891 թվի աշնանը գալիս է Թիֆլիս և աշխատանքի անցնում Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներում: Պեշկովի երևալը երկաթուղային արհեստանոցներում, հատկապես նրա ակտիվ աշխատանքը բանվորների շրջանում շուտով նկատում է տեղի ոստիկանությունը և նրան գաղտնի հսկողության տակ առնում. մի քանի ամիս հետո, 1892 թվի մայիսի 11-ին, Թիֆլիսի ոստիկանական նահանգային վարչությունը հետևյալն է հաղորդում ոստիկանության գլխավոր վարչությանը. «Ըստ գաղտնի եղանակով հավաքված տեղեկությունների, պարզվեց, որ երկաթուղային արհեստանոցներում 1891 թվի դեկտեմբերի 13-ին, նշումներ կատարողի պաշտոնով, աշխատանքի է ընդունվել նիժնի-նովգորոդցի արհեստավոր Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովը... Պեշկովը 24 տարեկան, շատ բարձր

հասակով, զարգացած մարդ է, ունի հրաշալի ձեռագիր, կրում է ակնոցներ և ունի երկար մազեր»։[1]

Վրաց ու հայ ինտելիգենցիայի և հատկապես տեղական երիտասարդության հետ Ալեքսեյ Պեշկովի ունեցած կապերի մասին այդ նույն զեկուցագրում ասված է. «Բավականին ընդարձակ ծանոթություն է վարում երիտասարդության հետ, բայց ո՞վ է իսկապես այդ երիտասարդությունը— առայժմ դեռ չի պարզված»։[2]

Որքան մեզ հաջողվեց պարզել, Պեշկովի այդ շրջանի հայ ծանոթների թվումն էին գտնվում Սարգիս Վարդանյանը, Նիկիտա Կարա-Մուրզան, Գրիգոր Արծրունին և շատ ուրիշները։

Սարգիս Վարդանյանը 90-ական թվականների սկզբներին սովորում էր Թիֆլիսի գիմնազիայում։ Կլանված լինելով ժամանակի դեմոկրատական-ռևոլյուցիոն խոհերով, նա հաճախում է Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցները և այնտեղ բանվորների մեջ ագիտացիոն աշխատանք կատարում։ Շուտով նա ծանոթանում է Պեշկովի հետ։ Իրենց ծանոթության և առհասարակ Գորկու վաղ շրջանի կյանքի մասին չափազանց հետաքրքիր նորություններ է պատմում Ս. Վարդանյանը 1902 թվին գրած իր հիշողությունների մեջ։

Դրանք առաջին հիշողություններն էին Գորկու՝ Թիֆլիսի շրջանի կյանքից, որ լույս տեսան մամուլում։ Այդ հիշողությունները տպագրվեցին նաև Ռուսաստանի կենտրոնական մամուլում։ Իր այդ հիշողությունների

---

[1] „Революционный путь Горького", Гослитиздат, Москва, 1933 г. стр. 28—29.

[2] Նույն տեղում։

մեջ Սարգիս Վարդանյանը շատ արժեքավոր ու բնորոշ գծեր է վերհիշում Գորկու կյանքից։ Քանի որ այդ հիշողությունները համարյա թե անհայտ են մնացել մեր ընթերցողների լայն շրջանին, ուստի մենք մի փոքր կանգ առնենք դրանց վրա։

Սարգիս Վարդանյանն իր այդ հիշողությունների առաջին մասում պատմում է այն տպավորության մասին, որ նա ստացել է 1891 թվի աշնանը, Թիֆլիսի Պանասեվիչի փողոցում առաջին անգամ հանդիպելով անծանոթ Գորկուն. «Այդ-մի բարձրահասակ, լայնաթիկունք, ատլետիկ կազմվածքով, ռուսական լայն ու փոքր-ինչ կոպիտ դեմքով ու երկար մազերով մի երիտասարդ էր։ Գալիս էր նա հաստատուն ու վստահ քայլերով, կարծես զգում էր, որ ինքը հասարակ մի մահկանացու չէ։ Նա եկավ ու հասավ ինձ։ Ես ավելի լավ կարող էի դիտել նրան. նրա դեմքն ուրախ դեմքերից չէր, իսկ նրա խելացի ու մտասույզ աչքերն արտահայտում էին նրա ուժն ու մեծ կամքի առկայությունը։ Նրա ամբողջ հուժկու կազմվածքն ու բացառիկ դեմքն ակամայից գրավում էին բոլոր անցորդների ուշադրությունը»։[1]

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Գորկին առաջին հայացքից Ս. Վարդանյանին հիշեցնում է Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոս Ռախմետովին։ Ինչպես հայտնի է, ռևոլյուցիոներ Ռախմետովի համարձակ, ուժեղ կերպարը հուզել ու ոգեշնչել է ժամանակի առաջավոր երիտասարդությանը, իշխել նրանց երազանքների։ Ռախմետովը նման չէր իր շրջապատի մարդկանց, նա յուրօրինակ եզակի դեմք էր և ահա առաջին իսկ հա-

[1] „Бакинские известия“, 1903 г. № 13.

յացքից այդպիսի տպավորություն է գործում Գուրգենին Վարդանյանի վրա։ Անտեսելով ցենզուրական խստությունները, Վարդանյանն իր այդ հուշերում գրում է. «Չեռնիշևսկու «Ի՞նչ անել» վեպում այնպիսի հաջողությամբ ուրվագծված Ռախմետովի խրոխտ կերպարանքն ուժեղ տպավորություն է թողել իմ վրա։ Եվ չգիտեմ ինչու, երբ ես տեսա անծանոթ երիտասարդին, ինձ թվաց, թե իմ առջև կանգնած է հոգով հզոր և արտաքինով հուժկու Ռախմետովը։ Անծանոթն անցավ իմ կողքով, բնավ ուշադրություն չդարձնելով իմ վրա, մինչդեռ ես, ընդհակառակը՝ էլեկտրականացածի պես նայում էի նրա հետևից, մինչև որ նա անհետացավ, թեքվելով կողքի փողոցը»։

Այդ հանդիպումից մի քանի օր հետո Սարգիս Վարդանյանը ծանոթանում է Ս. Պեշկովի հետ։ Կարճ ժամանակում նրանք այնքան են մտերմանում, որ մի քանի ուրիշ ընկերների հետ միանալով մի գետնափոր բնակարան են վարձում և սկսում են ապրել միասին։ Խոր տպավորություն է թողնում Վարդանյանի վրա դեռևս գրականության անծանոթ Պեշկովը։ «Անկեղծությունը, — գրում է Վարդանյանը, — անմիջականությունը և արհեստականության բացակայությունը նրա համակրելի բնավորության անբաժան մասն էին կազմում։ Նա շատ հետաքրքիր զրուցակից էր։ Կյանքի այն դաժան դպրոցը, որ անցել էր նա դեռևս մանկությունից, կենդանի և անմիջական տպավորությունների բավականաչափ հարուստ պաշար էր տվել նրան, տպավորություններ, որոնց մասնակից էր դարձնում նաև մեզ՝ ձմեռային եր-

1 „Бакинские известия", 1903 г. № 13.

կար գիշերներին— մենք այն ժամանակ մի քանի հոգով ապրում էինք մի բնակարանում։

Ես չգիտեմ, թե ինչ տպավորություն էր թողնում Մաքսիմիչն ուրիշների վրա իր կարծիքների սրությամբ, շարժ ու ձևերի անհարթությամբ և կամ տեսակետների ու հայացքների յուրահատկությամբ, սակայն ինձ վրա նա թողնում էր ինչ-որ առանձնահատուկ, նոր և մեզ շրջապատողներին բնավ չնմանվող մարդու տպավորություն։ Այդպես թվաց նա ինձ առաջին հանդիպման պահին և այդպես էլ մնաց նա ինձ համար մեր ծանոթության ամբողջ ժամանակաշրջանում»։[1]

Հայտնի է, որ Գորկին իր գրական որոնումների արշալույսին ամբողջովին ոգեշնչված էր Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործություններով։ Նրանց ռևոլյուցիոն ազատագրական իդեաների ուժեղ ազդեցությամբ է սկսվում ձևավորվել Գորկու աշխարհայացքը։ Բայց դրա հետ միասին Գորկին կարդում էր նաև համաշխարհային գեղարվեստական գրականության լավագույն ստեղծագործությունները— Շեքսպիրի, Բալզակի, Գյոթեի, Բայրոնի և մյուս գրողների երկերը։ Վարդանյանն իր հուշերում պատմում է, որ Բայրոնի ստեղծագործությունների ըմբոստ ու ազատատենչ մոտիվները ուժեղ տպավորություն էին գործում երիտասարդ Պեշկովի վրա։ «Նա,— գրում է Վարդանյանը,— սիրում էր Բայրոնին։ Քանի-քանի անգամ կանչել է նա ինձ իր մոտ և առանձնահատուկ ոգևորությամբ կարդացել «Մանֆրեդն» ու «Կայենը»։ Տիտան Մանֆրեդը, որ հպարտորեն իշխում

[1] „Бакинские известия“, № 13, 1903 г.

էր իր տարերքին և անգամ իրեն՝ Ահրիմանին, ցնցում ու ապշեցնում էր նրան իր անսահման վեհությամբ։ Նրա մասին Պեշկովն այլ կերպ չէր խոսում, բայց եթե ոգեշունչ և չափազանց վերամբարձ տոնով։ Նույնպիսի հրճվանքով էր կարդում նաև «Կայենը»։ Այդ ստեղծագործությունների մեջ նրան ապշեցնում էր մեծ բանաստեղծի մտքի թռիչքի արտասովոր համարձակությունն ու թափը։

Եվ այժմ, երբ կենդանացնում եմ իմ հիշողության մեջ 1891 թվականի ձմռան երեկոները գետնափոր նկուղային հարկում, աղքատիկ կահավորությամբ, բայց բավականին ընդարձակ մի սենյակում, երբ նոր ի նորո տեսնում եմ աչքերիս առջև իր ամբողջ մեծությամբ ծառացած Մաքսիմիչի հուժկու կերպարանքը, Մաքսիմիչի, որ պատմում էր իր կրած նեղությունների ու թափառումների անծայրածիր Ռուսաստանում, երբ նորից հիշում եմ նրա պատմածներն իր ապրած աղքատության, զրկանքների, պայքարի ու տառապանքների մասին, ապա ինձ համար հասկանալի է դառնում Բայրոնի նկատմամբ նրա խանդավառ զմայլանքը»։[1]

Ուսանողական շրջանից սկսած՝ Ս. Վարդանյանն իրեն նվիրում է մանկավարժական գործունեության։ Հայ իրականության մեջ նա հանդիսանում էր ռուս գրականության ու լեզվի օրինակելի դասատու և աչքի ընկնող կուլտուրական գործիչ։ Տասնյակ տարիներ շարունակ ուշադիր հետևելով Գորկու ստեղծագործ հանճարին, նա չի մոռանում երբեք վաղ շրջանի Պեշկովին, որի հետ այնպես մտերմորեն կապված էր ինքը։

[1] „Бакинские известия“, 1903 г., № 13.

Գորկու հոբելյանի առթիվ 1928 թվին նորից անդրադառնալով տասնյակ տարիներ առաջ Պեշկովի մասին հրատարակած իր այդ հիշողություններին՝ Վարդանյանը նոր, չափազանց կարևոր դեպքեր է վերհիշում Պեշկովի հետ ունեցած իր մտերմության մասին։ Վարդանյանը գրում է. «Պետք է նշել, որ այն ժամանակները ես մեծապես տարված էի թատրոնով և Պեշկովի համար հաճախ արտասանում էի Գոգոլի «Խելագարի հուշատետրից», Համլետի «Լինել թե չլինել» մենախոսությունը և այլն։ Այս ամենի ազդեցության տակ էր, որ նա գրեց ինձ համար «Խելագարի մենախոսությունը»։ Երբ 1902 թվին ես հանձնեցի իմ հոդվածը քաղ. Տոտոմյանին՝ «Բակինսկիե Իզվեստիա» թերթի խմբագրին, նա խնդրեց ինձ ամբողջ մենախոսությունը հանձնել իրեն՝ տպագրելու համար։ Ես մերժեցի, մի կողմից՝ այն պատճառով, որ չունեի հեղինակի համաձայնությունը, մյուս կողմից էլ, որովհետև այդ դեռևս անփորձ գրչի մի արտադրություն էր։ Հետագայում քաղ. Տոտոմյանն ինքն էր դիմել Մ. Գորկուն՝ տպագրելու թույլտվության միջնորդությամբ, սակայն նա ևս մերժել էր, պատասխանելով, որ այդ սոսկ մի գրչի խաղ էր և ուրիշ ոչինչ»։[1]

Մենք հնարավորություն չունենք այստեղ անդրադառնալու Վարդանյանի հիշողությունների մյուս կարևոր մասերին։ Նշենք միայն, որ այդ հիշողությունները չափազանց արժեքավոր փաստաթուղթ են հանդիսանում Գորկու վաղ շրջանի կյանքի վերաբերյալ։ Այդ հիշողությունները կարևոր են նաև այն տեսակետից,

[1] «Խորհրդային Հայաստան», 1928 թ., № 37։

որ դրանք Գորկու նախագրական կյանքին վերաբերող առաջին հիշողություններն են, որոնք լույս են տեսել 900-ական թվականների սկզբներին և կարևոր ու բնորոշ վկայություններ են պարունակում Գորկու մասին։ Այդ նույն 900-ական թվականներին էլ այդ հիշողությունները ուղարկվել են Գորկուն. նա ծանոթացել է նրանց բովանդակությանը, և նրա հետագա նամակներում հիշատակումներ կան այդ մասին. այս հանգամանքն էլ ավելի արժեքավոր է դարձնում Վարդանյանի հիշողությունները՝ նրանց մեջ նկարագրված դեպքերի ճիշտ շարադրման տեսակետից։

* * *

Գորկու՝ Թիֆլիսի վաղ շրջանի հայ ծանոթներից և ընկերներից է նաև Նիկիտա Մակարովիչ Կարա-Մուրզան։ Կարա-Մուրզաների ընտանիքը հայ իրականության հանրածանոթ ընտանիքներից էր։ Բավական է նշել, որ Նիկիտա Կարա-Մուրզայի եղբայրը՝ Քրիստափոր Կարա-Մուրզան եղել է հայ խոշորագույն կոմպոզիտորներից մեկը։ Ինքը՝ Նիկիտա Կարա-Մուրզան, նախառևոլյուցիոն շրջանի հայ առաջավոր, դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից մեկն էր։ Դեռևս անցյալ դարի 80-ական թվականների վերջերից և 90-ական թվականների սկզբներից Ն. Կարա-Մուրզան հայ գրողների լավագույն ստեղծագործությունների իր բավականին հաջող թարգմանություններով մատչելի է դարձնում ռուս ընթերցողների լայն շրջաններին։ Նա ռուսերենի է թարգմանել հայ խոշոր կլասիկների՝ Րաֆֆու, Շիրվանզադեի, Աղայանի, Փափազյանի վեպերը, վիպակներն ու պատմվածքները և հրապարակել իր ժամանակի ռու-

սական մամուլում, ապա նաև՝ առանձին գրքերով։ Նա բազմաթիվ հոդվածներ ունի տպագրված ռուսական մամուլում՝ հայ գրողների և առհասարակ հայ կուլտուրայի զանազան հարցերի վերաբերյալ։ Մեծ են Ն. Կարա-Մուրզայի ծառայությունները հայ և ռուս ժողովուրդների մերձեցման, կուլտուրական կապերի ամրապնդման տեսակետից, ռուս ժողովրդին հայ կուլտուրային, հայ հարուստ գրականությանը ծանոթացնելու տեսակետից։

Սկսած անցյալ դարի 80-ական թվականներից՝ Ն. Կարա-Մուրզան երկար տարիներ շարունակ աշխատել է Անդրկովկասի երկաթգծում։ Այդ աշխատանքը նրան լայն հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալ Թիֆլիսի բանվորների հետ և գրել նրանց կյանքից մի շարք հոդվածներ։ Նա կարողանում է կապվել և ռևոլյուցիոն բանվորական շարժման հետ ու ապա բոլշևիկյան պարտիայի այնպիսի ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են Սերգեյ Յակովլևիչ Ալլիլուևը, Վանո Ստուրուան և շատ ուրիշներ, որոնք հետագայում բարձր գնահատական էին տվել Ն. Կարա-Մուրզայի նախառևոլյուցիոն շրջանի աշխատանքներին, նրա՝ բանվորական շարժմանը մատուցած աշխատանքներին։

Նիկիտա Կարա-Մուրզան Մաքսիմ Գորկու հետ ծանոթացել է 1891 թվին, Թիֆլիսում։ Այդ նույն թվականին նա Գորկու հետ միասին աշխատել է Օ. Վ. Կայդանովայի ժողովրդական գրադարանում և ապա նրա հետ հաճախակի հանդիպումներ է ունեցել նարոդովոլեց Դ. Ջիտաձեի բնակարանում։ Երբ 1903 թվականին Գորկին իր ընտանիքով գալիս է Թիֆլիս, Ն. Կարա-Մուրզան նորից հանդիպում է Գորկուն և նրա հետ ճանապարհոր-

դում երկաթուղով։ Նույն 1903 թվականին Գորկու մասին գրած իր հիշողությունների մեջ Նիկիտա Կարա-Մուրզան նշում է, թե ինչպես Գորկին հետաքրքրվում էր հայ և վրաց ժողովուրդների կյանքով, նրանց գրականությամբ և գրողներով։ «Եվ այն ժամանակ, և հետո,—գրում է Կարա-Մուրզան իր այդ հիշողությունների մեջ,— ինձ վիճակվել է հանդիպել Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովի հետ և միշտ էլ նա համակրությամբ է վերաբերվել տեղական ժողովուրդների հանդեպ ու հետաքրքրվել նրանց կյանքով։

«Այն ամառ, երբ Մաքսիմ Գորկին գտնվում էր Թիֆլիսում, ինձ հաջողվեց տեսնվել նրա հետ և ճանապարհորդել միասին երկաթուղով։ Նա աշխուժորեն վերհիշում էր Թիֆլիսն իր ամբողջ շրջակայքով և իր անցկացրած կյանքն այնտեղ։ Նա հարցուփորձ արեց ինձ ընդհանրապես տեղական կյանքի մասին, հետաքրքրվելով վրացիների և հայերի գրականությամբ, ցանկանում էր իմանալ լավ գրողների անունները և խնդրեց իրեն ուղարկել այդ գրողների ստեղծագործությունների թարգմանությունները»։[1]

Այդ ժամանակից անցնում են տարիներ։ Գորկու անունը հիշատակվում է համաշխարհային մեծանուն գրողների շարքում։ Ն. Կարա-Մուրզան, որ մեծ ուշադրությամբ հետևում էր Գորկու կյանքին ու ստեղծագործություններին, հրճվում էր նրա հաջողություններով։

1916 թվին բանաստեղծ Վալերի Բրյուսովը գալիս է Կովկաս՝ դասախոսություններ կարդալու հայկական պոեզիայի մասին. Ն. Կարա-Մուրզան Թիֆլիսում նրա

[1] „Новое обозрение", 1903 г. № 6559.

հետ ունեցած զրույցի ժամանակ իմանում է, որ Մաքսիմ Գորկին Պետրոգրադում տպագրության է պատրաստում հայ գրականության նվիրված գեղարվեստական մի ընդարձակ ժողովածու, որի մեջ պիտի զետեղվեն հատկապես հայ գրականության նորագույն շրջանի արձակ և չափածո երկերից ընտիր նմուշներ։

Իմանալով այդ մասին՝ Ն. Կարա-Մուրզան 1916 թվի փետրվարի 6 թվակիր մի նամակով դիմում է Մաքսիմ Գորկուն և խնդրում նրան, որ, եթե միայն ուշ չէ, իրեն նույնպես մասնակից դարձնի հայ գրականության ժողովածուի թարգմանությունների գործին։ Միաժամանակ Կարա-Մուրզան հայտնում է, որ ինքն արդեն բավականին թարգմանություններ ունի կատարած հայ գրողների՝ Րաֆֆու, Ղազարոս Աղայանի, Վրթանես Փափազյանի, Բաշինջաղյանի և մյուս գրողների ստեղծագործություններից։ Այդ նույն նամակում, ի միջի այլոց, կարդում ենք հետևյալ տողերը. «Հաճույքով եմ հիշում միշտ այն ժամանակը, երբ Ձեզ հետ միասին աշխատում էի Կալդանովայի գրադարանում և հանդիպում էի Ձեզ՝ իմ ընկերներ Ցեդլայի, հանգուցյալ Զիտաձեի և ուրիշների շրջանում»։

Ստանալով Կարա-Մուրզայի նամակը՝ Գորկին անմիջապես պատասխանում է նրան։ Ահա այդ նամակը.

«Հարգելի Նիկիտա Մակարովիչ.

Հայ գրականության ժողովածուն արդեն տպագրվում է և շուտով վաճառքի կհանվի։ Բոլոր թարգմանություններն այդ ժողովածուի համար կատարված են նորից՝ պ. Վահան Տերյանի ցուցումներով։

Շնորհակալություն իմ մասին Ձեր ունեցած հիշողության համար, ես նույնպես լավ հիշում եմ Ձեզ և իմ ամբողջ կյանքը Թիֆլիսում, իմ հանդիպած բոլոր լավ մարդկանց:

Իսկ ո՞րտեղ է հիմա Ֆեդյա Աֆանասևը:

Եթե ժամանակ ունենաք, հայտնեցեք ինձ նրա հասցեն, նմանապես Ալեքսանդր Մեֆոդևիչ Կալյուժնու հասցեն:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը:

Ա. Պեշկով»

16—2—16 թ.

Գորկու այս նամակն անչափ ուրախություն է պատճառում Կարա-Մուրզային և նրա այն ընկերներին, որոնց հետ անցյալում աշխատել էր Գորկին: 1916 թվի մարտի 1-ին Կարա-Մուրզան մի ընդարձակ նամակով պատասխանում է Գորկուն. «Շնորհակալություն Ձեզ լավ նամակի համար,— գրում է Կարա-Մուրզան,— ես խիստ ուրախացա, որ դուք չեք մոռացել ինձ և բոլոր նրանց, ովքեր վառ հիշում ու սիրում են Ձեզ»: Իր այդ նամակում նա նորից վերհիշում է Թիֆլիսում Գորկու հետ անցկացրած օրերը: Անդրադառնալով ժամանակակից հարցերին՝ նա մանրամասն պատմում է հայ գաղթականների և առհասարակ այն կոշմարային վիճակի մասին, որի մեջ գտնվում էր հայ ժողովուրդն այդ ժամանակ: Խոսելով ազգերի համերաշխության ու բարեկամության մասին՝ Կարա-Մուրզան բացառիկ նշանակություն է տալիս այն մեծ աշխատանքին, որ տարվում էր Ռուսաստանում հայ և ռուս ժողովուրդների եղբայրական կապի մերձեցման համար: «Առանձնապես

ուրախալի է, որ հայ ժողովրդի ապրած այս ծանր օրերին լավագույն ռուս մարդիկ իրենց բարի խոսքով ու գործով արձագանքեցին նրա տանջանքներին։ Շնորհակալություն Ձեզ դրա համար։ Ձեր և ուրիշների նախաձեռնած ժողովածուի գործը գուցե խթան դառնա, որ տրադիցիաներով, կենցաղով և սրբություններով պատմականորեն իրար հետ կապված երկու եղբայրական ժողովուրդները մերձենան ու իրար ճանաչեն»։ Նամակի վերջում Կարա-Մուրզան գրում է. «Կարդում եմ Ձեր գրվածքները և մտքով ապրում Ձեզ հետ»։

Կարա-Մուրզան մինչև իր կյանքի վերջին օրերը նամակագրական կապ է պահպանել Գորկու հետ։ Գորկուն ուղղած նրա նամակների մեջ առանձնապես ուշագրավ է 1928 թվի հուլիսի 18-ին գրված նամակը։ Իր այդ նամակում նա ջերմորեն ողջունելով Գորկուն՝ նրա հոբելյանի առթիվ, միաժամանակ հայտնում է, որ այդ հոբելյանը մի նշանավոր տոն է հանդիսանում ոչ միայն ռուս ժողովրդի, այլև Սովետական Միության բոլոր ժողովուրդների համար։ Այնուհետև շարունակելով իր նամակը, Կարա-Մուրզան գրում է, որ ինքը լսել է, թե Գորկին մտադիր է ճանապարհորդել Սովետական Միության զանազան վայրերը, այդ թվում նաև Անդրկովկաս. այս առթիվ նա խնդրում է Գորկուն, որ Ադրբեջան և Վրաստան այցելելուց հետո անպատճառ այցելի նաև Սովետական Հայաստան։ Նա հայտնում է, որ հայ ժողովուրդն անչափ ուրախ կլինի տեսնելով մեծ գրողին իր ռեսպուբլիկայում, որ հայ ժողովուրդը սովետական իշխանության օրոք հսկայական նվաճումներ է ձեռք բերել, որ նա կարդում ու սիրում է մեծ գրողի ստեղծագործությունները։

Ինչպես հայտնի է, Գորկին այդ նույն թվին Անդրկովկաս գալով՝ այցելեց նաև Սովետական Հայաստան:

Նիկիտա Կարա-Մուրզայի կինը՝ Կլարա Կարլովնա Կարա-Մուրզան, ամուսնու մահից հետո գրած իր հուշերի մեջ նշում է. «Գորկին Նիկիտա Մակարովիչ Կարա-Մուրզայի սիրելի գրողն է եղել: Նա հոգատար կերպով հավաքում ու պահում էր նրա գրքերը, հաճախակի ինձ և մեր երեխաների համար բարձրաձայն կարդում էր նրա պատմվածքները: Նիկիտա Մակարովիչի գրասեղանի վրա, ապակեծածկ շրջանակի մեջ միշտ դրված էր ռուս մեծ գրողի լուսանկարը: Նիկիտա Մակարովիչն ինձ և երեխաներին հաճախ պատմում էր Գորկու հետ ունեցած իր առաջին հանդիպման մասին և այն հանդիպումների մասին, որ ունեցել է նրա հետ հիվանդ Ջիտաձեի անկողնու մոտ: Կենդանի ուշադրությամբ, համակրանքով ու սիրով նա հետևում էր Գորկու ամեն մի քայլին և վրդովվում էր ցարական ոստիկանության դեմ՝ Գորկուն հետապնդելու ամեն մի տեղեկության առթիվ: Այդ սերը Գորկու հանդեպ Նիկիտա Մակարովիչը պահպանեց մինչև իր կյանքի վերջին օրերը: Նա խնամքով պահպանում էր «Պրավդայի» և «Իզվեստիայի» համարները, որտեղ տպագրվում էին Գորկու հոդվածները, ճառերը կամ Գորկու մասին:

Վերջին նրա հանդիպումը Գորկու հետ տեղի ունեցավ 1931 թվի ամռանը Մոսկվայի մոտ, Գորկու ամառանոցում: Գորկին նրան ընդունել էր սիրալիր և սրտաբաց, երկար զրուցել էր նրա հետ, հարցրել Թիֆլիսի իր հին բարեկամների մասին, մասնավորապես Կալյուժնու մասին»:

* * *

Մաքսիմ Գորկու հայ ծանոթների թվին է պատկանում նշանավոր հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին: Արծրունու հետ Գորկին ծանոթացել է 1891—1892 թվականներին:

Արտակարգ հետաքրքրություն ցուցաբերելով Անդրկովկասի անցյալի ու ներկայի, նրա բազմազգ ժողովուրդների կյանքի ու կենցաղի, գրականության ու արվեստի նկատմամբ, երիտասարդ Գորկին, բնականաբար, մտերմական հարաբերություններ է ստեղծում «Մշակ» թերթի խմբագրության ու նրա խմբագիր Գրիգոր Արծրունու հետ: Գորկին հաճախակի այցելում է «Մշակի» խմբագրությունը, հետաքրքրվում թերթում արծարծվող գրական ու հասարակական հարցերով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ ժամանակաշրջանում Գորկուն առանձնապես հետաքրքրում էր կովկասյան ժողովուրդների բանահյուսությունը: Մաքսիմ Գորկին շարունակում է ռուս հանճարեղ գրողներ Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի թողած սքանչելի տրադիցիաները՝ Կովկասյան ֆոլկլորն ուսումնասիրելու ասպարեզում: Նա սիրով ու հոգատարությամբ հավաքում և գրի է առնում կովկասյան մի շարք ժողովրդական երգեր, հեքիաթներ, առակներ, ավանդություններ, ասացվածքներ և այլն: Այդ գործում նրան օժանդակում էր Գրիգոր Արծրունին:

Հավաքած նյութերի մի մասը Գորկին օգտագործում է «Ավազակները Կովկասում» խորագիրը կրող իր ակնարկներում, որոնք տպագրվել են «Նիժեգորոդսկի լիստոկ» թերթի 1896 թվի մի շարք համարներում (309,

314, 324, 325, 327)։ Այդ ակնարկներում Գորկին հանգամանորեն կանգ է առնում հատկապես Կովկասի 19-րդ դարի վերջին շրջանի երեք նշանավոր «ավազակների», այն է՝ Նաբու, Քերիմի և Սամմատի շուրջը հորինված լեգենդների ու պատմվածքների վրա։ Ըստ ժողովրդական ստեղծագործությունների՝ այդ «ավազակները» խիզախ էին ու կտրիճ, դաժան ու վրիժառու։ Նրանց գնդակներն անվրեպ են և սուրը՝ պատյանից դուրս։ Նրանց նժույգները եղնիկի պես սլանում են ահռելի անդունդների նեղ արահետներով, արհամարհելով ամեն տեսակի դժվարություններ ու վտանգներ։ Նրանք երբեք ծունկ չեն չոքում թշնամու առաջ, երբեք չեն մեղանչում իրենց արարքների համար։ Այդ հատկությունները նահապետական կյանքով ապրող լեռնականների մեջ մի կողմից առաջացնում էին ահ ու սարսափ, մյուս կողմից՝ հրճվանք ու հիացմունք։

Ադրբեջանի անցյալի, ինչպես և սովետական շրջանի գրողներն իրենց ստեղծագործություններում Նաբուն և Քերիմին պատկերել են, որպես աշխատավոր գյուղացիության շահերի համար պայքարող կտրիճների, որպես գյուղացիության ընդհանուր շահերի արտահայտիչներ։

«Ավազակները Կովկասում» խորագիրը կրող իր ակնարկաշարի հիմնական նյութը Գորկին հավաքել է Կովկասում եղած ժամանակ, 1891—1892 թվականներին։ Բայց փաստերը վկայում են, որ Կովկասից հեռանալուց հետո էլ Գորկին ուշադիր հետևել է Կովկասի ռուսական և հայկական մամուլին ու այնտեղից նյութեր քաղել իր ակնարկների համար։ Օրինակ, Նաբու սպանության մասին տեղեկությունը նա վերցնում է «Մշակ» թերթից. ինքը՝ Գորկին այս մասին գրում է.

«Ահա հայկական «Մշակ» թերթի թղթակցի բնորոշ պատմվածքը՝ գրված Ուրմիայից, պարսկական այն քաղաքից, որտեղ ապրել և սպանվել է Նաբին: «Գալիս է Նաբին իր ավազակ ընկերոջ տունը Լաոնի գյուղում,— նա սիրահարված էր ընկերոջ կնոջը,— գալիս կողոպտում է բարեկամի ողջ ունեցվածքն ու թանկարժեք իրերը և ասում է նրա կնոջը— «փախչենք միասին»: Կինն ասում է, որ ինքն ամուսին ունի և ուրիշն իրեն հարկավոր չէ: «Այն ժամանակ ես կսպանեմ քո ամուսնուն,— ասում է Նաբին,— կսպանեմ նրան և դու կլինես ազատ ու կդառնաս իմ կինը»: «Ոչ, ասում է կինը, այն ժամանակ դու կստանաս միայն գեղեցիկ կնոջ մի սառը դիակ, քանի որ ես կթունավորվեմ ու կմիանամ իմ ամուսնուն»: Զայրանում է Նաբին, բռնաբարում է նրան ու հեռանում: Գալիս է նրա ամուսինը, և կինը բոլորը պատմում է նրան: Այն ժամանակ նա էլ զայրանում է ու ասում է կնոջը. «Լավ, ես նրանից վրեժ կառնեմ»: Եվ ահա երեկոյան իր ընկերների հետ դարանամուտ է լինում գետի ափին, այն տեղում, ուր Նաբին ամեն օր գալիս էր զբոսնելու: Գալիս է Նաբին և, թեքվելով ջրի վրա, սկսում է լվալ ձեռքերն ու երեսը, և այդ պահին էլ նրա վրա կրակում են: Տեսնում է Նաբին թշնամիներին ու ասում է նրանց. «Ախ, դուք անիծյալներ, այդ դուք ինձ սպանեցիք»: Եվ ինքն էլ դիմում է զենքին: Բայց նրանք մի անգամ էլ կրակում են, և այն ժամանակ նա ընկնում ու մեռնում է»:[1]

Հիշատակելով «Մշակ» թերթի անունը, Գորկին չի նշում թերթի տարեթիվը և համարը: Մեզ հաջողվեց

[1] „Нижегородский листок“, № 309, 1896 г.

գտնել այդ թղթակցությունը «Մշակ» թերթի 1896 թվի ապրիլի 4-ի համարում: Ինչ խոսք, դա մի լուրջ վկայություն է Գորկու 90-ական թվականների հայկական կապերի, ինչպես նաև նրա վաղ շրջանի ստեղծագործությունների սկզբնաղբյուրները պարզաբանելու տեսակետից: Մենք անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ թղթակցությունը, որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա ծանոթանալու նրան, համեմատելու Գորկու տեքստի հետ, պարզելու այն փոփոխությունները, որ մտցրել է Գորկին: Ահա այդ թղթակցությունը.

«Նամակ Պարսկաստանից

Ուրմիա, մարտի 20.

Հինգ օր առաջ մեր երկիրը մի հռչակավոր ավազակապետից ազատվեց: Նաբին սպանված է: Այդ ավազակն ամբողջ Կովկասը սարսափի ենթարկելուց հետո, իր մեծաքանակ ավարով (ասում են, որ 200.000 ռուբլու հարստություն էր բերել իր հետ) մի տարի ի վեր անցել էր Պարսկաստան և քաղաքից երկու ժամ հեռավորությամբ գտնված Լառնի գյուղում հաստատել էր իր բնակությունը: Այդ գյուղը հայտնի ավազակների մի որջ է:

Զանազան պատմություններ սարքեցին իսկույն նրա սպանման մասին, բայց ամենաստույգն այն է, որ նա իր վավաշոտության զոհ գնաց: Նա սիրահարվում է մի ուրիշ ավազակի սիրուն կնոջ վրա և մի օր, նրա մարդու բացակայությամբ, Նաբին մուտք է գործում նրա տունը, զինված, կողոպտում է տան դրամը, արդուզարդը և հետո կնոջը առաջարկում է՝ փախչել միասին:

կինը մերժում է, առարկելով, որ ինքը ամուսնացած լինելով իր ամուսնու հետ՝ ուրիշ ոչ ոքի կին չի կարող դառնալ: «Սիրեմն, ասում է Նաբին, ես կսպանեմ քո մարդուն և այնուհետև դու ազատ կլինես իմ կինը դառնալու»: «Ոչ, այն ժամանակ դու կունենաս մի դիակ քո աչքերի առաջ, փոխանակ մի սիրուն կնոջ, պատասխանում է Թրքուհին աներկյուղ ձայնով, որովհետև ես թույն կընդունեմ և իսկույն կմիանամ իմ մարդուն»:

Պատմում են, որ Նաբին այդ մերժումից զայրացած բռնաբարում է նրան և հեռանում է: Երեկոյան, դժբախտ կնոջ մարդը վերադառնալով՝ տեղեկանում է և որոշում է անպատճառ վրեժ առնել իր թշնամուց: Նա իր մարդկանցով դարանամուտ է լինում գետի ափերում, ուր Նաբին սովոր է եղել երեկոյան ատեն ման գալ, և երբ Նաբին գնում է գետի եզերքը ձեռքերն ու երեսը լվանալու, հանկարծ հրացանի փամփուշտները թափվում են ահարկու ավազակի վրա: Նա դառնում է և տեսնելով իր թշնամիներին՝ գոչում է՝ «Ահ, նամերդլեր, մենի պեոյլե նամերդլիքիլե էօլդյուրդյումուզ» և ուզում է ձեռքը հրացանին ուղղել, բայց գետին է գլորվում՝ դարանակալների երկրորդ անգամ արձակած հրացաններից»:[1]

Ինչպես նկատում է ընթերցողը, Գորկին բաց է թողել թղթակցության ներածական մասը և ուղղակի դիմել է բուն նյութին: Տեքստի մեջ համարյա էական փոփոխություններ չկան: Պահպանված է նաև հայկական բնագրի ոճը, մտքերի հաջորդականությունը: Կասկած չկա, որ Գորկին տվյալ դեպքում ցանկացել է հարազատ մնալ փաստին, արձանագրել Նաբու սպանությունն

---

[1] «Մշակ», № 38, 1896 թ.:

այնպես, ինչպես իրականում տեղի է ունեցել այն, առանց փոփոխելու, առանց խորհրդավոր տեսք տալու դրան։

Այլ կերպ է պատկերել Գորկին իր ակնարկներում Քերիմին։ Նրա մեջ չկա Նաբու դաժանությունը։ Նա խուսափում է սպանություններից, ավերածություններից։ Ժողովուրդը նրա մասին պահպանել է բազմաթիվ պատմություններ, որոնց մեջ գովերգվում է նրա քաջությունը և արդարասիրությունը։ Գորկին գրում է Քերիմի մասին. «Ըստ այն բազմաթիվ պատմվածքների, որ ինձ վիճակվել է լսել նրա մասին, Քերիմը հանդիսանում է հումանիստ մարդ և մերձավորին օգնելու սիրահար, ինչով կարող է»։[1]

«Ավազակները Կովկասում» ակնարկներում Գորկին մեջ է բերում մի շարք լեգենդներ ու պատմվածքներ Քերիմի մասին։ Ինչպես վկայում է Գորկին, այդ լեգենդներից մեկը նրան պատմել է «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին։ Հայտնի է, որ Արծրունին վախճանվել է 1892 թվին, հետևապես Քերիմի մասին լեգենդը նա կարող էր պատմած լինել Գորկուն 1891—1892 թվականներին։ Գորկին գրում է.

«Ահա այն պատմվածքը, որ ես լսել եմ Թիֆլիսում, հանգուցյալ հայ հրապարակախոս Արծրունուց։ Դեպի Ախալքալաք տանող ճանապարհով, երկու կազակների ուղեկցությամբ, գնում էր սահմանապահ կազակային պահակախմբի երիտասարդ հարյուրապետը։ Ախալքալաքի կիրճում, որտեղ ժայռի մեջ կտրտված ճանապարհը ոլորվում է անդունդի վրա, հարյուրապետի ձիու առաջ հայտնվեց մի փոքրիկ մարդ և բարձրաձայն ասաց.

1 „Нижегородский листок“, № 324, 1896 г.

— Ձախ նայիր, կազակ։

Հարյուրապետը նայեց ու զարհուրեց— ձախ կողմից, քարերի ետևից, նայում էին նրան ու նրա ուղեկիցներին ուղղված հրացանների փողերը, իսկ աջից անդունդն էր։

— Ես Քերիմն եմ,— ասաց փոքրիկ մարդը,— իմանալով, որ դու փող ես տանում քո կազակների սննդի համար, ուզում եմ խլել այն քեզնից։ Տո՛ւր։

Հարյուրապետը ձեռքերով ծածկեց երեսն ու լաց եղավ։

— Թուլամորթ,— բրբջաց Քերիմը։

— Ստում ես,— ճչաց հարյուրապետը և, դուրս քաշելով թուրը, հարձակվեց Քերիմի վրա։ Քերիմը նրա հարվածի տակ դրեց հրացանի փողը, իսկ քարերի ետևից դուրս թռան չորս հոգի, և, մինչ կազակները օգնության կհասնեին հարյուրապետին, այդ չորս հոգին արդեն նշան բռնեցին ուղիղ կազակների կրծքին, և քարերի ետևից դարձյալ հրացաններ էին նայում, իսկ Քերիմը խլեց թուրը երիտասարդից ու ցած գլորեց նրան։ Բայց ինքն էլ բարձրացրեց նրան։

— Ներիր ինձ,— ասաց Քերիմը,— վիրավորական խոսքը ես անտեղի ասացի։ Ես տեսնում եմ, դու թուլամորթ չես։ Ես չեմ փչացնի քո կյանքը, չեմ վերցնի քո փողերը։ Գնա, Ալլահի աչքը ուղեկցում է քեզ։

Եվ համարյա ընդհուպ մինչև քաղաքը, նա գնում է հարյուրապետի սայլի կողքից, իսկ նրա տասնմեկ ընկերները գնում էին ետևից, ծխելով ու զրուցելով կազակների հետ։

Պատմողը նշեց և հարյուրակի համարը, և հարյուրապետի ազգանունը...»:[1]

Քերիմի համբավն այնքան մեծ էր, որ նրա մասին լեգենդներ էին պատմում նաև Անդրկովկասից դուրս՝ Հյուսիսային Կովկասում, Կուբանում և այլ վայրերում: Գորկին իր ակնարկներում մեջ է բերում երկու լեգենդ ևս Քերիմի մասին, որ նրան պատմել էին Կուբանի կազակները: Արևելքի, հատկապես լեռնային ժողովուրդների մեջ Քերիմի անունը շատ տարածված էր: Նրա մասին երգեր են երգել աշուղները, կանայք ու երեխաները: Բազմակողմանի ուսումնասիրելով Քերիմի մասին եղած նյութերը, Գորկին գրում է. «Քերիմ ավազակի կերպարն այնպես ուժեղ է շղարշված նրա մասին եղած լեգենդար պատմվածքներով, որ կարելի էր չհավատալ նրա գոյությանը, եթե մինչ այսօր նա կենդանի չլիներ և կովկասյան ադմինիստրացիայի տեղեկությունների համաձայն չգտնվեր Պարսկաստանում ու չծառայեր շահի մոտ, Թեհրանի նրա արքունիքում, որպես ինչ-որ հատուկ անձ: Այդ Քերիմը, ներկայիս իրանական իշխանաղում, շատ հաճախ դատավորի դեր է կատարել աուլներում, ընտանիքների և առանձին անհատների վեճերի ընթացքում, և միշտ էլ այդ դերը կատարել է շատ բարեխղճորեն ու անաչառ: Բայց երեկվա Սողոմոնը երբեք չի քաշվել հաջորդ օրը հանդես գալ որպես ավազակ ու հավաքել բնակչությունից իր պետք եղած տուրքը»:[2]

«Ավազակները Կովկասում» իր այդ ակնարկները Գորկին ավարտում է երկու վրացի «ավազակների» մա-

1 „Нижегородский листок“, № 324, 1896 г.

2 Նույնը, № 309, 1896 г.

հապատժի նկարագրությամբ, որ տեղի է ունեցել Գորիում, 1892 թվի փետրվարի 13-ին: Այդ ցնցող տեսարանին ներկա է եղել ինքը Գորկին և, որպես ականատես, իր ակնարկում վառ գույներով նկարագրում է մահապատժի արարողությունները: Ինչպես վկայում են փաստերը, Գորիի հոգևոր ուսումնարանի աշակերտ պատանի Ստալինը նույնպես ականատես է եղել այդ մահապատժին: Ստալինի դպրոցական ընկերներից մեկը, Պ. Ս. Կապանաձեն, իր հուշերի մեջ այդ մասին գրում է. «Մահապատժի վայրը մեկնեցին և բոլոր աշակերտները: Դասատուները գտնում էին, որ դա երիտասարդության կներշնչի ահի ու հնազանդության զգացում: Բայց մահապատժի տեսարանն է՛լ ավելի ամրապնդեց մեր մեջ դժգոհությունն այն ռեժիմից, որն իշխում էր հոգևոր ուսումնարանում: Մահապատժի տեսարանից մենք սոսկալի ցնցվել էինք: Մեր աչքերը սքողվել էին արցունքներով: Մեզ հետ էր պատանի Սոսո Ջուղաշվիլին: Մենք դյուրաբորբոք քննության առանք այդ օրվա դեպքերը: Հոգևոր ուսումնարանի ուսուցիչների քարոզները, «մի սպանիր» պատվիրանը և ողջ հարանմանները մեր պատկերացման մեջ ոչ մի կերպ չէին կապակցվում ավազակներ անվանյալ երկու գյուղացիների հրապարակային մահապատժի և նրանց ուղեկցող քահանայի կերպարանքի հետ»:[1]

Պատահական դիպվածը երկու հանճարեղ պատանիներին (Ստալին, Գորկի), բերել ու ականատես էր դարձրել հասարակական դաժան պայմաններում կատարվող այդ ցնցող տեսարանին: Ցարական բանտն ու կախա-

[1] Сталин— К шестидесятилетию со дня рождения, Гослитиздат, Москва, 1939 г., стр, 21.

ղանը հանճարեղ պատանիների հոգում ահավոր ջայրույթ ու ցասում է առաջացնում։

Գորկին չէր կարող անուշադրության մատնել կովկասյան բազմազան լեգենդներն ու պատմվածքները, որ ժողովուրդը ստեղծել էր ըմբոստության ու ազատության մասին։ Կարևորն այն չէ, որ այդ լեգենդներն ու երգերը պատմվում էին մի Նաբու կամ Քերիմի անունների շուրջը։ Նրանց փոխարեն կարող էին լինել ուրիշները։ Կարևորն այն է, որ այդ ստեղծագործությունների մեջ այս կամ այն չափով իմաստավորված էին լեռնային ազատատենչ ժողովուրդների երազանքները, մտորումներն ու ձգտումները։ Բնորոշ է այն հանգամանքը, որ երիտասարդ Գորկին, Նաբու, Քերիմի և նմանների մեջ, մասամբ տեսնում էր ժողովրդական վրիժառուների, ազատատենչ, վեհանձն ու արդարամիտ մարդկանց։ Այդ նրանք էին, որ իրենց անակնկալ հարձակումներով սպանում էին հարուստներին, բեգերին ու խաներին, ավերում նրանց կալվածքները, ահ ու սարսափ ազդում ցարական ոստիկաններին։

Գորկիագետ Ն. Պիկսանովը հետևյալ կերպ է բնորոշում կովկասյան ակնարկների բնույթն ու տեղը Գորկու ստեղծագործությունների մեջ. «Պետք է ընդգծել, որ ավազակների մասին եղած կովկասյան լեգենդները Գորկին շարադրում է գեղարվեստական ձևով, դիալոգներով, կենցաղային ու հոգեբանական մանրամասնություններով։ Այդ առանձնահատկություններով ակնարկները ներառվում են Գորկու վաղ շրջանի ֆոլկլորային-ռոմանտիկական բնույթի գրվածքների սյուիտայի մեջ»։[1]

[1] Н. Пиксанов— Горький и фольклор, Москва, 1938 г., стр. 103.

Գորկու վաղ շրջանի ստեղծագործությունների ուսումնասիրելու և բնութագրելու տեսակետից այդ ակնարկները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Նրանք բնորոշ են Գորկու այդ ստեղծագործությունների համար:

Գրականության ասպարեզ մտնելուց հետո, Գորկու հայ ծանոթների շրջանն ավելի է մեծանում: Նրա ծանոթների ցանկում արդեն հանդիպում ենք հայ նշանավոր գրողների, հրապարակախոսների, խմբագիրների, կոմպոզիտորների և այլն: Սրանց բոլորի հետ Գորկին նամակագրական կապ է պահպանել, հանդիպումներ է ունեցել և զրուցել է հայ գրականության ու արվեստի, հայ ժողովրդի կյանքի ու կուլտուրայի հարցերի շուրջը:

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ 1905 ԹՎԻ ԴԵՊՔԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

1905 թվին Ռուսաստանում ռևոլյուցիոն շարժումների ալիքն ամենուրեք մեծ չափերի էր հասել։ Ռուս մեծ ժողովրդի հետ միասին պայքարի էին ելել Ռուսաստանի նաև մյուս ժողովուրդները։ Ցարիզմի հիմքերը խիստ խարխլված էին։ Եվ ահա, այդ սպառնալից վիճակից ելք գտնելու համար ցարական կառավարությունը դիմում է ջարդերի և ազգամիջյան կռիվների ու կոտորածների կազմակերպման իր վաղեմի քաղաքականությանը, որպեսզի այդ ձևով երկպառակություն սերմանելով Ռուսաստանի ժողովուրդների միջև, հնարավորություն ունենա թուլացնելու մասսաների ռևոլյուցիոն շարժումները և ապա ճնշելու այն։

Ընկեր Ստալինը դեռևս 1904 թվին, ազգամիջյան մեծ կոտորածների նախօրյակին գրած իր մի հոդվածում տալիս է ցարական ինքնակալության ավազակային, ռեակցիոն, ազգային քաղաքականության պարզ ու սպառիչ գնահատականը. «... ռուսաստանյան ինքնակա-

լությունը, որպես ռուսաստանյան պրոլետարիատի ամենաոխերիմ թշնամին, շարունակ դիմադրում է պրոլետարների միավորման գործին։ Նա ավազակաբար հալածում է Ռուսաստանի «օտար» ազգությունների ազգային կուլտուրան, լեզուն, սովորույթներն ու հիմնարկները։ Ինքնակալությունը նրանց զրկում է անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներից, ճնշում է ամեն կողմից, փարիսեցիաբար նրանց միջև անվստահություն և թշնամություն է սերմանում, նրանց դրդում է արյունահեղ ընդհարումների, դրանով ցույց տալով, որ ռուսական ինքնակալության միակ նպատակն այն է, որ գըժտեցնի Ռուսաստանում ապրող ազգերին, սրի նրանց միջև ազգային երկպառակությունը, ամրացնի ազգային միջնորմները և դրանով էլ հենց ավելի մեծ հաջողությամբ իրարից բաժանի պրոլետարներին, ավելի մեծ հաջողությամբ մանրատի ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատին մանր ազգային խմբերի և այդ ճանապարհով գերեզման փորի բանվորների դասակարգային ինքնագիտակցության, նրանց դասակարգային միավորման համար։

Սրանք են ռուսական ռեակցիայի շահերը, այս է ռուսական ինքնակալության քաղաքականությունը»։[1]

Ինչպես հայտնի է, ցարական ինքնակալությունը հատկապես մեծ ջանք գործ դրեց Անդրկովկասում ազգամիջյան կոտորածներ ու ջարդեր կազմակերպելու ուղղությամբ։ 1905 թվի ռևոլյուցիայի նախօրյակին հայթուրքական կոտորածներն իրենց բնույթով ամենասոս-

[1] Ի. Ստալին— Երկեր, հատոր 1-ին, էջ 40—41, Երևան, 1946 թ.։

կալին էին ցարական կառավարության կազմակերպած ազգամիջյան բոլոր կոտորածներից: Բայց ցարիզմն իր այդ գազանություններով ոչ միայն չկարողացավ դադարեցնել ռևոլյուցիոն շարժումների առաջընթացն Անդրկովկասում, այլ, ընդհակառակը, այդ ազգամիջյան ջարդերն աշխատավորական լայն մասսաների մեջ է՛լ ավելի մեծ ատելություն առաջ բերին դեպի ցարիզմը, դեպի նրա տեղական արգահատելի լակեյները—բուրժուական-նացիոնալիստական պարտիաները:

Անդրկովկասյան բոլշևիկներն ընկեր Ստալինի ղեկավարությամբ ջանք չխնայեցին մերկացնելու ցարիզմի այդ ստոր քաղաքականությունը: Այդ օրերին ընկեր Ստալինը մի բոցաշունչ կոչ ուղղեց Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդներին: Այդ կոչը, որ լույս տեսավ ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հրատարակությամբ ռուսերեն, հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով, հսկայական նշանակություն ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունն ամրապնդելու, ինչպես նաև Անդրկովկասի մի շարք վայրերում ազգամիջյան կոտորածները կանխելու գործում: Պատմական այդ կոչում ընկեր Ստալինը գրում է. «... ցարական կառավարությունն իր գահն ամրապնդելու համար «նոր» միջոց է հնարում: Նա թշնամություն է սերմանում Ռուսաստանի ազգությունների միջև, նա գրգռում է նրանց իրար դեմ, նա աշխատում է պրոլետարիատի ընդհանուր շարժումը ջլատել մանր շարժումների և դրանք միմյանց դեմ ուղղել, *նա հրեաների, հայերի ջարդեր է կազմակերպում և այլն: Եվ այդ բոլորը նրա համար, որպեսզի եղբայրասպան պատերազմով անջատի միմյանցից Ռուսաստանի ազգություններին և, ուժասպառ*

անելով նրանց, առանց դժվարության հաղթի նրանցից յուրաքանչյուրին առանձի՛ն։

Բաժանի՛ր և իշխի՛ր— այս է ցարական կառավարության քաղաքականությունը։ Այսպես է գործում նա Ռուսաստանի քաղաքներում (հիշեցեք Գոմելում, Քիշինևում և այլ քաղաքներում տեղի ունեցած ջարդերը), նույնը կրկնում է նաև Կովկասում։ Սաո՜ր։ Քաղաքացիների արյունով ու դիակներով նա աշխատում է ամրապնդել իր անա՜րգ գահը։ Բաքվում մեռնող հայերի ու թաթարների հառաչանքներ. կանանց, մայրերի, երեխաների արցունքներ. արյուն, ազնիվ, բայց անգիտակից քաղաքացիների անմեղ արյուն. փախչող, մահից փրկվող անպաշտպան մարդկանց վախեցած դեմքեր. քանդված տներ, կողոպտված խանութներ և գնդակների սարսափելի, չլռող սուլոց,— ահա՛ ինչով է իր գահն ամրապնդում ցարը՝ ազնիվ քաղաքացիներին սպանողը։

Այո՛, քաղաքացինե՛ր։ Այդ նրա՛նք, ցարական կառավարության գործակալնե՛րն են, որ թաթարներից անգիտակիցներին գրգռեցին-հանեցին խաղաղ հայերի դեմ։ Այդ նրա՛նք, ցարական կառավարության լակեյներն են, որ զենք ու փամփուշտ բաժանեցին նրանց, թաթարական զգեստ հագցրին ոստիկաններին ու կազակներին և բաց թողին հայերի վրա։ Երկու ամիս նրանք՝ ցարի սպասավորները՝ պատրաստում էին այդ եղբայրասպան պատերազմը,— և ահա, վերջապես, հասան իրենց բարբարոս նպատակին։ Անեծք և մա՛հ ցարական կառավարության գլխին»։[1]

[1] Ի. Ստալին— Երկեր, հատոր 1-ին, էջ 92—93, Երևան, 1946 թ։

Կովկասի և հատկապես Բաքվի 1905 թվի ջարդերի մասին Վլադիմիր Իլյիչ Լենինը հետևյալ կլասիկ բնորոշումն է տվել. «... այսպես է այժմ վարվում կառավարությունը, Բաքվում թաթարներին գրգռելով հայերի դեմ, փորձելով առաջ բերել հրեական նոր ջարդեր...»: «Իհարկե, ռասայական թշնամություն և ցեղային ատելություն հրահրելով՝ կառավարությունը կարող է մի առժամանակ հետաձգել դասակարգային պայքարի զարգացումը, բայց միայն կարճ ժամանակով և այն էլ նոր պայքարի դաշտի է՛լ ավելի ընդարձակման գնով, ինքնակալության դեմ ժողովրդի է՛լ ավելի մեծ զայրացման գնով: Ապացույց՝ Բաքվի ջարդի հետևանքները, որը տասնապատկեց բոլոր խավերի ռևոլյուցիոն տրամադրությունն ընդդեմ ցարիզմի»:[1]

Ինչպես հայտնի է, 1905 թվին Մաքսիմ Գորկին արդեն կապված էր բոլշևիկյան պարտիայի ու նրա Կենտրոնական Կոմիտեի հետ: Ազգային հարցը Գորկուն հուզող կարևորագույն հարցերից մեկն էր, և նա ոչ միայն ուշադիր հետևում ու ամբողջովին համամիտ էր բոլշևիկների վարած ազգային քաղաքականությանը, այլև իր ստեղծագործական կազմակերպական ու հրապարակախոսական գործունեության ընթացքում հետևողականորեն ու փայլուն կերպով կիրառում էր այդ քաղաքականությունը: Բազմաթիվ են Գորկու նախառևոլյուցիոն շրջանի հոդվածներն ու ելույթները մանր ժողովուրդների իրավազրկության, նրանց ազատության ու անկախության մասին: Մենք ցանկանում ենք ընթերցողի

1 Վ. Ի. Լենին—Երկեր, հատոր 8, էջ 247—248:

ուշադրությունը հրավիրել Գորկու պատմական մի ելույթի վրա։

Բաքվում հրատարակվող „Баку“ թերթի աշխատակիցը 1905 թվին հատուկ նամակով դիմում է Մաքսիմ Գորկուն, խնդրելով, որ նա իր կարծիքը հայտնի կովկասյան դեպքերի առթիվ։ Գորկին իր պատասխան նամակում իրեն հատուկ վճռականությամբ ու սրությամբ ցույց է տալիս, որ Անդրկովկասում տիրող բոլոր տեսակի գազանությունների հեղինակը ցարիզմն է և նրա դեմ պետք է ուղղել ամբողջ պայքարը։ Ցարական խեղդող ցենզուրան արգելեց Ռուսաստանի սահմաններում տպագրելու այդ նամակը, բայց նա հրապարակվեց արտասահմանյան մամուլում։ Այդ նույն թվին նա թարգմանաբար լույս տեսավ նաև արտասահմանյան հայկական մի շարք թերթերում։ 1905 թվին էլ առանձին գրքույկով այդ նամակը լույս տեսավ Ժնևում։ Երբ այդ գրքույկը, Ռուսաստանում վերահրատարակելու նպատակով, 1907 թվին ներկայացրին գրաքննության, ապա ցարական ցենզոր Ա. Ա. Գորյաինովն իր 1907 թվի հունվարի 10-ի զեկուցագրի մեջ խոսելով գրքույկի հիմնական մտքերի մասին, եկավ հետևյալ եզրակացության.

«Ներկա գրքույկը գրված է ռևոլյուցիոն պրոկլամացիայի լեզվով և մանավորապես ոչ ոքի չդիպչելով, սակայն բավականաչափ պարզ հասկացնել է տալիս, որ մեր կառավարությունը դաժան է, վախկոտ և ապաշնորհ, և որ ընդհանուր ուժերով ինչքան արագ տապալվի այն, այնքան լավ՝ ժողովրդի համար։ Նկատի ունենալով վերոհիշյալը և նմանապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրքույկը էժանագին է և որ Գորկու

գրական անունը, թեկուզ այնքան էլ մոդայում չլինելով, ինչպես առաջ, այնուամենայնիվ շարունակում է մնալ որոշ աստիճան հեղինակավոր, պատիվ ունեմ զեկուցելու կոմիտեին, որ այդ գրվածքը, իմ կարծիքով, հարկավոր է արգելել»:

Մակագրություն.— «Համաձայն զեկուցման՝ արգելել»:[1]

Ցարական ջարդարար ցենզուրան այլ կերպ չէր էլ կարող վարվել: Չէ՞ որ Գորկու այդ նամակն ուժգին հարված էր ցարական գահին, չէ՞ որ այդ նամակում Գորկին կոչ էր անում Ռուսաստանի աշխատավոր բազմազգ ժողովուրդներին՝ միանալու և միացյալ ուժերով ջախջախելու ցարական ինքնակալությունը: Մաքսիմ Գորկու այդ նամակը նրա նախառևոլյուցիոն շրջանի գործունեության ամենափայլուն արտահայտություններից մեկն է: Նկատի ունենալով նամակի պատմական խոշոր նշանակությունը և այն, որ մեր ընթերցողների լայն շրջանները տակավին անծանոթ են այդ նամակին, մենք ամբողջությամբ մեջ ենք բերում այն.

«Հարգելի ընկեր.

Ի՞նչ եմ մտածում ես Կովկասի այժմյան դեպքերի մասին: Հարցնում եք դուք:

Ամոթալի և ցավալի է կարդալ ու լսել այն, ինչ կատարվում է ձեզ մոտ: Ես այնպես ջերմագին սիրում եմ այդ չքնաղ երկիրը, որ հոյակապ գեղեցկության և ուժի մարմնացումն է, նրա ձյունափառ լեռները, արագա-

1. „М. Горький—Материалы и исследования“, том III. Москва, 1941 г., стр. 417.

հոս, քաղցրահնչյուն գետերի ուրախ խշշոցով լեցուն նրա հովիտներն ու կիրճերը և նրա գեղեցիկ, հպարտ զավակներին:

Կովկասում եղած ժամանակ ես ամենուրեք տեսնում էի, թե ինչպես խաղաղ և բարեկամաբար աշխատում էին միասին վրացին, թուրքն ու հայը, ինչպես մանկական ուրախությամբ և պարզ կատակում էին նրանք, երգում ու ծիծաղում. և այնպես դժվար է հավատալ, որ այդ պարզ և սքանչելի մարդիկ այժմ բութ և անմիտ կերպով կոտորում են միմյանց, ենթարկվելով իրենց գրգռող չար ու մութ ուժին:

Ինձ այնքան չի ճնշում մարդկանց դաժանությունը, որքան հիմարությունը, որ չեն հասկանում, թե իրենց խավար կրքերի հետ խաղում է մի արտաքին չար ուժ: Ինձ թվում է, որ ամբողջ երկրի համար համահավասար ամոթաբեր արյունոտ ողբերգությունները Բաքվում և Երևանում՝ իրենց շարժառիթներով չեն տարբերվում Քիշինևում և Վարշավայում, Ժիտոմիրում և Լոձում կատարվող համանման ողբերգություններից: Նախիջևանում, Կուրսկում, Ռիգայում և Իվանովո-Վոզնեսենսկում— ամենուրեք երևում է այն մի խումբ մարդկանց զազրելի գործը, որոնք երկրի վրա ունեցած իրենց իշխանությունը կորցնելու երկյուղից խենթացած՝ ձգտում են արյունով մարել ժողովուրդների՝ կյանքի ձևերի կառուցողը լինելու իրենց իրավունքի գիտակցության պայծառորեն բռնկված հուրը:

Այդ մարդիկ սովորել են իշխել, նրանք այնպես լավ էին ապրում, երբ կարողանում էին ոչ ոքի հաշիվ չտալով իրենց գործողությունների մասին, տնօրինել մեր երկրի բախտն ու հարստությունները, ժողովրդի ուժը և

արյունը։ Նրանք սովոր էին Ռուսաստանը դիտել որպես իրենց սեփական կալվածքը, նրանք բռնությամբ պահում էին իրավազուրկ ժողովրդին տգիտության և կեղտի մեջ, որպեսզի թուլացնեն նրա ոգին, չթողնեն աճի նրա եռանդը, դարձնեն նրան իշխողների կամքին հլու հնազանդ, կույր ու համր ստրուկ։

Անպատժությունից ապականված մարդկանց ցինիզմով, իրենց ուժը գիտակցող անասունների բացահայտ դաժանությամբ նրանք անում էին ամեն ինչ, որպեսզի սպանեն ժողովրդի ստեղծագործ ոգին։ Բայց նրանք, այդ ողորմելի մարդիկ, որոնք իրենց համարում են երկրի ամբողջ կյանքի տերեր—տգետ են և բթամիտ, նրանք չեն հասկանում, որ ժողովրդին կույր, մեքենայական ուժ դարձնելը նույնչափ անհնարին է, որչափ Կովկասի գրանիտե լեռները կավի մի կույտի վերածելը։

Մարդկանց անմիտ և ամարդի հալածանքը չի մարել մեր երկրում համարձակ և ազատ մտքի հուրը,— նա բորբոքվում է ավելի պայծառ և զորեղ, անգամ կույրերը տեսնում են այժմ նրա ցասկոտ փայլը. նա անսպասելի բռնկվում է ամենուրեք և ձգտում միաձուլվելու մի հզոր ու ուրախալի բոցի, բոլոր խելացի և ազնիվ մարդկանց բողոքի մի ուժգին փոթորկի՝ ընդդեմ այն բռնության, որին ենթակա են այդ մարդիկ մայրենի երկրի ընտիր հյութերով հղփացած մի խումբ ապաշնորհ և անհիմն պարազիտների կողմից…

Պարազիտները զգում են, որ վերահաս է իրենց հոգեվարքը և մոտ է մահը, բայց նրանք ուզում են ապրել և պայքարում են ժողովրդի կամքի դեմ՝ ինչպես կարող են, պայքարում են անազնիվ, երկչոտ և խայտառակ ձևերով։

Передано мне в ... 1905 году г. Баку

Письмо это было написано М. Горьким в ответ на запрос редакции бакинской газеты „Каспий“ о событиях в Баку

Уважаемый товарищ!

Что я думаю о современных событиях на Кавказе? — спрашиваете вы.

Стыдно и досадно читать и слышать о том, что творится у вас! Я так горячо люблю эту прекрасную страну, это чудесное творение грандиозной красоты и силы, ее горы, окруженные снегами, долины, исполненные веселого шума быстрых, насущных рек и ее красивых, гордых детей.

Бывая на Кавказе, я всюду видел, как дружно и мирно работают рядом грузин с татарином и армянином, как дружно, весело и просто они шутили, как ... и так трудно поверить, что [redacted] эти крестьяне, спокойные люди так тупо и бессмысленно избивают друг друга, подчиняясь подстрекающей их злой и темной силе.

Меня не [redacted] так удивляет участь ..., как ... людей ... не нашлось много одинакового позорного для всей страны преступления в Баку — армяне ... непонимающих что [redacted] их темными страстями играют ... злая сила

трагедии в Кишиневе и Варшаве, в Житомире и Лодзи [redacted] в Нахичевани, Курске, в Риге и Иваново-Вознесенске — везде видна темная работа кучки людей, обезумевших от страха потерять свою власть над страной, людей, которые стремятся залить кровью ярко вспыхнувшее в России сознание народом своего права быть строителем формы жизни.

Эти [redacted] люди привыкли к власти, им так хорошо жилось

Մ. Գորկու «Կովկասյան դեպքերի մասին» նամակի ֆաքսիմիլեն։

Նրանք կյանքի հատակից բարձրացնում են այն ամենը, ինչ մութ է և կեղտոտ, ինչ այլանդակված է իրենց ճնշումից՝ մարդկային կերպարանքը կորցնելու չափ, այն ամենը, ինչ շահամոլ է, ծախու, զազրելի և գիշատիչների ու անասունների այդ բութ մասսան գրգռում են երկրի լավագույն մարդկանց դեմ, որպեսզի ջարդեն նրանց և գեթ մի տարի ևս պահեն իշխանությունն իրենց անզոր ձեռներում:

Եվ այս էլ կարող է լինել— եթե վաղը Թուրքերը պահանջեն ինքնորոշման իրենց մարդկային իրավունքների ճանաչումը, նրանց դեմ կուղարկեն կիրգիզներին և մոնղոլներին, որպեսզի կոտորեն նրանց ուրիշի ձեռքերով... Ամենուրեք միևնույնն է. պարազիտների չար ուժը, երկրում իր դրությունը պաշտպանելու համար, իր կողմն է գրավում երկրի առավել վայրենի և ամենաանմիտ մարդկանց ու գրգռում նրանց դեմ, որոնք անկեղծորեն և անշահ ցանկանում են բարիք ու ազատություն իրենց հայրենիքին ու ժողովրդին:

Մարդկային պատմության ողջ ժամանակաշրջանում ոչ մի երկրում տիրող դասակարգի պայքարը, իր իշխանությունը ժողովրդի վրա պահպանելու համար, այնչափ խայտառակ, անամոթ և լիրբ դաժանությամբ չի տարվել, որչափ մեր երկրում և մեր արյունալի օրերում:

Որպիսի գարշելի և ողորմելի անզորություն է զգացվում այդ մարդկանց մեջ, որոնք արբել են իրենց թափած արյունից և իրենց մահվան նախազգացումից:

Որպիսի արհամարհանք պիտի առաջացնի մեր երկիրը, շնորհիվ այն հանգամանքի, որ մեզ կառավարողները այս երկրի մեջ կյանքի են կոչում միայն այն, ինչ որ

անասնական է, կոպիտ և գազանային, աշխատելով դրանով ջլատել այն ամենը, ինչ ճշմարտապես ստեղծագործական է, ազնիվ և մարդկային։

Այն օրերը, որ մենք ապրում ենք, ամբողջ երկրի հոգեկան վերանորոգման նախընթացն են, բայց այն պայքարը, որ մղվում է Ռուսաստանում լույսի և նոր կյանքի ձգտման դեմ— այդ պատմության մեջ կարձանագրվի իբրև մարդկության ամբողջ կյանքի ընթացքում կատարված ամենազազրելի արարքներից մեկը...

Այդ պայքարը չի կարող երկար տևել, քանի որ իշխանությունը ապականում է։ Նրանք, որոնց այսօր անպատիժ կողոպտելու և սպանելու իշխանություն է տրված, դեռ շատ չեն թողնի իշխանությունն իրենց ձեռքից։ Այն ձեռը, որ երեկ ջարդել է հայի և հրեայի գանգը նրա համար միայն, որ նրանք իրենց ազատ մարդիկ են զգացել— ո՞վ գիտե՝ վաղն ում գլխին պիտի իջնի։

Նրա կույր թափը և հարվածը հեշտ է կանգնեցնել։ Հարկավոր է միայն, որ Կովկասի և Ֆինլանդիայի, Լեհաստանի և Ռուսաստանի բոլոր լավագույն, բոլոր ազնիվ մարդիկ միանան և կազմեն մարտնչողների-բարեկամների մի ընտանիք, ազնիվների և անվեհերների մի միություն, միանան և հարցնեն միմյանց.

— Ով է մեր թշնամին։

Պատասխան գտնելը հեշտ է։

Բոլոր մարդիկ՝ թուրքերը, ռուսները, հայերը և հրեաները, լեհերը, ֆինները— բոլորը մի բան են միայն ցանկանում՝ ապրել ավելի լավ, քան ապրում են այժմ։ Եվ բոլորը համահավասար չունեն ըստ իրենց ցեղային, կրոնական և կենցաղային պայմանների՝ ապրելու ազատություն ու իրավունք։

Ի՞նչ է, նախ և առաջ, հարկավոր մարդու և ժողովրդի բարգավաճման համար։

Իր անձնական և հասարակական ցանկությունները ազատորեն որոշելու իրավունք, իր ոգու և իր ցեղի ոգու բարգավաճման համար կարելույն չափ ընդարձակ հանրային կյանքի ձևերը ազատորեն կառուցելու իրավունք։

Եվ մի՞թե հայը զրկում է թուրքին այդ ազատությունից, և մի՞թե վրացին։ Մի՞թե ռուսի, հրեայի և լեհի ձեռքը ու ոտքը կապված չեն նույն ուժով, որ համահավասար ծանրությամբ ընկած է թուրքի ուսերին։

Մենք բոլորս մի թշնամի ունենք։

Եվ ամենքը, ում բանականությունը պայծառ է, ում կամքը ենթակա չէ ստրկացման, պատրաստ են միանալ և կազմել մի ընտանիք՝ պայքարելու համար այն չար և անմիտ ուժի դեմ, որը միատեսակ ծանրությամբ ճնշում է մեզ ամենքիս։

Մենք բոլորս մի թշնամի ունենք։

Թող ուրեմն մեր ամենքի միջև լինի հավասարություն և եղբայրություն. թող ամենքիս պայծառացնի բանականության լույսը. ձուլվենք և դառնանք մի մեծ, անպարտելի կամք և այն ժամանակ՝

Կեցցե ազատությունը։

Մաքսիմ Գորկի»[1]

Ինչպես տեսնում է ընթերցողը, Անդրկովկասի ազգային կոտորածների մասին այս նամակում Գորկու ար-

---

1. М. Горький—Ранняя революционная публицистика, 1938 г., Москва, стр. 117.

տահայտած մտքերը շատ կողմերով զուգադիպում են Լենինի և Ստալինի մտքերին: Դա պատահական զուգադիպություն չէ: Ազգային հարցը իդեական հանգուցային այն հարցերից մեկն է եղել, որն ավելի է մոտեցրել Գորկուն բոլշևիկներին, որովհետև հենց բոլշևիկների վարած ազգային քաղաքականության իրականացման մեջ է տեսել Գորկին Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների փրկությունը, նրանց ազգային անկախությունն ու վերածնությունը: Գորկու այս նամակում արտակարգ ջերմ արտահայտություն է գտել նրա անսահման սերը դեպի Անդրկովկասի ժողովուրդները, դեպի նրա հարուստ բնությունը, դեպի նրա հպարտ ու ազատասեր զավակները: Այս նամակը խորը հումանիզմով հագեցած պատմական մի փաստաթուղթ է, որը Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության տարեգրության մեջ կմնա որպես մեծագույն ներդրում՝ մեծահանճար գրողի կողմից:

Մաքսիմ Գորկու այդ նամակից տպագրելով մի հատված և համառոտակի շարադրելով նամակի չտպագրված հատվածների մտքերը՝ Թիֆլիսի «Մշակ» թերթը հետևյալ տողերն է ավելացնում. «Մեր կողմից, մեր հոգու բոլոր հզորությամբ ձայնակցենք մենք հանճարեղ ռուս գրողին, որ այնքան շատ նպաստում է՝ մտցնել մասսայի խավար մտքերի մեջ եղբայրասիրություն, խաղաղություն, ազգային համերաշխության գաղափարները»:[1]

«Ինտերվյու» ընդհանուր խորագրի տակ, Գորկին, 1906 թվին Նյու-Յորքում մի շարք գեղարվեստական ակնարկներ է գրում, որոնք իրենց թե՛ ձևի և թե՛ բովանդա-

[1] «Մշակ», № 143, 1905 թ.

կության տեսակետից միանգամայն նոր երևույթ էին հանդիսանում նրա գեղարվեստական ստեղծագործությունների մեջ։ Այդ ակնարկներում Գորկին դրսևորում է իրեն որպես Գոգոլի և Շչեդրինի ստեղծագործական տրադիցիաների լավագույն շարունակողը։ Առաջին ակնարկը կրում է «Ռուսական ցարը» խորագիրը։ Զայրույթով, ատելությամբ ու արհամարհանքով լի այդ ակնարկը մի երգիծանք է՝ ուղղված Նիկոլայ 2-րդի և նրան շրջապատող մարդկանց դեմ։ Գորկին մերկացնում է ռուսական ինքնակալության կառավարման ողջ սիստեմը, որը հիմնված է գնդակահարությունների, կախաղանի, աքսորի, ազգային ջարդերի և մեծագույն ոճրագործությունների վրա։

«Ռուսական ցարը» ակնարկում նկարագրված է, թե ինչպես հեղինակը ինտերվյու է ունենում Նիկոլայ 2-րդ ցարի հետ։ Ցարը նրան կարդում է իր դաժան ոճրագործությունները արդարացնող գրությունը, որը պատրաստել էր ոստիկանական մի սպա։ Ինտերվյուի ընթացքում շոշափվում են մի շարք հուզող հարցեր։ Խոսք է բացվում նաև հայկական ու հրեական ջարդերի մասին։ Ցարը, ինչպես մեծ հեգնանքով նկարագրում է Գորկին, այդ մասին նույնպես ունի իր պատրաստի բացատրությունը.

«Կովկասի հայերը թուրք հավատարիմ հպատակների ձեռքով ջարդվեցին։ Սակայն այդ դեպքին ազգային ատելության տեսք էր տրված և հարկավոր էր հավատալ, թե այդ այդպես է, թե դա ճշմարտություն է։ Բայց ինչպես կարող էր պատահել, որ հայերն ու թուրքերը, դարերով ապրած միասին, որպես բարեկամներ, հանկարծ անհաշտ թշնամիներ դառնային։ Ի՞նչ տարօրինակ բան

կա այստեղ։ Չէ՞ որ երկրաշարժը նույնպես լինում է. հանկարծակի... Երբ տաճկական սուլթանը հարկադրեց քրդերին ու իր զինվորներին ոչնչացնել հայերին, նրանց ոչնչացրին տասնյակ հազարներով, բայց աղմուկը քիչ էր... Մտածեցեք— ո՞րն է այստեղ արդարությունը»։[1]

Բացատրությունները ավելորդ են։

Ռուսական դաժան ցարն իր այս ինքնավստահ ու բութ բացատրություններով լիովին մերկացնում է իրեն։

Գորկու «Ռուսական ցարը» ակնարկն առաջին անգամ լույս է տեսել 1906 թվին, Փարիզում, «Կրասնոե զնամյա» ժուռնալի 3-րդ համարում։ Նույն ժամանակամիջոցում էլ թարգմանվել ու տպագրվել է նաև արտասահմանյան հայ մամուլում։

Տասնյակ տարիներ հետո, սովետական իշխանության օրոք, երբ Գորկին այցելեց Անդրկովկաս, նա տեսավ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, նրանց համերաշխ կյանքն ու շինարար աշխատանքը և մեծ հրճվանքով գրեց. «Նայում էի ես այդ մարդկանց, լսում նրանց ճառերը և չէի հավատում, որ մոտիկ անցյալում ռուս չինովնիկները, փորձելով ամրացնել ցարի իշխանությունը, կարողացան առաջացնել արյունոտ թշնամություն թուրքերի և հայերի միջև։ Դժվար էր հավատալ, որ ես իր ժամանակին գրել եմ ինքնակալության այդ հանցագործության մասին, ինքնակալություն, որ ցեղական թշնամանք հրահրելով, չէր խորշում մասսայական սպանությունների դրդողի զզվելի աշխա-

1. М. Горький—Собрание сочинений, том IV, Москва, 1941 г., стр. 109.

տանքից: Եվ ահա տեսնում եմ՝ փչում է քամին այն ազատության, որը կարող են ստեղծել միայն աշխատանքի մարդիկ, և անցյալի կոշմարը չքացել է այնպես, որ, կարծես, այն չի էլ եղել. այժմ հաճախ ադրբեջանական դպրոցներում դասավանդում են հայուհիները, Ադրբեջանի գյուղացիները իրենց անասուններն արածացնում են Հայաստանի գեղեցիկ լեռների լանջերին, և Սովետական Միության աշխատավոր ժողովուրդը միավորվում է որպես մի միասնական ստեղծագործական ուժ»:[1]

Մաքսիմ Գորկու 1905 թվի գրած նամակը և տասնյակ տարիներ հետո գրած այս տողերը մեծ հումանիստի բացառիկ հոգատար և խոր մարդկային վերաբերմունքի մասին են վկայում հանդեպ ճնշված ժողովուրդների:

Մաքսիմ Գորկին ցարական Ռուսաստանի մանր ժողովուրդների իսկական բարեկամն ու պաշտպանն էր: Իր գրական գործունեության ընթացքում բազմաթիվ հոդվածներ է գրել նա ազգերի խաղաղ համակեցության ու համերաշխության մասին: Յուրացնելով Լենինի և Ստալինի ուսմունքը ազգային հարցի մասին՝ Գորկին իր կրակոտ հոդվածներով ջախջախիչ հարված էր հասցնում ցարիզմին, ազգային հարցում նրա վարած շովինիստական թունոտ քաղաքականության համար: 1912 թվին գրած իր մի հոդվածում Գորկին ասում է. «Նացիոնալիզմի այդ պրոպագանդան, որ հանդիսանում է ավանտյուրիստների և պրովոկատորների մութ խորշերից եկող այն քաղաքականության ներշնչումների պտուղը, որը ներխուժում է ամեն տեղ, ուր համերաշխությունն է ա-

[1] „Наши достижения“, 1929 г. № 1.

ճում և ոչ առանց ժամանակավոր հաջողության, թուրքերի ձեռքով հայերին ջարդելուց հետո, այժմ էլ փորձում է մոսկովցիների ձեռքով խեղդել կիևցիներին»։[1]

Լենինին ուղղած իր մի նամակում Գորկին անհրաժեշտ էր համարում, քաղաքական մյուս հարցերին զուգընթաց, ուժեղացնել պայքարը հատկապես նացիոնալիզմի դեմ, որը պատճառ էր դառնում ազգային արյունահեղ կոտորածների ու ջարդերի։

Գորկու այդ նամակին, 1913 թվի փետրվար ամսին Լենինը պատասխանում է. «Նացիոնալիզմի վերաբերմամբ միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ, որ դրանով ավելի լրջորեն պետք է զբաղվել։ Մեզ մոտ մի հրաշալի վրացի նստել և „Просвещение“-ի համար մեծ հոդված է գրում, հավաքելով բոլոր ավստրիական և այլ նյութերը։ Մենք ուժ կտանք դրան։ Իսկ որ մեր բանաձևերը (դրանք ուղարկում եմ տպագրված) «խուսագրություն» են, «դրասենյակայնություն», Դուք զուր եք բարեհաճում հայհոյել։ Ոչ։ Դա խուսագրություն չէ։ Մեզ մոտ Կովկասում ևս ս.-դ. վրացիները + հայերը + թաթարները + ռուսները տասը տարուց ավելի աշխատել են միասին, միասնական ս.-դ. կազմակերպության մեջ։ Այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը։ Այնպես էր նաև Ռիգայում. ռուսներ + լատիշներ + լիտվացիներ. անջատվում էին միայն սեպարատիստները՝ Բունդը։ Նույնը և Վիլնոյում»։[2]

---

[1] „М. Горький — Материалы и исследования“, том I. стр. 65.

[2] Վ. Ի. Լենին – Գրականության մասին, Երևան 1948 թ., էջ 125։

Այդ հրաշալի վրացին, որի անունը կոնսպիրատիվ նկատառումներով Լենինը չի հիշատակում, մեծ Ստալինն էր։ Լենինի խոսքը վերաբերում է Ստալինի՝ Վիեննայում գրած «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հայտնի աշխատությանը, որը տպագրվեց «Պրոսվեշչենիե» ժուռնալի 1913 թվի համարներում։ Այդ հանճարեղ աշխատության մեջ ընկեր Ստալինը զարգացրեց և խորացրեց ազգային հարցի մարքսիստական ըմբռնումը և ծրագրեց բոլշևիկների անելիքները ազգային հարցում։

Վ. Ի. Լենինի հրավերով Մաքսիմ Գորկին մասնակցում էր մարքսիստական «Պրոսվեշչենիե» ժուռնալի խմբագրման գործին, գլխավորելով ժուռնալի գրական բաժինը։ Այդ ժամանակաշրջանումն է ահա, որ «Պրոսվեշչենիե»-ի համարներում լույս է տեսնում Ի. Վ. Ստալինի աշխատությունը ազգային հարցի մասին։ Անշուշտ, Գորկին հանգամանորեն ծանոթ էր Ի. Վ. Ստալինի այդ նշանավոր աշխատությանը, մանավանդ, որ Լենինը նախապես նրա հատուկ ուշադրությունն էր հրավիրել այդ աշխատության վրա։ Անհրաժեշտ է նշել, որ Գորկու հետաքրքրությունը դեպի ազգային հարցը ընդհանրապես և դեպի Ռուսաստանի ճնշված ժողովուրդների քաղաքական ու կուլտուրական կյանքը, մասնավորապես, այդ տարիներից սկսած ավելի է աճում և ճնշված ազգերի գրականությունն ու ողջ կուլտուրան վեր հանելու և տարածելու համար նա նոր, ավելի հիմնավոր ծրագրեր է մշակում։

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ ԿԱՄՈՆ

Ընկեր Ստալինի կազմակերպած ու կոփած և նրա անմիջական ղեկավարությամբ գործող Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը աճեցրել ու դաստիարակել է ռևոլյուցիոն մարտիկների սքանչելի պլեադա: Այդ շողշողուն պլեադայի մեջ իր ուրույն տեղն է գրավում Սիմոն Տեր-Պետրոսյանը, (1882—1922), որը համառուսական լայն շրջաններին հայտնի է Կամո անունով: Կամոն իր փոթորկալից ռևոլյուցիոն կյանքն ամբողջովին նվիրել է բոլշևիկների պարտիայի, պրոլետարիատի հաղթանակի մեծ գործին: Նրա անվեհեր ու անձնուրաց գործունեության տարեգրությունը պարտիական կոնսպիրատիվ, դժվարագույն աշխատանքների վիրտուոզ կատարման, խիզախ սխրագործությունների, անհողդողդ կամքի ուժի դրսևորման փայլուն ու անմոռաց դրվագներից է կազմված:

Ռևոլյուցիոն գործունեության իր առաջին քայլերը սկսելով Թիֆլիսում՝ ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ, Կամոն շուտով ցուցաբերում է կազմա-

կերպչական մեծ ընդունակություններ՝ օժտված համարձակ, հանդուգն ու նպատակասլաց մտահղացումներով։ Կամոյի համար անհաղթահարելի խոչընդոտներ գոյություն չունեին։ Դաժան ու ծանր փորձություններն անգամ չկարողացան ընկճել նրա անխորտակ կամքի ուժը։

Անսահման հավատը բանվոր դասակարգի, սոցիալիզմի մեծ գործի հաղթանակի, բոլշևիկների պարտիայի ու նրա հանճարեղ առաջնորդներ Լենինի ու Ստալինի հանդեպ, ոգեշնչել ու մեծագույն սխրագործությունների են մղել Կամոյին։

Լենինը և Ստալինը մեծ ջերմությամբ ու վստահությամբ են վերաբերվել Կամոյին։

Կամոյի մարտական ռևոլյուցիոն գործունեության մասին Մաքսիմ Գորկին առաջին անգամ լսել է 1905 թվին։

Մոսկվայում, 1905 թվին, Լ. Բ. Կրասինը կազմակերպում է մարտական մի դրուժինա, որը ենթարկվելով տեղական կոմիտեին, կատարում էր թե՛ նրա պատասխանատու հանձնարարությունները և թե՛ միաժամանակ պահպանում Մաքսիմ Գորկու բնակարանը, ուր այդ օրերին տեղի էին ունենում բոլշևիկյան կոմիտեի գաղտնի ժողովները։

Այդ դրուժինայի հրամանատարն էր վրացի Վ. Արաբիձեն, իսկ Կամոն հանդիսանում էր դրուժինայի սիրտը, նրա մարտական ղեկավարներից մեկը։ Գորկու հետ ունեցած զրույցների ժամանակ Արաբիձեն պատմում է նրան դրուժինայի ու նրա անդամների գործունեության մասին։ Այդ զրույցները գլխավորապես պտտվում էին Կամոյի անվան շուրջը։

Կամոյի մասին գրած իր հետաքրքիր հուշերում Գորկին պատմում է. «Արաբիձեն առաջին մարդն էր, որից ես լսեցի Կամոյի անունը և ռևոլյուցիոն տեխնիկայի բնագավառում այդ բացառիկ խիզախ աշխատողի գործունեության վերաբերյալ պատմություններ։ Այդ պատմություններն այնքան զարմանալի և առասպելական էին, որ անգամ այն հերոսական օրերին դժվարանում էիր հավատալ, որ մարդն ընդունակ լինի իր մեջ համատեղել այնքան շատ, գրեթե հեքիաթային հանդգնություն՝ աշխատանքի մեջ անփոփոխ հաջողության հետ և անսովոր հնարամտություն հոգու մանկական պարզության հետ։ Ես այն ժամանակ կարծում էի, որ եթե գրի առնեմ այն ամենը, ինչ լսում էի Կամոյի մասին, ոչ ոք չի հավատա այդպիսի մարդու իրական գոյությանը, և ընթերցողը Կամոյի կերպարը կընդունի իբրև բելլետրիստի հորինվածք»։

Գորկուն շատ են զբաղեցրել Կամոյի կյանքի և խիզախ ռևոլյուցիոն գործունեության մանրամասնությունները։ Նա հետաքրքրվել ու հարցումներ է արել այդ մասին իրեն շրջապատող պարտիական աշխատողներին, հատկապես Կովկասի ընկերներին։

«Շուտով,— գրում է Գորկին,— Կամոյի վերաբերյալ պատմությունները հաստատեց Ն. Ն. Ֆլերովը, մի մարդ, որին ես ճանաչում էի դեռևս 1892 թվին Թիֆլիսում, որտեղ նա աշխատում էր, որպես «Կավկազ» թերթի սրբագրիչ»։

Ն. Ն. Ֆլերովը ոչ միայն հաստատում է Կամոյի մասին Գորկու լսած բոլոր պատմությունները, այլև իր հերթին պատմում է մի քանի նոր ու հետաքրքիր էպիզոդներ Կամոյի թե՛ ընդհատակյա ռևոլյուցիոն գործու-

նեությունից, և թե՛ Բաքվում նրա հետ ունեցած իր հանդիպումների մասին:

Ռեակցիայի տարիներին Գորկին մի առ ժամանակ ստիպված է լինում հեռանալ Ռուսաստանից և բնակություն հաստատել Կապրի կղզում: Այնտեղ օտար հորիզոնների տակ գտնվող Գորկին չնայած զրկված էր հայրենիքում բուռն թափով ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին անմիջականորեն մասնակցելու հնարավորությունից, բայց և այնպես դա չխանգարեց նրան բազմաթիվ թելերով կապված մնալու այդ շարժումների ու նրա ղեկավարների հետ: Գորկուն հաճախակի այցելում էին բոլշևիկյան պարտիայի ականավոր ներկայացուցիչները: Նա խորազնին հետևում էր Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների զարգացման ընթացքին, բոլշևիկյան պարտիայի լեգալ ու անլեգալ աշխատանքներին: Նրա արծվային սրատես հայացքի տեսադաշտից դուրս չէին մնում նաև ռևոլյուցիոն առանձին գործիչների փառապանծ սխրագործությունները: Իր վերոհիշյալ հուշերում Գորկին գրում է. «Մի երկու տարի անց, Կապրի կղզում Կամոյի կերպարը դարձյալ իմ աչքի առաջ բերեց Լեոնիդ Կրասինը: Մենք վերհիշում էինք մեր ընկերներին, և նա ժպտալով հարցրեց.

— Իսկ հիշո՞ւմ եք, որ Մոսկվայում ձեզ զարմացրեց այն, երբ ես փողոցում աչքով արի պճնված մի սպայի— կովկասցու: Դուք զարմացած հարց տվիք, թե ո՞վ է նա: Ես ձեզ ասացի— իշխան Դադեշկելիանի, մի ծանոթ Թիֆլիսից: Հիշո՞ւմ եք: Ինձ թվաց, թե դուք չհավատացիք այդպիսի աքլորի հետ ծանոթ լինելուս և կարծես թե նույնիսկ կասկածեցիք, որ չարաճճի խաղ եմ անում: Իսկ դա Կամոն էր: Նա հրաշալի խաղաց իշխա-

նի դերը: Այժմ նա ձերբակալված է Բեռլինում և բանտարկված է այնպիսի պայմաններում, որ հավանաբար նրա երգը երգված է: Խելագարվել է: Մեր մեջ ասած, այնքան էլ խելագարված չէ, բայց դա հազիվ թե նրան փրկի: Ռուսական դեսպանությունը պահանջում է հանձնել նրան իբրև քրեական հանցագործի: Եթե ժանդարմներին հայտնի լինի թեկուզ կեսն այն ամենի, ինչ արել է նա,— կկախեն Կամոյին:

Ես երբ պատմեցի այն ամենը, ինչ լսել էի Կամոյի մասին և Կրասինին հարցրի, թե որքա՞ն է այդ ճշմարիտ, նա մտածելուց հետո պատասխանեց.

— Հնարավոր է, որ բոլորը ճշմարիտ լինի: Ես էլ եմ լսել այդ բոլոր պատմությունները նրա արտասովոր հնարամտության և հանդգնության մասին»:

Կամոյի առասպելական խիզախության ու հերոսական գործունեության մասին Գորկին տասնյակ ու հարյուրավոր պատմություններ էր լսում: Նա շատ էր ցանկանում ռևոլյուցիայի փոթորիկների այդ լեգենդար մարտիկին տեսնել, լսել նրան: Սակայն պատմական իրադարձություններն այնպես են դասավորվում, որ Գորկին հնարավորություն չի ունենում հանդիպելու Կամոյին: Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայից հետո միայն Գորկին կարողանում է անձամբ ծանոթանալ Կամոյի հետ: Այդ մասին Գորկին հետևյալն է գրում. «Կամոյի հետ ես անձամբ ծանոթացա 1920 թվին Մոսկվայում, Ֆորտունատովայի բնակարանում, որն իմ նախկին բնակարանն էր, Վոզդվիժենկա և Մոխովայա փողոցների անկյունի տանը: Ամրակազմ, ուժեղ մի մարդ էր նա, կովկասցու տիպիկ դեմքով, մեղմ, թուխ աչքերի լավ, չափազանց ուշադիր և խիստ հայացքով,

հագել էր Կարմիր Բանակի մարտիկի համազգեստ: Զգուշավոր ու անվստահ շարժումներից զգում էիր, որ անսովոր միջավայրը փոքր-ինչ շփոթեցնում է Կամոյին: Իսկույն հասկացվում էր, որ ռևոլյուցիոն աշխատանքի վերաբերյալ հարցուփորձը ձանձրացրել է նրան և որ նա ամբողջապես կլանված է մի այլ բանով: Նա պատրաստվում էր մտնել Զինվորական Ակադեմիա:

— Դժվար է հասկանալ գիտությունը,— դառնացած ասում էր նա, ձեռքի ափով խփելով և շոյելով մի ինչ-որ դասագիրք, ասես թե բարկացած շան փաղաքշելիս լիներ:— Նկարները քիչ են: Գրքերում պետք է շատ նկարներ տալ, որպեսզի իսկույն երևա, թե ինչ բան է դիսլոկացիա: Դուք գիտե՞ք, ինչ բան է այդ:

Ես չգիտեի, իսկ Կամոն շփոթված ժպտալով ասաց.

— Այ, տեսնո՞ւմ եք...

Նրա ժպիտն անզոր էր և ինչ-որ մանկական: Այդ անօգնականությունը լավ ծանոթ էր ինձ, ես պատանի ժամանակս նույնպես հաճախ զգացել էի այն, թափանցելով գրքերի բանավոր իմաստության մեջ: Ես հասկանում էի նաև այն, թե ինչքան դժվար պետք է լինի գրքի դիմադրության հաղթահարումը խիզախ պրակտիկի կողմից, որի համար ռևոլյուցիային ծառայելը ամենից առաջ՝ գործն է, նոր փաստերի ստեղծագործությունը:

Այդ հանգամանքը, Կամոյի հետ ունեցածս առաջին իսկ հանդիպումից, ջերմ համակրություն առաջացրեց իմ մեջ նրա հանդեպ, իսկ ինչքան ավելի ծանոթացա, այնքան ավելի նա սկսեց զարմացնել ինձ իր ռևոլյուցիոն զգացմունքի խորությամբ, ամբողջականությամբ և հըրտամկությամբ: Այն ամենն, ինչ ես գիտեի Կամոյի ա-

ռասպելական խիզախության, նրա գերմարդկային կամքի, ապշեցուցիչ ինքնատիրապետման մասին, միանգամայն անհնար էր միացնել այն մարդու հետ, որ նստած էր իմ դիմաց, դասագրքերով ծանրաբեռնված սեղանի առաջ: Անհավատալի էր, որ ուժերի այդպիսի երկարատև լարում ապրելուց հետո, նա մնացել էր այդքան պարզ, սիրելի ընկեր և պահպանել իր հոգեկան երիտասարդությունը, թարմությունը, ուժը»:

Անձամբ լսելով Կամոյից նրա հերոսական կյանքի առանձին դրվագները, Գորկին ամեն կերպ համոզում է նրան գրի առնել իր հիշողությունները: Գորկին ոչ միայն խրախուսում, այլև խոստանում է այդ գործում օժանդակել Կամոյին: Ահա թե ինչ է գրում այդ մասին Գորկին. «Ես սկսեցի նրան համոզել, որ գրի առնի իր հիշողությունները, համոզում էի, որ նրանք չափազանց օգտակար կլինեն տեխնիկական աշխատանքին անծանոթ երիտասարդության համար: Նա երկար ժամանակ չէր համաձայնում, բացասաբար թափ տալով գանգրահեր գլուխը:

— Չեմ կարող: Ի վիճակի չե՜մ: Ես ի՞նչ գրող եմ, անկուլտուրական մարդ եմ:

Բայց համաձայնեց, երբ գտավ, որ իր հիշողությունները նույնպես ծառայություն են ռևոլյուցիայի համար: Եվ իրոք, ինչպես միշտ իր կյանքում, որոշում ընդունելուն պես նա իսկույն գործի անցավ:

Նա գրում էր ոչ այնքան գրագետ, գրում էր չոր և բացահայտ կերպով աշխատում էր ավելի շատ խոսել ընկերների, քան թե իր մասին: Երբ ես այդ մասին նրան նշեցի, նա բարկացավ.

— Ի՞նչ է, ինքս ինձ վրա պիտի աղոթե՞մ։ Ես տերտեր չեմ։

— Մի՞թե տերտերներն իրենց վրա աղոթում են։

— Հապա, էլ ո՞վ։ Օրիորդնե՞րն են աղոթում։

Բայց դրանից հետո սկսեց գրել ավելի վառ և ավելի քիչ զսպվածությամբ իր մասին։ Նա առանձին յուրատեսակ գեղեցկություն ուներ, ոչ իսկույն աչքի զարնող գեղեցկություն։ Նստած է իմ առաջ ուժեղ, ճարպիկ մի տղամարդ Կարմիր Բանակի մարտիկի համազգեստով, իսկ ես նրան տեսնում եմ իբրև բանվոր, հավկիթ փոխադրող, կառապան, պճնամոլ իշխան Դադեշկելիանի, շղթայված խելագար, որ ստիպեց գիտնական իմաստուններին հավատալու իր խելագարության ճիշտ լինելուն»։

Գորկին իր հիշողությունների մեջ մեծ ջերմությամբ ու իրեն հատուկ վարպետությամբ կարողացել է պատկերել Կամոյի ռևոլյուցիոն հերոսական սխրագործություններով հարուստ կյանքի մի քանի բնորոշ գծերը։ Այդ հիշողություններն իրենց բնույթով եզակի են ու խիստ արժեքավոր։

«Ինձ համար,— գրում է Գորկին,— Կամոն մեկն է այն ռևոլյուցիոներներից, որոնց համար ապագան ավելի ռեալ է, քան ներկան։ Այդ բնավ չի նշանակում, որ նրանք երազողներ են, ոչ, այդ նշանակում է, որ նրանց հուզական, դասակարգային ռևոլյուցիոն ուժն այնքան ներդաշնակորեն ու ամուր է կազմակերպված, որ սնունդ է տալիս բանականությանը, իբրև հող է ծառայում նրա աճման համար, գնում է ասես նրա առջևից։ Ռևոլյուցիոն աշխատանքից դուրս, ամբողջ գործունեությունը, որոնք

ապրում է նրանց դասակարգը, նրանց թվում է վատ երազի, մղձավանջի պես մի բան, իսկ ռեալ իրականությունը, որի մեջ ապրում են նրանք, դա սոցիալիստական ապագան է»:

Կամոն իր հերթին բացառիկ հարգանք է տածել պրոլետարիատի հանճարեղ գրողի հանդեպ: Հաճախակի հանդիպելով Լենինին, Ստալինին, Շահումյանին ու Օրջոնիկիձեին, նա շատ անգամ առիթ է ունեցել լսելու նրանցից Գորկու անունը և նրա խոշոր դերի ու նշանակության մասին պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի համար: Ահա թե ինչու Կամոյի համար Գորկին եղակի, անփոխարինելի մեծություն էր, որից նա երեխայի պարզությամբ ակնածում էր և որին լսում էր մեծ պատրաստակամությամբ: Կամոն Գորկուն համարում էր բանվորների ու բոլոր աշխատավորների բարեկամը և նրանց արդար գործի, պայքարի ու հաղթանակի մեծագույն երգիչը:

Շատ է գրվել Կամոյի մասին, սակայն նրա լեգենդար ու հիասքանչ կերպարը և ընդհատակյա ռևոլյուցիոն հոյակապ գործունեությունը՝ կապված ընդհանուր ռևոլյուցիոն շարժման հետ, դեռևս իր ամբողջական պատկերացումը չի գտել գրականության մեջ:

Կամոյի հերոսական կյանքին նվիրված առանձին գրքերը շատ հեռու են նրա ամբողջական կերպարը պատկերելուց, նրանք հաճախ թերի են և նույնիսկ զերծ չեն սխալ մեկնաբանություններից:

Այդպիսի գրքերից մեկի հրատարակության առթիվ 1931 թվին Գորկին իր մի հոդվածում գրում է. «Եթե Գիխլի խմբագիրը կարդար Օկուլովի ձեռագիրը, նա կհամոզվեր, որ այդ գռեհիկ գրվածքը վարկաբեկում է

Կամոյի պատկերը, մի ռևոլյուցիոների, որն ունեցել է համարյա լեգենդար անվեհերություն, եղել է զարմանալի ճարպիկ, հաջողակ և միաժամանակ երեխայի պես պարզամիտ»:[1]

Իրավացի է Գորկին, երբ գրում է, որ «Կամոյի տիպի մարդիկ դեռ չունեն իրենց գործունեության պատմությունը»: Ա. Շչերբակովին ուղղած նամակում Գորկին Ստեփան Շահումյանից հետո նշում է Կամոյի անունը, որի հարուստ կյանքի մասին անհրաժեշտ է համարում գրքեր գրել աճող երիտասարդ սերնդի համար:

1 М. Горький — Литературно-критические статьи, Москва, 1937 г. стр. 473.

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախ քան Գորկու ստեղծագործությունների բոլշևիկյան հայ գրական քննադատության մասին խոսելը, մենք անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել մինչ այդ՝ Գորկու մասին եղած հայ գրական քննադատության վրա։

Գորկու ստեղծագործությունների շուրջն ստեղծված հայ գրական քննադատությունը ձևավորվել է ժամանակի ռուս գրական քննադատության տարբեր հոսանքների ուժեղ ազդեցության տակ։ Այն սուր, հակոտնյա պայքարը, որը ծավալվել էր Գորկու ստեղծագործությունների շուրջը ռուս գրական ու քաղաքական աշխարհում, իր բազմակողմանի արձագանքն է գտնում նաև հայ իրականության մեջ։

900-ական թվականներից սկսած հայ մամուլի էջերում բազմաթիվ հոդվածներ են տպագրվում Գորկու ստեղծագործությունների մասին։ Այդ հոդվածները ծանոթացնում էին հայ ընթերցողին մեծ գրողի կյանքին ու

գրական գործունեությանը, կենդանի հետաքրքրություն էին առաջացնում Գորկու ստեղծագործությունների հումանիզմի, նրա ազատատենչ գաղափարների նկատմամբ։

Ինչպես հայտնի է, Գորկին իր գրական գործունեությունը սկսել է Անդրկովկասում և, հայ ինտելիգենցիան արդեն ճանաչում էր նրան։ Նրա ստեղծագործությունները, վաղ շրջանից սկսած, ջերմ ընդունելություն են գտնում հայ իրականության մեջ։ Հայ մամուլը իր էջերում լայն տեղ է հատկացնում մեծ գրողի թե՛ երկերի թարգմանության և թե՛ նրա մասին գրված հոդվածներին։

1900 թվին «Մշակ» թերթը տպագրում է հայտնի թարգմանիչ Տ. Հովհաննիսյանի հոդվածաշարքը Մ. Գորկու պատմվածքների ռուսերեն հրատարակության առաջին, երկրորդ և երրորդ հատորների մասին։ Այդ հոդվածներից մեկում Տ. Հովհաննիսյանը գրում է. «Գորկու գրվածքների մեջ լսվում են ինչ որ մրրիկների մռնչյուններ։ Անսովոր, մրրկասեր, ըմբոստ տաղանդ է Գորկու տաղանդը»։[1]

1900 թվի սկզբներին Տ. Հովհաննիսյանի գրած այս տողերն առանձնապես նշանակալից են, քանի որ Գորկին դեռևս իր հռչակավոր «Մրրկահավը» չգրած, ընթերցող մասսաներն արդեն նրա մեջ տեսնում էին մրրկահավի ռևոլյուցիոն ապագա երգչին։ Նույն՝ 1900 թվին Տ. Հովհաննիսյանը թարգմանում ու «Մշակի» էջերում տպագրում է Գորկու «Երգ բազեի մասին» և «Մարդկանց դատաստանը» պատմվածքները։

1 «Մշակ», № 101, 1900 թ.։



Իր այս նկարը Մ. Գորկին նվիրել է «Տարազ»-ի խմբագրին, հետևյալ մակագրությամբ «Տիգրան Յակովլևիչ Նազարյանին հարգանքով—Մ. Գորկի. Կապրի—1911 թ».։

Գորկու մի շարք պատմվածքների թարգմանություն-ները տպագրելուց հետո «Տարազ» պատկերազարդ ամ-սագիրը 1900 թվին զետեղում է նրա ընդարձակ կեն-սագրությունը՝ հայ հասարակությանը մեծ գրողի կյան-քի գլխավոր դրվագներին ու հանճարեղ ստեղծագործու-թյուններին հանգամանորեն ծանոթացնելու համար։

Նույն՝ 1900 թվին, «Տարազի» էջերում պրոֆ. Խ. Սամվելյանը տպագրում է մի ծավալուն հոդված՝ նվիր-ված Գորկու ստեղծագործություններին։ Հայ մամուլի էջերում Գորկու երկերի դա առաջին լուրջ գնահատական հոդվածն էր, ուր հեղինակը հաջող կերպով ցույց է տա-լիս Գորկու ստեղծագործությունների հասարակական-սոցիալական խոշոր նշանակությունը։

Խոսելով Գորկու երկերի ընդհանուր բնույթի մասին, պրոֆ. Խ. Սամվելյանը գրում է. «Գորկին համարյա ա-ռաջին գրողն է, որ իր հանճարեղ, գեղարվեստական գրչով ստեղծեց մի շարք փայլուն պատկերներ և ո՞ւմ— թափառաշրջիկների, բանվորների, մի խոսքով ռուս պրոլետարիատի կյանքից, որ նրա սրտին այնքան մոտ է, որի դառը բաժակից ինքն էլ է ըմպել։ Կարդալով Գորկու բոլոր գրվածքները, անպատճառ կզգաք յուրաքան-չյուր քայլափոխում հեղինակի ներկայությունը։ Կզգաք, թե ինչպես նրա մեջ անդրադարձել է պրոլետարիատի հոգին, ինչպես նա տանջվում, ապրում է իր հերոսների հետ, որոնք մի կենդանի բողոք են տիրող անձկության, մասսայի կյանքի՝ նիրվանի իդեալին հասցրած անտար-բերության դեմ։ Նրա հերոսները մի-մի ռեակցիա են հա-սարակական ընդհանուր թուլասրտության, հնազանդա-

1 «Տարազ», № 38, 1900 թ.։

մոլության, կյանքին հարմարվելու հատկությունների դեմ...»։[1]

Գորկին իր ստեղծագործությունների մեջ հանճարեղ կերպով մերկացրել է ցարական Ռուսաստանի դաժան իրականությունը, որի ծանր ու խեղդող մթնոլորտում միլիոնավոր աշխատավորներ էին ապրում։ Գորկին մեծ վարպետությամբ պատկերել է հասարակական խմորումները և այն նոր ուժերին, որոնք աստիճանաբար աճում, հատակից բարձրանում ու առնական մարտակոչ էին ազդարարում տիրող կարգերին։ Պրոֆ. Խ. Սամվելյանը Գորկու հերոսների մասին հետևյալն է գրում. «Մարդս ակամա հարց է տալիս՝ տեսնելով Գորկու հերոսների երկար շարքը. մի՞թե հասարակությունն այդ աստիճան լարված է, այդ աստիճան խռովահույզ հոգով է ապրում»։[2]

Տիրող հասարակական հեղձուցիչ մթնոլորտում Գորկու հերոսները ճնշվում ու հալածվում են, սակայն նրանք չեն ընկճվում երբեք ու շարունակում են վառ կրքոտությամբ սիրել ազատությունն ու պայքարել նրա համար. «Իսկ ազատություն կարող են սիրել նրանք,— գրում է Սամվելյանը,— որոնց մեջ կա ուժ, կա ունակություն։ Թեկուզ կյանքը ամեն քայլափոխում ճնշում է նրանց, թեկուզ հասարակությունն իր աշխարհայացքով, իր կեղծ ու պատիր պահանջներով հալածում է դրանց, բայց և այնպես նրանց մեջ կա կյանքի, կռվի տենչանք...»։

Իր արժեքավոր այդ հոդվածը պրոֆ. Խ. Սամվելյանն ավարտում է «Բազեի երգ»-ի հետևյալ տողերով.

---

[1] *«Տարազ», № 38, 1900։*

[2] *Նույն տեղում։*

«... բու անունը հողով քաջարի և ուժեղների երգերի միջին հավետ կհնչե, որպես ուժգին կոչ, դեպի ազատություն ու դեպի լույսը»:

1902 թվին «Լումա» ամսագիրը տպագրում է Մ. Բերբերյանի ընդարձակ հոդվածը՝ Գորկու կյանքին ու գրական գործունեությանը նվիրված: Բերբերյանը, որ մինչ այդ հայ հասարակությանը հայտնի էր իր հոդվածաշարքով՝ նվիրված ռուս կլասիկ ու ժամանակակից գրականությանը, ռուսական դրամատուրգիային և ռուս-հայ գրական կապերին, մեծ ոգևորությամբ է խոսում Գորկու ստեղծագործությունների մասին. «Գորկու հետ ծանոթանալ,— գրում է Բերբերյանը,— կնշանակե ծանոթանալ մի վերին աստիճանի տաղանդավոր, բոլորովին ինքնուրույն, «ինքնածնունդ» հեղինակի հետ և մեզ բոլորիս համար նոր շրջանի, մարդկանց նոր դասակարգի հետ»:[1]

Գորկու գրվածքները տարածվում էին տասնյակ հազարավոր օրինակներով: Դա բացառիկ երևույթ էր ցարական Ռուսաստանի պայմաններում: Հոդվածագիրը փորձում է բացատրել Գորկու ստեղծագործությունների չտեսնված հաջողությունների պատճառները: Նա գրում է. «Ոչ մի ռուս հեղինակի գրվածքները կարճ ժամանակվա մեջ այնպիսի քանակությամբ չեն տարածվել— ինչպես Գորկու գրքերը: Մինչև այժմ նա հրատարակել է վեպերի և վիպակների հինգ հատոր, որոնցից առաջինը 32 հազար է ցրվել, երկրորդը 28 հազար, երրորդը 26 հազար... վերջապես մի ամիս առաջ լույս տեսած „Мещане“ դրաման արդեն 25 հազար օրինակ է տա-

[1] «Լումա», № 3, 1902 թ.:

րածվել։ Այդպիսի չտեսնված հաջողությունները բացատրվում է զանազան պատճառներով։ Անշուշտ այդ պատճառների մեջ առաջին տեղն է բռնում հեղինակի անսովոր տաղանդը, բայց չպետք է անտես առնվեն և ա) հեղինակի տենդենցիան, որ դուր է գալիս արդի ռուս ընթերցող հասարակությանը, բ) Գորկու տիպերը, որոնք մեծ մասամբ նորություն են գրականության մեջ...։ Գորկին նոր տաղանդ է և իբրև այդպիսին հաջող րոպեին երևաց»։[1]

Գորկու հերոսները, մյուս գրողների ստեղծած հերոսների համեմատությամբ, ավելի ըմբոստ և ուժեղ են, նրանք ոգեշնչում են մասսաներին, պայքարի մղում լուսավոր ու ազատ ապագայի համար։ «Նայեցեք ձեր չորս կողմը,— գրում է Բերբերյանը,— կարդացեք Չեխովի գրվածքները և դուք կտեսնեք, որ միջին դասակարգը զուրկ է որևէ ձգտումից, որևէ իդեալից։ Բուրժուան ապրում է գոհ իր դրությունից, ինտելիգենտի վրա կարելի չէ հույս դնել, դրանք չեն, որ պիտի կարողանան լավագույն կյանքի ձգտելով՝ խոսքից գործի անցնեն։ Եվ Գորկին գտնում է այդպիսիներին՝ դրանք նրա հերոսներն են»։[2]

Գորկու մեծ վարպետությամբ կերտած հերոսները, տիպերը ոչ թե մտացածին են, այլ կենդանի ու ռեալ։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Բերբերյանը. «Գորկու տիպերը վերին աստիճանի կենդանի են, որովհետև ուղղակի կյանքից են վերցրած»։

Հոդվածի վերջում Բերբերյանը խոսում է Դանկոյի

---

1 «Լումա», № 3, 1902 թ.։

2 Նույն տեղում։

մասին, պատմելով, թե ինչպես Դանկոն իր կյանքի գնով ազատում է ժողովրդին խավարի ահավոր ճիրաններից ու դեպի պայծառ լույս տանում. «Որպիսի՜ սեր, որպիսի ոգևորություն, կամքի ուժ և տոկունություն»,— բացականչում է հոդվածագիրը:

Բերբերյանի հոդվածը զերծ չէ թերություններից: Հեղինակի աշխարհայացքի սահմանափակությունը հնարավորություն չի տվել նրան լիովին բացահայտելու Գորկու ստեղծագործությունների սոցիալական էությունը, նրանց ռևոլյուցիոն նշանակությունը, բայց, չնայած այդ թերություններին, Բերբերյանի հոդվածում կան նուրբ ու հետաքրքիր դիտողություններ Գորկու երկերի մասին: Այդ հոդվածը ժամանակին ունեցել է իր դրական նշանակությունը. նա հայ ընթերցողին ծանոթացրել է Գորկու կյանքին ու նրա հարուստ ստեղծագործություններին, հետաքրքրություն է առաջացրել դեպի Գորկու երկերը: Հիացած Գորկու ստեղծագործություններով՝ դեռևս 1902 թվին Բերբերյանը գրում է. «Սա մի հեղինակ է, որը զգալ և մտածել է տալիս, որը բաց է անում մեր առաջ կյանքի նոր խավեր, ոգևորում է նոր իդեալներով և մղում է մեզ դեպի լուսավոր ապագան»:[1]

Անհրաժեշտ է նշել, որ ընդհուպ մինչև 1905 թիվը հայ գրական քննադատությունը Գորկու ստեղծագործությունների մասին ընդհանուր առմամբ դրական է արտահայտվել: Դրությունը որոշակի փոխվում է 1905 թվից հետո:

Ինչպես հայտնի է, դեռևս 1905 թվականի նախօրյակին, երբ Մաքսիմ Գորկին կալանվեց Ռուսաստանի բան-

[1] «Լումա», № 3, 1902 թ.:

վորական շարժման հետ և հետո հարեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի բոլշևիկյան թևին, բուրժուական մամուլն ու գրական քըննադատությունը մեծ վայնասուն բարձրացրին Գորկու շուրջը. տասնյակ հոդվածներ տպագրվեցին այն մասին, թե Գորկու տաղանդն այլևս չի փայլում առաջվա պես, թե Գորկու գեղարվեստական երկերը լոկ հրապարակախոսական ճառեր են, թե նա սոսկ մի պրոպագանդիստ է, և նման մի շարք պրովոկացիոն հայտարարություններ արվեցին Գորկու հասցեին։ Այդ գործում փոքր դեր չէր կատարում մենշևիկյան և սև-հարյուրակային քննադատությունը։ Պայքարը Գորկու շուրջն առանձնապես սուր բնույթ ստացավ 1905 թվից հետո սկիզբ առած ռեակցիայի տարիներին։

Բոլշևիկյան պարտիան, Լենին-Ստալինի գլխավորությամբ, իր պաշտպանության տակ առավ պրոլետարիատի մեծ երգչին։ Լենինը մեծագույն հանճարի խորը հեռատեսությամբ նախազգաց Գորկու խոշոր դերը պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի և սոցիալիստական կուլտուրայի զարգացման դժվարին գործում։ Ահա թե ինչու իր հոդվածներից մեկում նա գրում է. «Կասկած չկա, որ Գորկին հսկայական գեղարվեստական մի տաղանդ է, որը շատ օգուտ է բերել և բերելու է համաշխարհային պրոլետարական շարժմանը»։[1]

Պայքարը Գորկու համար ոչ թե նեղ գրական պայքար էր, այլ լուրջ և բավականին սուր բնույթի քաղաքական պայքար։ Դա պայքար էր հանուն պրոլետար-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 23, էջ 446։

կան, սոցիալիստական կուլտուրայի զարգացման ու հաղթանակի: Նախառևոլյուցիոն շրջանի բոլշևիկյան լեգալ ու անլեգալ մամուլում տասնյակ հոդվածներ են տպագրվել Գորկու ստեղծագործությունների համաշխարհային նշանակության մասին: Մեծ էր Գորկու գեղարվեստական խոսքի արժեքը ռևոլյուցիոն պրոպագանդայի և ագիտացիայի համար: Բոլշևիկների պարտիայի լավագույն մարտիկները, իրենց հրապարակախոսական գործունեության ընթացքում, քանիցս հանդես են եկել Գորկու ստեղծագործություններին նվիրված հոդվածներով: Բոլշևիկյան մամուլի այնպիսի գործիչներ, ինչպես Լունաչարսկին, Վորովսկին, Սկվորցով-Ստեպանովը, Օլմինսկին և շատ ուրիշները, Լենինի և Ստալինի ցուցումներով, մեծ ռևոլյուցիայից շատ առաջ գրած իրենց սքանչելի հոդվածներում Գորկուն ըստ արժանվույն մեծարում ու պաշտպանում էին բուրժուազիայի հարձակումներից, նրա ստեղծագործական աշխատանքին նոր եռանդ ու թափ հաղորդելով: Գորկու ստեղծագործությունների շուրջը տեղի ունեցող այդ պայքարն իր խոր արձագանքն է գտնում նաև Անդրկովկասում:

Հայ իրականության մեջ Գորկու համար մղվող պայքարը գլխավորում էին Լենինի և Ստալինի լավագույն զինակիցներ և աշակերտներ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը:

Ստեփան Շահումյանը բոլշևիկյան պարտիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է, Լենինի և Ստալինի հավատարիմ զինակիցն ու աշակերտը: Իր ամբողջ կյանքը նա նվիրաբերել է պրոլետարիատի հերոսական պայքարի մեծ գործին:

Ստեփան Շահումյանը թողել է գրական խոշոր ժառանգություն, որի մեջ նշանակալից տեղ են գրավում նրա հոդվածները գեղարվեստական գրականության մասին։ Նախահեղափոխական մարքսիստական գրականագիտության մեջ Շահումյանի հոդվածները հայ, ռուս և եվրոպական գրականության մասին՝ գրավում են ակնառու տեղ։ Մեծ են այդ հոդվածների արժեքն ու նշանակությունը, քանի որ նրանք գրված են Լենինի ցուցումներով ու լենինյան ոգով։ Մեր խոսքն առաջին հերթին վերաբերում է Լ. Տոլստոյի ու Մաքսիմ Գորկու մասին Շահումյանի գրած հոդվածներին։

Շահումյանն առաջինն էր, որ թարգմանեց Մաքսիմ Գորկու «Մի անգամ աշնանը» պատմվածքը։ Դա Գորկու առաջին երկն էր, որ առանձին գրքույկով լույս տեսավ 1901 թվականին, հայերեն լեզվով։

1907 թվի մայիսին, Լոնդոնում, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի հինգերորդ համագումարում Շահումյանը ծանոթացավ պրոլետարիատի մեծ գրողի հետ և իր անսահման հիացմունքը հայտնեց նրան գեղարվեստական փայլուն ստեղծագործությունների առթիվ, որոնք խոշոր լիցք էին հաղորդում աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն պայքարի մեծ գործին։

1911 թվին Շահումյանը, իր խմբագրությամբ հրատարակվող բոլշևիկյան „Современная жизнь" շաբաթաթերթում, հանդես է գալիս մի ընդարձակ քննադատական հոդվածով՝ նվիրված Գորկու ստեղծագործություններին։ Իր այդ հոդվածում լենինյան անողոքությամբ Շահումյանը հարվածում է բուրժուազիայի բոլոր տեսակի գրչակներին, որոնք ամեն կերպ ձգտում էին

վարկաբեկել Գորկի-արվեստագետին, աղավաղել նրա հասարակական ու քաղաքական դեմքը՝ Անդրկովկասի աշխատավորության առաջ։

Շահումյանն իր այդ հոդվածի հենց առաջին տողերում բնորոշում է Գորկու, որպես գրողի, դերը ռուս հասարակական կյանքում։ Նա գրում է. «Մաքսիմ Գորկին ռուս բանվորների սիրելին է։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Դուրս գալով ժողովրդական «ստորին» խավերից, ինքնուս գրող, նա իր մեջ զարգացրել է գեղարվեստական մեծ տաղանդ։ Ապա հասնելով գրական փառքի բարձունքներին, դառնալով պաշտոնական ընթերցող հասարակության կուռքը, նա իր բնական զարգացման ընթացքով եկավ բանվորների մոտ, որոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը»։[1]

Շահումյանի հիմնական հարվածն ուղղված էր «Բաքու» բուրժուական թերթի դեմ, որը մի քանի հոդված էր տպագրել Գորկու մասին, աղավաղել նրա ստեղծագործությունների իմաստը։ Թերթի գլխավոր աշխատակից, հետագայում նաև խմբագիր, Գր. Սարգսը իր մի հոդվածում խեղաթյուրում է Գորկու «Տրամնջներ» և «Մորդովկա» պատմվածքների իմաստը, նպատակ ունենալով վարկաբեկել մեծ գրողին։ Շահումյանը, մերկացնելով Գր. Սարգսին, գրում է. «Տվյալ դեպքում հարցը միայն այն չէ, թե դո՞ւր է գալիս ընդհանրապես Գորկին Սարգսին, թե՞ ոչ, թաղո՞ւմ է արդյոք նա նրան, թե՞ խղճում է իր բարի պաշտոնակցի նման։ Այդ բոլորը, գուցե վերջիվերջո, պարզապես ճաշակի խնդիր է։ Մար-

[1] „Современная жизнь“, № 1, 1911 г.



ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

ՄԻ ԱՆԳԱՄ
ԱՇՆԱՆԸ...

Թարգմ. Ս. Շահումեանցի

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսեանցի տպարան Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1—2.
1901

Մ. Գորկու «Մի անգամ աշնանը» գրքույկի առաջին հրատարակության շապիկը։

դուռ դուր չի գալիս Գորկին և նա այդ արտահայտում է. ուզում է նա թաղել Գորկուն և թաղում է։ Ի՞նչ կարելի է այստեղ առարկել նրան։ Բայց հարգելի հոդվածագիրը տվյալ դեպքում չի բավականանում միայն դրանով, նա իր բորբոքված մոլեռանդությամբ հասնում է մինչև խակական քերականություն՝ զարմանալի անգամ այնպիսի «լրագրողների» համար, ինչպիսին Սատրցևն է, ու այնպիսի թերթի համար՝ ինչպիսին է «Բարուն»։[1]

Մի առ մի ցույց տալով քննադատ Գր. Սատրցևի գրական կեղծիքները, գրական բարքերի տեսակետից անթույլատրելի մեքենայությունները, ընդհանրացնելով այդ բոլորը, որպես բուրժուական մամուլի ու նրա վաճառված աշխատակիցների բնորոշ վարքագիծ, Շահումյանը գրում է. «Ինչո՞ւ համար է հնարել այդ բոլորը Սատրցևը։ Արել է նա այդ փոտակցաբե՞ն, թե՞ նրան որևէ մեկը ծառայություն է մատուցել՝ սխալ հաղորդելով պատմվածքների բովանդակությունը, ու նա էլ, անձամբ չկարդալով, շտապ կերպով, հավատալով ուրիշներին, «թխել է» իր ամենօրյա պարտադիր հոդվածը. կամ թե նա կարդացել է պատմվածքները, բայց նրա հետ տեղի է ունեցել որոշ հոգեբանական շեղում և նա այնտեղ տեսել է այն, ինչ նրան պետք է հենց այդպիսի «անհրաժեշտ» հոդված գրելու համար— դա, իհարկե, դժվար է պարզել։ Բայց դա մեզ համար կարևոր էլ չէ։ Կարևորն այն է, որ բոլոր նման «քննադատները» խոսելով բանվորական գրող Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ այն բոլորի մասին, ինչ վերաբերում է բանվորներին, ոչ մի կերպ չեն կարողանում, փոտակ-

[1] „Современная жизнь“, № 1, 1911 г.

ցորեն թե անգիտակցորեն, խուսափել ստից, խեղաթյուրումներից, զրպարտություններից»։[1]

Հանգամանորեն քննության առնելով Գորկու հոդվածը «Ինքնուս գրողների մասին», Շահումյանը ցույց է տալիս նրա սերտ կապը ժողովրդական լայն մասսաների և հատկապես ժողովրդի ծոցից ելած սկսնակ գրողների ու թղթակիցների հետ։ Այդ գրողներն ու թղթակիցները միատարր չեն, նրանք հասարակության տարբեր խավի, տարբեր զբաղմունքի, տարիքի ու սեռի մարդիկ են։ Խոշոր նշանակություն տալով ժողովրդի հետ ունեցած Գորկու այդ կապերին, Շահումյանը գրում է. «Հազարավոր թելեր ձգվում էին գիտակից կյանքի համար արթնացող, «ժողովրդի ծոցից ելած» գրականությամբ հետաքրքրվող մարդկանց սրտերից դեպի իրենց պանծալի եղբայրակից՝ ինքնուս-գրող Մաքսիմ Գորկին։ Ով կարիք էր զգում արտահայտելու իր զգացմունքները ու խոհերը մոտիկ մարդու առաջ, ում մեջ ցանկություն էր հղանում գրել որևէ բան, փորձել իր քանքարը գրականության մեջ, նրան էր ուղարկում իր ձեռագրերը, նամակները, բանաստեղծությունները։ Գորկու թղթակիցների մեջ դուք կհանդիպեք բանվորների, գյուղացիների, կոշկակարների, դռնապանների, կառապանների, խոհարարուհիների, սպասուհիների, պոռնիկների, խնձորավաճառների, լվացարարուհու, գերեզմանապահի, զինվորի, աքսորականի, տաժանակիրների և այլն և այլն»։[2]

Հայտնի է, թե Գորկին ինչպիսի մեծ ուշադրությամբ ու բացառիկ հոգատարությամբ էր վերաբերվում իրեն

[1] „Современная жизнь", № 1, 1911 г.

[2] Նույն տեղում։

ուղղված ամեն մի տողի հանդեպ: Մեծ գրողը կարդում, ուղղում և խմբագրում էր հազարավոր ձեռագրեր ու գրում դրանց մասին: Այդ տեսակետից ուրիշ և ոչ մի գրող չէր կարող համեմատվել Գորկու հետ, ահա թե ինչու Շահումյանն անհրաժեշտ էր համարում ընդգծել այդ հանգամանքը: Նա գրում է. «...նրանց բոլոր գրվածքները, ինչպես երևում է հոդվածից, Գորկին խնամքով ու զարմանալի սիրով և ուշադրությամբ կարդում է և ուսումնասիրում: Նա գրագրություն ունի նրանցից շատերի հետ, խորհուրդներ է տալիս նրանց, երբ նրանից խնդրում են, ասում է, թե ով ինչպիսի գրքեր պետք է կարդա, ինչպես գրել, ինչ անել: Հոդվածի յուրաքանչյուր տողից երևում է հեղինակի զարմանալի նուրբ, ազնիվ հոգին, լցված անսահման սիրով դեպի «տառապյալի կյանքի մարդիկ», ինչպես ինքն է արտահայտվում նրանց մասին: Ռուս, համենայն դեպս ժամանակակից գրականության մեջ մենք չգիտենք մի այլ գրողի այդ աստիճանի բարոյապես նրբազգաց ու մաքուր, ինչպիսին Գորկին է: Հարկավ, մենք այդ ասում ենք ոչ միայն վերոհիշյալ հոդվածի հիման վրա, այլ նկատի ունենալով նրա բոլոր գրվածքները, նրա ամբողջ գրական գործունեությունը»:[1]

Այս մեծարժեք հոդվածում, մերկացնելով Գորկու թշնամիներին, որոնք միաժամանակ պրոլետարիատի թշնամիներն էին և ցույց տալով Գորկու հանճարեղ գրվածքների գեղարվեստական ու իդեական խոշոր նշանակությունը, նրանց դերը պրոլետարիատի ազատագրման պատմական մեծ գործում, Շահումյանը, որ-

1 „Современная жизнь", № 1, 1911 г.

պես հետևողական մարքսիստ, իր պարտքն է համարում նշել նաև Գորկու որոշ սխալները:

«Վերջացնելով հոդվածը,— գրում է Շահումյանը,— մենք անհրաժեշտ ենք համարում նշել մի հանգամանք ևս, որ չի կարելի լռությամբ անցնել Գորկու մասին խոսելիս: Դա՝ մարքսիստական քննադատության կողմից արդեն նշված Գորկու ոչ-բավարար սկզբունքային կայունությունն է, հետևողական մարքսիստական պարզ մտածելակերպի բացակայությունը նրա մեջ: Տվյալ դեպքում դա արտահայտվում է Գորկու կողմից ինտելիգենցիայի դերի ու նշանակության սխալ, զուտ նարոդնիկական ըմբռնողության մեջ»:[1]

Մատնանշելով Գորկու թերություններն ու սխալները, Շահումյանը որոշակի ընդգծում է, որ այնուամենայնիվ Գորկին պրոլետարական գրականության առաջնորդն է, պրոլետարիատի ազատագրման մեծ մարտիկը:

Գորկու աշխարհայացքի թույլ կողմերը, որ արտահայտվել էին ռեակցիայի տարիներին, ինչպես և հետագայում, քննադատվել են Լենինի և Ստալինի կողմից: Լենինի և Ստալինի օգնության, նրանց հոգատար վերաբերմունքի շնորհիվ է, որ Գորկին հաղթահարում է իր սխալներն ու դառնում սոցիալիստական գրականության մեծ հիմնադիր Ռուսաստանում ու ամբողջ աշխարհում:

Շահումյանը լիովին համոզված էր, որ Գորկին կհաղթահարի իր այդ սխալներն ու կկանգնի պրոլետարական ռևոլյուցիայի համար պայքարող մարտիկների առաջին շարքերում: Ահա թե ինչու Գորկու մասին իր

1 „Современная жизнь", № 1, 1911 г.

այդ արժեքավոր հոդվածը նա ավարտում է հետևյալ բացաշունչ խոսքերով.

«Գորկին պրոլետարական գրականության զարդն ու պարծանքն է»: Եվ բանվորները հպարտությամբ կարող են ասել. «Այո, Գորկին մերն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարում»:[1]

Ստեփան Շահումյանի այդ հոդվածը չտեսնված իրարանցում է առաջ բերում Անդրկովկասի բուրժուական մամուլի շրջաններում: Բուրժուական թերթերը ջանք չէին խնայում նվաստեցնելու Գորկու գեղարվեստական գրվածքների նշանակությունը, նրանց խոշոր ազդեցությունն աշխատավոր մասսաների լայն շրջաններում:

Բայց Շահումյանն այլևս հնարավորություն չուներ մերկացնելու բուրժուական մամուլի այդ նոր հարձակումները, որովհետև արդեն փակվել էր „Современная жизнь“ շաբաթաթերթը և բռնագրավվել խմբագրության ունեցվածքը: Շահումյանն ու նրա մի շարք ընկերները ձերբակալվում և աքսորվում են:

„Современная жизнь“ շաբաթաթերթին աշխատակցել է Վլադիմիր Իլյիչ Լենինը, տպագրելով այնտեղ «Մարքսիզմ և «Նաշա Զարյա» հոդվածը: 1911 թվի մարտի 27-ին, Գորկուն ուղղած իր մի նամակում Լենինը տեղեկացնում է նրան „Современная жизнь“ շաբաթաթերթի փակվելու մասին: «Բաքվում,— գրում է Լենինը,— „Современная жизнь“ -ի վրա էլ կալանք դրին ու խեղդեցին»:[2]

---

1 „Современная жизнь“, № 1, 1911 г.

2 „Письма Ленина Горькому“, Москва, 1933 г. стр. 55.

ГОДЪ ИЗДАНІЯ I.

Цѣна 5 коп.

Современная Жизнь

Еженедѣльный общественно-политическій журналъ.

№ 1 Суббота, 26 марта 1911 г., г. Баку. № 1

Наши задачи

„Кто сѣетъ вѣтеръ, тотъ пожнетъ бурю"

«Սովրեմեննայա ժիզն» ժուռնալի առաջին էջը:

Թումանյանն առհասարակ բաց չի թողել առիթը իր ջերմ խոսքն ասելու Գորկու մասին։ 1916 թվականին, իր մի հոդվածում խոսելով Գորկու աշխատակցությամբ հրատարակվող „Летопись" ամսագրի մասին, Թումանյանը գրում է. «Ներկա համարի գեղարվեստական բաժնի զարդը, ինչպես միշտ, Գորկու գրվածքն է „В людях" վերնագրով, որը դեռ շարունակվում է։ Այդ գրվածքն ինքնակենսագրական բնույթ է կրում և վերաբերում է Գորկու պատանեկան տարիներին։ Նրա „Детство"-ի հետ միասին, որ լույս է տեսել առանձին գրքով, այդ աշխատությունը, անշուշտ գրավելու է աչքի ընկնող տեղ ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում։ Գորկու ամեն մի տողը կարդացվում է մեծ էսթետիկական հաճույքով ու հետաքրքրությամբ»։[1]

Թումանյանը Գորկու խմբագրած «Հայ գրականության ժողովածու»-ի լույս ընծայման առթիվ հատուկ հոդվածով ողջունեց «միջազգային մաքուր զգացմունքների ու ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկուն», այդ դժվարին, բարդ գործի ձեռնարկման և ղեկավարման համար։ Նա գրում է. «Վայելուչ է, որ Մաքսիմ Գորկին հղացել է այդ գեղեցիկ միտքը՝ ծանոթացնել ռուս հասարակությանը նրա հետ մի քաղաքական կյանքով ապրող մանր ազգերի գրականության հետ»։[2]

Անցնելով «Հայ գրականության ժողովածու»-ի քըննադատությանը՝ Թումանյանը հանգամանորեն կանգ է առնում ժողովածուի երկու ներածական հոդվածների

[1] «Պայքար» № 37, 1916 թ.։

[2] «Նույնը», № 33, 1916 թ.։

վրա և ցույց է տալիս, թե ինչպես նրանց հեղինակները հայ գրականության և հայ հասարակական մտքի զարգացումը բացատրում են բուրժուական նացիոնալիզմի տեսանկյունից։ «Սակայն,— շարունակում է Շահումյանը,— այստեղ էլ ոչ ոքի մեղադրելու իրավունք չունենք։ Եթե լինեին ասպարեզում համապատասխան ուժեր, երևի Մաքսիմ Գորկին հարկադրված չէր լինի օգնականներ փնտրելու՝ ազգայնական տեսակետից դեռ չազատագրված կիսամարքսիստների, սուտ-մարքսիստների և ոչ մարքսիստների շրջանում»։[1]

Շահումյանը քննադատում է Գորկու աշխատակիցներին նաև այն բանի համար, որ «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ նրանք չեն զետեղել նշանավոր պրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունները։ Շահումյանը նշում է, որ հայ իրականության մեջ գոյություն ունի մի ամբողջ հասարակական խավ, այն է՝ հայ բանվորությունը, որի համար Հակոբ Հակոբյանը ճանաչված բանաստեղծ է և հանդիսանում է նրա աշխատանքի ու կռվի երգիչը և որպես այդպիսին նրա բանաստեղծությունները պետք է որ իրենց արժանի տեղը գրաված լինեին այդ ժողովածուի մեջ։ «Մաքսիմ Գորկու աշխատակիցները,— գրում է Շահումյանը,— ոչ միայն պետք է հասկանային, որ այդ հարկավոր է անել, այլ պետք է ուրախությամբ անեին այդ»։[2]

Անկասկած Շահումյանն իրավացի է։ Տարօրինակ ու անհասկանալի է, որ Գորկու խմբագրությամբ լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ անտես-

1 «Պայքար», № 33, 1916 թ։

2 Նույն տեղում։

ված էր Հակոբ Հակոբյանը։ Մեզ հայտնի չեն, թե ինչ նկատառումներով Հ. Հակոբյանի բանաստեղծությունները չեն զետեղվել այդ ժողովածուի մեջ։ Գորկու աշխատակիցները, հավանորեն, իրենք ևս Շահումյանի այդ քննադատությունից հետո զգացել են, որ ժողովածուի լուրջ թերություններից մեկն էլ դա Հ. Հակոբյանի բանաստեղծությունների բացակայությունն է նրա մեջ։ Ահա թե ինչու 1918 թվին, Գորկու գլխավորած «Համաշխարհային գրականություն» հրատարակչության պլանը կազմելիս, Գորկու այդ նույն աշխատակիցները պլանի հայկական բաժնում զետեղեցին Հ. Հակոբյանի անունը, որպես Հայաստանի ռևոլյուցիոն գրականության հիմնադիր ու ներկայացուցիչ։

Անկասկած, վերը նշված թերությունները չեն նսեմացնում Գորկու խմբագրությամբ լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի հասարակական-քաղաքական նշանակությունը։ Քննադատելով ժողովածուն, Շահումյանը միաժամանակ նշում է, որ ամբողջությամբ նա «լավ մտածված, ընդհանուր առմամբ — բավարար կերպով իրագործված ձեռնարկություն է»։

Հակոբ Հակոբյանը, որ Շահումյանի մտերիմ ընկերն ու զինակիցն էր և իր բազմաթիվ հանդիպումների ժամանակ հաճախ էր զրույցներ ունեցել նրա հետ գրականության խնդիրների շուրջը, իր հոդվածներից մեկում նշում է. «Հիշում եմ, ռուս գրողներից նա ամենից շատ սիրում էր Մաքսիմ Գորկուն»։[1]

Գորկին իր հերթին ճանաչում էր Ստեփան Շահումյանին և հիացած էր նրա ռևոլյուցիոն գործունեությամբ,

[1] «Մարտակոչ», № 218, 1925 թ.։

որն այնպես բարձր էին գնահատում Լենինը և Ստալինը։ Ալեքսանդր Սերգեևիչ Շչերբակովին ուղղած իր նամակում, անդրադառնալով գրողների միության անելիքներին, Գորկին միաժամանակ գրում է, որ հարկավոր է հրատարակել «այնպիսի հայերի կենսագրությունները, ինչպես Շահումյանը, Կամոն և ուրիշները...»։

Անդրկովկասի բոլշևիկների խոշոր ներկայացուցիչներից մեկը՝ Սուրեն Սպանդարյանը նույնպես բարձր է գնահատել Գորկու տաղանդավոր ստեղծագործությունների մեծ դերը պրոլետարական ռևոլյուցիայի գործում։ Դեռևս 1907 թվականին իր «Քաղաքական ակնարկներ» հոդվածաշարքը Սպանդարյանն ավարտում է հետևյալ տողերով. «Բարձրանում է ռևոլյուցիայի ալիքը, սկսվում է մակընթացությունը... «փոթորիկն ահեղ՝ թող ուժգին պայթե»։[1]

Ինչպես հայտնի է, «փոթորիկն ահեղ՝ թող ուժգին պայթե» խոսքերը վերցված են Գորկու «Մրրկահավից»։ Մենք նշեցինք, որ բոլշևիկյան պարտիայի ականավոր մարտիկները, Լենինի և Ստալինի ցուցումներով, միշտ օգտագործել են Գորկու գեղարվեստական խոսքն իրե՛նց ռևոլյուցիոն ագիտացիայի և պրոպագանդայի գործում։ Այդպես է վարվել նաև Սուրեն Սպանդարյանը։

1908 թվին հանդես գալով Լ. Տոլստոյի մասին Լենինի գրած հոդվածի շուրջը բուրժուական մամուլի բարձրացրած վայնասունի դեմ՝ Սպանդարյանն իր «Աղմուկ վրդովմունք» հոդվածի մեջ խոսում է նաև այդ նույն մամուլում Մ. Գորկու մասին տպագրված հոդվածների առթիվ, ուր «նրան շատ սովորական լիբերալ ճիչեր ֆանա-

[1] „Бакинский пролетарий", № 2, 1907 г.

ուժի, ազատագրության մասին, կա Մ. Գորկու կրնկից կծելու փորձ, մի խոսքով՝ բուրժուական լրագրական երգեհոնի ամբողջ ռեպերտուարը»:[1]

1910 թվին Սպանդարյանն իր մի հոդվածում շարադրում է երեխաների դաստիարակության մասին Մաքսիմ Գորկու արած զեկուցման հիմնական մտքերը:

Իրենց շուրջը համախմբելով բոլշևիկյան գրական լավագույն կադրերին (Ա. Մռավյան, Հ. Հակոբյան, Ա. Կարինյան և ուրիշները), Շահումյանն ու Սպանդարյանը խոշոր դեր կատարեցին հայ իրականության մեջ Գորկուն մեծարելու, նրա ստեղծագործությունները թարգմանաբար մասսայականացնելու և նրա թշնամիներին, որոնք միաժամանակ և բանվոր դասակարգի թշնամիներն էին, ջախջախելու գործում:

Շահումյանի ցուցումներով Գորկուց թարգմանություններ են կատարում Հակոբ Հակոբյանը, Ա. Մռավյանը և ուրիշները: Բայց թարգմանությունները բավական չէին. հարկավոր էր աշխատավոր լայն մասսաներին ծանոթացնել Գորկու կյանքին ու պայքարին, հարկավոր էր ցույց տալ Գորկու, որպես գեղարվեստագետի ու մտածողի, համաշխարհային դերը: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում Անդրկովկասում հրատարակվող բոլշևիկյան հայ մամուլը՝ Շահումյանի և Սպանդարյանի ղեկավարությամբ:

1906 թվին բոլշևիկյան «Կայծ» և «Նոր խոսք» թերթերը սիստեմատիկ կերպով տեղեկություններ են հաղորդում Գորկու կյանքի, նրա ստեղծագործությունների, կոչերի և ելույթների մասին: Ինչպես սա, նույնպես և

---

[1] „Бакинский рабочий", № 7, 1908 г.

բոլշևիկյան հայ մամուլում առատ կերպով օգտագործվել է Գորկու գեղարվեստական խոսքն ամենօրյա ռևոլյուցիոն քաղաքական պայքարում։

1906 թվին բոլշևիկյան «Կայծ» թերթը, Թիֆլիսի կադետների դեմ ուղղած իր մի հոդվածում, գրում է. «Ազատության երգիչ Գորկին իր «Բազեի երգը» գրվածքում բազեի բերանով ասում է օձին. «Սողալու սովորը թռչել չի կարող»։ Նույնը պիտի ասել առհասարակ մեր, այսպես կոչված՝ «ժողովրդական ազատության» կուսակցության» մասին ընդհանրապես և մեր Թիֆլիսի «կադետների» մասին, մասնավորապես»։[1]

Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել բոլշևիկյան մյուս թերթերից։ Օրինակ՝ «Նոր խոսք» թերթը 1906 թվին, կադետների և նրանց օրգան „Речь" *թերթի դեմ ուղղած մի հոդվածում, մեջբերում է կատարում* „Пролетарий" *թերթում տպագրված Լենինի «Փոթորկից առաջ» հոդվածի վերջին մասից, որտեղ Լենինը օգտագործել էր Գորկու «Մրրկահավի երգի» տողերը։ «Նոր խոսք» թերթը գրում է. «Եվ իզուր չէ, որ* „Пролетарий" *թերթը, նույն հարցի վերաբերյալ խոսելիս ակնարկ ձգելով պնակալեզ լիբերալների տատանվող դիրքի վրա՝ կոչ է անում ընկերներին և բացականչում. «Արի եղեք, ընկերներ, հավատացեք նոր փորձերով հարըստացած հեղափոխական դասակարգերի ուժին և ամենից առաջ՝ պրոլետարիատին. եղեք ձեր գործողության մեջ անվախ... Թող լիբերալները երկչոտությամբ թափահարեն գլուխները, միմիայն նրա համար, որպեսզի սպառնան կառավարությանը, թող այդ սահմանափակ մեշ-*

---

[1] «Կայծ», № 38, 1906 թ.։

չաններն իրենց «խելքի և զգացմունքի» ամբողջ ուժը գործ դնեն նոր ընտրություններին սպասելով,— պրոլետարիատը պատրաստվում է կռվի, միահամուռ և զգաստ գնում է դիմավորելու մրրկին, դեռ մարտի ամենախիստ տեղը մղվելով։ Հերիք է, ինչ տարանք երկչոտ կադետների՝ այդ «հիմար պինգվինների» հեգեմոնիան, որոնք «իրենց ճարպոտ մարմինները վախկոտությամբ թաքցնում են ապառաժներում»։

«Թո՛ղ ուժգին թնդա փոթորիկը»։

Ամբողջ սրտով միանում ենք «Պրոլետարիի» այս խոսքերին, միաժամանակ նրա հետ գոչելով՝

«Թո՛ղ ուժգին թնդա փոթորիկը...»։[1]

Բացի Գորկու գեղարվեստական խոսքի օգտագործումից՝ բոլշևիկյան հայ մամուլը բազմաթիվ թարգմանություններ է տպագրել Գորկու ստեղծագործություններից, հոդվածներ է տպագրել նրա մասին։ Բոլշևիկյան մամուլն Անդրկովկասում խոշոր աշխատանք է կատարել Գորկուն զրպարտողներին, նրա թշնամիներին մերկացնելու ու ջախջախելու գործում։ Այդ պայքարին մասնակցել են Անդրկովկասի բոլշևիկների կազմակերպության լավագույն ներկայացուցիչները։

Ստեփան Շահումյանի և Սուրեն Սպանդարյանի ղեկավարությամբ, ցուցումներով ու օժանդակությամբ հայ իրականության մեջ խոշոր աշխատանք է տարվել Գորկու ստեղծագործությունների մասսայականացման համար։ Այդ տեսակետից լուրջ ուշադրության արժանի է Ա. Մռավյանի կատարած աշխատանքը։ 1916 թվին ընկ. Մռավյանը սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթում

---

[1] «Նոր խոսք», № 6. 1906 թ.։

հանդես եկավ հատուկ մի հոդվածով և հանգամանորեն վերլուծեց Գորկու հոյակապ ու գեղեցիկ հեքիաթները՝ իտալական բանվորների կյանքից։ Իր այդ հոդվածում հերքելով ռուս և հայ բուրժուական գրական քննադատների սխալ տեսակետները Գորկու երկերի գեղարվեստական արժեքի մասին՝ Ա. Մռավյանն ընդգծում է. «Այդ երկերը եկան ապացուցելու, որ պրոլետարական աշխարհայացքն ու աշխարհզգացումը Գորկու գեղարվեստական ստեղծագործության հզոր թափ են տվել և հարստացրել...իսկ նրա «Հեքիաթները» ողողված են խոր, մարդկային անկեղծ սիրով ու մարգարեական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան։Ամբողջ գրքից բուրում է մի զարմանալի ու վարակիչ լավատեսություն, կենսաթրթիռ աշխարհզգացում»։[1]

Բացի այդ հոդվածից, Մռավյանը նաև ձեռնամուխ է լինում Գորկու իտալական գեղեցիկ հեքիաթների թարգմանության գործին։ Իր այդ թարգմանություններից մի քանիսը նա տպագրում է «Պայքար»-ի 1916 թվի համարներում։

Մաքսիմ Գորկու ստեղծագործությունների արժեքավորման ու մասսայականացման գործում մեծ աշխատանք է կատարել նաև ընկ. Ա. Կարինյանը, որի բովանդակալից հոդվածները լույս են տեսել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից առաջ, բոլշևիկյան ռուսական և հայկական մամուլում։ 1914 թվին բոլշևիկյան «Պրավդա» թերթում լույս է տեսնում Ա. Կարինյանի ընդարձակ մի հոդվածը Մաքսիմ Գորկու իտալական սքանչելի «Հեքիաթների» մասին։ Բացահայտելով

---

1 «Պայքար», № 10, 1916 թ.։

Գորկու հեքիաթների սոցիալական արմատները, ցույց տալով նրանց բարձր գեղարվեստական արժանիքները, Կարինյանը գրում է. «Իր ցայտուն ակնարկներում ռուսական դեմոկրատիայի երգիչն առանձին սիրով բնորոշում է իտալական աշխատավոր ժողովրդի տարբեր տարբերի հույզերը, ինքնօրինակ ապրումները»: Այդ հոդվածի մի մասը թարգմանվում է հայերեն ու տպագրվում «Պայքար» թերթում:

„Путь правды“ բոլշևիկյան թերթի հավելված „Рабочий“ ժուռնալի 2-րդ համարում 1915 թվին լույս է տեսնում Ա. Կարինյանի մի ուրիշ հոդվածը՝ Գորկու խմբագրությամբ ու առաջաբանով հրատարակված «Պրոլետարական գրողների ժողովածու»-ի մասին: Կարինյանը չափազանց բարձր է գնահատում Գորկու կազմած ու խմբագրած այդ ժողովածուն: Հոդվածի առաջին մասում բնութագրելով պրոլետարական պոեզիայի, արվեստի սոցիալ քաղաքական բնույթը, Կարինյանը միաժամանակ ցույց է տալիս այն նորը, թարմը և բնորոշը, որ բերում է իր հետ պրոլետարական պոեզիան. ընդգծելով հատկապես նրա հումանիստական, առաջավոր ու ռևոլյուցիոն մոտիվները: Ա. Կարինյանը գրում է. «Այդ մոտիվներն այնքան անսովոր են մեր իրականության մեջ, այնքան վառ կերպով են արտահայտում ռուսական պրոլետարիատի երիտասարդական առույգ ու կենսախինդ տրամադրությունները, որ կազմում են ժամանակակից շրջանի ամենապայծառ և վեհ էջերից մեկը»:

Այդ հոդվածներին հետևում են մի շարք այլ հոդվածներ, որ ռևոլյուցիայից առաջ և նրանից հետո ընկ. Կարինյանը նվիրում է Գորկու ստեղծագործություններին, միշտ էլ ընդգծելով հանճարեղ գրողի երկերի հա-

մաշխարհային նշանակությունը և նրա հսկայական դե-րը պրոլետարական ռևոլյուցիայի մեջ:

Բոլշևիկյան հայ գրական քննադատությունը հետևում է հայ դեմոկրատական ու առաջավոր ինտելիգենցիային: Հանդես են գալիս մեր նշանավոր գրողները, որոնք իրենց թարգմանություններով և հոդվածներով ավելի են մասսայականացնում Մաքսիմ Գորկու ստեղծագործությունը հայ իրականության մեջ:

Մ. ԳՈՐԿԻՆ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ»-Ի ԽՄԲԱԳԻՐ

Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների գրականության ուսումնասիրության և ռուս ընթերցող հասարակության լայն շրջաններին այդ ժողովուրդների գրականության հետ ծանոթացնելու հարցը շատ վաղ ժամանակներից է զբաղեցրել Մ. Գորկուն։ Դեռևս 900-ական թվականների սկզբներին Գորկին նախաձեռնում է ռուսերեն լեզվով ազգային գրականության ժողովածուներ հրատարակելու գործը։ Այդ տարիներին կապվելով «Զնանիե» հրատարակչության հետ և հետո էլ դառնալով նրա տնօրենը՝ Կ. Պ. Պյատնիցկու հետ միասին, Գորկին ծրագրում է հրատարակել Ռուսաստանի ազգային գրականությունների ժողովածուների մի ամբողջ սերիա։ Այդ սերիայի առաջին ժողովածուն պիտի կազմեր հրեական գրականության ժողովածուն։ Այս առթիվ 1902 թվի հունվարին Գորկին գրում է Պյատնիցկուն. «Հրեական ժողովածուից հետո հարկավոր է հրատարակել ֆիննական, վրացական և հայկական ժողովածուներ ևս»։ Գորկու այդ շրջանի

գործունեության մասին Կ. Պյատնիցկին հետևյալ արժեքավոր տեղեկություններն է հաղորդում. «Նա սկըզբում մտադրվել էր հրատարակել վրացական, թաթարական, հրեական, լեհական, լատիշական և հայկական գրականությունների ժողովածուների սերիա։ Մ. Գորկուն միշտ էլ խորապես վրդովել է մանր ժողովուրդների իրավազուրկ վիճակը։ Վրդովել է կրթված հասարակության արհամարհական վերաբերմունքը հալածված ազգերի նկատմամբ և դրա համար, բնականաբար, այդ ազգությունների գեղարվեստական ստեղծագործության տարածման մեծ ծրագրեր է նշել»։[1]

Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումները ոգևորել էին Գորկուն՝ նախաձեռնելու այդ պատմական գործը, բայց նրա իրականացումը հենց առաջին քայլերից հանդիպեց լուրջ խոչընդոտների։ Գորկու այդ շրջանի ոչ բոլոր օգնականները կարողացան բավարարել նրա պահանջները, հասկանալ նախաձեռնված գործի ամբողջ լրջությունն ու հասարակական խոշոր նշանակությունը։ Այդ ժողովածուների շարքից միայն հրեական գրականության ժողովածուն պատրաստվեց ժամանակին, որ և խմբագրվեց Գորկու կողմից, սակայն, այն էլ չհրատարակվեց, Գորկու հանկարծակի ձերբակալման ու աքսորման պատճառով։

Ազգային գրականության ժողովածուներ հրատարակելու գործին Գորկին նորից անդրադառնում է ռեակցիայի տարիներին և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ ազգային շովինիստական տենդենցները մեծ չափերի էին հասել։

---

[1] „Звезда", 1938 г. № 10.

Ժողովուրդների բարեկամության և նրանց մերձեցման գործին նպաստելու համար Գորկին հսկայական նշանակություն էր տալիս հատկապես՝ գրականությանը։

«Մոսկվայի գրողների հրատարակչություն» կազմակերպվելու կապակցությամբ, 1912 թվի օգոստոսին Գորկին Կապրի կղզուց մի նամակ է գրում այդ հրատարակչության խմբագիր Վ. Վ. Վերեսաևին, հատկապես նշելով ազգային գրականությունների ժողովածուներ հրատարակելու անհրաժեշտության ու նրանց հասարակական-քաղաքական նշանակության մասին։ Գորկին գրում է. «Ես կուզենայի իմանալ, թե ինչպես ե՞ք վերաբերվում դուք և ձեր ընկերները օտարազգի և մարզային գրականության ժողովածուներ հրատարակելու գործին։ Կարելի է շատ արագ կազմել սիբիրական, բելոռուսական և ուկրաինական գրողների գրվածքների ժողովածուներ, նաև լատիշական և թաթարական—Կազանի թաթարների։ Այնուհետև դժվար չէ կազմել վրացական, հայկական, լեհական, ֆիննական ժողովածուներ և այլն։

Կարծում եմ, որ դա միանգամայն իր ժամանակին կլինի մեր նացիոնալիստական օրերին և չափազանց ուշագրավ կլիներ, եթե Ռուսաստանին ինքն իր հետ ծանոթացնելու գործը հանձն առներ ոչ թե հրատարակչական մի ֆիրմա, առևտրական նկատառումներից ելնելով, այլ վելիկոռուսական գրողների ընկերությունը։ Այդ բարի և անհրաժեշտ գործը նորից և արագ կերպով կամրապնդեր ռուս գրականության բարոյական և քաղաքական խախտված հեղինակությունը։

Ժողովածուները պետք է խմբագրվեն կոլեկտիվորեն,

ռեղերում և ամեն մեկին պետք է սկզբից կցված լինի տվյալ ազգի կուլտուրայի պատմության վերաբերյալ մի ոչ մեծ ակնարկ:

«Եթե ձեզ հետաքրքրում է այդ նախագիծը, ես կարող եմ զարգացնել այն ավելի հանգամանորեն, նմանապես կհաղորդեմ ձեզ այդ խնդրով շահագրգռված օտարազգի գրականագետների անունները և հասցեները, որպեսզի դուք անմիջականորեն գրագրության մեջ մտնեք նրանց հետ»:[1]

Ժամանակի անպաստ պայմաններում, քաղաքական-հասարակական մեծ նշանակություն ունեցող այս գործը միայն ինքը՝ Գորկին կարող էր հաջողությամբ իրագործել: Սակայն ազգային գրականության ժողովածուներ հրատարակելու գործով չէր սահմանափակվում մեծ գրողի գործունեությունն այս ասպարեզում. Գորկին միաժամանակ աշխատում էր, որ ռուս պարբերական մամուլի էջերում լուսաբանվեին Ռուսաստանի ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հասարակական-կուլտուրական կյանքը: Այդ նպատակով նա իր բարեկամուհի Մարիա Սունդուկյանի միջոցով որոնում է այնպիսի ձեռնահաս մարդկանց, որոնք ի վիճակի կլինեն հոդվածներ գրելու՝ հայ ժողովրդի դրության, նրա կուլտուրայի, հայ գրականության անցյալի ու ներկայի մասին և այլն: Այդ հոդվածները պետք է տպագրվեին Ռուսաստանի պրոգրեսիվ մամուլի էջերում, այն մամուլի, որին աշխատակցում էր ինքը՝ Գորկին: Հեռավոր Կապրիից Մարիա Սունդուկյանին ուղղած, 1912 թվի հոկտեմբերի 25-ի թվակիր իր նամակում Գորկին գրում է.

[1] „Литературная газета", 1941 г. № 24.

«Մեծարգո
Մարիա Ալեքսանդրովնա.

Մեզ անհրաժեշտ է ունենալ ընդհանուր ակնարկ՝ հայերի վիճակն Անդրկովկասում, նաև ակնարկ՝ հայերը Ռուսաստանում թեմայով— նրանց պատմական անցյալը, հայկական կուլտուրայի արդի վիճակը, նրա աճն արգելակող պատճառները:

Հայ գրականության պատմության ակնարկը պետք է հանդիսանա առանձին աշխատանք:

Սրտանց շնորհակալ եմ Ձեզնից, Ձեր հոգացողության և ինձ ուղարկած Ձեր բարի նամակի համար:

Ողջունեք ձեր տղային, ես շատ ուրախ եմ այն բանի համար, որ ինձ հաջողվել է նրա մեջ լավ տպավորություն առաջ բերել և սրտանց ցանկանում եմ, որ շատ բախտավորություն գտնի նա իր հայրենիքը սիրելու մեջ և համամարդկային կուլտուրայի համար տարվելիք աշխատանքում:

Մ. Գորկի»

Վերջապես 1915 թվին «Պարուս» հրատարակչության կազմակերպման շնորհիվ, Գորկուն հաջողվում է տարիներ առաջ ծրագրված ժողովածուներից հրատարակել մի քանիսը: Այդ սերիայի առաջին գիրքը «Հայ գրականության ժողովածու»-ն էր, որ լույս տեսավ 1916 թվականին Պետրոգրադում, Մաքսիմ Գորկու խմբագրությամբ: Այդ ժողովածուի երկրորդ առաջաբանում կարդում ենք. «Հայ գրականության ժողովածու»-ն ըստ հերթականության առաջինն է այն մի շարք ժողովածուներից, որոնք նվիրված են լինելու մեզ հետ միասին Ռուսաստանում ապրող ազգությունների գրական ստեղծագործությանը:

СБОРНИКЪ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Подъ редакціей М. Горькаго.

Книгоиздательство „Парусь" А. Н. Тихонова

ПЕТРОГРАДЪ

Մ. Գորկու խմբագրությամբ 1916 թվին հրատարակված «Հայ գրականության ժողովածու»-ի անվանաթերթը

Մոտ ապագայում «Պարուս» հրատարակչությունը լույս կընծայի նաև լատիշական, ֆիննական թաթարական, հրեական, ուկրաինական և այլ ազգությունների գրականության ժողովածուներ:

«Հայ գրականության ժողովածու»-ն նվիրված է ռուսահայերի գրական ստեղծագործությանը և կազմված է հայ բանաստեղծ Վահան Տերյանի պլանով»:

Այդ առաջաբանում ասված է նաև, որ ժողովածուին աշխատակցել է Լ. Ա. Քալանթարը և որ խմբագրությունն արժեքավոր ցուցումներ է ստացել ռուս բանաստեղծ Վ. Յա. Բրյուսովից և պրոֆ. Յու. Վեսելովսկուց:

«Հայ գրականության ժողովածու»-ի մեջ զետեղված են Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Հ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Դ. Դեմիրճյանի, Մ. Մանվելյանի և մյուս գրողների ստեղծագործություններից:

Ուշագրավ և չափազանց հետաքրքրական է այն խոշոր աշխատանքը, որ կատարել է Մաքսիմ Գորկին «Հայ գրականության ժողովածու»-ն կազմելու և խմբագրելու ընթացքում:

Գորկին անձամբ կապվում է ժամանակի ռուս նշանավոր գրողների ու բանաստեղծների հետ, «Հայ գրականության ժողովածու»-ի նյութերի թարգմանությանը նրանց մասնակից դարձնելու նպատակով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ բուրժուական նացիոնալիզմը գլուխ բարձրացրած ամենուրեք մարդկային ամենառեակցիոն կրքերն էր բորբոքում, բոլոր գրողները չէ, որ հասկանում էին ազգային գրա-

կանության ժողովածուներ հրատարակելու գործի քաղաքական ու բարոյական նշանակությունը և ոչ էլ բոլոր գրողներն էին համաձայնվում գործուն մասնակցություն ցուցաբերել։ Ահա, օրինակ, ինչ է գրում ռուս գրող Իվան Բունինը 1915 թվի հոկտեմբերի 10-ի իր պատասխան նամակում՝ ուղղված Գորկուն.

«Թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչ, այս «թարգմանությունները» հայերենից,— կարծում եմ, որ հենց սրանք, քանի որ ինձ մոտ ուրիշները, թվում է, չկան,— խնդրել է ինձնից Բրյուսովը նույնանման ժողովածուում արտատպելու համար և ինձ համար անհասկանալի համառությամբ, մի քանի անգամ է դիմել, բայց ես մնացել եմ «անդրդվելի, հանգիստ և մռայլ», քանի որ նկատի ունենալով այդ գործի վաղեմությունը, ենթադրել եմ, որ նա կատարված է վատ։ Այժմ տեսնում եմ, որ ես չեմ սխալվել— այդ բանաստեղծությունները իսկապես լավ չեն, որի համար մեղավոր են երկուսն էլ— և հեղինակը, և թարգմանիչը։ Ի՞նչպես վարվեմ այժմ ես։ Եթե համաձայնություն հայտնեմ Ձեր խնդրանքի առթիվ, զարհուրելի վիրավորած կլինեմ Բրյուսովին, և կտպագրեմ այն, ինչ որ չպետք է տպագրել։ Եթե չհամաձայնվեմ— Դուք կբարկանաք... Որոշում եմ այսպես.— Թող լինի Ձեր կամքը։

Աստված գիտե, թե ինչպես ես ցանկանում եմ որևէ բան տալ Ձեզ։ Բայց այսպիսի տարի ես չեմ հիշում— չեմ հիշում հոգեկան այսպիսի ծանր վիճակ, որի մեջ ես վաղուց եմ գտնվում։ Գրել, ես համարյա բոլորովին ոչինչ չեմ գրել։ Ինչու ոչինչ չեք հայտնում, երբ է հատկապես

պատրաստ լինելու ձեր ժողովածուն և ի՞նչ կա նրա մեջ:

Ամուր համբուրում եմ Ձեզ.

Ձեր Իվ. Բունին»[1]

Միայն Իվան Բունինը չէ, որ իր անտարբեր վերաբերմունքն ազգային գրականության հանդեպ ցանկացել է բացատրել «հոգեկան ծանր վիճակով»: Բայց և այնպես Գորկին իր մեծ հեղինակությամբ ու կազմակերպչական բացառիկ ընդունակություններով կարողանում է ազգային գրականությունների ժողովածուներին, առաջին հերթին հայ գրականության ժողովածուի աշխատանքներին, մասնակից դարձնել 20-րդ դարի ռուսական պոեզիայի այնպիսի նշանավոր դեմքերի, ինչպիսիք են՝ Ալեքսանդր Բլոկը, Վալերի Բրյուսովը, և ուրիշները, այդ թվում նաև վերը բերված նամակի հեղինակին՝ Բունինին:

«Հայ գրականության ժողովածուն» կազմվել է բանաստեղծ Վահան Տերյանի պլանով: Տերյանը, որ դաստիարակվել է ռուս գրականության ու կուլտուրայի լավագույն տրադիցիաներով, իր գրական գործունեության առաջին քայլերից իսկ հայ ժողովրդի բախտը կապել է ռուս մեծ ժողովրդի բախտի հետ և նրա պայքարի հաղթանակի մեջ է տեսել հայ ժողովրդի փրկությունը: Դեռևս Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ, պայքարելով հայ նացիոնալիստների դեմ, Տերյանը գրել է. «Կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ռուս դեմո-

1 „М. Горький — Материалы и исследования“, том II, стр. 449—450.

կրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»:[1]

Թե որքան մեծ ու լայն էին Գորկու ծրագրերը հայ գրականության նկատմամբ, այդ երևում է բանաստեղծ Վահան Տերյանի 1915 թվականին գրած բազմաթիվ նամակներից: Տերյանը Գորկու հավատարիմ օգնականն էր «Հայ գրականության ժողովածու»-ն կազմելու և խմբագրելու գործում: Նա իր հանդիպումների ժամանակ բազմաթիվ զրույցներ է ունեցել Գորկու հետ՝ հայ ժողովրդի, նրա գրականության, արվեստի և այլ հարցերի շուրջ: Ցավոք սրտի բանաստեղծ Տերյանը երկար չապրեց, որ հետագայում գրի առներ իր հանդիպումներն ու զրույցները մեծ գրողի հետ. մեզ մնում է օգտվել միայն այն ցիրուցան տեղեկություններից, որ կան բանաստեղծի նամակներում և ապա՝ ռուս գրողների այն հիշողություններից ու նամակներից, որ վերաբերում են դարձյալ այդ շրջանին:

Իր ծանոթներից մեկին ուղղած 1915 թ. ապրիլի 2 թվակիր նամակում Տերյանը գրում է. «Այսօր գնացինք Մաքսիմ Գորկու մոտ ես և Քալանթարը: Առաջարկում է կազմել մի ժողովածու՝ հայոց գրականության նվիրված: Մանրամասը գրելը շատ երկար կլինի, ասեմ այսքանը, որ ժողովածուն շատ մեծ չի լինելու—մոտ քսան տպ. թերթ, մի կամ երկու առաջաբանով, մեկը հայ կյանքի ներկային և անցյալին նվիրված, մյուսը՝ հայ գրականության մի տեսություն: Մնացյալը պիտի լինի գեղար-

---

1 Վահան Տերյան—Երկերի ժողովածու, հատ. 4-րդ, էջ 182:

վեստական երկերից կազմված: Գերակշռությամբ կային ժամանակակից գրականությանը, ինարկե, տալով հենց նշանավորն ու հետաքրքրականը: Պոեզիան խոստանում է Գորկին թարգմանել տալ ռուս պոետներին մեր օգնությամբ և առհասարակ շատ և շատ սիրալիր և պատրաստակամ էր»:

«Հայ գրականության ժողովածու»-ն կազմելու կապակցությամբ դա Տերյանի առաջին հանդիպումն էր Գորկու հետ. այնուհետև, որոշ նախնական աշխատանք կատարելուց հետո, Տերյանը գնում է Ֆինլանդիա, Գորկու ամառանոցը՝ Մուստա-Մյակի: Ռուս բանաստեղծ Դմիտրի Նիկոլաևիչ Սեմյոնովսկին Գորկու մասին հրատարակած իր հետաքրքրական հիշողությունների գրքում ի միջի այլոց խոսում է նաև այն մասին, թե ինչպես նա հանդիպել է Տերյանին Ֆինլանդիայում, Գորկու մոտ: Ահա թե ինչ է գրում Սեմյոնովսկին. «Հետևելով Գորկուն՝ ես մտա մի ընդարձակ ու հաճելի կահավորված սենյակ: Սեղանի վրա մեղմ լույս էր արձակում լուսամփոփով քողարկված լամպը:

Սեղանի շուրջը նստած էին երեք հոգի, որոնք դիտում էին գրավյուրները,— դրանք էին՝ թխադեմ երիտասարդ հայ բանաստեղծ Տերյանը, նրա կողքին՝ Ցինկնեղ, սափրված երեսի եռանդուն արտահայտությամբ Ա. Ն. Տիխոնովը, որի հասցեով ձմեռը ես բանաստեղծություններ էի ուղարկել, և նրա դիմացը կինը:

Երբ Գորկին ինձ ծանոթացրեց հյուրերի հետ, վերսկսվեց իմ գալու պատճառով ընդհատված խոսակցությունը:

Գորկին հագնում էր, թավ բեխերի տակից բաց թողնելով ծխախոտի ծխի քուլաները:

Տերյանը հարցրեց.

— Ալեքսեյ Մաքսիմովիչ, ինչո՞ւ դուք բանաստեղծություններ չեք գրում։

— Ես գրում եմ, սակայն գրածս ոչ ոքի չեմ կարդում,— պատասխանեց Գորկին և ժպտաց այնպես, որ դժվար էր հասկանալ—նա հանա՞ք է անում, թե՞ լուրջ է ասում։

Նա մի քիչ լռեց և քմծիծաղ տալով՝ ավելացրեց.

— Այո՛, գրում եմ։ Եվ հետո մի գեղեցիկ օր կվերցնեմ և ի զարմանք բոլորի՝ կտպագրեմ սիրային լիրիկայի մի գիրք։

Նիհար, վառվռուն աչքերով և գանգուր, սև մազերով Վահան Սուքիասի Տերյանն ուսանում էր Պետրոգրադի մի ինչ-որ ինստիտուտում։ Հայ գրականության մեջ նրա անունն արդեն հայտնի էր։ Տերյանի բանաստեղծությունները ռուսերեն թարգմանում էին Բրյուսովը և Բալմոնտը։ Ռևոլյուցիայից կարճ ժամանակ հետո բանաստեղծը վախճանվեց։ Նեկրոլոգի ժլատ տողերից ես իմացա այն, ինչ որ Տերյանի հետ ծանոթացնելիս ինձ չէր ասել Ալեքսեյ Մաքսիմովիչը։ Այն ժամանակ արդեն, 15 թվին նա հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող աչքի ընկնող մարտիկ էր։

Ա. Ն. Տիխոնովը վիպակներ էր գրում և օգնում էր Գորկուն՝ նրա հրատարակչական ձեռնարկություններում։

Դառնալով Տիխոնովին և Տերյանին՝ Ալեքսեյ Մաքսիմովիչը սկսեց խոսել հայ գրականության ժողովածուի հրատարակության մասին։ Սեղանի վրա երևաց թուղթ և մատիտ։ Տերյանը սկսեց թվել հայ գրականագետների և ռուս բանաստեղծ-թարգմանիչների ազգանունները, ո-

րանց կարելի էր ներգրավել ժողովածուի աշխատանքներին։ Գորկին գրի էր առնում»։[1]

Գորկու մասին լույս տեսած բազմաթիվ հիշողությունների հեղինակները համարյա բոլորն էլ միաձայն վկայում են, որ Գորկին շատ շուտով կարողանում էր ճանաչել տաղանդավոր գրողներին և բացառիկ հոգ էր տանում այդպիսիների նկատմամբ։ Գորկին մոտիկից ճանաչեց նաև բանաստեղծ Տերյանին ու սիրեց նրան։ Տերյանի բանաստեղծությունների ռուսերեն թարգմանություններից դատելով անգամ՝ Գորկին տեսնում էր, որ Տերյանն իսկական ու տաղանդավոր բանաստեղծ է։

Տերյանը մի շաբաթ մնում է Գորկու մոտ՝ Մուստամյակիում։ Այդ օրերն անմոռանալի էին Տերյանի համար։ Գորկին նրա վրա խոր ու անջնջելի տպավորություն էր թողել։ Տերյանն իր բազմաթիվ նամակներում խորը հիացմունք է արտահայտում մեծ գրողի ու հասարակական գործչի նկատմամբ։ Իր ծանոթներից մեկին Տերյանը գրում է. «Ինքը՝ Գորկին շատ ազնվական մարդ է և շատ սիրելի—այնքան սրտով պարզ, որ երևակայել չես կարող և միևնույն ժամանակ օտար և ոչ համակրելի մարդկանց նկատմամբ խիստ ու կծու։ Ինձ երեկոներին պատմում էր իր կյանքից, պատմեց մի քանի սրտաշարժ ու գեղեցիկ էպիզոդ»։

Գորկին Տերյանի օգնությամբ չափազանց ընդարձակ մի պլան է կազմում հայ գեղարվեստական գրականությունը ռուսերեն լեզվով հրատարակելու և մասսայականացնելու համար։ Գորկու այդ պլանի մասին Տերյա-

---

1 Дм. Семеновский — А. М. Горький, (письма и встречи). Москва 1938 г., стр. 33—35.

նը խոսում է Ն. Թումանյանին ուղղած իր մի նամակում. «Մեր ժողովածուն,— գրում է Տերյանը,— պիտի նվիրված լինի և՛ պրոզային, և՛ պոեզիային և հետո ծավալը չի ուզում (Գորկին) շատ մեծացնել, որպեսզի գինը մատչելի լինի լայն խավերին: Մի ժողովածու էլ պիտի հրատարակե Գորկին (իր խմբագրությամբ և նորից ես կազմեմ)՝ նվիրված սաճկահայ գրականության: Իսկ հետո պիտի հրատարակե մի շարք գրքեր «Հայկական գրադարան» վերնագրի տակ, որի մեջ պիտի մտնեն թարգմանություններ մեր հեղինակների առանձին գործերի, առանձին վեպեր և այլն, որ ժողովածուի մեջ չեն կարող մտնել ծավալի շնորհիվ»:[1]

Ինչպես տեսնում ենք, Մաքսիմ Գորկին չափազանց մեծ ծրագրեր է ունեցել հայ գեղարվեստական գրականությունը ռուսերենի թարգմանելու և այն Ռուսաստանում մասսայականացնելու համար: Ցավոք սրտի, նրան չհաջողվեց այդ ծրագրերն ամբողջովին իրագործել: Բայց այն, ինչ կատարել է Գորկին այդ ուղղությամբ, մի պայծառ էջ է հանդիսանում հայ գրականությանը մեծ գրողի մատուցած խոշոր ծառայությունների պատմության մեջ:

«Հայ գրականության ժողովածու»-ն կազմելու և խմբագրելու ընթացքում Գորկին լայն ու բազմակողմանի կերպով ծանոթանում է հայ նորագույն գրականությանը: Այդ գործում նրան օգնում է Վահան Տերյանը: Նա նշում է հայ գրողների անունները, նրանց նշանավոր գրվածքները ու թարգմանությունները: 1915 թվականին Ն. Թումանյանին ուղղած իր մի նամակում Տերյանը

---

1 «Նոր ուղի», 1931 թ. № 4:

գրում է. «Մի շաբաթ ապրեցի Գորկու մոտ ամառանոցում— շատ հետաքրքրական զրույցներ տեղի ունեցան— մի օր կգրեմ ձեզ այդ մասին: Պատմեցի նրան մեր գրողների և պոետների մասին. ի միջի այլոց, Իվան Ցադեիչի (Թումանյանի) մի քանի սովորությունների մասին. շատ ծիծաղեց»:[1]

Ծանոթանալով հայ գրողների ստեղծագործություններին՝ Գորկին իրեն հատուկ պարզությամբ ու շիտակությամբ, նշում է հայ գրողների հաջող ու անհաջող երկերը: Գորկու գնահատականներն ու ասույթները հայ գրականության նկատմամբ՝ մեզ համար այսօր խոշոր նշանակություն ունեն այդ գրականությունը ճիշտ ըմբռնելու և արժեքավորելու տեսակետից:

«Հայ գրականության ժողովածու»-ի մեջ զետեղված երկերից Գորկուն ամենից շատ դուր է եկել մեր մեծագույն դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո»-ն: Ինչպես երևում է արխիվային նյութերից, Գորկին մինչ այդ «Պեպո»-ի մասին միայն լսել էր կամ տեսել էր նրա բեմադրությունը: Ամենայն հավանականությամբ, Կովկասում ապրած ժամանակ նա տեսել էր «Պեպո»-ի բեմադրությունը հայ կամ վրաց բեմի վրա: Նա կարող էր նաև կարդացած լինել, որովհետև այդ ժամանակ արդեն գոյություն ուներ «Պեպո»-ի ռուսերեն երկու թարգմանությունը: Մենք այդ հանգամանքը նշում ենք նրա համար, որովհետև «Հայ գրականության ժողովածու»-ն կազմելու հենց առաջին օրից Գորկին ինքը ցանկություն է հայտնում թարգմանելու «Պեպո»-ն: 1915 թ. ապրիլի 2 թվակիր նամակում Տերյանը Պետրոգրադից գրում է իր

[1] «Նոր ուղի», 1931 թ. № 4:

ծանոթներից մեկին. «Մի կերպ ճարիր «Պեպո»-ի ռուսերեն թարգմանությունը (Տատուրյանի և Վեսելովսկու), որքան կարելի է շուտ հղիր— Գորկին խնդրեց— ուզում է թարգմանել «Պեպո»-ն (առաջ ուզում է ծանոթանալ դրանով)»:

Գորկին շստով ծանոթանում է «Պեպո»-ի ռուսերեն թարգմանություններին և որոշում է նորից՝ այս անգամ իր թարգմանությամբ՝ «Պեպո»-ն հրատարակել «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ: Ժողովածուի մասին ռուս և հայ մամուլում հրապարակված առաջին լուրերի մեջ արդեն որոշակի ասված էր, որ «Մաքսիմ Գորկին ինքը թարգմանում է Սունդուկյանի «Պեպո»-ն:[1]

«Պեպո»-ի բառացի թարգմանությունը կատարում է Վահան Տերյանը: Երբ արդեն այդ թարգմանությունը պատրաստ էր, Տերյանը 1915 թ. հուլիսի 21-ին Պետրոգրադից հետևյալ նամակն է ուղարկում Մաքսիմ Գորկուն.—

«Մեծարգո
Ալեքսեյ Մաքսիմովիչ.

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպո»-ի բառացի թարգմանությունը: Բարի եղեք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ: Թարգմանությունն ուղարկեմ Ձե՞զ, թե՞ գամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե միայն Դուք չեք մոռացել այդ): Եթե դուք մտադիր եք այժմ ևեթ ձեռնամուխ լինել թարգմանությանը և եթե իմ ներկայությունն անհրաժեշտ կհամարեք, ես կարող եմ գալ շաբաթ օրը, հետս բերելով արդեն պատրաստ ձե-

[1] «Մշակ», 1915 թ., № 246:

ռագիրը («Պեպո»-ի բառացի թարգմանություն): Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում: Այդ գործերը կընտրեմ և կներկայացնեմ թարգմանիչներին:

Մնացած բոլորի մասին՝ ժողովածուի վերաբերյալ՝ անձամբ կհայտնեմ Ձեզ, եթե պետք լինի գալու, կամ՝ եթե կարիք չի լինի— կսպասեմ Ալեքսանդր Նիկոլաևիչի գալուն և կտեղեկացնեմ Ձեզ:

Ձեզ անկեղծ սիրող և հարգող

Վահան Տերյան»

Գորկին, Տերյանի այս նամակը ստանալուց հետո շուտով իր մոտ է հրավիրում Վահան Տերյանին և նրա օգնությամբ սկսում «Պեպո»-ի թարգմանության գործը:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտին կից գրական թանգարանում պահվում է «Պեպո»-ի ռուսերեն թարգմանության այն ձեռագիրը, որի վրա աշխատել է Գորկին: Այն հսկայական աշխատանքը, որ թափել է Գորկին «Պեպո»-ի բառացի թարգմանության ձեռագրի ամեն մի տողի, ամեն մի բառի վրա, գալիս է խորապես վկայելու, որ Գորկին «Պեպո»-ն դասել է արվեստի մեծանուն գործերի և իր սիրած ստեղծագործությունների շարքը: Գորկին, որ ընդհանրապես սովորություն չուներ թարգմանություններով զբաղվելու, միայն այդ դեպքում կարող էր աշխատել «Պեպո»-ի թարգմանության վրա: Բարձր և իսկական գեղարվեստական գործ համարելով «Պեպո»-ն՝ Գորկին

1915 VIII 21 Петроградъ

Глубокоуважаемый

Алексей Максимовичъ!

Дословный переводъ „Пепо" Сундукьяна будетъ готовъ на-днях. Пожалуйста сообщите, как мнѣ быть? Прислать Вамъ переводъ или пріѣхать (как было условлено, если только Вы не забыли этого)? Если Вы намѣрены теперь-же приступить къ переводу и, если мое присутствіе сочтете нужнымъ, я въ субботу могу уже пріѣхать съ рукописью (дословнаго перевода „Пепо")

Изъ подстрочниковъ осталось перевести нѣсколько вещей, не вошедшихъ въ книги изъ списковъ и разбросанныхъ по разнымъ періодическимъ изданіямъ. Эти вещи выберу и представлю уже переводчикамъ.

Обо всемъ остальномъ касательно сборника, сообщу Вамъ лично, если придется пріѣхать, или, если не придется подожду пріѣзда Александра Николаевича и сообщу ему.

Искренно Вас любящій и уважающій

ВаанТерьянъ

Մ. Գորկուն ուղղած Վ. Տերյանի նամակի ֆաքսիմիլեն:

նշել է, որ նա արժանի է նաև ռուսական թատրոններում բեմադրվելու:

Գորկու այդպիսի ջերմ վերաբերմունքը դեպի «Պեպո»-ն՝ պատահական չէ: Ինչպես հայտնի է, Սունդուկյանի «Պեպո»-ն հայ գրականության մեջ առաջին կոմեդիան է, որ անցյալ դարի 70-ական թվականներին բարձրանալով բեմ՝ իր գեղարվեստական ու սոցիալական մեծ արժանիքներով, մինչև այսօր էլ մնացել է որպես հայ բեմի զարդն ու պարծանքը:

Խոսելով Գորկու և նրա վերաբերմունքի մասին «Պեպո»-ի հանդեպ, ավելորդ չենք համարում մի քանի խոսք ասել նաև Գորկու վերաբերմունքի մասին դեպի «Պեպո» կինոնկարը: Հայտնի է, որ «Պեպո» կինոնկարը մեծ ընդունելություն գտավ ինչպես Սովետական Միության մեջ, նույնպես և արտասահմանում: Գորկին դիտելով «Պեպո» կինոնկարը՝ բավականին բարձր է գնահատել այն: Նշենք մի փաստ: Բանաստեղծ Ալեքսանդր Պրոկոֆևն իր հիշողությունների մեջ պատմում է, թե ինչպես Գորկու ամառանոցում, մի խումբ գրողների հետ միասին, երկար զրուցել են Գորկու հետ մեր կուլտուրայի բազմաթիվ հարցերի մասին: Պրոկոֆևը գրում է. «Շատ բանի մասին խոսեցինք մենք Ալեքսեյ Մաքսիմովիչի հետ չորս ժամվա ընթացքում: Կինոյի մասին: Վերջին արտադրության երկու ֆիլմերի մասին ջերմորեն է արտահայտվում Գորկին: Դրանք են՝ «Սահմանագլուխը» և «Պեպո»-ն:

— Ճիշտ է, չէ՞, լավ նկարներ են,— ասում է նա:

Ես Գորկու ուշադրությանն եմ հրավիրում «Պեպո» կինոնկարի վերջին էպիզոդի՝ բանտի առաջ կատարվող

ցույցի վրա և գտնում եմ, որ այդ ինձ պայմանական է թվում:

Գորկին ասում է, որ ինքը գիտե այդ բանը, որ նրա յուսամուտները գետնից բարձր չեն և որ նկարը ճիշտ է»:[1]

Գորկին մեծ աշխատանք է կատարել ոչ միայն «Պեպո»-ի, այլև «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ տեղ գտած ամեն մի առանձին երկի վրա: Նա իրեն հատուկ ուշադրությամբ խմբագրել, ուղղել ու շտկել է այդ երկերի թարգմանությունները: Մեր արխիվներում պահված ձեռագրերի ուսումնասիրությունը բավականաչափ նյութ է տալիս այն քրտնաջան աշխատանքի մասին, որ կատարել է Գորկին «Հայ գրականության ժողովածու»-ի վրա:

1916 թվի մայիսին լույս է տեսնում «Հայ գրականության ժողովածու»-ն՝ Մ. Գորկու խմբագրությամբ: Ռուսական և հատկապես հայկական մամուլում բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին ժողովածուի մասին: Ագրեսիվ բուրժուա-նացիոնալիստական քննադատությունն ամեն կերպ աշխատում էր պրովոկացիայի ենթարկել ժողովածուն: Այդ գործում առանձնապես կեղտոտ դեր խաղաց դաշնակցական լիդեր Ահարոնյանն իր համախոհներով, որոնք համախմբվել էին Բաքվի դաշնակցական «Արև» թերթի շուրջը:

Տերյանը ստիպված եղավ մամուլում հատուկ հոդվածով հանդես գալ և ցույց տալ այդ մարդկանց չարամիտ վերաբերմունքի բուն իմաստը:

Ինչպես մենք նշեցինք այս աշխատության նախորդ

[1] „Литературный Ленинград“, от 20 июля 1935 г.

գլխում, բոլշևիկյան քննադատությունը՝ հանձին Ստեփան Շահումյանի, ողջունեց Մաքսիմ Գորկուն՝ «Հայ գրականության ժողովածու»-ն խմբագրելու ու հրատարակելու համար: Պատերազմական ծանր տարիներին «Հայ գրականության ժողովածու»-ի հանդես գալը ռուս և հայ ժողովուրդների բարեկամության արտահայտություններից մեկն է:

Մեր լավագույն ինտելիգենցիան ջերմորեն ողջունեց Գորկու այդ ձեռնարկությունը:

Մաքսիմ Գորկու խորհրդով էր դարձյալ, որ կազմվեց «Պոեզիա Արմենիի» մեծածավալ ժողովածուն: Նրա խորհրդով էր նաև, որ հայ գրականության ներկայացուցիչները դիմեցին Վալերի Բրյուսովին, որպեսզի նա իր վրա վերցնի ժողովածուն խմբագրելու դժվարին գործը:

Գորկուն շատ լավ հայտնի էր, որ հայ ժողովրդի պոեզիան՝ ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը՝ ռուսական թարգմանությամբ հրատարակելը դժվարին ու ծանր գործ է, որ նա պահանջում է հսկայական ջանքեր և, որ գլխավորն է՝ կարող մարդու ջանքեր: Ահա թե ինչու նա հատկապես կանգ էր առել Բրյուսովի վրա: Գորկին համոզված էր, որ միայն Բրյուսովը կարող էր գլուխ բերել այդ գործը և դրա համար էլ նա խորհուրդ է տալիս դիմելու Բրյուսովին:

Իոաննա Բրյուսովան՝ բանաստեղծի կինը, Բրյուսովի մասին գրած կենսագրական նոթերում, հետևյալ հիշատակությունն է անում այդ մասին. «Պատերազմական գործողությունների շրջաններից Բրյուսովի վերադառնալուց կարճ ժամանակից հետո, Մաքսիմ Գորկու խորհրդով, Մոսկվայի Հայկական Կոմիտեի ներկայացուցիչները նրան դիմեցին՝ իր վրա վերցնել հայ պոեզիայի ժո-

ղովածուի խմբագրումն ու թարգմանությունները, համոզելով Բրյուսովին չհրաժարվել այդ աշխատանքից, ինչպես նա մտադրվել էր, առաջարկեցին ծանոթացնել նրան հայ լեզվի և տաղաչափության առանձնահատկություններին, խոստացան կատարել տող առ տող թարգմանություններ և նրանց մեջ նշել հայերեն բնագրերի չափերի ու հանգերի հերթականությունը։ Այս բոլորը կատարվեց և Բրյուսովն այդ աշխատանքը գլուխ բերեց միանգամայն հաջող, այնպես որ հայ աշուղներից շատերը լիակատար ճշտությամբ տրվեցին ռուսերեն լեզվով և համարժեք բանաստեղծական նշանակությամբ։ Այսպես ստեղծվեց „Поэзия Армении"-ն, որը լույս տեսավ 1916 թ. մասամբ Բրյուսովի թարգմանություններով, մասամբ էլ նրա խնամքոտ խմբագրությամբ»։[1]

Երբ լույս տեսավ Վ. Բրյուսովի խմբագրությամբ հրատարակված «Պոեզիա Արմենիի» ժողովածուն, շնորհավորանքի և բարձր արժեքավորման առաջին խոսքն ասաց «Լետոպիս» ամսագիրը, որի մոտիկ աշխատակիցներից մեկն էր Մ. Գորկին։ «Պոեզիա Արմենիի» ժողովածուին նվիրված հոդվածում կարդում ենք.

«Հայ բանաստեղծների թարգմանությունների փառահեղ և առատ հատորը ոչ միայն խոշոր երևույթ է հայ բանաստեղծության համար, այլև մեծ տոն ռուս բանաստեղծության համար։ Անցյալ դարի 70-ական թվականներից հետո, երբ բանաստեղծ հրատարակիչ Ն. Վ. Գերբելի ժողովածուներն էին լույս տեսնում օտար բանաստեղծությունների վերաբերյալ, մենք չենք ունեցել այնպիսի բովանդակալից և ամփոփ ժողովածու, որ նվիրված լիներ որևէ ազգության բանաստեղծության»։

[1] В. Брюсов — Избранные стихи, изд. 1933 г., стр 139.

Հայկական պոեզիայի ուսումնասիրության ժամանակաշրջանում Բրյուսովը, Գորկուն ուղղած իր նամակներում, հաճախակի հիշատակում է Հայաստանի և նրա գրականության մասին։ Այդ տեսակետից հետաքրքիր է Բրյուսովի 1916 թվի մարտի 8-ի թվակիր նամակը՝ ուղղված Գորկուն։ Իր այդ նամակում Բրյուսովը գրում է. «Ձեր վերջին նամակն ինձ հասավ այն օրերին, երբ ես գտնվում էի Կովկասում,— հին Հայաստանի մարզերում և որտեղ ես հայ գրականության վերաբերյալ դասախոսություններ էի կարդում հայերի համար»։[1]

Հայ ժողովուրդը, նրա առաջավոր ինտելիգենցիան շատ բարձր են դասել Գորկու ծառայությունները հայ գրականությանը։ Երբ 1916 թվականին Վալերի Բրյուսովը եկել էր Անդրկովկաս՝ զեկուցումներ կարդալու հայկական պոեզիայի մասին, Բաքվի հայ ինտելիգենցիան ճոխ բանկետ էր կազմակերպել Բրյուսովի պատվին. և ահա, հավաքված բազմության անունից, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և Բաքվի հայ գրասերների ընկերության նախագահ Տիգրան Հովհաննիսյանը հետևյալ հեռագիրն են ուղարկում Պետրոգրադ՝ Մաքսիմ Գորկուն.

«Ի պատիվ Վալերի Բրյուսովի՝ կազմակերպված բանկետի մասնակիցների համաձայնությամբ հղում ենք մեր խորին երախտագիտությունը՝ մտածող Ռուսաստանը հայ ժողովրդի հոգևոր ստեղծագործությանը ծանոթացնելու գործում Ձեր ցուցաբերած ազնիվ աշխատանքի համար, մի ժողովուրդ, որ իր բախտն անխզելիորեն կապել է ռուս մեծ ժողովրդի բախտի հետ»։

1 М. Горький — Материалы и исследования, том I, стр. 185.

«Հայ գրականության ժողովածու»-ն լույս տեսնելուց հետո սկսվում է Գորկու խմբագրությամբ լույս տեսնելիք «Հայկական գրադարան» ընդհանուր անվան տակ առանձին գրքերով հրատարակելու գործը։ Այդ սերիայի առաջին գիրքը պետք է լիներ Շիրվանզադեի «Քաոսը», որը թարգմանելու էր Վահան Տերյանը և դարձյալ պետք է խմբագրեր Գորկին։ Այդ մասին հետևյալն ենք կարդում ժամանակի ռուս և հայ մամուլում. «Բանաստեղծ Վահան Տերյանը ռուսերենի է թարգմանել Շիրվանզադեի «Քաոս» մեծ վեպը, որը նախ տպագրվելու է Մ. Գորկու ամսագրում՝ „Летопись“ *-ի մեջ, ապա հրատարակվելու է առանձին գրքով»։*[1]

Տերյանի այդ թարգմանությունը լույս չտեսավ ո՛չ «Լետոպիս» ամսագրում, ո՛չ էլ առանձին գրքով։ Ինչպես հայտնի է, «Լետոպիս»-ը շուտով փակվեց, իսկ առանձին հրատարակությունը գլուխ չեկավ։

Չնայած հայ գրականության հետ կապված աշխատանքները ժամանակավորապես դադարեցին, բայց Տերյանը շարունակում էր կապ պահպանել Գորկու հետ, հետևում էր նրա կյանքին ու գրական գործունեությանը։ Երբ 1917 թվին լրացավ Գորկու գրական գործունեության 25-ամյակը, Տերյանը ողջույնի մի ջերմ հեռագիր ուղարկեց նրան։ Ահա այդ հեռագիրը.

«Սրտանց ողջունում եմ Ձեզ— դեմոկրատիայի փառապանծ, խիզախ, հավատարիմ առաջնորդին, ջերմորեն սիրված ճշմարտախոս գրողին, քաղաքացուն և մարդուն։

Վահան Տերյան»

---

[1] *«Մշակ», 1916 թ., № 54։*

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի փոթորկալի օրերին բոլշևիկ Տերյանը Գորկու ազդեցությամբ գրեց.

Քեզ եմ երգում, կարմիր,
Արյունաբորբ
Ազատության դրոշ։
Հարյավ հոգին իմ որբ,
Հավետ հարյավ
Ցնծուն ու խենթ, որպես
Մրրկահավ...

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան լայն հնարավորություններ է ստեղծում Մաքսիմ Գորկու գրական-կազմակերպչական գործունեության համար։ Ռևոլյուցիայից անմիջապես հետո Գորկին կազմակերպում է «Համաշխարհային գրականություն» հրատարակչությունը։

«Համաշխարհային գրականություն» հրատարակչության աշխատակիցներից մեկը՝ Կորնեյ Չուկովսկին, Գորկու մասին գրած իր հիշողություններում նշում է. «1918 թվին նա ինձ (մյուս գրողների հետ միասին) մոտիկից մասնակից դարձրեց «Համաշխարհային գրականություն» հրատարակչությանը, որը նրա կողմից հիմնադրվել էր, Հոկտեմբերյան օրերից անմիջապես հետո։ Նրան գրավել էր լայն մի միտք— սովետական նոր ընթերցողին տալ ամենալավ գրքերը, որպիսին գրվել են մեր մոլորակի վրա լավագույն հեղինակների կողմից, որպեսզի այդ նոր ընթերցողը կարողանա ուսումնասիրել համաշխարհային գրականությունը թարգմանական լավագույն նմուշների հիման վրա։ Դրա համար Գորկին ստեղծեց մի մեծ կոլեգիա գրողներից և գիտնական-

գրականագետներից բաղկացած, որոնք պետք է ռելսերի վրա դնեին բավականին բարդ հրատարակչական գործը՝ սովետական ընթերցողների համար հատկապես հարմարեցրված ծրագրով»:[1]

«Համաշխարհային գրականություն» հրատարակչության աշխատանքներին մասնակցում էին սովետական լավագույն գիտնականները, գրողները, գրականագետները, թարգմանիչները և նկարիչները: Հրատարակչական պլանի երկրորդ հատորը նվիրված է արևելյան ժողովուրդների գրականությանը: Այդ պլանն ընդգրկում է հայ գրականությունը հնագույն ժամանակներից մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերը: Հայ գրականության պլանը կազմվել է Գորկու, Վահան Տերյանի, ակադեմիկ Հ. Օրբելու, Վալերի Բրյուսովի և Ալեքսանդր Բլոկի ակտիվ մասնակցությամբ: Սրանք էլ գլխավորել են հայ գրականության հրատարակության ամբողջ խմբագրական աշխատանքները:

Հետագայում Մաքսիմ Գորկին էլ ավելի է ընդլայնում իր հրատարակչական-կազմակերպչական գործունեությունը: Նրա նախաձեռնությամբ հրատարակվում են սովետական ժողովուրդների գրականության նվիրված մի շարք ժողովածուներ, ալմանախներ, անթոլոգիաներ և պարբերական հրատարակություններ:

---

[1] К. Чуковский — Репин, Горький, Маяковский, Брюсов, Москва, 1940 г., стр. 94—95.

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ ՆԱԽԱՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ

Բացի Վահան Տերյանի անունից, Գորկու անվան հետ կապվում են մեր գրականության նաև այնպիսի խոշոր ներկայացուցիչների անուններ, ինչպիսիք են՝ Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Թումանյանը, Նար-Դոսը և ուրիշները։

Ալեքսանդր Շիրվանզադեն հայ գրականության մեջ պատկանում է գրողների այն շարքին, որոնք Գորկու տաղանդի առաջին և բարձր գնահատողները հանդիսացան հայ իրականության մեջ։ Դեռ 900-ական թվականների սկզբներին, ռուս գրականագետ Յուրի Վեսելովսկուն ուղղած իր մի նամակում, Գորկուն դասելով ժամանակի մեծ գրողների շարքը, Շիրվանզադեն գրում է. «Գորկին պայծառ տաղանդ է», «Գորկին խոշոր գեղարվեստագետ է»։

900-ական թվականներից սկսած՝ Շիրվանզադեն իր քննադատական հոդվածներում հաճախակի է անդրադարձել Գորկու ստեղծագործություններին՝ գնահատան-

բի խոսք ասելով նրանց մասին։ Տիրվանզադեի այդ հոդվածների շարքում բացառիկ տեղ է գրավում 1916 թվականին գրված նրա մի հոդվածը՝ Մ. Գորկու խմբագրությամբ լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի մասին։ Տիրվանզադեն հայ առաջավոր ինտելիգենցիայի հետ միասին ջերմորեն ողջունեց Գորկու այդ ձեռնարկությունը, նշելով նրա խոշոր նշանակությունն ու տեղը մեր կուլտուրայի զարգացման գործում։ Համեմատելով Գորկու խմբագրած ժողովածուն Վալերի Բրյուսովի խմբագրած ժողովածուի հետ՝ նա առաջնությունը տալիս է Գորկու ժողովածուին։ Տիրվանզադեն իր այդ հոդվածում գրում է. «Առաջին անգամ չէ, որ հայ երկերը թարգմանվում են ռուսերեն և լույս են տեսնում, բայց առաջին անգամն է, որ մի նշանավոր ռուս հեղինակ՝ այն է՝ Մաքսիմ Գորկին, ինքնաբերաբար ոչ միայն հետաքրքրվում է հայ գեղեցիկ գրականությամբ, այլև աշխատում է հետաքրքրել նրանով նաև ռուս հասարակությունը։

Ես «ինքնաբերաբար» բառն ընդգծեցի դիտմամբ, վասնզի միանգամայն այլ հայացք ունեմ Վալերի Բրյուսովի հայ բանաստեղծությունների ժողովածուի մասին, որ նույնպես շուտով պիտի լույս տեսնի։ Այդ ժողովածուի ձեռնարկությունը հայկական է, և ոչ անկախ, ինքնաբեր։ Մոսկվայի Հայկական Կոմիտեի ջանքերին ենք գլխավորապես պարտ լինելու հայ քնարերգության նմուշների ռուսերեն լույս տեսնելը. նա է, որ հետաքրքրել է ռուս բանաստեղծին և թևավորել նրան։

Ավելացրեք և այն, որ Մոսկվայի ժողովածուն հրատարակվում է հայ դրամով և Հայկական Կոմիտեն է, որ վերցրել է իր վրա նրա ծախքերը։ Ասել է, ձեռնարկու-

թյունը կրում է մի տեսակ բարեգործության դրոշմ, որ, սակայն, մազաչափ չի նսեմացնում նրա բարոյական արժեքը: Այնինչ՝ Մաքսիմ Գորկու ձեռնարկությունը, ինքնաբուխ լինելով, միևնույն ժամանակ կապված է նյութական ռիսկի հետ:

Ահա այդ երկու տեսակետից ռուս վիպասան-դրամատուրգի գործն իմ աչքում դառնում է կրկնակի գնահատելի: Հետո, ի նկատի պետք է ունենալ, որ Մաքսիմ Գորկին մի սոսկ բանաստեղծ չէ, այլ դրեթե մի բացառիկ ստեղծագործող խոշորություն Ռուսաստանում և ամենաառաջինն՝ իր հեղինակությամբ և ժողովրդականությամբ: Նա միակ ռուս հեղինակն է Տոլստոյից հետո, որ վայելում է համաշխարհային հռչակ, և նրա անունը Եվրոպայում այնքան է հայտնի, որքան իր հայրենիքում, գուցե և ավելի: Մաքսիմ Գորկին ռուս գրականության հորիզոնում մի վիթխարի է, որի ստվերի մեջ չքանում են շատ փքուն մեծություններ: Նա դեռ շատ ընտիր երկեր կտա:

Եվ ահա այդպիսի մի անզուգական մեծության հետաքրքրությունը հայ գրականությամբ՝ պետք է գնահատվի հայ հասարակության կողմից: Մաքսիմ Գորկու խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն հայ հասարակությունը պարտավոր է դարձնել իր սեղանի զարդը»:[1]

Շիրվանզադեի այս բացառիկ ջերմ տողերը Գորկու մասին՝ գալիս են մեզ ասելու, որ հայ խոշորագույն վիպասանը կարողացել է ճիշտ ըմբռնել ու գնահատել պրոլետարիատի մեծ երգչի հանճարը, նրա նշանակությունն ու դերը համաշխարհային գրականության մեջ:

[1] «Մշակ», 1916 թ., № 119:

խորը, անջնջելի տպավորություն է թողել Շիրվանզադեի վրա Գորկու «Մանկությունը»։ Երբ լույս տեսավ «Մանկությունը» առանձին հրատարակությամբ, Շիրվանզադեն շտապեց հատուկ նամակով իր հիացմունքը հայտնել մեծ գրողին։ Ահա թե ինչ է գրում նա 1916 թվի հունվարի 26-ին գրված իր այդ նամակում.

«Մեծարգո պարոն Գորկի

Թույլ տվեք հայտնել Ձեզ իմ ամենախորին շնորհակալությունն այն բացառիկ հոգեկան բավականության համար, որ ինձ պատճառեց Ձեր «Մանկություն» հրաշալի գիրքը, որի ընթերցումը հենց նոր միայն վերջացրի։

Եթե ես չվախենայի բոլորին հայտնի Ձեր համեստությունը վիրավորելուց, ապա կասեի, որ ոչ մի բելետրիստական ստեղծագործություն ինձ վրա չի թողել այդպիսի ուժեղ տպավորություն։

Բացի դրանից, «Մանկությունը» կարդալիս, ես վերապրեցի, և այս րոպեիս էլ վերապրում եմ իմ սեփական մանկությունը և այնպիսի բարձր գեղարվեստական բավականություն զգացի (ներեցեք, այս բառը չի արտահայտում այն, ինչ որ ես զգում եմ, սակայն ուրիշը չեմ գտնում), որպիսին կարող է տալ համաշխարհիկ ստեղծագործությունը միայն։

Ես չգիտեմ՝ ինչի՞ վրա ավելի զարմանալ— արդյոք հեղինակի համարձակությա՞ն, որ հանում իր ժողովրդի առողջացման այդպիսի դժվարին վիրահատություն է կատարել, արդյոք նրա կողմից մարդկային կյանքի և մարդու հոգու խորունկ ճանաչողությա՞ն, թե՞ նրա

ստեղծագործական ուժի և գրելու գեղարվեստականության:

Իմ կարծիքով, ամբողջ գիրքը ռուս ժողովրդական կյանքի, նրա հարստահարված վիճակի սիմվոլն է: Եվ ոչ միայն ռուս ժողովրդի, այլ բոլոր ժողովուրդների ընդհանրապես:

Նկատեցեք, չէ՞ որ ես ռուս չեմ, այլ հայ, որ ծնվել ու ապրել է ռուսական կյանքից հեռու, մինչդեռ Ձեր ամբողջ նկարագրածն ինձ համար նույնքան հարազատ է, որքան այն ժողովրդի կյանքը, որի ծնունդ եմ ես: Եվ, հավատացեք, նույնը Ձեզ կասի և ֆրանսիացի, և անգլիացի, և ամեն մի գրող, որ դուրս է եկել ժողովրդի ծոցից և գիտե իր ժողովրդի կյանքը:

Հենց այս հանրամարդկայնության մեջ է Ձեր մեծ գրքի գլխավոր արժեքը: Մյուս գլխավոր արժեքը՝ հեղինակի հմայիչ անկեղծությունն է: Եվրոպական գրականության մեջ ես միայն Ժան Ժակ Ռուսոյին գիտեմ, որ իր ինքնակենսագրության մեջ դրսևորել է հավասարազոր անկեղծություն:

Թույլ տվեք, թանկագին հեղինակ, սեղմել Ձեր ուժեղ ձեռքը, այն ձեռքը, որ հանրամարդկային գրականության այդպիսի հրաշալի մոնումենտ է ստեղծել:

Ընդունեցեք դեպի Ձեզ ունեցած խորին հարգանքներիս հավաստիքը:

Ա. Շիրվանզադե»

Այսպիսի նամակ կարող էր գրե՛լ միայն մեծ գրողը, և Շիրվանզադեն այդպիսին էր: Նա կարողացել է ճշտակերպով ըմբռնել Գորկու «Մանկության» գեղարվեստական և իդեական խոշոր նշանակությունը: Շիրվանզադեն

«Մանկությունը» անվանում է հանճարեղ ստեղծագործություն, համամարդկային գրականության հրաշալի մոնումենտ, և նա չէր սխալվում:

Ռուս և համաշխարհային գրականության մեջ դժվար է նշել մի ուրիշ գրողի, որն իր ստեղծագործությամբ կարողանար այնպես բազմակողմանի, խորը և ճշմարտորեն պատկերել իր ժողովրդի «ստորին» խավերի կյանքը, նրանց նիստ ու կացը, նրանց խոհերը և պայքարը հանուն նեխված կյանքի վերափոխման, ինչպես կարողացել է այդ անել Մաքսիմ Գորկին իր ստեղծագործությունների մեջ: Մաքսիմ Գորկու «Մանկությունը», նրա «Ծառայության մեջ» և «Իմ համալսարանները» երկերի հետ միասին կազմում են ռուսական կյանքի մի ամբողջ դարաշրջանի գեղարվեստական պատկերումը:

Ահա թե ինչու Շիրվանզադե-արվեստագետը չէր կարող առանց մեծ հիացմունքի խոսել նրա մասին:

Պատերազմական ծանր օրերին և ժամանակի թունավորված մթնոլորտում Շիրվանզադեի նամակը, նրա սրտագին ջերմ արձագանքը «Մանկության» հրատարակման առթիվ, Գորկու վրա խորը տպավորություն է գործում: Եվ 1916 թվի փետրվարի 1-ին Գորկին հետևյալ հուզիչ նամակն է ուղարկում Շիրվանզադեին.

«Հարգելի եղբայրակից.

Ձեր գովասանքը խորապես հուզեց ինձ իր անկեղծությամբ— սրտագին շնորհակալություն Ձեզ: Գիտեմ, որ Ձեր խոսքերն ավելի քան հաճելի են ինձ համար, չեմ կասկածում, որ ես չեմ վաստակել այդպիսի վերաբերմունք Ձեր կողմից:

Բայց դուք գրող եք, մի մարդ, որ ապրում է աշխար-

հի բոլոր ցավերով և ուրախություններով։ Դուք խնքներդ գիտեք, որքան գնահատելի, որքան ուրախալի է իմանալ, որ Ձեր խոսքը, հասկանալի է Կովկասում և Անգլիայում, Սկանդինավյան թերակղզում և Իտալիայում։ Շնորհակալություն, որ արձագանքեցիք, սրտագին շնորհակալություն։

Ինձ համար հաճելի է հայտնել Ձեզ, որ ես մի քիչ ճանաչում եմ Ձեզ— կարդացել եմ Ձեր գործերը։ Իսկ Ձեր անունն առաջին անգամ լսել եմ 92 թվին, Թիֆլիսում և հետո՝ 97 թվին, երբ նստած էի Մետեխի բանտում, տեսնո՞ւմ եք— մենք հին ծանոթներ ենք։

Ցանկանում եմ Ձեզ հաջողություն։

Հայտնեցեք ինձ Ձեր անունը և հայրանունը, որ ես կարողանամ մակագրություններ անել այն գրքերի վրա, որ ուղարկելու եմ Ձեզ։

Ողջ եղեք։

Մաքսիմ Գորկի»

Շիրվանզադեն իր հիացմունքը Գորկու «Մանկության» առթիվ արտահայտեց նաև մամուլում։ 1916 թվականին գրած նրա հոդվածներից մեկում կարդում ենք. հետևյալ տողերը. «Սորերս ես հաճույք ունեցա կարդալու Գորկու „Детство“ անունով գիրքը, որը մի տեսակ ավտոբիոգրաֆիա է, և, կարող եմ ասել, որ ոչ մի ռուս վիպական գեղարվեստական գրվածքի մեջ ես չեմ զգացել այնքան խորություն և այնքան գեղեցկություն, որքան այդ գրքում»։[1]

Շիրվանզադեն ոչ միայն հետևում էր Գորկու գեղարվեստական ստեղծագործություններին, այլ նաև նրա բոցաշունչ հրապարակախոսական հոդվածներին, նրա քա-

[1] «Մշակ», 1916 թ., № 119։


1 II 11

Уважаемый собрат!

Желаю Вам всего доброго!

Доброго здоровья!

М. Горький

Ա. Շիրվանզադեին ուղղած Մ. Գորկու նամակի ֆակսիմիլեն։

ղաքական ելույթներին: Իր «Կյանքի բովից» մեմուարների երկրորդ հատորում Շիրվանզադեն վերհիշում է Գորկու 1906 թվի մի հռչակավոր կոչը, որտեղ նա դիմում է արտասահմանյան պետություններին, որ նրանք փոխառություն չտան ռուսական նեխված պետությանը, որովհետև այդ փոխառությունները նա օգտագործում է իր երկրի ներսում սպանդներ կազմակերպելու, Ռուսաստանի բոլոր մասերում ծայր առած ռևոլյուցիոն շարժումները խեղդելու համար: Վերհիշելով Գորկու այդ կոչը և այն մեծ աղմուկը, որ բարձրացել էր նրա շուրջը Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում, Շիրվանզադեն գրում է. «Ցարական կառավարությունը մի միլիարդ ֆրանկի փոխառություն էր խնդրել Ֆրանսիայից: Չգիտեմ՝ թվով դա քանիերորդ դեպքն էր, բայց վաղուց արդեն դարձել էր սովորական: Եվ ֆրանսիական բուրժուազիան միշտ հաճույքով էր պարզել իր քսակը: Ինչո՞ւ չէ: Չէ՞ որ նրա շայլոկյան պայմանները միշտ ընդունվում էին առանց առարկության: Այս անգամ փոխառությունը Նիկոլայ երկրորդին հարկավոր էր գլխավորապես հեղափոխական շարժումները մի անգամ առ միշտ Ռուսիայում խեղդելու համար: Մաքսիմ Գորկին իր խիզախ ոճով գրեց մի ցասկոտ հոդված: Այնտեղ նրա խորապես վշտացած գրչից շեշտակի սպրդել էր մի կծու դարձվածք՝ «Թքում եմ գեղեցիկ Ֆրանսիայի երեսին»: Ամենքը գիտեն, որ թուքը ուղղված է բուրժուազիայի և մանր բուրժուազիայի երեսին, բայց չէին ուզում խոստովանել: Այս էր պատճառը, որ ռեպտիլ մամուլը կատաղել էր համբավավոր բելլետրիստի դեմ»:[1]

[1] Ա. Շիրվանզադե—Կյանքի բովից, 2-րդ մաս, էջ 82—83:

Շիրվանզադեի որոշ ստեղծագործությունների վրա նկատելի է Գորկու ազդեցությունը. օրինակ՝ «Արտիստ» վիպակը (1902 թ.), որի մեջ հեղինակը նկարագրում է Օդեսայի ծովափնյա պանդոկների կյանքը, նավաստիների կենցաղն ու նրանց ըմբոստ հոգին, ամբողջովին հիշեցնում են Գորկու առաջին շրջանի ստեղծագործությունները: «Արտիստ» վիպակի գլխավոր հերոս Լևոնը և նրա ընկերները՝ Իցկոն ու Զաուշենկոն տիպիկ գորկիական կերպարներ են:

Բնորոշ էպիզոդ է հանդիսանում վիպակի հեղինակի հանդիպումը Լևոնի ընկերների՝ Իցկոյի և Զաուշենկոյի հետ: «Այս հանդիպումն ինձ ուրախացրեց,— գրում է Շիրվանզադեն,— ես սեղմեցի նրանց ձեռը և իսկույն հարցրի Լևոնի մասին:

Զաուշենկոն հաստ գավազանը բարձրացրեց լայն վերարկուի տակից և, ցույց տալով նավահանգիստը, թատրոնական եղանակով ասաց.

— Այնտեղ է:

— Զաուշենկո, ինչո՞ւ այսօր ձևերդ տրագիկական են,— ասաց Իցկոն:

— Որովհետև, սիրելի ջհուդիկս, այնտեղ է կատարվում կյանքի տրագեդիան: Մարդիկ տանջվում են ու մեռնում խավարի մեջ: Գնանք, տար ինձ այնտեղ, Իցկո: Զաուշենկոն արիստոկրատ բանաստեղծներից չէ, որոնք խորշում են ամբոխից: Մաքսիմ Գորկու գրածները չես կարդացել, Զաուշենկոյինը կկարդաս: Ութ տարի ուսումնասիրել եմ արճիճային աշխարհը. այժմ ուզում եմ ուսումնասիրել նավահանգստի ամբոխը: Գնանք, պարոն,— դարձավ նա ինձ,— դուք գրող եք, գնանք, մի ամաչեք:

— Գնանք, ուր որ ուզում եք, միայն թե Լեոնին ցույց տվեք։

— Իցկոն մեզ կառաջնորդի։ Նա խավարի ծնունդ է։ Հայրը նավահանգստում հին լաթեր ու երկաթ է ժողովում, պիտի իմանա խավարի աշխարհի բոլոր խորշերը յուր ձեռքի ափի պես»։

Շիրվանզադեն, ինչպես և շատ ուրիշ գրողներ Գորկուց են սովորել պատկերել «արճիճային աշխարհի» և «խավարի ծնունդի» մարդկանց։ Սոցիալական անհավասարությունը կործանում է Լեոնի բոլոր պատրանքներն ու երազանքները։ Լեոնի ճակատագիրը, դա Գորկու վաղ շրջանի պատմվածքների շատ հերոսների ճակատագիրն է։

Շիրվանզադեն իր մի զրույցի ժամանակ խոստովանել է, որ «Ջհուդի ականջը» վիպակը գրել է Մաքսիմ Գորկու՝ հրեական ջարդերի դեմ ուղղած հոդվածների ազդեցության տակ։

Սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի փոթորկալի տարիներին Շիրվանզադեն գտնվում էր հեռավոր Ամերիկայում։ Արտասահմանյան բուրժուական և սպիտակգվարդիական մամուլը հազար ու մի զրպարտիչ բամբասանքներ էր տարածում Ռուսաստանի նոր, սովետական կարգերի մասին, բոլշևիկների մասին։

Շիրվանզադեն հեռավոր Ամերիկայից լարված հետևում էր այն բոլոր անցքերին, որ տեղի էին ունենում Ռուսաստանում։ Ճիշտ է, դժվար էր արտասահմանում ապրողի համար պարզ պատկերացում կազմել Ռուսաստանում տիրող վիճակի մասին, սոցիալիստական ռևոլյուցիայի հետագա բախտի մասին, այն էլ բուրժուական մամուլի զարշելի բամբասանքների պայմաններում, սա-

կայն Շիրվանզադեին լավ հայտնի էր բուրժուական և սպիտակ գվարդիական մամուլի բարոյական դեմքը, և նա ոչ մի ուշադրություն չդարձնելով նրանց վրա, որպես մեծ հումանիստ հավատում էր բոլշևիկների և Սովետական կառավարության հաղթանակին։

Շիրվանզադեին հայտնի էր, որ Մաքսիմ Գորկին խոշոր դեր է խաղում նորակառույց սովետական պետության կյանքում, և որ նա սովետական պետության մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի մերձավոր բարեկամն ու զինակիցն է։ Եվ ահա այն ժամանակ, երբ Հայաստանում դեռ իշխում էր դաշնակցական մաուզերիստների կառավարությունը, քաղցի, մահվան և սրի այդ կառավարությունը, Շիրվանզադեն հեռավոր Ամերիկայից հատուկ նամակով դիմում է Գորկուն և նրա միջոցով էլ Սովետական կառավարությանը, հայ ժողովրդի ապագա վիճակին վերաբերող մի քանի հարցեր պարզելու համար։

1920 թվի հուլիսի 2-ի իր այդ նամակում Շիրվանզադեն գրում է Գորկուն.

«Մեծարգո
Մաքսիմ Գորկի.

Գրում եմ Ձեզ Ամերիկայից։

Թերթերից ես իմացա, որ Կովկասը գրեթե գրավված է բոլշևիկների կողմից։ Ես հավատում եմ, որ Սովետական կառավարությանը կհաջողվի խաղաղություն հաստատել անմտորեն իրար հետ թշնամացած ծայրամասերի ժողովուրդների մեջ և ենթարկել նրանց մի ընդհանուր օրենքի՝ սիրո, եղբայրության, ճշմարտության և արդարության օրենքին»

Սովետական կառավարության հանդեպ ունեցած իր այդ աներեր հավատը հայտնելուց հետո, Շիրվանզադեն գրում է, որ հայ ժողովուրդը «խորը դեմոկրատական ժողովուրդ է», որ նա ընդունակ է սոցիալիզմի մեծ գաղափարներն ընդունելու և իրականացնելու այն։

Խոսելով հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերության մասին, տաճկական իմպերիալիզմի և նրա կատարած ավերումների մասին Անդրկովկասում ու մյուս վայրերում, ազգամիջյան թշնամանքների ու չարիքների մասին՝ Շիրվանզադեն գրում է. «Ահա այդ փոխադարձ բնաջնջման դեմ պետք է ամենից առաջ պայքարի Սովետական կառավարությունը։ Մենք, հայերս, միշտ կողմնակից ենք եղել ժողովուրդների եղբայրության։ Մեր պատմությունը տվել է և տալիս է միլիոնավոր ապացույցներ դրա համար։ Մենք խաղաղ ժողովուրդ ենք և երբեք չենք ունեցել և հիմա էլ չունենք ոչ մի ագրեսիվ ձգտում»։

Իր այդ սքանչելի նամակը՝ լի խորը հումանիստական գաղափարներով, անսահման մեծ սիրով դեպի ռուս ժողովուրդը և նրա լավագույն զավակները, Շիրվանզադեն վերջացնում է, դիմելով Գորկուն, որ նա իր ազդեցիկ ձայնը բարձրացնի դաշնակցության ավազակային տիրապետության և թյուրքերի արյունռուշտ սպառնալիքի դեմ, հայ ժողովրդի օգտին։

«Թանկագին և մեծապատիվ գրչակից, այս բոլորը գրում եմ Ձեզ նրա համար, որպեսզի խնդրեմ Ձեզ պաշտպան լինեք հայ ժողովրդին։ Ես Ձեզ համարում եմ անշահախնդիր, ազնիվ և բարի ռուս ժողովրդի իսկական զավակը։ Բարձրացրեք Ձեր ազդեցիկ ձայնը բազմաչարչար և կիսով չափ ոչնչացված հայ ժողովրդի օգտին։

Դա կլինի մեկն ամենալավ գործերից, որ երբևէ կատարել է մարդը։

Ընդունեցեք նվիրվածության և ամենախորին հարգանքներիս հավաստիքը։

Ալեքսանդր Շիրվանզադե»

Շիրվանզադեի այս նամակը, իր քաղաքական ու հասարակական նշանակությունից զատ, մի բացառիկ փաստաթուղթ է հանդիսանում, որը միանգամայն նոր լույս է սփռում նրա աշխարհայացքի վրա։ Նա հնարավորություն է տալիս դիտելու գաղափարական այն բեկումն ու նրա աստիճանական զարգացման ընթացքը, որը տեղի ունեցավ Շիրվանզադեի աշխարհայացքում սկսած 1905 թվի ռևոլյուցիայից հետո, երբ Շիրվանզադեն սկսեց ակտիվ կերպով հետևել Գորկու ստեղծագործություններին ու նրա արծարծած գաղափարներին։ Իսկ հետագա տարիների սերտ կապերը Գորկու հետ՝ ի վերջո Շիրվանզադեին բերին դեպի առաջավոր ինտելիգենցիայի շարքերը, ինտելիգենցիա, որի լավագույն ներկայացուցիչները սոցիալիստական ռևոլյուցիայի դժվարին օրերին չհապաղեցին սրտագին ողջունելու նրա հաղթական երթը, բարձր գնահատելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դերը մեծ ու փոքր ժողովուրդների ազատագրման ու փրկության գործում։

Ալեքսանդր Շիրվանզադեն հայ ժողովրդի մեծատաղանդ ու լավագույն այն զավակներից է, որոնք, լցված մեծ ատելությամբ դաշնակցական մաուզերիստների հանդեպ, հայ ժողովրդի միակ փրկությունը գտնում էին Հայաստանում սովետական սոցիալիստական կարգեր հաստատելու մեջ։ Ահա թե ինչու Հայաստանում սովե-

տական կարգեր հաստատելուց հետո Շիրվանզադեն առաջինն էր, որ վերադարձավ իր հայրենիքը, իր ժողովրդի մոտ:

Մաքսիմ Գորկու հետ վերջին անգամ Շիրվանզադեն հանդիպում է 1934 թվին, Գրողների Համամիութենական առաջին համագումարում: Ջերմ ու սրտառուչ էր երկու մեծ գրողների ու հին բարեկամների հանդիպումը: Ամբողջ համագումարի ընթացքում նրանք միասին էին: Համագումարից ստացած իր տպավորությունների մասին գրած հոդվածում Շիրվանզադեն խանդավառությամբ նշում է. «Իհարկե, համագումարի ոգին՝ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներից սիրված Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին էր»:[1]

Հայ խոշոր բանաստեղծներից Ավետիք Իսահակյանն առաջինն էր, որ երբ 1901 թվին լույս տեսավ Մաքսիմ Գորկու անմահ «Մրրկահավը», այդ նույն թվին իր սքանչելի թարգմանությամբ այն մատչելի դարձրեց հայ ընթերցող հասարակությանը:

Իր այդ թարգմանության առթիվ տարիներ հետո Ավ. Իսահակյանը գրում է. «1901 թվին ես գտնվում էի Արևմուտքում, երբ իմ ձեռքն ընկավ «Մրրկահավի երգը», Գորկու այդ սքանչելի ստեղծագործությունը, որը հենց նոր էր լույս տեսել: Ես անմիջապես թարգմանեցի և այն տպագրվեց արտասահմանյան հայկական թերթերում: Այդպիսով, առաջին անգամ ես պատիվ ունեցա թարգմանելու հայերեն «Մրրկահավի երգը» և այդ փաստը ես հատուկ հպարտությամբ եմ նշում:

Այդ հիասքանչ երկը մեծ արձագանք գտավ հայ

[1] «Գրական թերթ», 1934 թ., № 21:

հասարակության մեջ, ես խանդավառ նամակներ ստացա. հայ գրական երեկոներին ամենուրեք կարդում էին «Մրրկահավի երգը»:[1]

Իր մի հոդվածում Իսահակյանը խոսելով Գորկու մասին, գրում է, որ Գորկու ստեղծագործությունները խոր տպավորություն են թողել իր վրա, որ այդ ստեղծագործությունները մոտ են եղել իր՝ Իսահակյանի սրտին և որ նա ապրել է դրանցով: Իսահակյանն իր այդ հոդվածում գրում է, որ 1899 թվին, Օդեսայի հսկա նավահանգստում, երբ մի պատահական դիպվածի ժամանակ խոսք է բացվում Գորկու մասին, պարզվում է, որ ինքը՝ Իսահակյանը դեռևս ծանոթ չէ նրան, որպես գրողի. «Նույն օրը գնում եմ Գորկու պատմվածքների երկու հատորը,— գրում է Իսահակյանը,— և սկսում եմ կարդալ. հափշտակված կարդում եմ և նորից կարդում: Կարծես, Գորկին ինձ համար էր գրել: Թափառելու պոեզիան իմ սրտի սերն է:... Մ. Գորկու հետ, նրա բոսյակների հետ թափառում եմ մեծ Ռուսաստանի լայնքն ու երկայնքը՝ Վոլգա, Ղրիմ, Սև ծովի ափերը, Մոլդավիա: Մանավանդ Վոլգան, անտուն, ընչազուրկ բոսյակների իսկական մայր Վոլգան, որի լայնաշունչ տափաստաններում, դարերի ընթացքում ապաստան են գտել Մոսկվայի ցարերի խստասիրտ օրենքներից, Պետերբուրգի ցարերի բռնություններից փախած ըմբոստ, ազատատենչ ոգիները, բոլոր նրանք, որոնք փախել են հասարակության կաշկանդող պայմաններից, ֆեոդալների հարկերից, հարստահարությունից: Վոլգան, ազատության, ընդվզումի էպիկական օրրանը, ուր շառաչել են

[1] „Литературная газета", 1946 г. № 25.

անսանձ կամքի հզոր երգերը, հերոսական արկածները, Ստենկա Ռազինը, Պուգաչևը...»:

Իսահակյանը, անդրադառնալով Գորկու ստեղծագործությունների մեծ հաջողության իսկական պատճառներին, գրում է. «Ի՞նչ էր Մ. Գորկու հմայքի գաղտնիքը: Անշուշտ, և նրա տաղանդը, և նրա նոր հայտաբերած աշխարհը, և նրա թարմ, առույգ արվեստը, բայց գերազանցապես այն, որ նրա բողոքի, ըմբոստացման ռոմանտիկան համընկավ, ներդաշնակեց հասարակության տրամադրությանը, հասարակության զգացմունքների և մտքերի գոյավիճակին: Նա՝ խոսում էր միլիոնների սրտից, միլիոնների տենչերից ու երազներից, միլիոնների լեզվով: Անտարակույս, հանկարծակի, անպատրաստից չէր Գորկու երևումը: Մի կողմից՝ ռուսական հոյակապ գեղարվեստական գրականությունը՝ բացառապես հումանիստ, ժողովրդասեր գրականությունը ողջ Եվրոպայում, և մյուս կողմից՝ ռուսական փառապանծ հրապարակախոսությունը և քննադատությունը, որ դարավոր պայքարի մեջ ցարիզմի և ճորտատիրության դեմ՝ պատրաստել էր կռվի մի ողջ արսենալ— այդ երկու հոգեկան մեծ ազդակներն առաջ բերին Գորկուն»:[1]

Իր մի այլ հոդվածում Իսահակյանը, որպես նուրբ արվեստագետ և խորը մտածող, տալիս է Գորկու կլասիկ գնահատականը: Նա գրում է. «Մաքսիմ Գորկու հոյակապ տաղանդի հետ միասին ինձ հմայում է շատ նաև նրա մեծ, մարդկային սիրտը: Նա սիրում էր բնությունը, գեղարվեստը, գիտությունը, բայց ամենից շատ՝

[1] «Խորհրդային արվեստ», 1938 թ. № 1:

մարդուն։ Ամեն լավ բան՝ բնությունը, գեղարվեստը, գիտությունը պիտի լինեն միայն մարդու համար։

Եվ այդ սերը տարավ նրան դեպի պրոլետարիատը, հեղափոխությունը, պայքարը, որպեսզի մարդն ազատագրվի բոլոր տարերային և հասարակային չարիքներից— բռնությունից, կապիտալիզմից, աղքատությունից, ցավից և ախտերից, որպեսզի մարդը դառնա հպարտ, ազատ, երջանիկ, որը հնարավոր է միայն սոցիալիստական պետության մեջ»։

Իսահակյանը սիրելով Գորկուն որպես հանճարեղ գրողի և մարտնչող ռևոլյուցիոների, ցանկանում էր անձամբ ծանոթ լինել նրա հետ, անձամբ հայտնել իր ջերմ զգացմունքները մեծ գրողին։ Այդ մասին մեծանուն հայ բանաստեղծը գրում է. «Ես շատ էի ցանկանում տեսնել Գորկուն, բայց իմ այդ իղձը կատարվեց շատ ուշ։ 1928 թվի ամռան Ա. Մ. Գորկին այցելեց Հայաստան։ Այդ օրերին ես գտնվում էի Լենինականում, բայց իմանալով, որ նա Երևանումն է, ես շտապեցի այնտեղ։ Գորկուն ես տեսա ի պատիվ նրա կազմակերպված երգի և պարի երեկոյին։ Մարդկանց մեծ բազմությամբ էր շրջապատված Գորկին, երբ ինձ ներկայացրին նրան։ Իմ անունը նրան ծանոթ էր. նա հիշեց, որ իր խմբագրած «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ տպագրված են և իմ բանաստեղծությունները։

Իմ ուրախության չափ չկար, որ վերջապես ես բախտ ունեցա տեսնելու իմ սիրելի գրողին, երբ ես արտահայտեցի իմ զգացմունքները նրա հանդեպ, նա լսում էր ժպտալով»։[1]

---

1 „Литературная газета“, № 25, 1946 г.

Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը 1906 թվին թարգմանում է Մաքսիմ Գորկու «Ձկնորսն ու ֆեյան» բալլադը։ Այդ բանաստեղծությունը Գորկին գրել է 1895 թվին։ 1902 թվին վերամշակելով այն, տալիս է հայ խոշոր կոմպոզիտոր Ալ. Սպենդիարովին, նրա համար երաժշտություն գրելու։ 1903 թվին լույս է տեսնում «Ձկնորսն ու ֆեյան» Սպենդիարովի նոտաներով։

Այդ բալլադը իր հիմքում ունենալով փիլիսոփայական խոր իմաստություն, իսկույն գրավում է հայ բանաստեղծի ուշադրությունը և նա չգերազանցված վարպետությամբ թարգմանում է այն հայերեն։

Ահա այդ թարգմանությունը.

Դունայի ափին ապրում էր Փերին։
Հաճախ գետի մեջ լողանում էր նա։
Մի օր էլ անփույթ, անզգույշ Փերին
Ընկավ ձկնորսի ուռկանը ահա։

Սաստիկ վախեցան ձկնորսները խեղճ...
Նրանց հետ էր բայց Մարկո պատանին,
Գեղեցիկ Փերուն սեղմեց գըրկի մեջ,
Ու համբուրում էր, գըգվում սիրունին։

Փերին, մի ճըկուն ոստիկի նըման,
Խայտում էր գըրկում, ոլորվում, խաղում,
Մըտիկ էր տալիս տըղի աչքերին
Ու մըտքի միջին բարակ ծիծաղում...

Փայփայեց Փերին տըղին ամբողջ օր,
Բայց հենց գիշերը հասավ մըթագին,
Հանկարծ չըքացավ, կորավ նորից նոր,
Ու սաստիկ տըխրեց Մարկոյի հոգին։

Գիշեր ու ցերեկ գետի ափերին
Շրջում է Մարկոն, հոգոց է հանում,
Փնտրում է, կանչում. «Ո՞ւր է իմ Փերին...»
Կրկնում են ալիք— «Մենք չենք իմանում»:

— Ո՜, սուտ ալիքներ, դուք խաբում եք ինձ,
Ինքներդ եք խաղում նրա հետ թաքուն.
Ճըչաց պատանին ու թըռավ ափից,
Թըռավ՝ գետի մեջ գըտնի իր Փերուն...

Դունայի ափին ապրում է Փերին
Ու, ինչպես առաջ, այժմ էլ լողանում,
Իսկ Մարկոն չըկա... Բայց նըրա մասին...
Բայց նըրա մասին գեթ երգ է մընում:

. . . .

Իսկ դուք ապրում եք աշխարհքի վրա
Ինչպես կույր, անսիրտ, չընչին սողուններ.
Ոչ ձեզնից հետո զըրույց կը մընա,
Եվ ոչ ձեր մասին երգ կասեն անմեռ:

Այս բանաստեղծությունն առաջին չափածո երկն է, որ թարգմանվում է Գորկուց հայերեն:

Թումանյանը, ինչպես նաև հայ մյուս գրողները, բացի Գորկու գեղարվեստական երկերից, հետևել են նաև նրա հրապարակախոսական հոդվածներին ու ելույթներին և արձագանքել դրանց:

Հայ կլասիկներից բարձր գնահատական է տվել Գորկու ստեղծագործություններին նաև Նար-Դոսը: Նա թարգմանել է Գորկու իտալական հեքիաթներից: Գորկին նույնպես գիտեր Նար-Դոսին: 1931 թվին գրած իր մի ընդարձակ հոդվածում, Գորկին խոսելով ընդհանրապես թարգմանական գրականության մասին, կանգ է

առնում նաև Նար-Դոսի «Մահը» վեպի վրա, որի ռուսերեն թարգմանությունը նոր էր լույս տեսել Մոսկվայում: Գորկին «Մահը» վեպի մասին գրում է. «Մահը» հայ գրող Նար-Դոսի վեպն է, գրված անցյալ դարի 90-ական թվականներին: Այդ գրքի առաջաբանում մանրամասն պատմված է, թե նրա հերոսը «թույլ զարգացած հասարակական խմորումի տեր մի մարդ է, կամազուրկ, անզոր, անգործունյա մի ջղագար, որ զբաղված է ինքնավերլուծմամբ, տառապում է ինքնասիրությունից, կասկածամտությունից, երկչոտությունից և անվճռականությունից: Շատ լավ ծանոթ մի դեմք: Արևմուտքի և մեր գրականությունը 19-րդ դարի 20-ական թվականներից սկսել է նկարել այս չքնաղ անձի պորտրեները: Առաջին մարդը, որին այս «անդավանանք մարդու» պորտրեն առանձնապես հաջողվել է, Ստենդալն էր: Նրա օրինակին հետևեցին Եվրոպայի և Ռուսաստանի տասնյակ խոշորագույն գրողներ: Ամբողջ մի հարյուրամյակի ընթացքում գրականության գլխավոր, փայլուն կերպով մշակված թեման էր կազմում հենց այդ երիտասարդի կյանքի և արկածների նկարագրությունը, մի երիտասարդ, որի «եսը» առավել կամ նվազ այլանդակությամբ ծավալվել, հիպերտրոֆիացիայի էր ենթարկվել և որը, իրեն համար տեղ չգտնելով քաղքենիական կյանքի պայմաններում, իր մեջ ոչ ուժ, ոչ էլ ցանկություն էր գտնում փորձելու փոխել այդ պայմանները:

Նար-Դոսի վեպը մեզ ցույց է տալիս, որ Հայաստանի գրականությունն էլ ծանոթ է այդ վհատ տիպին: Վեպի պատմական-գրական նշանակությունն անվիճելի է, թեպետ և վեպը թույլ է, թերևս այդպես է թվում այն պատճառով, որ վատ է թարգմանված, ինչպես մեզանում

ընդհանրապես ընդունված է վերջերս օտար լեզուներից թարգմանություններ կատարելիս: Նար-Դոսի վեպի թարգմանությունը չի խմբագրված: Մի էջում, օրինակի համար, հանդիպում են այսպիսի օյիններ. „Прошли один, два, три... десять дней. „Так прошло около двух недель“. Прошло еще несколько дней“. Կա այսպիսի մի ծանոթություն. «Առածի իմաստն անթարգմանելի է»: Ինչպես երևում է, խմբագրին հայտնի չէ, որ չկա այնպիսի առած, որի իմաստը հնարավոր չլինի թարգմանել ամեն մի լեզվով: Դժվար թարգմանելի կամ իսպառ անթարգմանելի է «բառախաղը»:[1]

Այնուհետև Գորկին բերում է մի շարք օրինակներ, որոնք վկայում են գրքի վատ թարգմանության մասին:

Գորկին, անկասկած, իրավացի է, երբ այդպես սուր կերպով քննադատում է «Մահը» վեպի թարգմանությունը: «Մահը» վեպը չէր արտահայտում իր ժամանակաշրջանի առաջավոր իդեաները, բնական է, որ վեպի գլխավոր դեմքը՝ Շահյանը չէր կարող իր «գաղափարներով», իր «փիլիսոփայությամբ» գոհացնել Գորկուն, քանի որ դրանք ոչ միայն նորություն չէին, այլև եվրոպական անկումային գրականության ռեակցիոն անհատապաշտական գաղափարների կրկնությունն էին, որը հետևողական կերպով չի կարողացել մերկացնել Նար-Դոսը:

Բացառիկ սեր է տածել դեպի Մաքսիմ Գորկին ու նրա ստեղծագործությունները հատկապես Վրթանես Փափազյանը: Այդ սերը դեպի Գորկին Փափազյանն արտահայտել է իր նամակներում, Գորկու մասին գրած հոդված-

---

[1] М. Горький—Литературно-критические статьи, стр. 475—476, Москва, 1937 г.

ներում և գրական ելույթներում։ Որպես քաղաքացի, ստեղծագործող ու հասարակական գործիչ՝ Գորկին շատ կողմերով է մոտ եղել Վրթանես Փափազյանի սրտին։ Գորկու ըմբոստ ոգին, նրա հուժկու, խրոխտ ձայնը տիրող կարգերի դեմ հաճախակի արձագանք է գտել Փափազյանի ստեղծագործությունների ու նրա հրապարակախոսական հոդվածների մեջ։ Հատկապես նշանակալից են երկու հոդվածները, որոնց մեջ պարզ ու որոշակի դրսևորվում են Փափազյանի վերաբերմունքը դեպի Գորկի գրողն ու հասարակական գործիչը։

1913 թվին Փափազյանը մի ընդարձակ հոդվածով հանդես է գալիս Գորկու «Տերը» վեպի մասին։ Անդրադառնալով վեպի իդեական ու գեղարվեստական խոշոր արժանիքներին, Փափազյանը գրում է. «Տերը» Գորկու նախընթաց բոլոր գրվածքների մեջ լավագույններից մեկը պիտի համարել»։

Նույն, 1913 թվին գրած իր մի այլ հոդվածում Փափազյանը պաշտպանում է Գորկու պայքարը թատերական ռեակցիայի դեմ։ Բայց այդ մասին մենք հանգամանորեն կխոսենք «Մ. Գորկին և հայ թատրոնը» գլխում։

Ինչպես հայտնի է, Գորկին բազմաթիվ կապերով կապված էր հարյուրավոր երիտասարդ-սկսնակ գրողների հետ, նրանց օգնում ու խորհուրդներ էր տալիս, ոգևորում ու խրախուսում։ Այդ տեսակետից հետաքրքրական է Գորկու մի նամակը՝ ուղղված գրող Տիգրան Հախումյանին։

1916 թվին, երբ Հախումյանը լիրիկական բանաստեղծություններ էր գրում և տպագրում ռուսական զանազան պարբերականներում, մի օր հանկարծ երկտող մի նամակ է ստանում, հետևյալ բովանդակությամբ.

«Ուղարկեցեք, խնդրում եմ, ձեր բանաստեղծությունները իմ անունով—„Летопись“ ամսագրի հասցեով։ Ա. Պեշկով»։

Գորկու այս երկտողը մեծ ուրախություն է պատճառում Հախումյանին։ Եվ նա, ընտրելով իր բանաստեղծություններից 10—12 հատ, անմիջապես ուղարկում է Գորկուն։ Այս առթիվ 1916 թվի հոկտեմբերի 25-ին Հախումյանը Գորկուց ստանում է հետևյալ նամակը.

«Իհարկե, Դուք պետք է գրեք, և—շատ, բայց նույնքան անհրաժեշտ է Ձեզ համար ավելի մոտ կանգնել կյանքին, անմիջականորեն օգտվել նրա ներշնչումներից, կերպարներից, պատկերներից, զգալ նրա թրթիռը և նրա միսն ու արյունը։ Մի կենտրոնացեք Ձեզ վրա, այլ ամբողջ աշխարհը կենտրոնացրեք Ձեր մեջ։ Կյանքի մեջ շատ թույն կա, բայց կա և մեղր— գտեք այդ մեղրը։ Մի լինեք սոսկ քնարերգու,— մի փակեք Ձեր հոգին Ձեր իսկ ձեռքերով կառուցված վանդակի մեջ,— համարձակություն ունեցեք լինելու և երգիծաբան, և վիպասան, և պարզապես ուրախ մարդ։ Պիտի ամեն բան վերցնել և ամեն բան տալ կյանքին, մարդկանց։

Այժմյան բանաստեղծների մեծամասնությունը, կարծես թե, անմարդաբնակ կղզիների վրա ապրելիս լինի, կյանքից և նրա քաոսից դուրս։ Այդ, իհարկե, ավելի հեշտ է և հարմար, քան թե իրականության քաոսի մեջ ապրելը, սակայն այս նշանակում է ինքն իրեն կողոպտել։ Չպետք է Ռոբինզոն լինել,— չի հարկավոր։ Պետք է ապրել, աղմկել, խնդալ, հայհոյել, սիրել։

Պետք է որոնել այն, ինչ դեռևս չի գտնված— նոր

խոսքը, հանգը, պատկերը: Բանաստեղծը — աշխարհի արձագանքն է, և ոչ միայն իր հոգու դայակը:

Ահա այսպես: Ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք:

Ա. Պեշկով»

Այս նամակը մի փայլուն փաստաթուղթ է, որ վկայում է հանճարեղ գրողի բացառիկ հոգատար վերաբերմունքի մասին դեպի գրականությունը. այս նամակը մի անգամ ևս վկայում է այն մեծ պայքարի մասին, որ Գորկին իր ամբողջ կյանքում տարել է հանուն նոր, առողջ ժողովրդական գրականության, հանուն նոր տիպի գրողի:

1934 թվի ամռանը Հախումյանն այցի է գնում Գորկուն, Մոսկվայի մոտ գտնվող նրա ամառանոցում: Գորկին ընդունում է Հախումյանին սրտաբաց և երկար զրուցում նրա հետ գրականության, դրամատուրգիայի մասին, հետաքրքրվում հայ ժողովրդի կյանքով ու կուլտուրայով, վերհիշում Սովետական Հայաստանում կատարած իր ճանապարհորդությունների մասին:

Այդ հանդիպման թարմ տպավորությունների տակ գրած իր հիշողությունների մեջ Հախումյանը մանրամասնորեն պատմում է Գորկու հետ ունեցած իր զրույցների մասին: Առաջին հանդիպման ժամանակ Գորկին ժպտալով դառնում է Հախումյանին.

«— Ահա թե ինչպիսին եք եղել...

Հետո մի տեսակ գոհունակության շեշտով ավելացրեց.

— Շատ լավ եղավ:

— Ի՞նչը, Ալեքսեյ Մաքսիմովիչ,— հետաքրքրվեցի ես:

— Որ այդպես եք... Ես ձեզ հենց այդպե՛ս էլ պատկերացնում էի... բարձրահասակ: Այո, ես այդ արդեն վաղուց եմ նկատել, որ բարձրահասակ մարդիկ լիրիկ են լինում... Ես էլ այդպես էի... Եվ էլի շատերին եմ ճանաչում՝ Ռոմեն Ռոլլան, Չեխով... Հետո կյանքը խփում և կորացնում է նրանց մեջքերը»:[1]

Հետաքրքրվելով, թե գրական ինչ նոր գործի վրա է աշխատում Հախումյանը և լսելով նրա ստեղծագործական պլանների մասին, Գորկին առաջին հերթին խորհուրդ է տալիս նրան չցրվել և որ գլխավորն է կազմակերպել ստեղծագործական աշխատանքն այնպես, որ նա ունենա որոշակի ու պարզ նպատակաուղղում: Գորկին ասում է. «Պետք է մի կերպ կարողանալ չցրվել այս ու այն կողմ: Արվեստն այդ չի ներում: Նա խանդոտ է: Այդ չմոռանաք: Եվ իհարկե չհուսահատվեք: Եթե հարկավոր է կռվել արժեքներ ստեղծելու ձեր իրավունքի համար— կռվեցեք: Դա ավելի լավ է, քան հազար գործ բռնելը՝ գլուխ պահելու համար»:[2]

Ջերմ ու սրտառուչ են Գորկու խոսքերը Հայաստանի ու հայ ժողովրդի անցյալի տրագիկական ճակատագրի մասին: «Ազնիվ է ձեր երկիրը: Եվ լեռները ես տեսա— հպարտ: Եվ մարդիկ նույնպե՛ս: Սքանչելի մարդիկ են: Նրանց վիճակը շատ ծանր է եղել, բայց նրանք երգել են: Ծածկել են լկտի աշխարհից իրենց դառը վիշտը: Դուք էլ այդպես եք: Ծիծաղեցեք, հաճախակի երգեք— թշնամիների ու հակառակորդի ջգրու: Երիտասարդ եղեք հո-

[1] «Սովետական գրականություն», 1943 թ., № 3:

[2] Նույն տեղում:

գով և սրտով երիտասարդ: Մեծ բան է երիտասարդությունը»:

Հախումյանը հայերեն է թարգմանել ռուս կլասիկ գրականության մի շարք նշանավոր գործեր, այդ թվում նաև Գորկու «Վասսա Ժելեզնովա», «Եգոր Բուլըչև և ուրիշները»:

Ուրախալի է նշել, որ Գորկու ստեղծագործությունները հայերեն են թարգմանել հայ գրականության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Նար-Դոսը, Հակոբ Հակոբյանը և ուրիշները:

Անկասկած, վերը բերած փաստերը չեն սպառում այն ամենը, ինչ վերաբերում է հայ գրողների՝ Գորկու հետ ունեցած կապերին ու նրանց վերաբերմունքին հանդեպ մեծ գրողի, բայց, մեր կարծիքով, այսքանն էլ բավական է նշելու համար այն սերտ կապը, որ գոյություն է ունեցել հայ գրականության անվանի ներկայացուցիչների և պրոլետարիատի մեծ երգչի միջև:

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ

Մաքսիմ Գորկու կապերը հայ առաջավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ չէր սահմանափակվում միայն հայ գրականության աշխատողների շրջանակով։ Նա ծանոթ էր նաև հայ նշանավոր կոմպոզիտորների, քանդակագործների, նկարիչների, ճարտարապետների ու արտիստների հետ։ Գորկու հարուստ ստեղծագործությունները, նրա հանճարեղ կերպարը ներշնչման աղբյուր հանդիսանալով հայ արվեստագետներից շատերի համար, ավելի քան նպաստեցին այդ փոխադարձ կապերի ամրապնդմանը։

1902 թվի սկզբներին մտերմական հարաբերություններ են սկսվում հայ խոշորագույն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարովի և Ալեքսեյ Մաքսիմովիչի միջև, հարաբերություններ, որոնք շարունակվում են երկար տարիներ։

Գորկու չափածո ստեղծագործություններից մի քանիսի տեքստերի հիման վրա, հենց իր՝ Գորկու առաջարկով ու ընտրությամբ, Սպենդիարովը երաժշտություն է գրում։

Գորկու հայտնի «Ձկնորսն ու ֆեյան» բանաստեղծության տեքստի հիման վրա 1902 թվին Սպենդիարովը գրում է երաժշտական մի բալլադ։ Առաջին անգամ, երբ, Սպենդիարովի ղեկավարությամբ սիմֆոնիկ նվագախումբը կատարում է «Ձկնորսն ու ֆեյան» բալլադան, Գորկին, որը ներկա էր այդ կատարմանը, չափազանց գոհ է մնում նրա երաժշտությունից։ Իր այդ ստեղծագործության մեջ Սպենդիարովը տաղանդավոր կերպով կարողացել էր պահպանել բալլադի երաժշտական ոճը, երանգավորելով սլավոնական մեղեդիների գունեղ նմուշներով։ Ինչպես Սպենդիարովի բոլոր գործերում, այնպես էլ «Ձկնորսն ու ֆեյան» բալլադում, խորապես զգացվում է նրա երաժշտական լեզվի հմայիչ պարզությունն ու գեղեցկությունը։

Սպենդիարովի արխիվում պահպանվել է սևագիր, հազիվ ընթեռնելի մի ձեռագիր։ Այդ ձեռագրից պարզվում է, որ կոմպոզիտորը ցանկացել է գրի առնել իր հիշողությունները Գորկու մասին, բայց, թերևս մահվան պատճառով, նախաձեռնված գործը մնացել է անավարտ։ Սպենդիարովի այս ձեռագիրը, նույնիսկ անավարտ վիճակում, դարձյալ խոշոր արժեք է ներկայացնում, որովհետև նրա մեջ պատմվում է Գորկու հետ ունեցած առաջին հանդիպման և «Ձկնորսն ու Ֆեյան» բալլադի մասին։

«1902 թվի սկզբներին՝ Յալթայում հայտնի դարձավ,— կարդում ենք այդ ձեռագրում,— որ Մաքսիմ Գորկին բնակություն է հաստատել «Օլեիզ» կոչվող կալվածքի ամառանոցում։ Նրա երկերն այդ ժամանակ կարդացվում էին։ Ինչպես հայտնի է, նրա գրական փառքը, նրա անձ-

Александру Афанасьевичу
Спендиарову на память
М. Горький

Իր այս նկարը Մ. Գորկին նվիրել է Ա. Սպենդիարովին հետևյալ մակագրությամբ՝ «Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին ի հիշատակ. Մ. Գորկի»:

նավորությունը, որպես ժողովրդի ծոցից ելածի ու ռևոլուցիոների, Յալտայի հասարակության մեջ հետաքրքրություն էին առաջացնում:

Նրա գալը հատուկ հետաքրքրություն էր առաջ բերել. ամեն մեկը ցանկանում էր տեսնել իր փառքի գագաթնակետում գտնվող գրողին, ժողովրդի ծոցից ելածին ու ռևոլուցիոներին: Ինձ, ինչպես և ամենքին, նույնպես հետաքրքրեց Գորկու գալը: Եվ շուտով իմ ծանոթ Յուրի Ալեքսեևիչը առաջարկեց ինձ իր հետ գնալ Յալտա՝ Գորկու մոտ: Ես գոհունակությամբ ընդունեցի այդ առաջարկը:

Գորկին ապրում էր մի գեղեցիկ մենավոր տան մեջ. նրա հետ էր իր կինը՝ Եկատերինա Պավլովնան և փոքրիկ որդին՝ Մաքսիմը, որին այդպես էին կոչում ծնողները: Մեծ ընդունարանում դրված էր մի սեղան. այցելողները ուսանողներ և ուսանողուհիներ էին. դրանց թվում՝ երկու-երեք գրող, որոնցից հիշում եմ Բունինին:

Գորկին մեզ ընդունեց իր առանձնասենյակում, որի լուսամուտներից բացվում էր ծովի տեսարանը: Այդ օրը ծովը բոլորովին խաղաղ էր. Գորկին ինձ ասաց.— Ես չեմ սիրում ծովն այդպիսի վիճակում, փոթորկալից ծովն ավելի հարազատ է իմ հոգուն: Գորկին հարցրեց իմ աշխատանքների մասին (հիշում եմ՝ այն ժամանակ ես գրում էի իմ էսքիզները): Գորկին ասաց. «Ես բանաստեղծություններ ընդհանրապես չեմ գրում, սակայն վերջերս մեղանչեցի— գրեցի, ըստ վալախական լեգենդի, մի երգ «Ձկնորսն ու ֆեյան» անունով: Եթե հարմար է, գրեք նրա համար երաժշտություն»: Ես կարդացի բանաստեղծությունները ու համոզվեցի, որ նրանք երա-

ժշտության համար հետաքրքրություն են ներկայացնում»:[1]

Երաժշտագետ Ա. Շահվերդյանը, Սպենդիարովի մասին գրած իր հետաքրքիր աշխատության մեջ, խոսելով Գորկու և Սպենդիարովի մտերմության մասին՝ գրում է. «Մաքսիմ Գորկու հետ Սպենդիարովը մոտիկ հարաբերության մեջ էր։ Մեծ գրողը հաճախակի լինում էր կոմպոզիտորի բնակարանում և առանձնապես կանոնավոր հաճախում էր նրա երաժշտական երեկոներին։ Ալեքսեյ Մաքսիմովիչը մեծ համակրանքով էր վերաբերվում Սպենդիարովի երաժշտական ստեղծագործությանը»:[2]

Անդրադառնալով «Ձկնորսն ու ֆեյան» բանաստեղծությանը, Ա. Շահվերդյանը նշում է, որ Գորկու այդ ստեղծագործության տեքստին ծանոթանալուց «մի քանի օր հետո Սպենդիարովը ցույց տվեց մեծ գրողին պատրաստի բալլադը՝ գրված բասի համար՝ օրկեստրի հետ և առաջիկա երաժշտական երեկոներից մեկում Սպենդիարովի այդ նոր ստեղծագործությունը —Գորկու պոեզիայի երաժշտական առաջին փոխադրումներից մեկը— կատարվեց Շալյապինի կողմից։ Ալեքսեյ Մաքսիմովիչը շատ գոհ էր Սպենդիարովի այդ ստեղծագործությունից»:[3]

Գորկին իր «Քաղքենիներ» դրաման 1902 թվին նվիրում է Սպենդիարովին՝ հետևյալ մակագրությամբ— «Ցեյսլի Երգի» տաղանդավոր հեղինակին՝ Ալեքսանդր

---

[1] См. Архив Спендиарова в Секторе истории и теории искусств Академии Наук Арм. ССР

[2] А. Шавердян, А. А. Спендиаров, Москва, 1939 г. стр. 17.

[3] Նույն տեղում, էջ 17—18։

Աֆանասևիչ Սպենդիարովին՝ ի հիշատակ— Մ. Գորկի»։

1912 թվին Ալեքսանդր Սպենդիարովը Գորկու «Էդելվեյս» արձակ բանաստեղծության հիման վրա գրում է երաժշտական մելոդեկլամացիա։

Մտերմական հարաբերությունների մեջ է եղել Գորկու հետ հայ նշանավոր արձանագործ Հակոբ Գյուրջյանը։ Ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանում Գյուրջյանը ճանաչված, անվանի արձանագործ է։ Բացի Գորկուց, նա մտերմական հարաբերություններ ուներ Լունաչարսկու, Շալյապինի և ռուս գրականության ու արվեստի նշանավոր այլ ներկայացուցիչների հետ։ Գյուրջյանի արհեստանոցն է հաճախել Վլադիմիր Իլիչ Լենինը։

Գյուրջյանը մի քանի անգամ քանդակել է Գորկու կերպարը։ Մենք այստեղ կանդրադառնանք դրանցից միայն երեքին, որոնք ավարտված ու ամբողջական գործեր են հանդիսանում։ Առաջին անգամ Գյուրջյանը քանդակել է Գորկու կիսանդրին 1912 թվին։ Այս գործի մեջ նա կարողացել է չափազանց հաջող կերպով արտահայտել Գորկու ոչ միայն բնորոշ դիմագծերը, այլև նրա, որպես ստեղծագործողի, ուժն ու կարողությունը։ Եվ հենց աշխատանքի ամենաբնորոշ կողմը, դա Գորկի-ստեղծագործողի, մտածողի ու խորհողի հոյակապ պատկերումն է, որ տաղանդի բացառիկ վարպետությամբ կարողացել է տալ Գյուրջյանը։ Գորկի-մարդը, Գորկի հումանիստը մարմնացել ու շունչ է առել հռչակավոր արձանագործի այս ստեղծագործության մեջ։

Միանգամայն այլ բնույթ ունի երկրորդ 1914 թվին կատարված, աշխատանքը, որը պատկերում է Գորկու միայն գլուխը։ Քանդակագործն այստեղ տվել է Գորկու



Մ. Գորկի (քանդակ). գործ՝ Հ. Գյուրջյանի:

դեմքի ըմբոստ արտահայտությունը. կարծես փոթորկից մոլեգնած օվկիանոսի լեռնացած ալիքի մի պահ է, որ հաջող կերպով կարողացել է որսալ քանդակագործը: Ձեր առջև է հուժկու մրրկահավը, ըմբոստ, անողոք Գորկին, իր գորկիական կենդանի ու բնորոշ դիմագծերով:

Երրորդ քանդակը կոմպոզիցիոն բնույթի աշխատանք է, ուր Գորկին պատկերված է իր գրասեղանի մոտ, ստեղծագործելու պահին: Չնայած այս աշխատանքը ծավալով փոքր է նախորդ հիշածներից, բայց որպես արվեստի գործ՝ շատ հաջող է: Ձեզ թվում է, թե դուք բաց եք արել Գորկու աշխատասենյակի դուռը և դիտում եք, իսկ նա, նստած սեղանի մոտ և գլուխը հենած ձախ ձեռքին՝ գրում է, և այս ամենն անչափ կենդանի, հուզիչ ու պատկերավոր է արտահայտված, որ թվում է, թե ահա ձեր ամենափոքր շարժումից նա կբարձրացնի գլուխը և դուք շունչներդ պահած լուռ շարունակում եք դիտել ու դիտել:

Գյուրջյանի այդ գործերը ժամանակին արժանացել են մեծ ուշադրության, քննադատությունը չափազանց բարձր գնահատանքով է խոսել նրանց մասին: Այդ աշխատանքներն արժեքավոր են նաև նրանով, որ քանդակագործը դրանք բոլորն էլ կատարել է աչքի առաջ ունենալով կենդանի Գորկուն, երբ վերջինս հաճախակի այցելում էր նրա արհեստանոցը: Գյուրջյանը քանդակել է նաև Եկատերինա Պեշկովայի՝ Գորկու կնոջ կիսանդրին:

Մաքսիմ Գորկու հետ մոտիկից ծանոթ էր ակադեմիկ Ալեքսանդր Թամանյանը: Ռուս առաջավոր ինտելիգենցիայի լայն շրջաններում ակադեմիկ Թամանյանը, որ-

պե՛ս ճարտարապետ-արվեստագետ, բազմակողմանի ճանաչված ու բարձր գնահատված դեմք էր։ Իր քաղաքական ու հասարակական համոզմունքներով ակադեմիկ Թամանյանը միշտ էլ եղել է ռուս առաջավոր ինտելիգենցիայի շարքերում։

Ռուսական կուլտուրայի այնպիսի կորիֆեյներ, ինչպիսիք են ակադեմիկ Պավլովը, նկարիչ Ռեպինը, Մաքսիմ Գորկին և շատ ուրիշները, ակադեմիկ Թամանյանի լավագույն բարեկամներն էին։

Այդ տարիներին ակադեմիկ Թամանյանն Արվեստի Գործիչների Համառուսական Միության նախագահն էր, ինչպես և Լենինգրադի Արվեստների Ակադեմիայի խորհրդի նախագահ՝ Ակադեմիայի պրեզիդենտի իրավունքներով։

ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Յուրի Միխայլովիչ Յուրևը, իր մեծարժեք հուշերում, պատմում է այն մասին, թե ինչպես Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի փոթորկալի օրերին ինքը հանդիպել էր Թամանյանին Գորկու բնակարանում, և թե ինչպիսի համակրանք էր ստեղծել նա իրեն շրջապատողների մեջ։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայից անմիջապես հետո ժողովրդական արտիստ Յուրևը նախաձեռնում է հիմնել տրագեդիայի թատրոն, ուր պիտի բեմադրվեին ամբողջ աշխարհի նշանավոր տրագիկական գործերը՝ նոր հիմունքներով ու մեկնաբանությամբ։ Առաջին փորձնական ներկայացումը՝ «Էդիպ արքա»-ն ունենում է մեծ հաջողություն։

Չնայած սովետական նորաստեղծ կուլտ-լուսավորական հիմնարկներն ամենուրեք խրախուսում և օժանդակում էին Յուրևին՝ տրագեդիայի թատրոն կազմակերպե-

լու գործում, բայց և այնպես մեծ դժվարությունների հետ էր կապված այդպիսի մի թատրոնի հիմնումը: Կազմակերպչական դժվարություններից բացի, անհրաժեշտ էր որոշակիորեն պարզել նոր թատրոնի իդեական նպատակասլացումը: Ինչ կասկած, որ Գորկու խոսքը վճռական նշանակություն կարող էր ունենալ այդ գործում:

Յուրևը Գորկուն, նրա կնոջ՝ նշանավոր դերասանուհի Մարիա Ֆեոդորովնա Անդրեևայի միջոցով, ծանոթացնում է տրագեդիայի թատրոն կազմակերպելու իր նախագծի հետ: Գորկուն հետաքրքրում է այդ գործը և նա Յուրևին հրավիրում է իր մոտ՝ վերջինիս մտահղացումներին ավելի հանգամանորեն ծանոթանալու համար:

Նախօրոք ժամադրված օրվա երեկոյան պահին Յուրևն այցելում է Գորկուն: Այս մասին իր հուշերում Յուրևը գրում է. «Մարիա Ֆեոդորովնային ես հանդիպեցի ճաշասենյակում հյուրասեր տանտիկնոջ դերում: Նստել էր նա ինքնաեռի մոտ և թեյ էր լցնում ամբողջ սենյակի երկարությամբ դրված մեծ սեղանի շուրջը նստած մարդկանց համար: Սեղանի շուրջը նստած էին մոտավորապես տասը-տասներկու մարդ, որոնցից ինձ ծանոթ էին՝ Վլադիմիր Ալեքսեևիչ Շչուկոն, Ալեքսանդր Իվանովիչ Թամանովը, Մստիսլավ Վալերյանովիչ Դոբուժինսկին, Վասիլի Ալեքսեևիչ Դենիսցկի-Սոլոնը, Վալենտինա Միխայլովնա Խոդասևիչը: Աշխույժ խոսակցություն էր տիրում: Բոլորին հուզում էին ռևոլյուցիոն դեպքերը, որոնց շուրջ և կենտրոնացած էր ընդհանուր հետաքրքրությունը:

Ալեքսեյ Մաքսիմովիչը բացակայում էր. այդ ժամանակ նա վատառողջ էր։ Բայց Մարիա Ֆեոդորովնան ինձ նախապես զգուշացրեց, որ ինքը Ալեքսեյ Մաքսիմովիչին ծանոթացրել է տրագեդիայի թատրոնի ստեղծման նախագծի հետ և որ Ալեքսեյ Մաքսիմովիչը վերին աստիճանի հետաքրքրվել է իմ իդեայով ու այդ հարցի շուրջը ուզում է խոսել ինձ հետ, ուստի և խնդրեց ինձ սպասել, որպեսզի հետո, երբ բոլորը կցրվեն, անցնեմ Գորկու մոտ»։[1]

Այնուհետև Յուրևը պատմում է, որ անվանի նկարիչ Դոբուժինսկին առաջիններից մեկն էր, որ մեծ հետաքրքրություն էր հանդես բերում տրագեդիայի թատրոնի կազմակերպման առթիվ և նրա հետաքրքրությունը հատկապես շարժել էր «Մակբեթ»-ի բեմադրությունը, որը պիտի տեղի ունենար ոչ թե տրադիցիոն բեմի վրա, այլ կրկեսի արտասովոր պայմաններում։ Եվ քանի որ նման բեմադրության պայմաններում ոչ միայն գեղարվեստական, այլ նաև ճարտարապետական ձևավորման կարիք էր զգացվում, ուստի տրագեդիայի թատրոնի կազմակերպմանը պետք է մասնակից դարձվեր նաև մի այնպիսի ճարտարապետ, որը բազմակողմանի ծանոթ լիներ թե՛ պատմության, թե՛ գրականության, թե՝ դրամատուրգիայի և թե առհասարակ կուլտուրայի պատմության խնդիրներին։ Այդ մասին Յուրևը գրում է. «Մենք նախընտրեցինք Ալեքսանդր Իվանովիչ Թամանովին (Թամանյանցին), ականավոր, խոշորագույն ճարտարապետին, որը հետագայում շատ բան արեց Սովետական Հայաստանի մայրաքաղաքի՝ Երևանի շինարարության

[1] Ю. Юрьев, Записки, изд. „Искусство", 1948 г. стр. 591.

համար։ Ա. Ի. Թամանովը, բացի իր ակնբախ տաղանդից, հազվադեպ հմայիչ մարդ էր և գեղարվեստական աշխարհում ոչ միայն մեծ հեղինակություն էր վայելում, այլև բացառիկ սեր ու վստահություն։ Ահա թե ինչու Գեղարվեստների Ակադեմիայում նա հանդիսանում էր մեր ժողովների անփոփոխ նախագահը»։[1]

«Հենց այդ ժամանակներին էլ վերաբերում է իմ հանդիպումը Մարիա Ֆեոդորովնա Անդրեևայի և Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու հետ,— շարունակում է Յուրևը.— և նրանց այն հարցին, թե ինչպես եմ պատկերացնում իմ ապագա թատրոնի կազմակերպումը, ես պատասխանեցի, որ առայժմ ունեմ միայն երեք կոմպոնենտ— Դոբուժինսկին, Թամանովը և Գրանովսկին, և որ նմանապես կատարված է որոշ նշում դերակատարների կազմի մասին։

Այդ բանին Ալեքսեյ Մաքսիմովիչն առարկեց, ասելով, որ եթե ես ինկատի ունեմ միայն «Մակբեթ»-ի բեմադրությունը, ապա այդ նպատակի համար այդ կոմպոնենտները, թերևս, լիովին բավական կլինեն, բայց նկատի նախաձեռնման՝ տրագեդիայի թատրոնի ստեղծման համար ամբողջապես դա չափազանց քիչ է։ Մեր ժամանակներում տրագեդիայի թատրոն ստեղծել— հեշտ գործ չէ։ Դրա համար պահանջվում է որոշ ապարատ, և հենց այդ մասին պետք է մտածել առաջին հերթին։ Եվ մենք երեքս միասին սկսեցինք մանրամասն քննարկել, թե ինչպես կարելի է ավելի լավ կազմակերպել այդպիսի մի ապարատ, որի օգնությամբ հնարավոր

[1] Ю. Юрьев, Записки, изд. „Искусство", 1948 г. стр. 595.

լինի ամուր ռելսերի վրա դնել նախագծվող թատրոնը»:[1]

Տրագեդիայի թատրոնի ստեղծման նախագիծը և դրա հետ կապված կազմակերպչական մի շարք հարցեր հանգամանորեն քննարկելուց հետո, նրանք երեքով որոշում են առաջին հերթին ստեղծել մի ղեկավար օրգան, որը պիտի գլխավորեր նոր թատրոնի բոլոր աշխատանքները: Այդ ղեկավար օրգանն անվանվում է «Աշխատանքային ընկերություն»: Այդ ընկերությունը կազմվում է արվեստի համարյա բոլոր բնագավառների աշխատողների անվանի ներկայացուցիչներից: Այս մասին Յուրևը գրում է.— «Աշխատանքային ընկերության» համար թեկնածուներ ևս նշեցինք. հասարակայնության կողմից՝ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին, արտիստական աշխարհից՝ Մարիա Ֆեոդորովնա Անդրեևան, Ֆեոդոր Իվանովիչ Շալյապինը և ես, նկարիչներից՝ Մստիսլավ Վալերյանովիչ Դոբուժինսկին և Ալեքսանդր Իվանովիչ Թամանովը, սրանց հետ էլ անհրաժեշտ համարեցինք ներգրավել և կոմպոզիտորներին, հանձինս Սերգեյ Սերգեևիչ Պրոկոֆևի և նմանապես Բորիս Վլադիմիրովիչ Ասաֆևի. ռեժիսորների կողմից՝ Ալեքսեյ Միխայլովիչ Գրանովսկին, իսկ մասսայական բեմադրությունների համար— Մարինսկու թատրոնի բալետմեյստեր Բորիս Գեորգիևիչ Ռոմանովը և որպես ադմինիստրատոր՝ Վասիլի Գերմանովիչ Նեդլերը:

Այսպիսով, իմ առաջին այցելությունը Ալեքսեյ Մաքսիմովիչին և Մարիա Ֆեոդորովնային, վեր ածվեց ար-

[1] Ю. Юрьев, Записки, изд. „Искусство", 1948 г. стр. 596.

տաքո կարգի արժեքավոր գործնական խորհրդակցություն, որտեղ որոշակի նշվեց տրագեդիայի թատրոնի ամբողջ ստեղծագործական ուղին»:[1]

Մաքսիմ Գորկու հետ միասին ակադեմիկ Թամանյանն ակտիվ կերպով մասնակցում է «Աշխատանքային ընկերության» գործունեությանը: Ժողովրդական արտիստ Յուրևը մեծ հիացմունքով է պատմում ակադեմիկ Թամանյանի եռանդուն աշխատանքի մասին ընդհանրապես տրագեդիայի թատրոնի կազմակերպման և հատկապես «Մակբեթ»-ի բեմադրությունը նախապատրաստելու գործում:

Մաքսիմ Գորկու հետ ունեցած հաճախակի հանդիպումները Գեղարվեստների ակադեմիայի հավաքույթների և «Աշխատանքային ընկերության» ժողովների ընթացքում, ինչպես և անձնական մոտիկ հարաբերությունը նրա հետ, խոշոր ազդեցություն էին ունեցել ակադեմիկ Թամանյանի վրա:

Ահա թե ինչու հենց Ալեքսանդր Թամանյանը հանդիսացավ սոցիալիստական ռեալիզմի հիմնադիրը հայկական ճարտարապետության մեջ: Իր ստեղծագործություններում Թամանյանը բացառիկ ուժով ու կարողությամբ բացահայտեց ու վեր հանեց արվեստի ժողովրդական, ազգային սկզբունքները նրա ամենաբարձր, սոցիալիստական արտահայտությամբ:

Սովետական Հայաստանի կառավարությունը Երևան քաղաքի սոցիալիստական ռեկոնստրուկցիայի և վերաշինման պլանավորումը հանձնեց Ա. Թամանյանին: Սոցիալիստական ճարտարապետության այնպիսի հայա-

[1] Ю. Юурьев, Записки, изд. „Искусство“ 1948 г. стр. 597.

կապ ստեղծագործություններ, ինչպիսիք են Կառավարական տունը, Օպերայի ու բալետի թատրոնը, պատկանում են ակադեմիկ Թամանյանին:

Իր ստեղծագործական մեթոդի մասին Թամանյանը գրել է. «Ես ձգտել եմ գտնել այնպիսի ձևեր, որոնք համապատասխան լինեին երկրի կլիմայական պայմաններին և բնության առանձնահատկությանը, ինչպես և արտացոլեին Հայաստանի ժողովրդական ստեղծագործությունը: Այդ աշխատանքներում ես ձգտել եմ գտնել խնդրի այնպիսի լուծում, որը տալիս է ազգային ճարտարապետական ձևի զուգակցում սոցիալիստական բովանդակության հետ»:[1]

Սոցիալիստական ճարտարապետության պատմության մեջ Թամանյանը գրավում է առաջնակարգ տեղ: Ահա ինչ է գրում այս մասին „Архитектура и строительство“ ժուռնալն իր առաջնորդող հոդվածներից մեկում. «Իդեական-գեղարվեստական մեծ ուժով է արտահայտված սովետական ճարտարապետության հիմնական գիծն ականավոր ճարտարապետներ Ա. Թամանյանի և Ա. Շչուսևի ստեղծագործությունների մեջ, որոնց աշխատանքներն առանձնապես վառ կերպով են բացահայտում սոցիալիստական ռեալիզմի արվեստի իշխող տենդենցները: Շչուսևի և Թամանյանի— մեր ժամանակի ամենաականավոր ճարտարապետների կողմից սովետական ճարտարապետության մեջ ներդրած ստեղծագործական ավանդի արժեքը նրանում է կայանում, որ նրանք առավել մեծ ուժով արտահայտեցին մեր ճարտարապետության զարգացման իշխող գիծը: Նրանց ստեղ-

---

[1] „Архитектура и строительство“, № 11, 1949 г.

ծագործության մեջ մարմնավորված է ազգայինի և սոցիալիստականի միասնությունը, արվեստների կլասիկ ու ժողովրդական սկզբունքների միասնությունը»:[1]

Անկասկած, Գորկին մեծ ծառայություն ունի այս գործում և պատահական չէ, որ միշտ էլ հիացմունքի բարձր զգացմունքով էր խոսում ակադեմիկ Ալեքսանդր Իվանովիչ Թամանյանն իր լավագույն բարեկամի՝ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մասին, որ այնքան նշանակալից ազդեցություն էր ունեցել նրա գործունեության վրա:

Գորկու ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների պատկերազարդման և առհասարակ Գորկու կերպարի մարմնավորման վրա աշխատել են Սովետական Հայաստանի բազմաթիվ նկարիչներ: Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Գորկու պատկերած աշխարհի, նրա ստեղծած հերոսների կյանքի ու պայքարի արտացոլումը հայ նկարիչների աշխատանքների մեջ: Ինքը՝ Գորկին անձամբ ծանոթ էր անվանի հայ նկարիչների, ինչպես և նրանց աշխատանքների հետ: Սովետական Հայաստանում գտնված ժամանակ Գորկին այցելեց Երևանի Կուլտուրայի տունը, ուր հատուկ ուշադրությամբ և հաճույքով դիտեց ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի գործերը: «Շրջելով բաժնից-բաժին,— գրում է «Զարյա Վոստոկա» թերթը,— Գորկին հատուկ ուշադրություն դարձրեց գեղարվեստական բաժնին և երկար ժամանակ հաճույքով դիտում էր նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունները»:[2]

---

1 „Архитектура и строительство“, № 11, 1949 г.

2 „Заря востока“, № 173, 1928 г.

Սարյանի հետ ունեցած զրույցի ժամանակ Գորկին հայտնել էր, որ նրա ստեղծագործությունները վաղուց ծանոթ են իրեն և որ ինքը միշտ հաճույքով է դիտել դրանք: Սարյանի անավարտ աշխատանքների մեջ հանդիպում ենք Գորկու պորտրեին:

Գորկու ստեղծագործությունների պատկերազարդումների մեջ առանձնակի տեղ են գրավում Հայաստանի ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանի աշխատանքները: 1934 թվին Կոջոյանը նկարազարդում է Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» գրքի հայերեն հրատարակությունը:

Գրողների համամիութենական առաջին համագումարի առթիվ, Մոսկվայի Մ. Գորկու անվան Կուլտուրայի և հանգստի պարկում կազմակերպվում է մեծ ցուցահանդես՝ «Սովետական գրականությունը 16 տարում»: Այդ ցուցահանդեսին մասնակցում են սովետական երկրի համարյա բոլոր նշանավոր նկարիչները: Կոջոյանը նույնպես ցուցադրում է իր աշխատանքներից որոշ նմուշներ, որոնց թվում նաև Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» գրքի հայերեն թարգմանության նկարազարդումները:

Մաքսիմ Գորկին ուշադիր կերպով դիտելով ցուցահանդեսը, հատուկ ուշադրություն է դարձնում Կոջոյանի աշխատանքներին: «Պրավդա»-ն, խոսելով Գորկու այդ այցելության մասին, գրում է. «Սովետական գրողների երկերի իսկական իլյուստրացիաների խմբում Ալեքսեյ Մաքսիմովիչը նշեց հայ նկարիչ Կոջոյանի աշխատանքների ցուցատախտակը (ի միջի այլոց ցուցադրված էին Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» գրքի

հայերեն թարգմանության համար պատրաստված նրա իլյուստրացիաները)»:[1]

Այդ մասին գրում է նաև «Իզվեստիա»-ն. «Սովետական գրողների երկերի համար նկարիչների կատարած իլյուստրացիաների բաժնում Ա. Մ. Գորկին հատկապես նշեց հայ նկարիչ Հակոբ Կոջոյանի իլյուստրացիաները»:[2]

Ոչ միայն իրեն՝ հեղինակին, այլ նաև Հայաստանի գրողների պատվիրակությանը, Գորկին իր հիացմունքը հայտնեց Կոջոյանի այդ աշխատանքների առթիվ: Կոջոյանի աշխատանքները մեծ ուշադրության արժանացան նաև գրողների համամիութենական առաջին համագումարի մասնակիցների շրջաններում:

Կոջոյանը գրավյուրի խոշոր վարպետ է: Մաքսիմ Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ»-ի պատկերազարդումը նա կատարել է մեծ սիրով ու ոգևորությամբ:

Ազատ ու համարձակ գծերով է պատկերել Կոջոյանը երիտասարդ Գորկու պորտրետը: Նա կենդանի է, ներշնչող և արտահայտում է վաղ շրջանի— Գորկու ռեվոլյուցիոն ռոմանտիկայի առանձին գծերը: Այդ պորտրետն և ապա «Մրրկահավը», «Բազեի երգը», «Աղջիկն ու մահը» բանաստեղծությունների պատկերազարդումները սովետական գրավյուրի կլասիկ գործերից են:

Կոջոյանը կարողացել է ճիշտ կերպով ըմբռնել ու խորը թափանցել Գորկու վաղ շրջանի ստեղծագործությունների բուն էության մեջ, ըմբռնել նրանց ոգին և մեծ վարպետությամբ արտահայտել իր գրավյուրների

[1] „Правда", № 233, 1934 г.

[2] „Известия", № 198, 1934 г.



Մ. Գորկի—գործ՝ ժողովրդական նկարիչ Հ. Կոջոյանի։

մեջ։ Իզուր չէ, որ երբ խոսք է լինում Գորկու և նրա ստեղծագործությունների արտացոլման մասին հայ նկարչության մեջ, առաջին հերթին հիշատակում են Կոջոյանի աշխատանքները։

Անվանի նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Դմիտրի Նալբանդյանը 1941 թվին տալիս է «Ի. Վ. Ստալին և Ա. Մ. Գորկին» հայտնի նկարը։ Ինչպես միշտ, այս անգամ էլ, Նալբանդյանը կարողանում է փայլուն վարպետությամբ պատկերել մեծ առաջնորդի կերպարը։ Ինչ վերաբերում է Գորկուն, ապա Նալբանդյանի տաղանդավոր վրձինը նրան էլ պատկերել է զարմանալի կենդանի ու արտահայտիչ ձևով։ Այս նկարի ամենամեծ արժանիքն այն է, որ նրա մեջ բացառիկ հաջողությամբ ու ջերմությամբ է պատկերված Ստալինի և Գորկու բարեկամության իդեան։

Գորկու կերպարի, նրա պորտրեի վրա աշխատել են նաև այլ շատ հայ նկարիչներ։

Գորկու կերպարի պատկերումն իր արտահայտությունն է գտել նաև հայկական գորգագործության մեջ։ Նշանավոր նկարիչ-գորգագործ Դավիթ Ղարանֆիլյանը, որի սքանչելի աշխատանքները հայտնի են Սովետական Միության մեջ, 1932 թվին գործում է Մաքսիմ Գորկու գորգ-պորտրեն։ Մաքսիմ Գորկու գորգ-պորտրեի հետ միասին, նրա Լենինի, Ստալինի, Մոլոտովի, Օրջոնիկիձեի, Բերիայի գորգ-պորտրեները հանդիսանում են բարձր արվեստի ու մեծ վարպետության փայլուն օրինակներ։

Ղարանֆիլյանի աշխատանքներն արժանացել են մեծ գովասանքի։ Նրա Ստալին գորգ-պորտրեն Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Հայկա-

Մ. Գորկի (գորգանկար). գործ՝ Դ. Ղարանֆիլյանի։

կան պավիլիոնի լավագույն զարդերից մեկն էր, որն ամենուրեք արժանացավ բարձր գնահատականի: Ընկեր Մոլոտովը դիտելով Ղարանֆիլյանի գործած Մոլոտով-գորգանկարն, արժանի գնահատական է տվել նրան: Սովետական Հայաստանի ժողկոմսովետին ուղղած իր հեռագրի մեջ ընկեր Մոլոտովը գրում է. «Շնորհակալ եմ Հայաստանի ժողկոմսովետի կողմից ուղարկած նվերի—գորգի համար, շատ լավ աշխատանք է, խնդրում եմ հայտնել իմ ջերմ ողջույններն այն ընկերներին, որոնք աշխատել են գորգի վրա: Մոլոտով»:

Մաքսիմ Գորկու գորգ-պորտրեն նույնպես Սովետական Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը նվիրում է Գորկուն՝ նրա գրական գործունեության 40-ամյակի առթիվ: Ներկայումս այդ գորգ-պորտրեն գտնըվում է Մոսկվայի Գորկու անվան թանգարանում: Ուշագրավ է Ղարանֆիլյանի այս յուրահատուկ ստեղծագործությունը: Անվանի նկարիչ-գորգագործն իր այդ աշխատանքով կարողացել է արևելյան պայծառ գույների ֆոնի վրա նրբորեն ու մեծ վարպետությամբ, պատկերել հանճարեղ գրողին: Գույների ընտրությամբ, նրանց դասավորությամբ ու նրբաճաշակ գործածությամբ նկարիչ-գորգագործ Ղարանֆիլյանն իր մասնագիտության մեջ նշանավոր արվեստագետ է:

Օգտագործելով Գորկու վերջին շրջանի պորտրեն և վերարտադրելով այն իր նրբահյուս գորգի վրա, Ղարանֆիլյանը միաժամանակ այդ պորտրեի շուրջը, մի քանի շրջանակների մեջ տվել է նաև սովետական մանրանկարչության օրնամենտների հաջող նմուշներ:

Գորկու մասին գրած իր ջերմ հուշերի մեջ Ղարանֆիլյանը պատմում է, թե ինչպես ինքը վաղուց ե-

բաղձում էր գործել Մաքսիմ Գորկու գորգ-պորտրետը, և թե որքան երջանիկ է ինքը, երբ իրականացված է տեսնում իր իղձը մեծ գրողի գրական գործունեության 40-ամյակի կապակցությամբ: Ավարտելով աշխատանքը՝ Ղարանֆիլյանն ինքն անձամբ տանում է այն Գորկուն: Հուզիչ էր Ղարանֆիլյանի հանդիպումը Գորկու հետ: Մեծ գրողը, իրեն հատուկ ջերմությամբ, ընդունելով Ղարանֆիլյանին, գովասանքի և շնորհակալության խոսք է ասում նրան:

Ղարանֆիլյանը հանճարեղ գրողի գորգ-պորտրետը գործող առաջին վարպետն է:

Մ. ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ

Մեծ է Մաքսիմ Գորկու ազդեցությունն ու դերը հայ ռեալիստական դրամատուրգիայի և հատկապես թատրոնի զարգացման գործում։ Ինչպես գրականության մեջ, այնպես էլ թատրոնի ասպարեզում Գորկին կազմում է նրա զարգացման մի նոր, ավելի բարձր էտապը։ Գորկին միակ դրամատուրգն էր, որ ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին հանդես գալով իր ռևոլյուցիոն պիեսներով, կարողացավ հեղաշրջել թատրոնը, այն դնելով նոր, առողջ հիմքերի և ռեալիստական ուղու վրա։

Ռուսական թատրոնի մեծագույն դեմքերից մեկը՝ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հիմնադիր Կ. Ս. Ստանիսլավսկին իր հուշերի մեջ նշում է. «Մեր թատրոնում հասարակական-քաղաքական գծի գլխավոր ձեռնարկողն ու ստեղծագործողը եղել է Գորկին»։[1]

---

[1] К. С. Станиславский — Моя жизнь в искусстве, 1941 г. стр. 326.

Գորկին էր, որ իր դրամատուրգիայով կարողացավ հասարակական ու քաղաքական նոր բովանդակություն տալ թատրոնին։ Այդ նորը հենց այն ռևոլյուցիոն տրամադրություններն էին, որոնցով հղի էր ամբողջ Ռուսաստանը 1905 թվի նախօրյակին։

Այդ նույն ռևոլյուցիոն դերը Գորկին կատարեց նաև Ռուսաստանի ժողովուրդների թատերական կյանքում։ Այդ տեսակետից բնորոշ և միևնույն ժամանակ խիստ հետաքրքրական է Գորկի-դրամատուրգի դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ և մասնավորապես հայ թատրոնում։

Դեռևս Գորկու պիեսները չէին բեմադրվել հայ բեմի վրա, երբ ռուսական իրականության մեջ նրա դրամատուրգիայի շուրջը բարձրացած պայքարը և տաք բանավեճերն իրենց արձագանքն էին գտնում նաև հայ իրականության մեջ, հայ պարբերական մամուլի էջերում։ Հայ թատրոնի առաջավոր ներկայացուցիչները, ինչպես նաև գրական ինտելիգենցիան հանգամանորեն քննության էին առնում Գորկու դրամատուրգիան, Գորկու պիեսների բեմադրություններն ու նրանց հաջողությունները՝ Մոսկվայի, Պետերբուրգի և նույնիսկ եվրոպական թատրոններում։

Այստեղ մեր նպատակն է միայն ցույց տալ Գորկու դրամատիկական երկերի բեմադրության առաջին արձագանքները հայ իրականության մեջ, ինչպես և Գորկու պիեսների բեմադրությունը հայ թատրոնում՝ սկսած 900-ական թվականների սկզբներից մինչև մեր օրերը, ինչպես և նրանց ազդեցությունն ու նշանակությունը հայ թատրոնի զարգացման ընթացքի վրա։

Գրականագետ Ալեքսանդր Ցոմինը, 1902 թվին, Մոսկ-

վայում դատախոսություն է կարդում Նայդենովի «Վանյուշինի զավակները» և Գորկու «Քաղքենիներ» պիեսների մասին։ Ա. Ցոմինը գրական շրջաններին արդեն հայտնի էր Բելինսկու, Չերնիշևսկու, Գերցենի մասին գրած իր աշխատություններով։ Ցոմինի վերը նշած դատախոսությունը բավականին ուժեղ տպավորություն է թողնում լայն հասարակության վրա ու տեղիք տալիս կրքոտ բանավեճերի։ Այդ դատախոսության հայ ունկնդիրներից մեկը, քննադատ Ալեքսանդր Ցոմինի հետ միասին լիովին համամիտ լինելով Գորկու պիեսներում շոշափված գաղափարներին և գտնելով, որ այդ գաղափարները արտահայտված են բարձր գեղարվեստականությամբ, գրում է. «Մեշչաններ» պիեսը, մի ամբողջ մեծ տարածություն է առնում յուր շրջանակի մեջ և բնորոշում է ամբողջ մեշչանների դասակարգը Ռուսիայում՝ սկսած 19-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը։ Ինչպես Գոգոլի «Մեռած հոգիներ» գրվածքում զգացվում են այն մեռած հոգիները, որ գոյություն են ունեցել ռուսական կյանքի մեջ ամբողջ 19-րդ դարի առաջին կիսում, նույնպես և Գորկու «Մեշչաններ»-ում պարզ կերպով դուրս են բերված բոլոր մեշչանները, վաճառականները, աղնվականները, աստիճանավորները և այն բոլոր դասակարգերը, որոնք նսեմացնում են իրենց և ուրիշների կյանքը և հավասարեցնում մեշչանների կյանքի չնչին իդեալների մակերևույթին։ Այդ մեշչաններն ամեն մի փոքր ի շատե լավ զգացմունքի տեր մարդուն հասցնում են այն կետին, որ նրան չի մնում ոչ մի տեղ, ոչնչով և ոչ մի բանի համար ապրելու եռանդ։ Խնդիրը հեղինակի կողմից դրված է շատ ուժեղ կերպով։ Գորկու պիեսը թեպետ և կոչվում է դրամատիկական էսքիզ, բայց նա ավելի ու-

ժեղ և գեղարվեստական է, քան մի քանի տասնյակ՝ ժամանակակից կյանքից առնված պիեսները»»:[1]

«Քաղքենիներ» պիեսի մասին առանձին տեղեկություններ են հաղորդում նաև ժամանակի հայկական մյուս թերթերն ու ամսագրերը: Դոնի-Նախիջևանում հրատարակվող «Նոր խոսք» ամսագիրը հաղորդում է, որ տեղի Հայկական դրամատիկական ընկերությունը 1906/7 թատերաշրջանի ռեպերտուարի մեջ մտցրել է թարգմանական պիեսներից Մաքսիմ Գորկու «Քաղքենիներ» պիեսը:

1904 թվին Պետերբուրգում բեմադրվում է Մաքսիմ Գորկու «Ամառանոցավորներ» պիեսը: Այդ բեմադրությունը նոր հուզումներ է առաջացնում հասարակության վերնախավի մեջ: Առանձնապես վրդովվում է ռուսական բուրժուական ինտելիգենցիան, որի ներկայացման կլասիկ պատկերներ կան այդ պիեսում: «Մշակ» թերթի աշխատակիցը, որ ներկա էր այդ ներկայացմանը և հիացած էր թե պիեսի բովանդակությամբ և թե նրա հաջող բեմադրությամբ, մի ընդարձակ հոդված է գրում ու խարազանում բուրժուական այն հանդիսատեսներին, որոնք վրդովվել էին Գորկու այդ պիեսի բեմադրությունից և ներկայացման ժամանակ սուլում էին նրա հանճարեղ հեղինակին:

«Ներկայումս,— կարդում ենք վերոհիշյալ հոդվածում,— Պետերբուրգի մի բեմի վրա ներկայացրին Գորկու նոր պիեսը, որի անունն է „Дачники“ (Ամառանոցավորներ): Դա մի ամբողջ մեղադրական ճառ է ռուս ինտելիգենցիայի դեմ: Գորկին իր հատուկ ուժեղ լեզվով

[1] «Նոր-Դար», № 194, 1902 թ.:

և խիստ գույներով ցույց է տալիս այդ դասակարգի ամբողջ մտավոր և բարոյական ոչնչությունը։ Հասարակության ճրագները խոսում են զանազան նյութերի վրա, նրանց մեջ կան և նյութամոլ փորապաշտներ, և զվարճությունների երկրպագուներ, և գաղափարական հարցերով զբաղվողներ։ Կանայք ու տղամարդիկ միասին են։ Եվ խոսում են, վիճում են, գործում են, բայց ոչինչ չի դուրս գալիս։ Անկարողություն է ամենքի անունը։ Նրանք, ինչպես ասում է գործող անձերից մեկը, ծառան,— ջրի երեսին երևացող պղպջակներ են, որոնք կորչում են ապա էլի երևում։

Կորչում և երևում են առանց մի լուսավոր հետք թողնելու, առանց կարողանալու կյանքի մեջ շավիղներ գծելու, անպետք ու անօգուտ։ Բեմի վրա այդ անկման տեսարանը, այդ ոչնչությունը, իհարկե, ավելի ազդու, ցնցող տպավորություն պիտի թողներ։ Հասարակության մեջ եղան վրդովվողներ էլ։ Եվ երբ երրորդ գործողությունից հետո հեղինակին բեմ կանչեցին, ծափահարությունների հետ բարձրացան և սաստիկ սուլոցներ։ Բայց անվեհեր մերկացնողը կանգնած էր այդ վրդովվածների առաջ, հպարտ ու անվախ հայացքով չափում էր դահլիճը, կարծես ուզում էր իմանալ թե ովքեր են անբավականները։

Պե՞տք է ասել, թե ովքե՛ր են դրանք։— Նույն ամառանոցավորները, նույն խոսող, դատարկ դես ու դեն վազող, բայց վերջ ի վերջո անկարող ու անպետք ինտելիգենտները։ Ինչպես չվրդովվեն։ Երեկվա «բոսյակը», իր տաղանդի շնորհիվ եկել, բարձրացել է անչափ և արհամարհանք, ատելություն է նետում այդ դասակարգի երեսին, որ դիպլոմներով է զարդարված, որ հասա-

բակության աղն է համարվում և ամբողջ ժամանակ համոզված է, որ ծառայում է կուլտուրային ու լուսավոր, երջանիկ ապագա պիտի պատրաստե իր գործունեությամբ։ Նա այդպես մտածում, այդպես է իրեն հուշակում,— այդ դասակարգը։ Եվ նրա երեսովն են տալիս, թե նա ոչնչություն է իր մանրությամբ, իր բարոյական անզորությամբ, թե նրան վիճակված է միայն մի խեղճ, ցուրտ գետնաքարշ գոյություն տանել այնքան կարծրություններով լի կյանքի մեջ։ Ահա ինչու են վրդովվում։ Ճշմարտությունը ծակեց, հայելին չափազանց անողորմ էր իր պարզությամբ։ Ժողովրդի մարդը, նա, որ դժբախտության, հանցանքների անդունդներն է նկարագրել և գտել է այնտեղ մարդկային հոգու հուժկու կարողություններ, այժմ իր վրեժն է հանում այն դասակարգից, որ խոսում է ու երևակայում, բայց չի կարողանում ոչինչ անել՝ այդ ժողովուրդը երջանկության ճանապարհով առաջնորդելու համար։

Վրդովվում են։ Բայց խոսքը արտասանված է։ Եվ այն ջնջելու համար քիչ, շատ քիչ է վրդովմունքը»։[1]

Մենք այս հատվածը մեջ բերեցինք ցույց տալու համար, որ հոդվածագիրը կարողացել է ըմբռնել պիեսի հասարակական-քաղաքական մերկացումների նշանակությունը և հանդես է եկել հայ իրականության մեջ, որպես Գորկու պիեսի ու նրա մեջ շոշափվող գաղափարների պաշտպան։ Այդ պաշտպանությունն արժեքավոր է նրանով, որ նրա մեջ արտահայտված է մասսայի վրա գործած Գորկու պիեսի ուժեղ ազդեցությունը, որ Գորկու գաղափարները հասել են շարքային դիտողին, հուզել ու ոգևորել են նրան։ Հոդվածագիրը դիտելով Գորկու «Ամա-

---

1 «Մշակ», № 268, 1904 թ.։

առանոցավորներ» պիեսը ռուս բեմի վրա և այն գնահատելով հայ մամուլի էջերում, որոշակի հետաքրքրություն է առաջացրել հայ հասարակության մեջ, հատկապես հայ թատերական կյանքում դեպի Գորկու դրամատուրգիան և նրա մեջ շոշափված հուզող գաղափարները: Նույն պիեսի մասին հայ մամուլի էջերում մենք հանդիպում ենք նաև այլ կարծիքների:

Երբ լույս տեսավ Գորկու «Ամառանոցավորները», «Զնանիե» հրատարակչական ընկերության «Ժողովածուի» երրորդ գրքի մեջ, հայ մամուլի էջերում մի շարք հոդվածներ տպագրվեցին, որոնց մեջ քննադատական խոսք էր ասվում նաև Գորկու «Ամառանոցավորներ»-ի մասին: Դրականի հետ միասին կային հոդվածներ, որոնք մեխանիկորեն կրկնում էին ռուսական բուրժուական մամուլի՝ նույն պիեսի մասին հայտնած թյուր մտքերը: Բուրժուական ռեակցիոն քննադատությունը ամեն կերպ ջանում էր թուլացնել այն հսկայական հետաքրքրությունը, որ հայ հասարակական ու թատերական լայն շրջաններում կար դեպի Գորկու դրամատուրգիան:

* * *

Մաքսիմ Գորկու նախառևոլյուցիոն շրջանի պիեսներից հայ թատրոնում բացառիկ մեծ ընդունելություն է գտել «Հատակում» պիեսը: Նախ քան այդ պիեսի բեմադրությունը հայ բեմի վրա, նրա մասին բազմաթիվ հոդվածներ են տպագրվել հայ մամուլի էջերում: Այդ հոդվածները մեծ մասամբ վերաբերվում էին «Հատակում» պիեսի բեմադրությանը Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում:

Ինչպես հայտնի է, «Հատակում» պիեսն առաջին անգամ բեմադրվել է 1902 թվի դեկտեմբերի 18-ին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում։ Հանրահայտ է, թե ինչպիսի մեծ հաջողություն է ունեցել «Հատակումը» Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, ինչպիսի մեծ պայքարի տեղիք է տվել այն։ Թատերական աշխարհում այդ պիեսի հանդես գալը յուրահատուկ մի մանիֆեստ էր։

Այդ պատմական ներկայացմանը ներկա էին նաև հայ գրական ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Անվանի գրական գործիչ Ստեփան Լիսիցյանը, որ ներկա էր «Հատակում» պիեսի առաջին ներկայացմանը, հաջող կերպով շարադրելով պիեսի բովանդակությունը և թեթև շտրիխներով բնութագրելով գործող անձանց, գրում է. «Ես կարողացա հաղորդել ընթերցողին այդ զորեղ գրվածքի միայն կմախքը, որովհետև Գորկու այդ պիեսը դեռ չի տպագրված... Այդ երկը խաղական դրամա չէ սովորական մտքով, այլ հզոր վրձինով նկարված ղարմանալի տեսարաններ, որոնք առիթ են տալիս հեղինակին հասարակության մեջ որոշ հայացքներ արծարծելու»։[1]

Իր այդ հոդվածում Ս. Լիսիցյանը մի առանձին հիացմունքով է խոսում Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի մասին։ Նա գրում է, որ Գորկու պիեսի մեծ հաջողությունը պետք է վերագրել նաև թատրոնի տաղանդավոր ռեժիսուրային և ապա դերասանական խմբի արտակարգ տաղանդավոր խաղին։ «Հատակում» պիեսի առաջին ներկայացմանը մասնակցում էին՝

---

[1] «Մուրճ», № 1, 1903 թ.։

Կ. Ս. Ստանիսլավսկի— *Սատին*
Ի. Մ. Մոսկվին— *Լուկա*
Վ. Ի. Կաչալով— *Բարոն*
Վ. Վ. Լուժսկի— *Բուբնով*
Ա. Լ. Վիշնևսկի— *Տատարին և այլն։*

Գերմանական այդ խումբը մեծագույն վարպետությամբ կարողացել էր ստեղծել աշխարհի և ոչ մի թատրոնում հավասարը չունեցող իդեական ու գեղարվեստական բարձրարժեք մի ներկայացում։ «Կարելի է համարձակ ասել, որ այլ բեմի վրա երբեք այն հաջողությունը չէր ունենա «Հատակում»-ը, ինչ նա ունեցավ Գեղարվեստական թատրոնի հռչակավոր խմբի անման խաղով և զարմանալի դրվածքով»,[1]— գրում է Ս. Լիսիցյանը։

Հայ մամուլի էջերում հոդվածներ են տպագրվել «Հատակում» պիեսի նաև արտասահմանյան բեմադրությունների մասին։ Այսպես, օրինակ՝ 1903 թվին, «Մշակ» թերթը մի ընդարձակ հոդված է տպագրում «Հատակում» պիեսի արտակարգ հաջողությունների մասին Բեռլինում։ Այդ հոդվածն իր ոճով ու բովանդակությամբ ակընհայտ կերպով տարբերվում էր թերթի մյուս հոդվածներից։ Հոդվածի հեղինակը համարձակ կերպով ընդգծելով Գորկու պիեսի հումանիստական ու սոցիալական խոշոր նշանակությունը, իր ջերմ համակրանքն է հայտնում պիեսում արծարծված գաղափարների հանդեպ։ Այդ հոդվածի հեղինակը Ստեփան Շահումյանն էր։

Հայտնի է, որ «Հատակում» պիեսի արտասահմա-

---

[1] *«Մուրճ», № 1, 1903 թ.։*

նյան բեմադրությունների մեջ ամենամեծ հաջողություն ունեցել էր Բեռլինի թատրոնի 1903 թվի բեմադրությունը: Որոնք էին այդ հաջողության պատճառները: Նախ՝ թատրոնը մեծ պատրաստություն էր տեսել այդ բեմադրության համար: Պիեսի թարգմանիչ Ավգուստ Շոլցը թատրոնի կողմից գործուղվել էր Ռուսաստան՝ պիեսի վերաբերյալ զանազան նյութեր հավաքելու: Ռուսաստան գալով՝ նա հանդիպում է ունենում Գորկու և ապա Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ռեժիսորների հետ: Վերցնում է «Հատակում»պիեսի Մոսկվայի թատրոնների բեմադրության դեկորացիաների էսքիզներ, դերակատարների ֆոտոնկարներ և այլ նյութեր: Չնայած, որ այդ բոլոր նյութերը բեմադրության ժամանակ չեն օգտագործվում, և նույնիսկ թատրոնի ռեժիսորը համարելով իդեալիստորեն տրամադրված գերմանական ինտելիգենցիայի աշխարհայացքին ու աշխարհըմբռնմանը, փորձում է թուլացնել պիեսի սոցիալական մեծ բովանդակությունը, սիմվոլիկ բնույթ տալով նրա որոշ հերոսներին, բայց այնուամենայնիվ Գորկու ստեղծած կենդանի ու ռեալիստական կերպարները պատռում են այդ իդեալիստական քողը, հանդիսատեսների լայն շրջաններին մատչելի դարձնում պիեսի մեջ արծարծված խնդիրները և լիովին ապահովում նրա հաջողությունը:

Այդ բեմադրությանը նվիրված իր հոդվածում Շահումյանը նախ նշում է այն մեծ հաջողությունը, որ ունեցել էր Գորկու «Հատակում»-ը Բեռլինի թատրոնում: «Թե անցած ձմեռվա և թե ներկա ամառվա սեզոններում,— գրում է Շահումյանը,— գրեթե օր չի անցնում, որ Մաքսիմ Գորկու այդ հռչակավոր երկը բեմ չդրվի:

Մաքսիմ Գորկին դարձել է գերմանացիների ամենասիրելի հեղինակը. նրանք չեն բավականանում միայն մի անգամ տեսնելով, շատերը գնում են երկու անգամ, երեք անգամ։ Չնայած, որ մինչև այժմ ավելի քան 250 անգամ ներկայացվել է, բայց և այնպես թատրոնն ամեն օր ծայրե ի ծայր լիքն է և հավանորեն կներկայացվի նաև եկող ձմեռվա սեզոնին։ Դերակատարների մտածված և բնական խաղը այնպես մի զորեղ տպավորություն է թողնում ականատեսի վրա, որ դժվար է թաքցնել արցունքները»։[1]

Այնուհետև, անցնելով ներկայացման գեղարվեստական արժանիքներին և հասարակության վրա նրա թողած տպավորությանը, Շահումյանը գրում է, որ ներկայացումը «սկզբից մինչև վերջ լարում է հանդիսատեսի ուշադրությունը, գրավում նրա ուշքն ու միտքը, քաշում է ներկա եղող մարդկանց զգացմունքներն ու կարեկցությունը և միացնում տիղմի մեջ խրված, սակայն մարդ կոչված արարածների զգացմունքների հետ։ Եվ ինչո՞ւ պետք է տաղտկացնի մեզ այդ պատկերների տեսքը, քանի որ նրանք մերն են. ո՞վ հետաքրքրությամբ չի նայի իր պատկերի վրա»։[2]

Խոսելով պիեսի բովանդակության մասին, Շահումյանը նշում է նրա սոցիալական խոր իմաստը, նրա հումանիզմը։ Նա մատնացույց է անում, որ պիեսում դրսևորվող սոցիալական տրագեդիան բուրժուական հասարակարգի տնտեսական ու քաղաքական պայմանների արդյունք է։ Այդ տիրող պայմաններն են, որ մար-

1 «Մշակ», № 195, 1903 թ.։

2 Նույն տեղում։

դուն հասցնում են կյանքի «հատակը», ծայրագույն թշվառության մատնում նրան։ «Մարդասիրություն,— գրում է Շահումյանը,— ահա այն իշխող գաղափարը, որով համակված է այդ երկը։ Արարածներից ամենակատարյալը, իր խելքով և զգացմունքներով ամենքի վրա թագավորողը, անտեսական անողոք պայմանների և ընկերության անհավասար օրենքների շնորհիվ, ընկնում է իր վայել աստիճանից ճահճոտ ու տիղմալից խորխորատի մեջ և հոգով ու մարմնով շաղախվում այդ զանգվածի հետ»։[1]

Հետաքրքիր ու ուշագրավ է Լուկայի կերպարը։ Սոցիալական ծանր պայմանների հետևանքով կյանքի անդունդը գլորված մարդկանց նա աշխատում է զանազան իմաստություններով մխիթարել, մեղմացնել ու թեթևացնել նրանց ցավը, մի խաբուսիկ պատրանք ստեղծել նրանց մեջ դաժան իրականության նկատմամբ։ «Նա,— գրում է Շահումյանը,— իր քաղցր ու խելոք խորհուրդներով և հայրական խրատներով ու հորդորներով աշխատում է ամենքի վիշտը թեթևացնել, ամենքին մխիթարություն տալ։ Մենք նրան տեսնում ենք մեռնողի մահվան անկողնու մոտ, որ նա աշխատում է հիվանդին համոզել, թե մեռնելը միայն փրկություն կարող է լինել այդպիսի կյանքից ազատվելու համար և հավիտենական հույսերով մեղմում է նրա վերջին ճգնաժամը, կալողների մեջ. նա հաշտարարի դեր է կատարում և կամ համոզում ոմանց թողնել, հեռանալ այդ շրջանից և աշխատել սկսել, բայց ծերունու խրատները դեռ քիչ են այդ՜ ապականված մթնոլորտը մաքրելու համար»։[2]

[1] «Մշակ», № 195, 1903 թ.։

[2] Նույն տեղում։

Կասկած չէր կարող լինել, որ Լուկայի քարոզները, նրա մխիթարական խոսքերը ոչ մի էական փոփոխություն չէին կարող մտցնել հատակի այդ մարդկանց ճակատագրի մեջ. դեռ ավելին, նա թուլացնում, մթագնում էր նրանց մեջ պայքարի գիտակցությունն ու անհրաժեշտությունը: Ահա թե ինչու Շահումյանը որոշակի նշում է, որ Լուկայի այդ «փրատները դեռ քիչ են այդ ապականված մթնոլորտը մաքրելու համար» և որ ավելի ռադիկալ միջոցներ են հարկավոր հասարակական այդ պայմանները փոխելու համար:

Սակայն, «հատակի» այդ մարդիկ բոլորը միատեսակ չէին, նրանց մեջ կային և այնպիսինները, որոնք կյանքի նկատմամբ չէին կորցրել իրենց հավատը, որոնք պատրաստ էին հանդուգն կերպով պայքարի նետվելու իրենց դառը վիճակը փոխելու համար: Այդ մարդիկ հալածվում էին օրենքի կողմից, «ոճրագործներ» համարվում նրա աչքում: «Օրենքի աչքում,— գրում է Շահումյանը,— ոճրագործներ են համարվում այդպիսի հանդուգնները, որոնք քաջություն ունեն հրապարակով ոտնակոխ անել՝ լոկ բառերով միայն գոյություն ունեցող գաղափարները...»:[1]

Իր այդ փայլուն հոդվածը Շահումյանն ավարտում է՝ մեջ բերելով Գորկու հոյակապ խոսքերը, խոսքեր, որոնք հնչեցին աշխարհով մեկ, որպես գովք մարդու մասին, որպես մարդու փրկության ու ազատության մեծագույն կոչ:

«Մա՜րդ,— գրում է Շահումյանը,— որքա՜ն քաղցր է հնչում այս խոսքը Գորկու ականջին, որքա՜ն հպարտությամբ է արտասանում նա այդ բառը. և միթե՞ նրա չոր

¹ «Մշակ», № 195, 1903 թ.:

պատկերները այդ վսեմ արարածի գովեստի երգը չեն: «Մարդ, սա շատ մեծ բան է. այդ բառի մեջ է ամեն բանի սկիզբը և վախճանը. ամեն ինչ մարդու մեջ է, և ամեն ինչ մարդու համար է. գոյություն ունի միայն մարդը. մնացած ամեն ինչ նրա ձեռքի ու մտքի արդյունք են կազմում: Մարդ. դա մի հրաշալի բան է, մարդ, հնչում է հպարտ. պետք է հարգել նրան և ոչ խղճալ ու ստորացնել նրան»: Եվ դեռ երկար կհնչի Գորկու այս երգը, քանի դեռ մարդը չի գիտակցում իր վսեմ կոչումը»:[1]

Շահումյանն առաջինն էր, որ հայ մամուլի էջերում նշեց Գորկու դրամատուրգիայի սոցիալական խոշոր նշանակությունը, նրա բացառիկ հումանիզմը, նրա գաղափարների համամարդկային նշանակությունը:

«Հատակում» պիեսի հաջողությունն այնքան մեծ էր ու ազդեցությունն այնքան ուժեղ, որ ցարական կառավարությունը ստիպված էր հատուկ միջոցառումների դիմելու: Հրահանգ է տրվում, որ Ռուսաստանի այլ քաղաքներում «Հատակում» պիեսը բեմադրելու համար անհրաժեշտ է ունենալ նահանգապետի թույլտվությունը: Իսկ նահանգապետներին էլ գաղտնի հրաման է տրվում, որի մեջ ասված էր. «Պ. Մինիստրը բարեհաճել է հրամայել. 1. Հնարավորության սահմաններում թույլ չտալ հետագայում «Հատակում» պիեսի բեմադրությունը և 2. Տեղային թերթերի խմբագիրներին համապատասխան ցուցումներ տալ այդ մասին»:

Հայ թատերական գործիչների առաջին փորձերը, բեմադրելու «Հատակումը» ապարդյուն են անցնում:

---

1 «Մշակ», № 195, 1903 թ.:

Տեղական նահանգապետները, անհարեկված կենտրոնից ստացած հրամանից, լսել անգամ չէին ուզում այդ պիեսի բեմադրության մասին:

Միայն 1908 թվին, Հայ դերասանական Ընկերությունը հաջողվում է բեմադրել Գորկու «Հատակումը»: Պիեսը բարեխղճորեն ուսումնասիրել ու հաջողությամբ բեմադրել է ռեժիսոր Ստեփան Քափանակյանը, որը ժամանակի առաջավոր ու բարձր կուլտուրայի տեր մեր լավագույն ինտելիգենտներից մեկն էր: Ավարտելով Մոսկվայի Լազարյան ճեմարանը և ապա Մոսկվայի համալսարանի պատմագրական ֆակուլտետը, Ստեփան Քափանակյանը քաջատեղյակ էր ռուս հարուստ գրականության ու թատրոնին: Հետևելով Ստանիսլավսկու ռեալիստական տրադիցիաներին, նա կարողացել էր հաջող կերպով բեմադրել հայ թատրոնում Գորկու լավագույն դրամաներից մեկը: Հայտնի է, որ այդ պիեսի գործող անձինք խոսում են յուրահատուկ լեզվով, որ հաճախ դժվար թարգմանելի է մի այլ լեզվով, բայց, չնայած այդ դժվարություններին, տաղանդավոր ռեժիսորի և թատերախմբի մեծ ջանքերի շնորհիվ Գորկու «Հատակումը» առաջին անգամ հայ թատրոնում բեմադրվում է մեծ հաջողությամբ: Պիեսը թարգմանել էր հայտնի դերասան Գրիգոր Ավետյանը, որը և խաղացել էր Լուկայի դերը:

«Հատակում»-ը բեմադրվել է Հայ դերասանական Ընկերության լավագույն ուժերի մասնակցությամբ: Հայ բեմի համարյա բոլոր նշանավոր դեմքերը մասնակցել են Գորկու այդ պիեսի բեմադրությանը: Դա ոչ միայն պատվի գործ, այլ մի տեսակ քննություն է եղել հայ դե-

րասանների համար։ «Հատակում» պիեսի առաջին բեմադրության մասնակցել են՝

Հ. Սևումյան— Սատին
Գ. Ավետյան— Լուկա
Օ. Գուլազյան— Ալյոշկա
Ա. Մամիկոնյան— Բարոն
Մ. Վանշիր—Դերասան
Վ. Մելիքյան—Վասիլիսա
Ս. Ադամյան— Նաստյա
Օ. Մայսուրյան— Նատաշա
Գ. Միրզոյան— Բուբնով և այլն։

«Հատակում» պիեսի առաջին բեմադրությունն անցել է մեծ հաջողությամբ։ Կովկասի հայկական և ռուսական մամուլը ջերմ խոսքեր է ասել այդ բեմադրության առթիվ։ Խոսելով պիեսի բովանդակության, նրա հայերեն բեմադրության ու դերակատարների մասին՝ «Մշակ» թերթը գրում է. «Այսպիսի մի դժվար դրամայի հաջող ներկայացման համար կարող ենք շնորհավորել Հայ Դերասանական Ընկերությանը։ Դերակատարները լավ էին ուսումնասիրել և լավ ըմբռնել իրենց դերերը»։[1] Թերթն առանձնապես նշում է դերասան Գրիգոր Ավետյանի մտածված ու հաջող խաղը, որը ստեղծել էր Լուկայի կերպարը։ Այդ օրվանից Գ. Ավետյանը տասնյակ տարիներ շարունակ խաղացել է Լուկայի դերը։ Հայ թատրոնում Գ. Ավետյանը եղել է առաջին, լավագույն Լուկան։ Ավետյանը Լուկայի դերը մեծ հաջողությամբ խաղացել է նաև ռուսական բեմի վրա՝ Թիֆլիսում և կովկասյան այլ քաղաքներում։ Թիֆլիսում հրատարակվող „Закавказское обозрение“ թերթը «Հա-

---

1 «Մշակ», № 239, 1908 թ.։

տակում» պիեսի հայերեն առաջին բեմադրության առթիվ գրում է. «Հակառակ մեր սպասածին՝ Գորկու «Հատակում» պիեսը հայկական թատրոնի բեմի վրա անցավ միանգամայն հաջող։ Թվում էր, որ այնքան էլ հեշտ չէր Գորկու հերոսների բնորոշ գծերը տալ հայերեն լեզվով, սակայն չափազանց աննշան բացառություններով ամեն ինչ անցավ հաջող»։[1]

«Հատակում»-ը երկրորդ անգամ բեմադրվել է 1909 թվին։ Հայ դրամատիկական ընկերությունը, հավանորեն, չցանկանալով կրկնել 1908 թվի ներկայացումը, միանգամայն նոր բեմադրությամբ, նոր մեկնաբանությամբ ու դերակատարների նոր կազմով է ներկայացնում «Հատակում»-ը։ Սատինի կերպարն այս անգամ ավելի խոր, ուժեղ ու ցայտուն կերպով է պատկերվում, իսկ Լուկայի կերպարը մաքրվում է ավելորդ իդեալականացումից։ Անվանի ռեժիսոր Հ. Սևումյանը ջանք չի խնայում հաջող բեմադրելու «Հատակում»-ը։ Նա, ինչպես առաջին՝ 1908 թվի բեմադրության ժամանակ, այնպես էլ այս անգամ փայլուն կերպով խաղում է Սատինի դերը։ Այս ներկայացումը, ինչպես վկայում է ժամանակի մամուլը, նույնպես անցնում է մեծ հաջողությամբ։

Ուշադրության արժանի է Հ. Հակոբյանի հոդվածը այդ բեմադրության մասին։ Նա ողջունում է Հայ դրամատիկական ընկերության, որ նա ընտրել է Մաքսիմ Գորկու «Հատակում» պիեսը և թատերախմբի գեղեցիկ խաղով ներկայացրել հասարակությանը։ Խոսելով պիեսի մասին, նա ճիշտ մեկնաբանում է նրա իդեական բովանդակությունը։ «Ըստ Մաքսիմ Գորկու,— գրում է Հակոբյանը,— ինքը մարդը չէ պատճառը, որ ընկնում է

[1] „Закавказское обозрение“, № 39, 1908 г.

19 09

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ

13 25. Ժողովրդական ներկայաց. կառավարչութեան 13 29

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Հինգշաբթի. Դեկտեմբերի 17-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐ. ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ

ՅԱՏԱԿՈՒՄ

Պիէս 4 գործ. Մաքսիմ Գորկու թարգ. Անդրէի

ԱՆՁԻՆՔ

Սաթին	Աբելեան
Դերասան	Հայկազեան
Բարոն	Տէր-Առաքելեան
Կոստիլև գիշերատան գլուխ	Ղուշչեան
Բուբնով. կարտուզնիկ	Դերիզեան
Լուկա թափառական	Փիրումեան
Ալեոշկա կօշկակար	Խորանեան
Կրիվոյ Զոբ	Դալաքեան
Թաթար	Մուշկամբարեան
Վասկա Պեպել	Մանուկեան
Վասիլիսա Կարպովնա. Կոստիլևի կինը	Զմշկեան
Կլեշ Անդրէյ Միտրիչ	Մելիքեան
Աննա նրա կինը	Սահակեան
Նաստեա	Սարաֆեան
Նատաշա Վասիլիսի քոյրը	Մխիթարեան
Մեդվեդև նրանց քեռին. ոստիկան	Բերբերեան
Կուաշնեա. կարկանդակ ծախող	Մարգարիտ

Սկիզբն է ճիշդ 8 ժամին երեկոյեան.

Խնդրում ենք յարգոյ հասարակութիւնից պահպանել կարգ. նստել իրենց տեղերը. պատշաճաւորից չխօսել պարտէր. և տոմսակները պահել մինչև ներկայացման վերջը.

Ներկայացման հանդ. վերահսկիչ: Դ. Երիցեան

Հերթ. կարգադրիչներ պ. Տ. Մանուկեան և Ն. Ամիրագեան

Ռեժիսոր- ՍԵՒՈՒՄԵԱՆ

«Հատակում» պիեսի 1909 թվի բեմադրության ծրագիրը:

կյանքի տիղմի մեջ, այլ միջավայրի սոցիալական պայմանները»։[1]

Ռեակցիայի տարիներին հայ բեմի վրա ներկայացվում էին, ազգային, կրոնական ու անկումային տրամադրություններով լեցուն պիեսներ, որոնք չէին կարող բավարարել հասարակության լայն շրջանների պահանջները, որոնց մեջ անտեսվում էին հանդիսատեսների մտորումներն ու խոհերը, և, բնական է, որ նրանք երես շրջեցին թատրոնից։ Իզուր էին հասարակությանը մեղադրում դեպի թատրոնն ունեցած անտարբերության մեջ, իզուր էին տրտունջները, թե հասարակությունը չի հասկանում, չի գնահատում թատերական արվեստը։ Հասարակությունը պահանջ ուներ գեղարվեստորեն բարձր և իդեապես խոր պիեսների։ Ահա թե ինչու այդ նույն հասարակությունը, մեծ խանդավառությամբ ընդունեց Գորկու «Հատակում» պիեսի ներկայացումը։ Այդ առթիվ Հակոբ Հակոբյանը որոշակի և իրավացիորեն գրում է. «Տվեք այս ոգով շատ պիեսներ, և հասարակությունը միշտ կգա կլցնի թատրոնը։ Այս կողմից գովելի է ռեժիսոր Սևումյանի ընտրությունը։ Հուսանք, որ նա ապագայում ևս կղեկավարվի նույն ուղղությամբ»։[2]

1910 թվին «Հատակում»-ը բեմադրում է դերասանուհի Օլգա Մայսուրյանը՝ Հայ դերասանական ընկերության թատերախմբի մասնակցությամբ։ Սատինի դերը կատարում է Ի. Ալիխանյանը, Լուկայինը՝ Միրզոյանը, Բարոնի դերը՝ Մամիկոնյանը և այլն։ Այս բեմադրությունը նշանակալից էր նրանով, որ նրանում զգալի-

1 «Մշակ», № 281, 1909 թ.։

2 Նույն տեղում։

րեն հաղթահարված էին 1908, 1909 թվականների բեմադրությունների թերությունները: օգտագործվել էր Գորկու դրամատուրգիայի ճիշտ մեկնաբանման ու բեմադրման հարուստ փորձը: Հատկապես Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի փորձը: Ահա թե ինչու այդ ներկայացումն այնպես ամբողջական մոնոլիտ տպավորություն է թողնում հասարակության վրա:

«Հատակում»-ը նորից հայ բեմ է բարձրանում 1917 թվի ռևոլյուցիայի փոթորկալի օրերին: Բեմադրում է այն ռեժիսոր Լևոն Քալանթարը Հայկական դրամատիկ խմբի ուժերով: Այդ բեմադրությունը ոչ միայն լավ ընդունելություն է գտնում հասարակության լայն խավերի կողմից, այլև առիթ է տալիս մամուլին հանգամանորեն անդրադառնալու թե՛ Գորկուն՝ որպես հանճարեղ գրողի, թե՛ «Հատակում» պիեսին՝ որպես դրամայի նոր տեսակի՝ և թե՛ դերասանական խաղին:

Այդ բեմադրության առթիվ ընդարձակ հոդվածով հանդես է գալիս սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, որն այնքան մեծ աշխատանք է կատարել հայ իրականության մեջ Գորկու ստեղծագործությունները մասսայականացնելու գործում: Հոդվածագիրը նշում է. «Նախ քան «Հատակումի» դերակատարների մասին խոսելը, ավելորդ չենք համարում մի քանի խոսք ասել հեղինակի և պիեսի մասին, իբրև նորագույն գրականության հաղվագյուտ և սակավաթիվ ստեղծագործություններից մեկի: Գորկին, որ իրավամբ վաստակել է համաշխարհային հռչակ, այն եզակի գրողներից է, որ ժողովրդի ամենախոր զանգվածի միջից դուրս գալով, ամենավառ ապրումներով էլ հարուստ ստեղծագործություններ է տվել ու տալիս է, մինչև այսօր էլ հավատա-

րիմ է մնացել ժողովրդական մասսաներին: Գորկու «Հատակում» դրաման մեկն է այն ստեղծագործություններից, ուր իրական, հեղինակի ապրած, քաշած ու տեսած պատկերներն են անցնում հանդիսականի առաջ— մերթ իրենց ցնցող և սարսուռ ազդող առօրյա և մերթ հատակի բնակիչների այդ «նախկին մարդկանց» անհույս ձգտումների թևաբեկ շարժումներով...»:[1]

Խոսելով Գորկու, որպես ստեղծագործողի, այս «Հատակում» պիեսի բովանդակության ու հասարակական նշանակության մասին, հոդվածագիրը մանրամասնորեն կանգ է առնում նաև պիեսի տիպերի բնութագրման վրա և հանգում է հետևյալ եզրակացության. «Այս դրամայում ամենքն էլ հերոսներ են, ամենքն էլ ամբողջացած տիպեր»:

Խոսելով պիեսի բեմադրության մասին, հոդվածագիրը որոշակի ընդգծում է. «Ողջունում ենք «Հատակում» դրամայի ներկայացումը և հույս հայտնում, որ այսուհետև այդ պիեսը հայ ժողովրդական թատրոնի ռեպերտուարից չի հանվի»:[2]

* * *

Նախքան Գորկու պիեսների սովետական շրջանի բեմադրության մասին խոսելը, մենք մի քանի խոսք կցանկանայինք ասել թատերական ռեակցիայի դեմ ուղղված Գորկու նախառևոլյուցիոն շրջանի հոդվածների և նրանց հայկական արձագանքների մասին: Ինչպես հայտնի է, թատերական հարցերի շուրջն ունեցած Գորկու ելույթների մեջ մի առանձնակի տեղ է գրավում 1913 թվին նրա գրած «Կարամազովշչինայի մասին» և

---

1 «Պայքար», № 9 1917 թ.:

2 Նույն տեղում:

«Դարձյալ Կարամազովշչինայի մասին» հոդվածները։ Դա մի բացառիկ համարձակ ելույթ էր ցարական սև ռեակցիայի հետևանքով թատրոնի և գրականության ասպարեզում ստեղծված՝ նեխած ճահճի մասին։ Գորկու այդ ելույթն իր վրա բևեռեց ժամանակի հասարակական-գրական միտքը։ Մի սոսկալի արշավանք սկսվեց Գորկու դեմ։

Թատրոնական երկու նոր բեմադրություններ առաջացրել էին Մաքսիմ Գորկու զայրույթը։ Այդ բեմադրությունները Դոստոևսկու «Եղբայրք Կարամազովներ» և «Բեսի» վեպերի ինսցենիրովկաներն էին։ Գորկին իր զայրույթն արտահայտեց հրապարակորեն։ Իր վերահիշյալ հոդվածներում, մի շարք օրինակներով ցույց տալով Դոստոևսկու այդ երկերի միանգամայն վնասակար, ռեակցիոն էությունը, Գորկին գրում է. «Իսկ ինչո՞ւ փորձում են հասարակության ուշադրությունը բևեռել մեր ազգային պսիխիկայի հենց այդ հիվանդագին երևույթների վրա։ Այդ բոլորն անհրաժեշտ է հաղթահարել, նրանցից հարկավոր է բուժվել, անհրաժեշտ է ստեղծել առողջ մթնոլորտ, ուր այդ հիվանդությունները չկարողանան տեղ գտնել։

Իսկ մեզ մոտ ցույց են տալիս թարախակալած խոցեր, դիակացած մարմիններ, հարկադրելով մտածել, թե մենք ապրում ենք մեռած հոգիների և կենդանի դիակների մեջ»։[1]

«Կարամազովշչինայի մասին» իր այդ բոցաշունչ մարտական հոդվածը Գորկին ավարտում է՝ դիմելով հասարակության լավագույն և առողջ մասին՝ միանալու

---

1. М. Горький — Литературно-критические статьи. 1937 г., стр. 146.

իր կոչին և բողոքելու անկումային, հիվանդոտ արվեստի դեմ: Գորկին գրում է. «Ես առաջարկում եմ բոլոր հոգեպես առողջ մարդկանց, բոլոր նրանց, ում համար պարզ է ռուսական կյանքի առողջացման անհրաժեշտությունը, բողոքել Դոստոևսկու երկերի բեմադրելու դեմ»:[1]

Իսկ իր երկրորդ՝ «Դարձյալ Կարամազովշչինայի մասին» հոդվածում Գորկին կոչ է անում. «Անհրաժեշտ է արիություն քարոզել, անհրաժեշտ է հոգեկան առողջություն, գործ, այլ ոչ թե ինքնազննում, անհրաժեշտ է վերադարձ դեպի եռանդի աղբյուրը— դեպի դեմոկրատիան, դեպի ժողովուրդը, դեպի հասարակությունն ու գիտությունը»:[2]

Գորկու այդ կոչը քաղաքական-հասարակական խոշոր երևույթ էր, Ռուսաստանում տիրող ռեակցիայի դեմ ուղղված բանվորական ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի սկզբին:

Ռուսական լավագույն և առաջավոր ինտելիգենցիան իր ձայնը միացրեց Գորկու ձայնին, բայց բուրժուական ինտելիգենցիայի մի ստվար մասը հանդես եկավ Գորկու դեմ: Պայքարը բավականին սուր բնույթ ուներ, նա տարածվեց նաև արտասահմանում: Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների մեջ այդ պայքարը նույնպիսի սուր բնույթ ուներ, ինչպիսին նա ուներ ռուս իրականության մեջ:

Մեր անվանի գրող Վրթանես Փափազյանը հայ իրա-

---

1 М. Горький — Литературно-критические статьи. 1937 г., стр. 148.

2 Նույն տեղում, էջ 153:

կանության մեջ առաջինն էր, որ իր ձայնը միացրեց Գորկու հուժկու ձայնին. նա լիովին համամիտ էր Գորկու հետ, որի խոսքերը բխում էին իր՝ Փափազյանի սրտից։

1913 թվին ընդարձակ մի հոդվածով հանդես գալով Զմյուռնիայում հրատարակվող «Հայ գրականություն» ամսագրի մեջ՝ Փափազյանը լիովին պաշտպանում է Գորկու հայացքները։ Մաքսիմ Գորկու հիմնական մտքերը շարադրելով իր հոդվածում, ընդարձակ մեջբերումներ անելով նրանից՝ Փափազյանը գտնում է, որ Գորկին միանգամայն իրավացի է, և հասարակական ու մտավոր կյանքի այդ հիվանդագին երևույթների դեմ պայքարելու խնդիրները ժամանակին են դրվում։

Զինվելով Գորկու այդ մարտական մտքերով՝ Փափազյանն այդ նույն հոդվածում մի քննական հայացք նետելով հայ թատրոնի, հայ գրական մթնոլորտի վրա՝ ասում է. «Եկեք այժմ, հայ ընթերցողներ, փոխենք այս բոլոր ասածների մեջ «ռուս» բառը «հայ» բառի և զննենք պահ մի, թե արդյոք հայ գրական մտավոր շարժումը ևս չի՞ ապրում նույնպիսի հոգեկան աղքատության մի շրջանում, ուր ամեն ուժ պատխկացել է. և, պատխկության հետ թե չնչինությունները են մեծության կարգն անցել և թե մարդկային ու քաղաքացիական պարտականությունների մերժումը՝ ազատամտության անուն ստացել։ Հիրավի, Գորկու կոչը պատշաճում է հայ մտքին ևս այս մեր թշվառ օրերում»։[1]

Փափազյանն իրավացիորեն արձանագրում է իր հոդվածում այն հանգամանքը, որ ռուս իրականության համեմատությամբ հայ մտավոր կյանքն ավելի վատթար

---

[1] «Հայ գրականություն», № 5, 1913 թ.։

վճռակում է։ Նա մի շարք փաստեր բերելով հայ իրականությունից՝ բավականին համոզիչ կերպով հիմնավորում է իր միտքը. «Մեր մեջ էլ սկսել է հնչել այն միտքը, թե «չկա վնասակար գրականություն», «չկա որևէ ստեղծագործություն, որ վնասակար լինի, եթե նա պատկերացած է գեղարվեստորեն և եթե նրա մտքերը արհամարհանքի տակ նույնիսկ ամեն վսեմ գաղափար, ամենայն շարժում...» այդպիսի մտածողները երբեք վնասակար չեն համարել այն վեպը անգամ, որի մեջ ներբողվում է տափամոլությունը՝ իր բոլոր արտառոց, այլանդակված ու հիվանդագին երևույթներով։ Այդպես մտածողները վնասակար չեն գտել «գեղարվեստորեն արտահայտված» մատնություն, սպանություն և այլ նման ախտեր արդարացնող գրվածքներ... Հիրավի, տափամոլ գրականությունը սկսում է հայ գրականության մեջ իջնել իր բոլոր խենեշ երևույթներով, որպես «նոր խոսք և նոր արժեք»։[1]

Միանգամայն իրավացի էին Փափազյանի դիտողությունները ժամանակի հայ իրականության մասին։ Ռեակցիայի դաժան տարիներին մտքի սոսկալի աղքատություն էր ստեղծվել նաև հայ բուրժուական գրականության մեջ։ Բուրժուական ու մանր բուրժուական ինտելիգենցիան փակուղու մեջ մնալով՝ իր անկման վերջին ճիչերն էր արձակում։ Հայ բուրժուական մամուլում այդ օրերին սկսել էին լայն տեղ գտնել պոռնոգրաֆիական, անկումային, հիսթերիկական ճիչերով լի գրվածքները։ Հայ թատրոններում գերիշխում էին պատմական, կրոնա-միստիկական, անկումային, ռեակցիոն ներկայացումները։

1 «Հայ գրականություն», № 5, 1913 թ.։

Փափազյանը քաջ ծանոթ էր հայ մտավոր կյանքի այդ անմխիթար վիճակին, նրան հայտնի էր, թե հայ գրական ու թատերական կյանքում ինչպիսի թափթփուկներ են թելադրողի դեր կատարում: Բայց նա լիովին հավատացած էր, որ թունավոր այդ մթնոլորտը երկար չէր կարող շարունակվել: «Հոգու այդ աղքատության շրջանը, սակայն, անցողակի է,— գրում է Փափազյանը,— վիժվածքները երկար չեն ապրում»:

Հետևելով հանճարեղ Գորկուն, արձագանքելով նրա կոչին, մատչելի դարձնելով այդ կոչը հայ մտավորականության լայն խավերին և ողջ հասարակության ուշադրությունը հրավիրելով Գորկու կոչի ու նրա մեջ շոշափված դեմոկրատական համամարդկային խնդիրների վրա՝ Փափազյանը կատարում էր ժամանակի առաջավոր գրողի մեծ պարտականությունը հայ իրականության մեջ:

Այդ հանգամանքը գլխովին բարձրացնում է Փափազյանին իր ժամանակի շատ ու շատ գրողներից: Մանավանդ որ նա լիովին հավատացած էր, թե՝ «Մաքսիմ գորկիների կոչերն իզուր չեն անցնիլ»:

* * *

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Սունդուկյանի անվան Պետական թատրոնն իր կազմակերպման առաջին տարում բեմադրում է Գորկու «Հատակում» պիեսը՝ Իսահակ Ալիխանյանի բեմադրությամբ: Այնուհետև սովետահայ թատրոններն իր՛նց ռեպերտուարներում համարյա ամեն տարի պահում են Գորկու «Հատակում»-ը:

«Հատակում» պիեսի սովետական հաջող բեմադրու-

թյունը պատկանում է Ստալինյան մրցանակի լաուրեատ, ժողովրդական արտիստ, ռեժիսոր Արմեն Գուլակյանին, որը 1932 թվին առաջին անգամ բեմադրեց այն Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնում: Այդ բեմադրությունը լայն ընդունելություն է գտնում հասարակության կողմից: Տաղանդավոր ռեժիսորն այդ բեմադրությամբ ցույց տվեց, թե որքան խոր ու լավ է ճանաչում նա ռուսական առաջավոր կուլտուրան, կյանքը, կենցաղի առանձնահատկությունները: Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի օրինակով, Գուլակյանը կարողացել էր դրսևորել Գորկու դրամայի հոգեբանական նուրբ երանգները, ցույց տալ նրա հասարակական-գեղարվեստական մեծագույն արժանիքները: Գուլակյանի բեմադրությունը տարբերվում էր նախասովետական և սովետական բոլոր բեմադրություններից նրանով, որ խորապես ավելի հագեցված էր և հեռու ձևական ամեն տեսակի էֆեկտներից: Դա մի փայլուն նվաճում էր, թե անվանի ռեժիսորի և թե Սունդուկյանի անվան թատրոնի համար:

Գորկու «Հատակում»-ը մեծ հաջողությամբ բեմադրվել է նաև Լենինականի Պետական թատրոնում, ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի ղեկավարությամբ: Այնուհետև «Հատակում»-ը դառնում է սովետական հայ բեմի սեփականությունը և մինչև այսօր էլ այդ պիեսը խաղացվում է հայկական մի շարք թատրոններում:

Ավելի քան քառասուն տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ Գորկու «Հատակում» պիեսը բարձրացավ հայ բեմի վրա: Քառասուն տարի շարունակ նա կազմում է հայ բեմի լավագույն ներկայացումներից մե-

կը։ Չորս անգամ «Հատակում»-ը թարգմանվել է հայերեն և բազմիցս բեմադրվել։

Բացի «Հատակում» պիեսից, հայ բեմի վրա խաղացվել են Գորկու «Քաղքենիներ», «Թշնամիներ», «Վերջինները», «Վասսա Ժելեզնովա», «Եգոր Բուլըչև», «Դոստիգաև և ուրիշները»։

Այդ բեմադրություններից հայ իրականության մեջ մեծ հաջողություն է ունեցել ու լայն մասսայականություն է վայելում հատկապես «Եգոր Բուլըչևը», որ առաջին անգամ բեմադրվել է Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնում, 1933 թվին։ «Եգոր Բուլըչևը» սովետական կլասիկ դրամատուրգիայի լավագույն գործերից մեկն է։ Հանճարեղ Գորկին իր այդ պիեսում ստեղծագործական զարմանալի ուժով կարողացել է պատկերել մեռնող բուրժուազիայի մայրամուտը և բարձրացող ռևոլուցիայի արշալույսը։

Սունդուկյանի անվան Պետական թատրոնում «Եգոր Բուլըչևը» բեմադրել է Մոսկվայի Վախտանգովի անվան թատրոնի ռեժիսոր Բ. Զախավան։ Բուլըչևի դերում հանդես է գալիս ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը, մյուս դերերը կատարում են՝ Շուրա— ժողովրդական արտիստուհի Ռուզաննա Վարդանյան, Մայրապետ— ժողովրդական արտիստուհի Հասմիկ, Հայր Պավլին— ժողովրդական արտիստ Վավիկ Վարդանյան, Գլաֆիրա— Մելքումյան և այլն։

Հատուկ ուշադրության արժանի է ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանի խաղը Բուլըչևի դերում։ Բացառիկ դրամատիկական տաղանդի և ուժեղ զգացմունքի տեր արտիստն ամբողջ ներկայացման ընթացքում հանդիսատեսներին պահում է լարված վիճակում։

Վաղարշյանն իր խաղի կատարելությամբ կարողանում է վարպետորեն դրսևորել Բուլըչևի ողջ տրագեդիան։

Քննադատությունն իրավացիորեն նշել է, որ «Եգոր Բուլըչև» պիեսի բեմադրությունը Սունդուկյանի անվան Պետական թատրոնում մի խոշոր իրադարձություն ու նշանակալից էտապ է կազմում հայ թատրոնի զարգացման գործում։

Սունդուկյանի անվան Պետական թատրոնի բեմադրած «Եգոր Բուլըչևը» բարձր գնահատականի է արժանացել նաև Մոսկվայում։ Կենտրոնական մամուլը նշել է, որ Մոսկվայի Վախտանգովի անվան թատրոնի բեմադրությունից հետո «Եգոր Բուլըչևի» ամենալավ բեմադրությունը պետք է համարել Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրությունը։ Դերակատարների մեջ դարձյալ առանձնացվում է Վ. Վաղարշյանի հիանալի խաղը Բուլըչևի դերում։

Վաղարշ Վաղարշյանի ու նրա Բուլըչևի մասին «Պրավդա» թերթը գրում է. «Ստալինյան մրցանակի լաուրեատ, ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը մեկն է բեմի այն ականավոր վարպետներից, որոնք ստեղծում են մի որոշ ժամանակի թատրոն, ստեղծում են շկոլա, իրենց անունն են տալիս դրամատուրգիայի կլասիկ կերպարներին։ Դա մեծ կուլտուրայի, և, որ գլխավորն է, մեծ հոգու տեր արվեստագետ է։ Նա առաջին իսկ բառից հանդիսատեսին նվաճում է իր ձայնի, հայացքի, ժեստի ճշմարտացիությամբ։ Խաղը միաձուլվում է կյանքին։ Գեղարվեստական կերպարի մեջ հոգեբանական ներթափանցման խորությունն ու նշանակալիությունը մեծապես բարձրացնում են արտիստին»։[1]

2 „Правда“, № 156, 1941 г.



Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Եգոր Բուլըչև»-ի բեմադրությունից մի տեսարան։

Մոսկվայում հրատարակած իր հոդվածներից մեկում ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը հետևյալն է գրում «Եգոր Բուլըչև»-ի հայերեն բեմադրության առթիվ. «Մեր թատրոնի զարգացման գործում մեծ դեր է կատարել «Եգոր Բուլըչև»-ի բեմադրությունը 1932/33 թ.: Թատրոնի կոլեկտիվը ռեժիսոր Բ. Զախավայի ղեկավարությամբ կարողացավ բացահայտել Գորկու պիեսի իդեական նպատակասլացումը: «Եգոր Բուլըչև»-ի բեմադրությունը սքանչելի դպրոց էր մեր արտիստների համար»:

1933 թվին Եգոր Բուլըչևի դերը կատարում է նաև հայ ժողովրդի մեծանուն արտիստ Հովհաննես Աբելյանը: Աշխարհի նշանավոր բեմերի վրա անուն վաստակած մեծ արտիստը մի առանձին ջերմությամբ ու սիրով էր խաղում Գորկու պիեսներում: Նա Գորկու ստեղծագործությունների երկրպագուն ու բարձր գնահատողներից էր: Շատ տարիներ առաջ մեծ ոգևորությամբ նա խաղացել էր «Հատակում» պիեսում՝ դերասանի և ապա Լուկայի դերերում: Գորկու պիեսների հումանիզմը, կերպարների ռեալականությունը և յուրօրինակությունը, նրանց մարտական շունչն ու երանգը միշտ էլ գրավել են Աբելյանին: Աբելյանը բազմիցս նշել է, որ Գորկու պիեսները դերասանական ուժի, կարողության ու տաղանդի լավագույն փորձաքար են հանդիսանում: Պատկերել Գորկու փիլիսոփայական կերպարները, նրանց բարդ հոգեբանությունը, նրանց գաղափարների պոռթկումը, մեծագույն լարվածություն ու բացառիկ ընդունակություններ են պահանջում ամեն մի դերասանից: Պատասխանատվության այդպիսի բարձր գիտակցությամբ նա դիմել է Բուլըչևի դերի պատրաստմանը:

Աբելյանի դուստրը, հոր մասին գրած ուշագրավ հուշերի մեջ, նշում է. «Չեմ մոռանա, թե ինչպես էր նա պատրաստում Բուլըչևը: Նա կարդաց մի բժշկական գիրք, որտեղ նկարագրված էր փայծաղի հիվանդությունը: Ուզում էր իմանալ, թե ինչ սիմպտոմներ ունի այդ հիվանդությունը, ինչպես են արտահայտվում նրա նոպաները, ինչ գույն է ստանում դեմքի մորթին այդ հիվանդությունից: Գնաց նույնիսկ հայտնի բժիշկ Քեչեկի մոտ և զրույց ունեցավ հետը: Դերը պատրաստելու կարճ ժամկետ էր նրան տրված: Ես հիշում եմ, թե ինչպես էր նա հուզվում ներկայացման օրը, չէ՞ որ դերը լուրջ էր, իսկ Գորկին էլ նրա սիրած դրամատուրգն էր»:

Աբելյանը մեծ հաջողությամբ կատարեց Բուլըչևի դերը: Ինչպես միշտ, հասարակությունն այս անգամ նույնպես օվացիաներով պսակեց հայ բեմի մեծանուն վետերանին: Աբելյանն իր վարպետ խաղով ստեղծել է Բուլըչևի կլասիկ կերպարը:

Հայ ժողովրդի մեծ վիպասան ու դրամատուրգ Շիրվանզադեն, Սունդուկյանի անվան Պետական թատրոնի դիրեկցիային ուղղած, 1933 թվի դեկտեմբերի 3-ի իր նամակում հետևյալ կարծիքն է հայտնում «Եգոր Բուլըչև»-ի բեմադրության առթիվ.

«Թույլ տվեք ինձ հայտնել խորին շնորհակալություն այն կատարյալ հաճույքի համար, որ ես առիթ ունեցա վայելելու «Եգոր Բուլըչև» պիեսի ներկայացումից: Չորս տարի էր, որ ես ֆիզիկապես տկարության պատճառով թատրոն չէի այցելում: Այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Պետական թատրոնը հսկայական հառաջադիմություն է արել թե՛ դերասանական խաղի,

թե՛ ռեժիսուրայի և թե՛ բեմադրության ու ձևավորման տեսակետից։ Այժմ ամենայն համոզմամբ կարող եմ ասել, որ հայ թատրոնն այսօր ընդունակ է մրցելու եվրոպական լավագույն թատրոնների հետ։

Շիրվանզադե»

Շիրվանզադեն իր այս փոքրիկ նամակում լիովին արտահայտել է հայ ինտելիգենցիայի, բանվորների ու աշխատավորության բարձր գնահատականը Սունդուկյանի անվան Պետական թատրոնի, որպես սովետական առաջավոր թատրոններից մեկի, կոլեկտիվի, նրա տաղանդավոր ռեժիսուրայի ու նույնքան տաղանդավոր դերասանների նվաճումների մասին։

1934 թվին Սունդուկյանի անվան Պետական թատրոնում ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանը բեմադրում է Գորկու «Դոստիգաև և ուրիշները»։ Բեմադրությանը մասնակցում էին թատրոնի լավագույն ուժերը. Դոստիգաև—Ավետ Ավետիսյան, Գուբին— Հրաչյա Ներսիսյան, Ռյաբինին— Հ. Ավագյան և ուրիշները։ Թատրոնի կոլեկտիվը, ըմբռնելով պիեսի բարդությունը, ջանք չէր խնայել հաղթահարելու բոլոր դժվարությունները և ստեղծելու գեղարվեստական բարձր ներկայացում։

Այնուհետև 1937 թվին Սունդուկյանի անվան Պետական թատրոնը Վ. Վաղարշյանի ռեժիսորությամբ բեմադրում է Գորկու «Վասսա Ժելեզնովա»-ն։ Պիեսը թարգմանել էր Տ. Հախումյանը։ Սունդուկյանի անվան Պետական թատրոնը մեծ ջանք էր գործադրել այդ պիեսը լավ բեմադրելու համար։ Գլխավոր դերերը կատարում էին թատրոնի անվանի արտիստները՝ Վասսա—ժողովրդական արտիստուհի Հասմիկ, Ռաշել— ժողովրդա-

կան արտիստուհի Արուս Ոսկանյան, Խրապով— ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյան, Նատալիա— ժողովրդական արտիստուհի Ռուզաննա Վարդանյան և ուրիշներ։ Ներկայացումն անցնում է մեծ հաջողությամբ։ Քննադատությունը միաձայն նշում է, որ «Վասսա Ժելեզնովա»-ն Սունդուկյանի անվան թատրոնի լավագույն ներկայացումներից մեկն է։

Հայկական թատրոններում ներկայացվել են Գորկու պիեսներից նաև «Թշնամիներ»-ը, Ա. Տեր-Հովնանյանի թարգմանությամբ, «Վերջինները»՝ ժողովրդական արտիստ Գուրգեն Ջանիբեկյանի թարգմանությամբ ու բեմադրությամբ, «Քաղքենիներ»-ը՝ Ա. Տեր-Հովնանյանի թարգմանությամբ և այլն։

Վաղարշ Վաղարշյանը, որպես արտիստ ու ռեժիսոր, հսկայական աշխատանք է կատարել Գորկու դրամատուրգիան հայ ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում։ Իր հոդվածներից մեկում նա գրում է. «Հայ թատրոնը սիրում ու բարձր է գնահատում Գորկուն։ Այդ սերն առաջացել է դեռևս նախառևոլյուցիոն տարիներին։ Բայց Գորկու պիեսները հայ բեմի վրա ավելի պայծառ ու ամբողջական հնչեցին սովետական ժամանակաշրջանում։ Այդ գործում մեծ ծառայություններ ունի Սունդուկյանի անվան թատրոնը, որը բեմադրել է ռուս մեծ գրողի չորս պիեսը՝ «Հատակում», «Եգոր Բուլըչև», «Դոստիգաև» և «Վասսա Ժելեզնովա»։[1]

Իր այդ արժեքավոր հոդվածը Վաղարշյանն ավարտում է հետևյալ տողերով. «Մենք ապագայում նույնպես ջերմ սիրով կբեմադրենք Գորկու գրվածքները, ինչպես

[1] „Театральная неделя", № 25, 1941 г. Москва.

և ռուս մյուս մեծ գրողների գրվածքները, քաղելով նրանցից նոր ուժեր մեր ստեղծագործական կատարելագործման համար»:[1]

Մաքսիմ Գորկու պիեսները հայ թատրոնում դաստիարակել ու աճեցրել են տաղանդավոր դերասանների մի ամբողջ պլեադա, որի լավագույն ներկայացուցիչն է ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը: Նա մի առանձին երախտիքով է հիշում այս մասին իր հոդվածներից մեկում. «Ես երեսունհինգ տարվա իմ ստեղծագործական ճանապարհին շատ եմ հանդիպել համաշխարհային կլասիկների, այդ շարքում Գորկու գործերին, բայց բեմական հասունություն ու բերկրանք զգացել եմ ավելի շատ Գորկու, քան որևէ այլ հեղինակի մոտ»:

Գորկու պիեսները հայ թատրոնում ստեղծել են թատերական կուլտուրայի միանգամայն նոր տրադիցիաներ, ռեալիստական ռևոլյուցիոն տրադիցիաներ, որոնք արտահայտվել են այդ թատրոնի նաև մյուս բեմադրություններում:

Մաքսիմ Գորկու դրամատուրգիան խոշոր ազդեցություն է ունեցել հայ թատրոնի վրա, նրա պիեսների բեմադրությունը կազմում են հայ թատրոնի պատմության զարգացման մի նոր, ավելի բարձր էտապը, սոցիալիստական ռեալիզմի հաղթանակի էտապը:

---

1 „Театральная неделя“, № 25. 1941 г. Москва.

Մ. ԳՈՐԿԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լենինի խորհրդով, Մաքսիմ Գորկին 1922 թվին մեկնում է Իտալիա՝ իր քայքայված առողջությունը վերականգնելու համար։ Սակայն, գտնվելով հեռավոր Իտալիայում, Գորկին երբեք չի դադարում ուշադիր կերպով հետևել Սովետական Հայրենիքում ծավալվող տնտեսական ու կուլտուրական շինարարությանը։ Արտասահմանից գրած թե՛ իր նամակներով և թե՛ հոդվածներով նա ակտիվ կերպով արձագանքում ու մասնակցում էր սոցիալիստական երկրի քաղաքական ու հասարակական մեծ իրադարձություններին։

1928 թվին, իր մեծ Հայրենիքը վերադառնալով, Գորկին, Սովետական Միության տնտեսական ու կուլտուրական խոշորագույն նվաճումներին մոտիկից ծանոթանալու, աշխարհի առաջին սոցիալիստական երկրի վերածնված ժողովուրդների երջանիկ ու բարեկեցիկ կյանքը անձամբ դիտելու նպատակով, մի նշանակալից ուղևորություն է կատարում դեպի Միության մի շարք ռեսպուբլիկաները։

Գորկին այցելում է նաև Սովետական Հայաստան, հայ ժողովրդի կյանքին ու նրա ձեռք բերած նվաճումներին ծանոթանալու համար։

1928 թվի հուլիսի 25-ին Թիֆլիսից գնացքով նա ժամանում է Ղարաքիլիսա (Կիրովական), որտեղից էլ, Սովետական Հայաստանի կառավարության անդամների ուղեկցությամբ, մեքենայով անցնում է Դիլիջան և ապա, Սևանի վրայով, ժամանում Երևան։ Այստեղ Գորկին այցելում է մայրաքաղաքի թանգարանները, նորակառույց գործարաններն ու ֆաբրիկաները, բանվորական հանրակացարանները, դիտում հիդրոկայանը և այլն։

Ծանոթանալով Զեթ-Օճառ և Բամբակազտիչ գործարանների ներքին սարքավորմանն ու աշխատանքներին՝ Գորկին հավաքված բանվորներին ասում է.

— «Շնորհակալություն, ընկերնե՛ր, այն բոլորի համար, որ դուք ինձ ցույց տվիք։ Ահա, թե ինչ է նշանակում կյանքի տեր դարձած բանվոր դասակարգը։ Այն բոլորը, ինչ որ ես տեսա, դուք կատարե՛լ եք ձեր ձեռքով։

Շատ են եղել կյանքում ֆանտազյորներ, բայց ոչ որ չէր կարող հնարել այնպիսի երևակայական իշխանություն, որ ամեն ինչ կատարեր այնպես, ինչպես այդ անում է Սովետական իշխանությունը։ Առաջներում ոմանք աշխատում, իսկ մյուսները խժռում էին նրանց աշխատանքի պտուղները, հիմա արդեն դուք աշխատում եք և ինքներդ օգտվում ձեր սեփական աշխատանքի արդյունքներից»։

Գորկու գալստյան առթիվ, Երևանի աշխատավորությունը, Կոմունարների այգում կազմակերպում է բազմամարդ միտինգ։ Հայ ժողովուրդը ջերմագին ողջունում է.

պրոլետարիատի մեծ գրողին։ Գորկին այդ միտինգում հետևյալ ճառն է արտասանում.

«Ընկերնե՛ր, երբ վեց տարի սրանից առաջ մեկնում էի Ռուսաստանից, ես չէի կարող տեսնել այն, ինչ այն ժամանակ սկսված էր և չէր ավարտված։ Բայց այսօր, երբ ես այցելում եմ ՍՍՌՄ մի շարք վայրեր, ես զարմանում եմ այն խոշոր աշխատանքով, որ դուք կատարել եք։ Ես համոզված եմ, որ ոչ ոք այդպիսի կարճ ժամանակամիջոցում չէր կարող անել այն, ինչ արել է ՍՍՌՄ բանվոր դասակարգը։ Ես ցանկություն չունեմ գովաբանելու ձեզ, դեռ շատ պակասություններ կան ձեր աշխատանքների մեջ, մասնավորապես պակասություններ՝ ձեր մեջ։ Բայց, եթե դուք վատ եք աշխատում, այդ այն պատճառով է, որ դուք դեռևս լրիվ կերպով չեք հասկացել, թե ո՞ւմ համար եք աշխատում դուք։ Դուք աշխատում եք ձեզ համար։

Արևմտյան Եվրոպայի պրոլետարիատը ձեզանից շատ, բայց վատ է աշխատում, նա հոգնել է ուրիշի և իր թշնամի դասակարգի համար աշխատելուց։ Այն, ինչ որ ես այստեղ տեսնում եմ, դա սկիզբն է վեհ աշխատանքի, իսկական, նոր կյանքի, նոր կուլտուրայի և հսկայական դեպքերի։ Այնտեղ պրոլետարիատը դեռ ճնշված է արտաքին պայմաններից, չունի այն ազատությունը, ինչ որ դուք ունեք։ Ձեզ ղեկավարող օրգանները՝ Սովետական իշխանությունը և պարտիան, մտածում են—և այդ չի կարող ժխտել ոչ մի ազնիվ մարդ— բանվոր դասակարգի ամրացման մասին, նրա կարիքները հոգալու մասին։ Այստեղ, որքան ես գիտեմ գրականությունից, և ականատես եղա, ամեն ինչ կատարվում է ժողովրդի

միջոցով, ժողովրդի համար։ Այստեղ չկա վախ, որը զգացվում է այնտեղ, այստեղ բանվոր դասակարգն իրոք տեր ու տնօրեն է, և այդ տարբերությունն առանձնապես աչքի է ընկնում։ Այնտեղ կա վախ, որ վաղը բանվոր դասակարգը կբարձրանա և կասի բուրժուազիային. կորեք դո՛ւրս, իսկ այստեղ տեր է հանդիսանում բանվոր դասակարգը, առանց ազգությունների խտրության, այստեղ բանվոր դասակարգը տեր է բոլոր հարստությունների, արտադրության գործիքների։

Ես պետք է ասեմ նորից մի անգամ, որ չէի սպասում տեսնել, որ այդքան աշխատանք կարելի է կատարել այս վեց տարվա կարճ ժամանակամիջոցում։

Սրտագին ողջույն Ձեզ, ընկերնե՛ր»։[1]

Մաքսիմ Գորկու գալուստն առանձնապես ջերմ ոգևորություն է առաջացնում Հայաստանի գրողների շըրջանում, որոնց համար այդ գալուստն իսկական տոն հանդիսացավ։ Սովետական Հայաստանի Պրոլետարական գրողների միության կենտրոնական վարչությունը, Հայաստանի բոլոր գրողների անունից, մամուլում հրապարակում է ողջույնի հետևյալ նամակը.

«Այսօր Խորհրդային Հայաստանի բանվորներն ու աշխատավորությունը ջերմագին ողջունում են բանվոր դասակարգից սերված, այդ դասակարգի ծոցից ելած, նրա հեղափոխական փոթորիկների հանդույն մրրկահավի, անզուգական Գորկու գալուստը։

Բարձրանալով «հատակից», քաղքենիական ու ազգայնական թույնով վարակված գրական շրջապատում,

---

1 «Խորհրդային Հայաստան», 1928 թ., № 174։

նա առաջինը պատկերեց այդ հատակը, եղավ նրա հերոսների հետ, ամբողջովին իրեն կապեց բանվոր դասակարգին և հեղափոխական վերելքի տարիներին նա առաջինը խրոխտորեն երգեց բանվոր դասակարգի պայքարի երգը:

Գոռ փոթորիկներից մրրկահավը հաղթանակորեն դուրս եկավ: Հաղթանակեց Գորկու սիրած բանվոր դասակարգը, և նրա հաղթանակի ու սոցիալիստական շինարարության տարիներին Գորկին մնաց իր դասակարգի հետ:

Իր քաղաքական բախտը կապելով Ռուսաստանի բանվոր դասակարգի հետ, Հայաստանի բանվորությունն ու աշխատավոր գյուղացիությունը նույնպես հաղթանակեցին: Քաղաքացիական կռիվներից անմիջապես հետո, տնտեսական վերականգնման արշալույսին, Հայաստանի պրոլետարիատը ձեռնամուխ եղավ նաև իր դասակարգային գրականության ստեղծման գործին... Այսօր Հայաստանի ամրակուռ գրական բանակն իր բոցավառ ու ջերմագին ողջույնները միացնելով Հայաստանի բանվորների ու գյուղացիների ողջույններին, գրկաբաց ու խանդավառ ընդունում է մեծ ուսուցչին և թանկագին հյուր Մաքսիմ Գորկուն:

Կեցցե՛ խոշոր արվեստագետը:
Կեցցե՛ մեծ հեղափոխականը»:

Մտերմական բացառիկ ջերմ մթնոլորտում է անցնում Գորկու հանդիպումը Սովետական Հայաստանի երիտասարդ ու ավագ սերնդի գրողների հետ: Գրողների ոգեշնչված ողջույններին պատասխանելուց հետո, Գորկին խոսում է գրականության լավագույն վարպետների

մասին. նա հատկապես շեշտում է այն խոշոր նվաճումները, որ ձեռք է բերել ռուս կլասիկ գրականությունը լեզվի ասպարեզում և այնուհետև անցնում ժամանակակից գրականության նկատմամբ ունեցած իր վերաբերմունքին, ինչպես և այդ գրականության հետագա անելիքներին: «Սովետական Միության մեջ կատարվում է հսկայական կուլտուրական աշխատանք,— ասում է Գորկին,— մարդիկ, որոնք մասնակցում են այդ աշխատանքին, լիովին չեն պատկերացնում, թե ինչ խոշոր աշխատանք է կատարվում, ինչ է դարձել ռևոլյուցիայից հետո գրականությունը: Թերևս ձեզ համար պարզ լինի, չգիտեմ, բայց պետք է ասեմ, որ այդ ինձ համար պարզ չէ: Մենք հարևաններ ենք, բայց և այնպես փոխադարձաբար ծանոթ չենք միմյանց գրականության: Կատարվում է մեծ աշխատանք, անգամ փոքր ազգությունների մեջ ծնունդ են առնում բանաստեղծներ, գրողներ, օրինակ՝ Վոտյակների մոտ նորերս ես հանդիպեցի մի գրողի, որի ստեղծագործությունները լի են չափազանց առողջ տրամադրություններով: Մեր ներքին հոգեկան միացման տեսակետից, ինչպես և հետագա գործունեության տեսակետից անհրաժեշտ է մեզ այնպես կազմակերպվել, որ ճանաչենք միմյանց: Լավ կլիներ այդ տեսակետից հրատարակել մի հանդես, որտեղ ամբողջ աշխատանքը լինի շեշտված, սակայն ոչ միայն գրականությունն արձանագրվի այդ հանդեսում, այլև կուլտուրական կյանքի ամեն մի քայլ՝ գործարաններ, նոր գրված օպերա և այլն: Գրել այն մասին, ինչ որ անում են կուլտուրական առանձին միավորները:

Այդ բոլորը հնարավորություն կտա մեզ շոշափելու և տեսնելու այն նոր մարդուն, որն աճում է: Նոր տրամա-

դրությունների, եռանդի և աշխատանքի ցուցաբերմամբ, որ կատարվում է մեզանում, մենք ավելի ամուր կանգնած կլինենք մեր դիրքերում և ավելի լայն կերպով կտեսնենք ամեն ինչ։ Բացի դրանից, ցանկալի է նաև «Գրականության համբավաբեր», որտեղ հնարավորություն լինի թարգմանաբար հրատարակել ՍՍՌՄ ժողովուրդների գրականության լավագույն գործերը։

Ապրել այնպես, ինչպես ապրել ենք մինչև ռևոլյուցիան, այլևս անհնարին է։ Այժմ այլ պայմաններ են, այլ տեր է և շատ լավ տեր։ Անհրաժեշտ է կուլտուրական բոլոր ուժերի միացում, որոնք ընթանում են նոր կուլտուրայի, նոր մարդու ուղիով, և դրան հնարավոր է հասնել կոլեկտիվ աշխատանքով»։[1]

Սովետական Միության մեջ կատարած իր այդ նշանավոր ճանապարհորդությունից հետո վերադառնալով Մոսկվա, Գորկին ակնարկների ձևով գրում է իր հարուստ տպավորությունները, որոնք տպագրվում են նրա կողմից խմբագրվող „Наши достижения“ ժուռնալի 1929 թվականի համարներում։ Իր այդ ակնարկների մեջ Գորկին խոսում է նաև Սովետական Հայաստանի մասին։ Մեծ գեղարվեստագետը վառ գույներով է նկարագրում Հայաստանի երփներանգ բնությունը, Դիլիջանի և Սևանի վեհ տեսարանները, հայ ժողովրդի մեծ նվաճումները սոցիալիստական շինարարության ասպարեզում։

Ոտք դնելով Սովետական Հայաստանի հողը, Գորկին վերհիշում է հայ ժողովրդի պատմական անցյալը։ Քանի՛-քանի՛ անգամ այդ գեղեցիկ երկիրը ոտնահարվել է օտարերկրյա նվաճողների կողմից։ Քանի՛-քանի՛ անգամ

1 «Խորհրդային Հայաստան», 1928 թ., № 174։

արյունառուշտ սուլթանական Թյուրքիան իր վայրի ու բիրտ հորդաների միջոցով քանդել ու ավերել է նրա գեղեցիկ քաղաքներն ու գյուղերը, սրի քաշել նրա խաղաղ ու աշխատավոր ժողովրդին, սվինահարել ծերերին և մանուկներին։ Հայաստանի ամեն մի ծառ ու քար կենդանի հուշարձան է հանդիսանում արյունոտ ոճիրների, անվերջ ջարդերի, կոտորածների, որ կազմակերպել էր Թուրքական իմպերիալիստական, գիշատիչ պետությունը։

Անցնելով Հայաստանի գեղատեսիլ լեռներով ու ձորերով, Մաքսիմ Գորկին ,որ բազմիցս իր հուժկու ձայնն էր բարձրացրել հօգուտ հայ ժողովրդի, չէր կարող չհիշել այդ ժողովրդի մղձավանջային անցյալը։

Նկարագրելով Դիլիջանի հիասքանչ ու արբեցուցիչ բնությունը, Գորկին գրում է. «Աֆրիկական չքնաղ Դիլիջանի ձորը ամենից քիչ մղձավանջային, արնաշաղախ ոճիրների պատկերի հուշերի համար պիտի ծառայեր որպես շրջանակ։ Սակայն մարդու հիշողության մեջ ակամա հարություն է առնում Հայաստանի 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ողբերգական պատմությունը, Կոնստանտինոպոլի ջարդը, Սասունի կոտորածը, «մեծ մարդասպանը», «կուլտուրական Եվրոպայի» քրիստոնյաների քստմնելի անտարբերությունը իրենց «քրիստոնյա եղբայրների» բնաջնջման հանդեպ, ինքնակալության կողմից հայոց եկեղեցական գույքերի թալանի ամոթալի ակտը, վերջին տարիների Թուրքական արշավանքների սարսափները— դժվար է վերհիշել այս եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգությունները։

Նման փաստերը զարմանալի արագությամբ ու ճարպկորեն մոռանում են պարոնայք «հումանիստները», իդեալիստները, «կուլտուրայի» պաշտպանները, որ հիմ-

նըված են ագահության, նախանձի, ստրկության և ժողովրդական զանգվածների ցինիկ բնաջնջման վրա։ Այդ «մինչև ականջները արյան և աղտի մեջ խրված կուլտուրայի» պաշտպանների ստությունն ու կեղծավորությունը հասնում է ակնհայտ խելագարության ու ոճրագործության, որ արժանի պատիժ չունի»։[1]

Սովետական սոցիալիստական ազատ կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովուրդը լայն հնարավորություններ է ստանում արագ կերպով վերականգնելու բազմաթիվ թշնամիների կողմից ավերված երկիրը։ Սոցիալիստական շինարարությունը հսկայաթափ ծավալ է ստանում ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում և հատկապես Երևան քաղաքում։ Քաղաքն օրեցօր փոխում է իր հնադարյան տեսքը։ Բազմաթիվ նոր բնակելի շենքեր են կառուցվում, նոր գործարաններ ու ֆաբրիկաներ վեր խոյանում։ Գորկին ականատես լինելով երիտասարդ Սովետական Հայաստանի սոցիալիստական վերակառուցման առաջին հաղթական քայլերին, գրում է. «Այո, ամենուր, Սովետական Միության բոլոր կենտրոնում խիզախ ու մեծիմաստ փորձեր են կատարվում, նոր կյանք են կառուցում։ Այդ շինարարությունն առաջին բանն է, որ աչքի է ընկնում, երբ մոտենում ես Երևանին։ Կարմրավուն ամպերի գլխարկ դրած արծաթագլուխ Արարատի խոժոռ զանգվածի ֆոնի վրա մոխրագույն քարաշեն քաղաքը հեռվից մեջս հարուցեց կառուցողական լաստակների վանդակի մեջ բանտարկված տպավորություն։ Բանվորների մրջնային ֆիգուրները կարծես թե անմիջապես բիբլիական լեռան քարե զանգվածից նոր շեն-

[1] „Наши достижения", 1929 г. № 1.

քեր են քանդակում: Այդ տպավորությունը նրանից էր, որ շինարարությունը քաղաքի ծայրամասերում է կատարվում և տեսանելի է լաստակների միջից... Երևանը զարդարված է շատ լավ հիդրոշենով, որի ուժով աշխատում են բամբակազտիչ, ձեթի և օճառի գործարանները և վառ լուսավորում է քաղաքը: Եռանդուն առաջ է մղվում բանվորների համար բնակարան կառուցելու գործը: Երկու խոշոր տուն արդեն բնակված են: Ամենուր զգացվում է տիրող խիզախ ու խելոք ձեռքը և շարժումը քաղաքում մեծ տոնի նախօրյակի շարժման բնույթ է կրում»:[1]

Անդրադառնալով ռեսպուբլիկայի բնական հարստությունների, շինանյութերի պաշարների առկայությանը, Գորկին հատկապես նշում է Հայաստանի տուֆ քարի հանքերի խոշոր նշանակությունը երկրի սոցիալիստական շինարարության ու վերակառուցման գործում: «Երկրաբանական հետազոտություններ են կատարվում բովանդակ երկրում,— գրում է Գորկին,— արդեն իսկ գյուտ է արված, որ անկասկած հայերին խոշոր միջոցներ կտա երկրի արդյունաբերության և կուլտուրայի զարգացման համար. Արարատի մոտ հրաբխային տուֆի հարուստ հանքեր են հայտնագործված: Այդ նյութից են կառուցված Նեապոլը և Նեապոլի ծոցի բոլոր առափնյա քաղաքները: Սակայն Արարատի տուֆն ավելի կարծր է Վեզուվի տուֆից, չի ջարդվում մեխից և միաժամանակ հեշտությամբ կտրվում է, գրեթե սապոնի պես: Հենց հանքում կարելի է տուֆից սյուներ, լուսամուտների և դռների պարակալներ (наличники), բարձակներ

1 „Наши достижения", 1929 г. № 1.

КОНСОЛИ), կարնիզներ պատրաստել, ճարտարապետի տված չափով հնարավոր է ամեն ծավալի խորանարդներ շինել: Հանքատեղերում հարյուրավոր միլիոն տոննա տուֆ կա: Այդ հարստության շահագործումը սկսված է արդեն, երկաթուղային գիծ են անցկացնում մինչև հանքերը: Կարծիք կա, որ տուֆն աղյուսից ավելի էժան կընստի և շինանյութերով աղքատ Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայում լավ կտարածվի: Հավանական է, որ Հայաստանի հրաբխային հողն իր ժողովրդին այլ հարստություններ էլ կնվիրի: Երևանից Թիֆլիս վերադառնալիս, մենք ճանապարհին տեսանք հողի երես ելած սև օքսիդային-հրաբխային ապակի»:[1]

Իր այդ ակնարկներում Գորկին առանձնապես մեծ սիրով է խոսում հայկական արվեստի, հատկապես պարերի մասին. բարձր գնահատական տալով դրանց: «Երեկոյան, միտինգից հետո, քաղաքային այգում, Երևանի երիտասարդությունը ցուցադրեց սասունցիների պարերը, որոնք իրենց ինքնատիպությամբ և գեղեցկությամբ բացառիկ բաներ են»:

Խոսելով իր վերաբերմունքի մասին ընդհանրապես դեպի պարի արվեստը՝ Գորկին այնուհետև անցնում է սասունցիների պարի նկարագրությանն ու գնահատությանը:

«Սասունցիների պարերը չեն զարմացնում ձևերի բարդությամբ ու ձևերի բազմազանությամբ և չեն էլ ձգտում դրան: Նրանց մեջ ուրիշ բան կա, ավելի նշանակալից ու խորունկ: Բեմ են ելնում երկու երաժիշտ ազգային գունեղ հագուստով՝ մի մեծ թմբուկ և մի

---

[1] „Наши достижения“ 1929 ｊ. № 1.

գիլ զուռնա, իսկ նրանց հետևից դուրս է գալիս մի շլացուցիչ փայլով բազմագույն մարմին — քսան տղամարդ։ Նրանք անցնում են ուս-ուսի, հետևներից իրար ձեռք բռնած, նրանք, որպես մի մարմին, շարժվում են միանական, զարմանալի ռիթմիկ մղիչ ուժով։ Այդ մարմինը շրջան է կազմում, ծավալվում որպես սպիրալ, շտկվում, ուղիղ գիծ դառնում և զանազան կոր գծեր կազմում։ Իդեալական ռիթմը, ձեռքերի կառուցման թեթևությունն ու սահունությունն ավելի և ավելի են ամրացնում միանականության, միաձուլության թովիչ իլուզիան։ Դըժվար է նշմարել առանձին պարողին, տեսնում ես թե ինչպես առողջ օրորվում է գեղեցիկ դեմքերի մի շարան, նկատում ես նրանց ժպիտը, նրանց աչքերի փայլը, մեկ թվում է, թե նրանք թվով շատացան, մեկ էլ՝ քչացան։ Ամեն մեկի անհատական գծերը համարյա աննշմարելի են և շարունակ ձեզ հետ խոսում, ձեզ ժպտում է կարծես մի դեմք — մի երևակայական արարածի դեմք, որի ներքին կյանքն անտեսելի հարուստ է։ Զուռնի երգն աշխույժ է, բերում, բայց նրա գիլ ձայնն այնպես ականջ չի ծակում։ Ուժգին, բայց փափուկ տակտ է պահում թմբուկը և այդ երաժշտության հետևից մի ուրիշ երաժշտություն ես տեսնում — մարդկային ճկուն մարմնի զարմանալի գեղեցիկ շարժումների երաժշտություն, նրա ազատ խաղը՝ վառ զգեստների բազմերանգ ալիքների մեջ։ Մեկ-մեկ, երբ բազմագլուխ մարմնի շարժման թափը սաստկանալով ոսկեգույն և ծիածանավոր մրրիկ էր վերածվում, ես սպասում էի, որ պարողների շղթան կբաժանվի առանձին օղակների, բայց այդ մրրկի մեջ էլ նրանք պահպանում էին շարժումների միահամուռ սահունությունը, ավելացնելով ու խորացնելով զորության ու միանա-

կանության տպավորությունները: Ես երբեք չէի տեսել և չէի կարող պատկերացնել շատերի միասնական գործողության մեջ այդպիսի կատարյալ միաձուլություն, զոդվածություն: Սասունցի հայերի պարը երևի ռազմիկների հաղթական պարն է»:[1]

Նույնպիսի բարձր գնահատական է տալիս Գորկին նաև կանանց պարերին: Այդ պարերն իրենց ազգային կոլորիտով, կատարման նրբերանգությամբ, խմբային ու անհատական ռիթմիկ շարժումներով խորն ու անմոռանալի տպավորություն են թողնում Գորկու վրա: Նա գրում է. «Ոչ նվազ ինքնատիպ և նույնքան դյութիչ գեղեցկությամբ պարում էին կանայք, որ նույնպես արևելյան հագուստներ ունեին վառ ու գունեղ: Պարելով, նրանք ցույց էին տալիս, թե ինչպես են սանրում մազերը, շպարում դեմքը, կուտ տալիս թռչուններին, մանում— և մենք դարձյալ հմայված ենք նրանց շարժումների զարմանալի ռիթմականությամբ, շարժաձևերի գեղեցկությամբ: Կանայք մեկը մյուսից առանձին էին պարում և յուրաքանչյուրի շարժաձևերն անհատական էին, այս պատճառով նրանց համար ժամանակի միասնականությունը, ռիթմը պահպանելն ավելի դժվար էր, իսկ նրանք այն պահպանում էին իդեալական կերպով:

Մեր ժամանակաշրջանը քանի՜-քանի՜ տաղանդ է կյանքի կոչել, ինչքա՜ն գեղեցկություն է հարուցել ռևոլյուցիայի կենարար փոթորիկը— մտածում էի ես ճամբին՝ Երևանից ետ դառնալիս»:[2]

Երբ Գորկին Երևանից վերադառնում է Թբիլիսի, „Заря Востока“ *թերթի խմբագրության աշխատակի-*

---

[1] „Наши достижения“, 1929 г. № 1.

[2] Նույն տեղում:

ցը դիմում է նրան, խնդրելով, որ պատմի Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին: Գորկին ասում է. «Ես ամենալավագույն տպավորություններն ստացա Երևան և Հայաստան կատարած իմ ճանապարհորդություններից: Հայաստանը մեծ ապագա խոստացող երկիր է: Հարուստ, շատ օգտակար հանքերով, որոնց վրա այժմ միայն դարձվում է լուրջ ուշադրություն: Հայաստանի ժողովուրդը թողնում է գործունյա ժողովրդի տպավորություն, որն անկասկած գիտե, թե ինչ է ինքն անում, գիտե, թե ինչպիսի խնդիրներ են սպասում իրեն վճռելու»:[1]

Անջնջելի տպավորություն են թողնում Սովետական Հայաստանը և նրա աշխատավոր ժողովուրդը Գորկու վրա. նա չի մոռանում Սովետական Հայաստանը և հետագայում ուշադիր հետևում էր այնտեղ կատարվող ամեն մի կարևոր երևույթի:

Երբ հայ ժողովուրդը 1930 թվին տոնում էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման տասնամյակը, Մաքսիմ Գորկին հեռավոր Իտալիայից իր սրտագին ողջույնն է հղում հայ ժողովրդի ազատագրության տասնամյակի հանդիսավոր տոնի առթիվ: Ահա ինչ է գրում մեծ գրողը իր այդ ողջույնի հեռագրում.

«Հայաստանի ռեսպուբլիկայի բանվորների և գյուղացիների իշխանության առաջին տասնամյակին աշխատավորների ամբողջ աշխարհին ասում է, որ միայն պրոլետարիատի իշխանությունն է ապահովում ժողովուրդների խաղաղ համակեցությունը և ազգային կուլ-

---

1 „Заря Востока“, 1928 г. № 172.

տուրաների ազատ աճումը: Անդրկովկասյան ժողովուրդների արդյունաբերական և կուլտուրական հաջողությունները ցույց են տալիս, թե որքա՞ն վիթխարի է նոր աշխարհ կառուցող բանվոր դասակարգի էներգիայի պաշարը: Թո՛ղ ավելի ուժգին և ավելի համարձակ մարմնանա այդ էներգիան կյանքում: Չկան արգելքներ, որ չկարողանան հաղթահարել ողջ աշխատավոր ժողովրդի աշխարհին Լենինի մեծ հանճարի ցույց տված ուղիով ընթացող բանվորն ու գյուղացին:

Մաքսիմ Գորկի»

Սովետական Հայաստան գալուց հետո Գորկու կապերը հայ ժողովրդի, նրա ինտելիգենցիայի հետ էլ ավելի ամրանում են: Գորկու հետ տեսնվելու համար հեռավոր Հայաստանից՝ Մոսկվայի մոտ գտնվող նրա ամառանոցն են մեկնում ոչ միայն գրողներ, նկարիչներ, գիտնականներ, այլ և ստախանովականներ ու պիոներներ:

1935 թվի ամռանը Երևանի Մաքսիմ Գորկու անվան դպրոցի պիոներները Մոսկվա են մեկնում պրոլետարիատի հանճարեղ գրողին տեսնելու և ուսման մեջ ձեռք բերած իրենց հաջողությունների, ինչպես և Հայաստանի սոցիալիստական շինարարության ասպարեզում իրենց ծնողների կատարած հերոսական աշխատանքների մասին զեկուցելու համար:

Ահա թե ինչ է գրում Գորկու անվան դպրոցի ուսուցչուհի Տոնոյանը պիոներների՝ Գորկուն այցելելու մասին. «Դա 1935 թվի հուլիսի 10-ին էր, Մոսկվայի պարզ ու արևոտ օրերից մեկը: Հեռավոր Երևանից եկած 20 էքսկուրսանտ պիոներներ սրտատրոփ սպասում էին

այն րոպեին, երբ նրանք կհանդիպեն սովետական երկրի հանճարեղ գրողին, որի փառապանծ անունը զարդարում էր իրենց դպրոցը։

Ցերեկվա ժամը 3-ին մեր հանրակացարանի առաջ կանգ առան ավտոմեքենաներ։

Իմանալով, որ Երևանից եկած, իր անունը կրող դպրոցի պիոներները ցանկանում են իրեն տեսնել, Մաքսիմ Գորկին, ոչ միայն հանդիպման ժամ էր նշանակել, այլև ավտոմեքենաներ ու հատուկ մարդ էր ուղարկել հեռավոր Հայաստանից եկած երեխաներին ընդունելու համար։ Գորկու ամառանոցը գտնվում էր Մոսկվայի արվարձաններից մեկում։

Մեծ գրողը երեխաներին ընդունեց գրկախառն, համբուրում էր նրանց ինչպես իր թոռնիկներին, որոնց նա չէր տեսել երկար տարիներ։ Նա չէր կարողանում ծածկել այն ուրախությունը, որ զգում էր ինքը կենսուրախ ու աշխույժ պիոներների հետ խոսակցելու ժամանակ, ստուգում էր նրանց գիտելիքները, նրանց կատարած հասարակական աշխատանքը... Որքան ուրախացավ Մաքսիմ Գորկին, երբ լսեց պիոներների ստացած բարձր գնահատականների մասին, ինչպես էր հիանում նա գրականության մասին իր տված հարցերի ճշգրիտ ու կանոնավոր պատասխանների համար։ Անցավ անմոռանալի ժամը։ Մաքսիմ Գորկին մեզ տարավ շքեղ սեղանի մոտ, որի շուրջը նստած էին պարաշուտային խմբակի մի քանի տասնյակ բանվորներ ու բանվորուհիներ։ Այդտեղ էլ, սեղանի շուրջը, մենք տեսանք ֆրանսիական գրող Ռոմեն Ռոլանին— բարի ժպիտով ալեհեր ծերունուն, որն այն ժամանակ Սովետական Միության հյուրն էր։

Մ. Գորկին Երևանի պիոներների հետ, նկարված Մոսկվայում, 1935 թ. հուլիսի 10-ին։

Երեխաները դժվարությամբ էին ծածկում իրենց հուզումը և անսահման ուրախությունը, բայց շուտով ընտելացան շրջապատին և զգում էին իրենց որպես տանը կամ Երևանի այգիներից մեկում։ Սեղանի շուրջը ճառեր ասվեցին։ Ամեն մի ճառից հետո պիոներները խաղում, երգում, պարում, արտասանում էին, առաջացնելով ջերմ և երկարատև ծափահարություններ։ Ես երբեք չեմ մոռանա այն արցունքները, որոնք փայլում էին սիրելի և թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչի բարի աչքերում...»։[1]

Գորկու հետ ունեցած ծանոթությունն անսահման մեծ տպավորություն է գործել տաղանդավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի վրա։ Այդ հանդիպումը ոգևորել, ստեղծագործական նոր թափ ու լիցք է հաղորդել Ա. Խաչատրյանին և նա, 1935 թվին Գորկուն ուղարկած իր մի նամակում, այս մասին հետևյալն է գրում. «1935 թվի հուլիսի 8-ը՝ դա իմ կյանքի տոն օրերից մեկն է։ Իմ ծանոթությունը մեր էպոխայի երկու մեծագույն մարդկանց հետ,[2] թողել է ինձ վրա խոշոր տպավորություն։ Ուզում եմ ստեղծագործել և լավ ստեղծագործել։ Ազգային երաժշտության, նրա անտարակույս աճի, նրա նկատմամբ եղած ուշադրության ու ֆոլկլորի մասին մեզ հայտնած Ձեր մտքերը ինձ շատ ուրախություն, հավատ և ստեղծագործական լիցք տվին»։

Մինչև իր կյանքի վերջն էլ Գորկին կապված էր հայկական կուլտուրայի հետ և հետևում էր նրա զարգացմանը։

1935 թվին „Academia" հրատարակչությունը նա-

[1] „Коммунист", 1937 г. № 138.

[2] Խոսքը Մ. Գորկու և Ռոմեն Ռոլլանի մասին է։

խաձեռնում է հրատարակելու «Հայկական պոեզիա» մեծ անթոլոգիան՝ Մ. Գորկու խմբագրությամբ։ Վերանայելով անթոլոգիայի բոլոր նյութերը, Գորկին 1936 թվի ապրիլի 17-ին, իր մահից ուղիղ երկու ամիս առաջ „Academia“ հրատարակչության գրած նամակում հետևյալ բնորոշումն է տալիս հայկական պոեզիային. «Որչափ ես կարող եմ դատել առհասարակ պոեզիայի մասին և որչափ կարելի է դատել ռուսերեն թարգմանված հայկական պոեզիայի մասին, ինձ թվում է, որ «Հայաստանի պոեզիա» անթոլոգիան կազմված է շատ սոլիդ կերպով։ Նա հնարավորություն է տալիս հասկանալու պոեզիայի աճման պատմությունը, գաղափար է տալիս այդ պոեզիայի գեղեցկության և ուժի մասին, օրիգինալության ու պատկերավորության մասին։ Այդ ամենն այդպես է։

Բայց դուք գիտեք, որ լավը հաճախ հետ է պահում լավագույնի ծնունդը, իսկ լիակատարությունը երբեմն վեր է ածվում վատառողջ հաստության, ուստի և ես խորհուրդ եմ տալիս ձեզ մեկ անգամ ևս վերանայել ամբողջ նյութը։ 730 էջ բանաստեղծություն — այդ չափազանց շատ է։ Չէ՞ որ դեռ անհրաժեշտ կլինի առաջաբան տալ։ Բացի առաջաբանից՝ հարկավոր է տալ նաև մի փոքր ծանոթություն հայկական տաղաչափության յուրահատկությունների մասին և պոետների համառոտ կենսագրականները։

Առհասարակ ցանկալի է «Անթոլոգիան» տեսնել օրինակելի կերպով հրատարակված, այնպես որ, այդ գրքի տիպին հետևեն մյուս անթոլոգիաները — վրացականը, ուզբեկականը և այլն...

Մաքսիմ Գորկի»

Գորկու այս խիստ արժեքավոր դիտողությունները ոչ միայն «Հայկական պոեզիա» անթոլոգիայի, այլև սովետական մյուս ժողովուրդների պոեզիայի անթոլոգիաներ հրատարակելու դժվարին ու պատասխանատու գործում դառնում են ղեկավար սկզբունք: «Հայկական պոեզիա» անթոլոգիան լույս տեսավ մեծ գրողի մահից հետո, բայց նրա անմահ անունն անխզելիորեն կապված է ոչ միայն այդ անթոլոգիայի, այլև հայ կուլտուրայի ուրիշ շատ կարևոր նախաձեռնումների հետ:

Սովետական Հայաստանի ժողովուրդը, կառավարությունը, ինտելիգենցիան մեծ երախտիքով են հիշում Մաքսիմ Գորկու մեծագույն ծառայությունները հայ կուլտուրային: Հայաստանի դպրոցների, գործարանների, քաղաքների, փողոցների, ակումբների, պիոներական կոլեկտիվների մի ամբողջ շարք կրում են մեծ Գորկու անունը: Հայաստանի երիտասարդությունը մեծ սիրով է ուսումնասիրում հանճարեղ գրողի երկերը և ուշադրով ու հետաքրքիր զեկուցումներ, դասախոսություններ կազմակերպում նրա մասին:

Մաքսիմ Գորկին ամենասիրված գրողն է Սովետական Հայաստանում:

Միայն հայկական կուլտուրան չէ, որի զարգացմանն ուշադրությամբ հետևում և օժանդակում էր Մաքսիմ Գորկին: Այդպիսի մեծ դեր նա կատարել է նաև ուկրաինական, բելոռուսական, ադրբեջանական, վրացական, լատվիական և Սովետական Միության մյուս եղբայրական ժողովուրդների կուլտուրայի հանդեպ:

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ

Սովետական ժողովուրդների գրականությունների ծաղկումն ու բարգավաճումը սերտորեն կապված է Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու պայծառ անվան հետ։ Մեծ ու անգնահատելի է նրա ազդեցությունը և նշանակությունը ոչ միայն ռուս, այլև սովետական բոլոր ժողովուրդների նոր, սոցիալիստական կուլտուրայի ու գրականության ստեղծման ու զարգացման գործում։

«Գորկու գեղարվեստական խոսքի ազդեցությունը մեր ռևոլյուցիայի ճակատագրի վրա,— ասում է ընկեր Մոլոտովը,— ավելի անմիջական և ուժեղ է, քան մեր որևէ մի այլ գրողի ազդեցությունը։ Դրա համար էլ հենց Գորկին է, որ հանդիսանում է պրոլետարական սոցիալիստական գրականության իսկական նախահայրը մեր երկրում և ամբողջ աշխարհի աշխատավորության աչքում»։[1]

---

[1] В. М. Молотов — Статьи и речи. Москва, 1937 г., стр. 238—239.

Մաքսիմ Գորկու ազդեցությունը հատկապես ցայտուն կերպով նկատելի է 20-րդ դարի հայ առաջավոր գրականության վրա։ Գորկին պրոլետարական-ռևոլյուցիոն հայ գրողների դրոշն է եղել, նրանց ստեղծագործական ձրգտումների գագաթը։

Պրոլետարական հայ գրականության հիմնադիր պոետ-բոլշևիկ Հակոբ Հակոբյանը Մաքսիմ Գորկու ռևոլյուցիոն իդեաների ու գեղարվեստական հանճարեղ խոսքի լավագույն պրոպագանդիստն է եղել հայ իրականության մեջ։

Հակոբյանը, իր գրական գործունեությամբ սերտորեն կապված լինելով Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման հետ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել բոլշևիկյան պարտիայի աշխատանքներին։ Հակոբյանի մարտական պոեզիան ամրապնդվել ու զարգացել է ռևոլյուցիոն փոթորիկների ու բոլշևիկյան վսեմ գաղափարների բեղմնավոր ազդեցության տակ։ Բոցաշունչ բոլշևիկներ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը բարձր են գնահատել Հակոբ Հակոբյանի դերը պրոլետարական հայ գրականության ստեղծման ու զարգացման գործում։ Որպես ռևոլյուցիոն պոետ, Հակոբյանը լայնորեն ճանաչված է նաև ռուս և եղբայրական մյուս ժողովուրդների գրականության մեջ։

Բնորոշելով Հակոբյանի պոեզիան, Ա. Լունաչարսկին գրում է. «Հակոբ Հակոբյանի ստեղծագործության ամենաօրիգինալ կողմը սկզբից ևեթ եղել է, իհարկե, այն, որ նա ոչ միայն բանաստեղծ-ռևոլյուցիոներ էր— բանաստեղծ ռևոլյուցիոներներ եղել են և ռուս և եվրոպական գրականության մեջ— այլ այն, որ նա սոցիալ-դեմոկրատ բանաստեղծ էր՝ բառի այն ժամանակվա

լավագույն իմաստով, բոլշևիկ բանաստեղծ էր, պրոլետարական բանաստեղծ... Նրա պոեզիայի ազդեցությունը վաղուց արդեն սկսել է տարածվել Հայաստանի սահմաններից դուրս»:[1]

Հակոբ Հակոբյանը Գորկու հանճարի ջերմ երկրպագուներից մեկն էր: Գորկու ամեն մի նոր ստեղծագործություն խորը տպավորություն էր թողնում ու անսահմանհիացմունք պատճառում Հակոբյանին: Այդ ստեղծագործությունները նոր իդեաներ, նոր մտահղացումներ էին առաջացնում նրա մեջ: Հոկտեմբերյան ռևոլյուցիայից դեռ շատ առաջ, Գորկու «Մրրկահավի» առթիվ Հակոբյանը, իր ընկերներից մեկին ուղղած նամակում, գրում է. «Ձեր նամակը Գորկու «Մրրկահավի» մասին ինձ շատ ոգևորեց և երևակայեցեք, նույնիսկ մի ոտանավորի նյութ տվեց ձեր խոսքերով իսկ: Այո, համարյա թե ձեր տված միտքը դրել եմ գեղարվեստական ձևի ու չափի տակ և ձուլել մի լավ դրամա, որ պիտի տեղի ունենա երկրի և երկնքի տարերքի մեջ ու կհաղթանակի անկասկած ուժեղը... Այսինքն ծովը փոթորկված... ընկլված է այսպես՝

Լուր եմ բերել ձեզ հյուսիսից
Աշխատավոր արծիվների այն մեծ բնից.
Նրանք ապրող և մխիթար իմ սիրահար
սրտի համար
Նրանք հարթող և ձեզ համար լայն
ճանապարհ...

[1] Акоп Акопян — *Новое утро* (Избранные стихотворения и поэмы). С предисловием А. Луначарского, Москва, 1928 г., стр. 5—8.

Արծիվներն այն սկսել են թևեր լարել
Լայն ու թափոտ խիզախ վեհեր
Ճախրի համար
Երևում են, երևում են մրրկահավեր.
և այլն...»։

Հակոբյանի համար Գորկու վաղ շրջանի ռևոլյուցիոն ռոմանտիկան ստեղծագործական ոգեշնչման անսպառ աղբյուր հանդիսացավ։ Հակոբյանի բանաստեղծություններում ուժեղ կերպով նկատելի են ոչ միայն Գորկու ռևոլյուցիոն գաղափարների, այլև նրա ռևոլյուցիոն ռոմանտիկության և ռևոլյուցիոն պաթոս ու թափ արտահայտող հարուստ բառապաշարի ազդեցությունը։ Հակոբյանի բանաստեղծությունների մեջ ուժգնությամբ են սկսում հնչել գորկիական «մրրիկը», «ամպրոպը», «որոտը», «ցասումը» և այլն։ Այդ տեսակետից հատկապես բնորոշ է Հակոբյանի 1905 թվի ռևոլյուցիոն բանաստեղծությունների շարքը։ Բերում ենք այդ շարքից «Հեղափոխություն» բանաստեղծության մի հատվածը.

Լսե՞լ ես, ընկեր, ըմբոստ երկնքում կոչը որոտի,
Որ գղրգում է որպես մի պայթյուն մեծ թնդանոթի.
Տեսե՞լ ես ինչպես ամպերի կրծքին կայծակը զիգ-զագ
Իր լիզն է մխում փութկոտ, շեշտակի ու ցնցում աշխարհը.
Կամ ինչպես թափով ծառս-ծառս է լինում ցասկոտ փոթորիկ
Հսկա ծառերին չորև-չոր անում, դարձնում խաղալիք,
Մինչ որ անցնում է հեղեղը վայրագ և ինչպես փրկանք՝
Ծանր երկունքից ազատում աշխարհը.
Բնությունը հաղթ ժպտում է ապա պայծառ արևգին—
Որպես պատասխան չար արհավիրքին...

Հակոբյանը հոդվածներ է գրել Գորկու ստեղծագործությունների մասին, թարգմանել նրա առանձին գործե-

րը։ Այսպես, օրինակ՝ 1909 թվին Գորկու «Հատակում»-պիեսի հայերեն բեմադրության առթիվ հանդես գալով մամուլում, նա ջերմորեն ողջունում է այդ բեմադրությունը։

1914 թվին Հակոբյանը թարգմանում է Գորկու իտալական հեքիաթներից երկու կտոր և հրատարակում առանձին գրքով։

Հակոբյանը, Գորկուն նվիրած իր մի հոդվածում, հետևյալ կերպ է բնորոշում նրա ստեղծագործությունների դերն ու նշանակությունը մասսաների ռևոլյուցիոն դաստիարակության գործում. «Մաքսիմ Գորկին հեղաշրջեց մեր դարի ամբողջ գրականությունը, մեր դարի նոր սերունդի մտքերն ու հայացքները, նրա սպասելիքներն ու ակնկալումները... նրա գործերը հիմնովին բողոք են ցարական ռեժիմի դեմ, նրա ամեն մի տողի տակ թաքնված են ցասումն ու զայրույթը տիրող կարգերի դեմ, կապիտալիստական բռնակալության դեմ... Մաքսիմ Գորկին եթե ոչինչ էլ գրած չլիներ, բավական էր նրա «Մրրկահավի երգը», նրա «Ստրաստի Մորդաստի» արձակ պոեմները, ապա նրա «Հատակում» պիեսը, նրա «Մայրը», որ հեղաշրջեց մի աբողջ սերունդ, ոտքի հանեց մի ամբողջ դար ընդդեմ ցարական բռնակալության ու տիրող դասակարգի վակխանալիայի։ Այդպես է լինում հեղափոխական խոսքի ու գեղարվեստի հմայքը»։[1]

Անդրադառնալով Գորկու գեղարվեստական երկերի կերտման վարպետությանը, այդ երկերի հմայքին ու ուժին, Հակոբյանը գրում է. «Խոսքի ու մտքի ամենամեծ

---

[1] «Պրոլետար», № 140, 1936 թ.։

վարպետի հումանիստար հոգու են բյուրեղյա ակունքների խորությունն ու հստակությունը, որի մեջ երբ մարդ տեսնում է իր պատկերը, հրճվում է, թարմանում ու ինքն էլ բյուրեղանում հոգով»։[1]

Սովետահայ արձակի ականավոր ներկայացուցիչ Արազին, որ Գորկու գրական տրադիցիաների լավագույն շարունակողներից մեկն է հայ գրականության մեջ, տարիներ առաջ, հայերեն է թարգմանել Գորկու հանճարեղ տրիլոգիան— «Մանկություն», «Ծառայության մեջ», «Իմ համալսարանները»։

Արազին դեռևս ռևոլյուցիայից շատ առաջ, Հակոբյանի հետ միասին, հսկայական աշխատանք է կատարել՝ հայ իրականության մեջ Գորկու ստեղծագործությունները մասսայականացնելու և նրա թշնամիներին ջախջախելու գործում։ Արազու հարուստ գրական կյանքում Գորկին, որպես ստեղծագործող ու քաղաքացի, միշտ էլ ուղեցույց աստղի դեր է կատարել։

Սոցիալական անհավասարությունը, աշխատավոր մասսաների շահագործումն ու ճնշումը և այդ մասսաների ռևոլյուցիոն պայքարը գրականության մեջ արտացոլելը, այդ բոլորն Արազին սովորել է Գորկուց։ Ընչազուրկ, կյանքի բարիքներից զրկված ու կապիտալիստական ծանր ճնշումից փողոց նետված հազարավոր մարդկանց ճակատագիրը խորը հուզել ու զբաղեցրել է Արազուն։ Այդ բոլորն իր ստեղծագործություններում գեղարվեստորեն ճիշտ ու բազմակողմանի պատկերելու մեջ Արազին միշտ աչքի առաջ է ունեցել Գորկուն։

Գորկին իր հերթին ճանաչում էր Արազուն և լավ

---

1 «Պրոլետար», № 140, 1936 թ.։

կարծիք է հայտնել նրա գրվածքների մասին: 1929 թվին, Իտալիայում, Գորկին նայելով „Советская страна“ ալմանախի նյութերը, որի խմբագիրն էր հանդիսանում ինքը— ալմանախի արձակի բաժնից հավանում է միայն երկու պատմվածք— մեկը վրաց նշանավոր գրող Սուլխաշվիլու պատմվածքն էր, մյուսը՝ Արազու «Ընկ՛ր Մուկուչը» պատմվածքը: Գորկին այդ երկու պատմվածքների թարգմանությունը խնամքով խմբագրելուց հետո, ալմանախի մյուս նյութերի հետ միասին, ուղարկում է Մոսկվա՝ խմբագրության, իր մի նամակի հետ, որի մեջ կարդում ենք հետևյալ տողերը՝ «Բացառությամբ Սուլխաշվիլու և Արազու պատմվածքների, մնացած բոլորն այնպես են գրված, կարծես թե նրանց հեղինակները 19-րդ դարի 70-ական թվականների օդով են շնչում, իսկ այն մասին, որ օրացույցը ցույց է տալիս 20-րդ դարի երկրորդ քառորդը և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 12-րդ տարին, հեղինակներին ոչինչ հայտնի չէ»:

Հայ պրոլետարական արձակի մի ուրիշ ներկայացուցիչ, Մադաթ Պետրոսյանը, գրում է Գորկու մասին. «Երբ Թիֆլիսում հրատարակվող «Կավկազ» թերթում լույս տեսավ նրա առաջին պատմվածքը՝ «Մակար Չուդրան»— դա առիթ տվեց ինձ՝ նետվելու պրոլետարական գրականության ասպարեզ: Այնուհետև Մաքսիմ Գորկին դարձավ իմ սիրելի և ամենամեծ ուսուցիչը: Ես ամբողջապես ապրում եմ նրա գրվածքներով: Ոգևորված ու խորապես հուզված նրա երկերով՝ ես նրանց ընթերցման ժամանակը զգում էի կյանքիս ամենաերջանիկ րոպեները: Մաքսիմ Գորկին ամեն անգամ իր հսկայական

հասակով գալիս կանգնում էր մտքիս աչքերի առջև, և ես իմ հոգու խորքում սիրում, փայփայում էի նրան»:[1]

Գրող-դրամատուրգ Դերենիկ Դեմիրճյանն իր գրական գործունեության ընթացքում բազմիցս խոսել է Գորկու մասին: Նա առանձնապես նշել է Գորկու ստեղծագործությունների համամարդկային նշանակությունը, որ նա, որպես մարտնչող գրող ու քաղաքացի, ունի ամբողջ աշխարհի պրոլետարիատի աչքում: Դեմիրճյանը գրում է. «Ժամանակակից գրողներից ամենամեծը եղավ Մաքսիմ Գորկին, որի խոսքը համաշխարհային արձագանք էր տալիս: Նրան լսում էին ու հավատով լցվում Եվրոպայի, Ամերիկայի և այլ երկրների բազմամիլիոն բանվորները, նրան լսում և սարսափով էր բռնվում բուրժուազիան: Մաքսիմ Գորկու գեղարվեստական երկերը, նրա վեպերն ու դրամաները, նրա հոդվածներն ու նամակները, նրա անձնավորության հմայքն ու հեղինակությունը— այս բոլորը մի դինամիտ էր, որ պատրաստում էր հոդս ցնդեցնելու կապիտալիստական աշխարհը աննախընթաց ուժով»:[2]

Դեմիրճյանի վրա խոշոր ազդեցություն է թողել Գորկու ստեղծագործությունների ժողովրդայնությունն ու հումանիզմը: Անդրադառնալով Գորկու ստեղծագործությունների այդ առանձնահատկություններին, Դեմիրճյանը գրում է. «Ինչո՞ւմն էր Մաքսիմ Գորկու այդ անօրինակ ուժը: Ինչո՞վ էր Մաքսիմ Գորկին սնում իր կարողությունները իր երկարատև կյանքի բուռն փոթորիկներում: Դա ժողովրդի ուժն էր: Նրանից վերցրեց մեծ

[1] «Պրոլետար», № 141, 1936 թ.:

[2] «Գրական թերթ», № 15, 1938 թ.:

գրողն ապրելու, կռվելու, ստեղծելու հանճարը։ Նրանցից սովորեց լավատես լինել, սիրել ճշմարտությունը, արդարությունը, աշխատանքը, կյանքի ուրախությունը։ Մաքսիմ Գորկին իր գոյությունը կապեց ժողովրդի հավիտենական կյանքի հետ»։[1]

Սովետահայ ականավոր գրող Ստեփան Զորյանը, որ ռուս կլասիկ և սովետական գրականության լավագույն թարգմանիչներից մեկն է համարվում, հայ գրականության մեջ խոշոր դեր է կատարել ռուսական կուլտուրայի պրոպագանդայի և երկու ժողովուրդների կուլտուրական կապի մերձեցման գործում։ Նրան է պատկանում Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի չորս հատորի, Տուրգենևի, Գարշինի և ռուս մյուս կլասիկների երկերի թարգմանության պատիվը։ Զորյանն առաջինն էր, որ սովետական շրջանում հավաքեց Մ. Գորկու ընտիր պատմվածքների հայերեն թարգմանությունները ու 1928 թվին երկու հատորով հրատարակեց այն։

Հայտնի է, որ Գորկու հատկապես «Մայրը» հսկայական ազդեցություն է ունեցել ոչ միայն ռուս, այլ նաև մյուս բոլոր ժողովուրդների գրականության վրա։ Պավել Վլասովի և հատկապես Պելագեյա Նիլովնայի հուզիչ կերպարները ոգեշնչել և ռևոլյուցիոն գործունեության ասպարեզ են նետել հազարավոր կանանց ու երիտասարդների։

Գորկու «Մայրը» իր բարերար ազդեցությունն է ունեցել նաև Ս. Զորյանի ստեղծագործությունների վրա։ Հատկապես ակնհայտ է այդ ազդեցությունը Զորյանի

1 «Գրական թերթ», № 15, 1938 թ.։

լավագույն գործերից մեկի՝ «Գրադարանի աղջիկը» վիպակի վրա։

Վիպակի կենտրոնական դեմքերն են՝ լվացարարուհի մայր Աննան և նրա աղջիկը՝ Վիկտորիան։ Դպրոցն ավարտելուց հետո Վիկտորիան աշխատում է գրադարանում։ Այդ աշխատանքը հնարավորություն է տալիս Վիկտորիային համառ ու սիստեմատիկ կերպով ընթերցանությամբ զբաղվելու։ Նա կարդում է նաև արգելված ռևոլյուցիոն գրականություն։ Ընդլայնվում է նրա տեսադաշտը և հասարակական կյանքի ճանաչողությունը։ Կապ հաստատելով բոլշևիկյան կենտրոնի հետ, նա տեղում ծավալում է ռևոլյուցիոն ակտիվ գործունեություն— տարածում է բոլշևիկյան թերթեր, գրականություն։ Վիպակի սյուժեն առանձնապես լարվում է մայիսմեկյան ցույցից հետո։ Այդ ցույցին նախապատրաստվում է Վիկտորիան իր ընկերների հետ միասին։ Ռևոլյուցիոն այդ գործունեության ընթացքում Վիկտորիան ամենուրեք կենտրոնական դեմք է, նա է վերջապես, որ կարմիր դրոշը ձեռքին մայիսմեկյան օրը կրակոտ ճառ է ասում, որի հետևանքով ձերբակալվում ու բանտ է նետվում։

Ինչպես տեսնում ենք, վիպակի սյուժեն որոշակի հիշեցնում է Գորկու «Մայրը»։ Ինչպես Գորկու մոտ վեպի կենտրոնական դեմքերը մայրն ու իր տղան՝ Պավելն է, նույնը Զորյանի մոտ, դարձյալ մայրը և նրա աղջիկը՝ Վիկտորիան։

Մոր կերպարը Զորյանի մոտ ավելի դժգույն, հետամնաց ու սահմանափակ է և չունի ռևոլյուցիոն այն շրջապատն ու տեսադաշտն, ինչպիսին ունի Պելագեյա Նիլովնան։ Դա բնական է և բացատրվում է այն իրականու-

թյան հետամնացությամբ, ուր գործում են Զորյանի վիպակի հերոսուհիները։

Խոսելով Գորկու ազդեցության մասին, ներկա դեպքում մենք նկատի ունենք ոչ այնքան առանձին էպիզոդների, դիպվածների կամ կերպարների նմանությունը, այլ ռևոլուցիոն այն սիտուացիան ու պաֆոսը, որ երկու դեպքում էլ անհուն հավատ են ներշնչել նրանց կենտրոնական դեմքերին՝ Պավելին ու Վիկտորիային, իրենց արդար գործի հաղթանակի նկատմամբ։

Գորկու մասին գրած իր հետաքրքիր հուշերում Զորյանը պատմում է 1928 թվին Գորկու հետ ունեցած հանդիպման մասին. «Երբ մեր Լուսժողկոմը, այժմ հանգուցյալ Ա. Մռավյանն ինձ ծանոթացրեց Ալեքսեյ Մաքսիմովիչին, ասելով, որ ես խմբագրել եմ նրա՝ Գորկու պատմվածքների հայերեն հրատարակված երկու հատորը, Ալեքսեյ Մաքսիմովիչը, ուշադիր ու ժպտերես նայելով, ասաց իր թավ ձայնով.

— Այ, երբ ձեզ թարգմանեն՝ ես էլ փոխարենը ձեզ կխմբագրեմ ռուսերեն,— և մենք կվիտ կլինենք։

Ու ծիծաղեց։

Այնուհետև խոսք բացվեց մեր գրականության մասին։

Ինչպես հայտնի է, Ալեքսեյ Մաքսիմովիչը 1916 թվին խմբագրել էր „Сборник армянской литературы“; ուստի և ծանոթ էր մեր գրականության պատմությանը, ծանոթ էր և մեր գրականության կարևոր երկերի հեղինակներին։ Եվ այստեղ՝ Երևանում ահա, զրույցի միջոցին նա զարմացրեց ինձ իր սուր հիշողությամբ. նա մտաբերում էր ոչ միայն հեղինակների անունները, ոչ

միայն նրանց երկերի վերնագրերը, այլև դրանց բովանդակությունը։

Խոսելով Շիրվանզադեի «Քաոս»-ի մասին՝ նա հետաքրքրվեց, թե ինչ նոր բան է գրում մեր խոշորագույն վիպագիրը։ Երբ հայտնեցին, թե մի կոմեդիա հայ էմիգրանտների կյանքից,— Գորկին նկատեց.

— Այդ նա կարող է անել, ճանաչում է նրանց։ Старик может

Պիեսների մասին խոսելիս՝ խոսք բացվեց և Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ի մասին և ասվեց, թե դա մի հեքիաթ է, որ մշակել են մեր երեք անվանի հեղինակները։

Ալեքսեյ Մաքսիմովիչին շատ հետաքրքրեց այդ երևվույթը և նա ուզեց ծանոթանալ հեքիաթի բովանդակությանը։ Մոտավորապես իմանալով ինչ բնույթի հեքիաթ է՝ նա ցանկություն հայտնեց ունենալ այդ գրքերը՝ հեքիաթին ավելի մոտից ծանոթանալու»։

Զորյանը մի շարք էպիզոդներ է պատմում այն ջերմ ընդունելության մասին, որ ամենուրեք ցույց էր տալիս հայ աշխատավոր ժողովուրդը իր սիրելի ու մեծ գրողին։ «Ջերմ ընդունելություն էին ցույց տալիս Ալեքսեյ Մաքսիմովիչին ամեն տեղ,— գրում է Զորյանը,— իսկ խաղողի սովխոզում, ուր մեր կառավարությունը ճաշ տվեց Գորկուն,— այդու բանվորներն ու աշխատավորներն ինքնաբերաբար թարմ խաղողից ու ծաղիկներից կամար էին շինել ի պատիվ թանկագին հյուրի, կամարի վրա գրելով հայերեն ու ռուսերեն.

— Ողջույն սիրելի Գորկուն։

Խաղողի այգիների ընդարձակ, միապաղաղ կանաչության մեջ բարձրանում էր երկհարկանի մի գեղեցիկ տուն, որի մի պատշգամբից երևում էին զույգ Արարատ-

ները՝ մեկը բարձր ու ձյունապատ, մյուսը մի քիչ ցած ու կանաչ, ինչպես մի վիթխարի ալեհեր հսկա պապ իր թոռան հետ։ Չնայած շոգին ու շրջագայությունից հոգնած լինելուն՝ Ալեքսեյ Մաքսիմովիչը, ծխելով, հափշտակված նայում էր բիբլիական զույգ սարերին և իր որդուն՝ Մաքսիմին պատմում Նոյի տապանի լեգենդը։

— Այ քեզ գեղեցկություն։ Նայելն անգամ զովացնում է. շոգ չես զգում և հոգնածությունդ անցնում է»։[1]

Երկրորդ անգամ Զորյանը Գորկուն հանդիպում է 1934 թվին, Մոսկվայում՝ գրողների առաջին համագումարում։ Զորյանը պատմում է, որ համագումարը ողջունելու էին գալիս մայրաքաղաքի և շրջանների բազմաթիվ կազմակերպություններ և դրանց թվում Ակուլովկա քաղաքում գտնվող թղթի մեծ գործարան-կոմբինատի բանվորության դելեգացիան, որը և համագումարին նվիրում է հինգ վագոն թուղթ։ Ապա Զորյանը շարունակում է. «Ահա այս դելեգացիան պատճառ եղավ, որ ես նորից հանդիպեմ Գորկուն։ Համագումարը այդ կարևոր գործարանի բանվորությանը փոխադարձ ողջույն և շնորհակալություն հայտնելու համար ընտրեց երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն, որի մեջ մտնում էին երեք գրող՝ մի ռուս, մի ուկրաինացի և ես։ Եվ այն ժամանակ, երբ ես ընտրությունից հետո, նիստի դահլիճում նստած մտածում էի, թե ո՞րտեղ է արդյոք այդ քաղաքը, և ի՞նչպես պետք է գնալ այնտեղ, հանկարծ մի ռուս երիտասարդ մոտեցավ ինձ, թե՝

— Ալեքսեյ Մաքսիմովիչը ձեզ խնդրում է։

Ես տարակուսած նայեցի այդ երիտասարդին ու հարցրի, թե նա չի՞ սխալվում արդյոք։

[1] «Սովետական գրականություն», № 5—6, 1941 թ.։

Ոչ։ Պարզվեց, որ չի սխալվում։ Եվ ես հետևեցի նրան, դարձյալ մտածելով, թե Գորկին ինչո՞ւ պետք է կանչեր ինձ, ի՞նչ կա արդյոք։ Ու այս տարակույսներով գնացի— մտա այն սրահը, ուր հավաքվում էին համագումարի նախագահության անդամները՝ ծխելու կամ հանգստանալու։

Գորկին մի բազմոցի վրա նստած՝ ծխում էր։ Երբ ինձ առաջնորդեցին նրա մոտ— նա, այդ գրեթե ծեր մարդը, տեղից վեր կացավ և ինձ ընդունեց իբրև հին ծանոթի, մի բան, որ ինձ շատ զարմացրեց. ի՞նչ հիշողություն էր։ Նա չէր մոռացել Երևանի մեր հանդիպումը։

— Մենք հին ծանոթներ ենք, ասաց,— չեմ մոռացել Երևանը, խաղողի այգիները։ Ինչո՞ւ չեք երևում... Համագումարից հետո խնդրում եմ շնորհ արեք տուն...

Ես շտապեցի շնորհակալություն հայտնել այդ սիրալիրության համար, մտածելով, այնուամենայնիվ, թե արդյոք ինչո՞ւ է կանչել ինձ։

Եվ տարակուսանքս շուտով պարզվեց.

— Գիտե՞ք,— ասաց նա,— Ակոպլյակա պետք է գնաք այս երեկո, որովհետև վաղն այնտեղ բանվորների և թուղթ պատվիրող հիմնարկների ներկայացուցիչների կոնֆերանս է։ Լավ կլինի ներկա լինեք բացմանը և ողջունեք։ Խնդրում եմ՝ իմ կողմից ևս շնորհակալություն հայտնեք բանվորներին՝ իրենց թանկագին նվերի համար... Գնացեք, չեք զղջա։ Այնտեղ կտեսնեք շատ լավ բաներ։ Բայց չմոռանաք հետներդ կալոշ և պլաշչ վերցնել։ Անձրև շատ է գալիս այնտեղ... Եթե պլաշչ չունեք՝ կարելի է կարգադրել...

Այս խոսակցության ընթացքում, այս մանրուքները

մեջ ես նկատեցի Գորկու զարմանալի հոգածությունը թե դեպի գործը, և թե դեպի մարդն առհասարակ»։

Բանաստեղծ Նաիրի Զարյանը Գորկու մեջ տեսել է ռևոլյուցիոն փոթորիկների մեծ երգչին ու բարձր գնահատել նրա երկերի պատմականությունն ու իդեականությունը, երկեր, որոնց դերը միլիոնավոր մասսաների կազմակերպման ու դաստիարակման գործում չափազանց մեծ է։ «Գորկու գաղափարները,— գրում է Զարյանը,— անթիվ կախարդական թևերի պես ձգված են սրտից սիրտ և իրար են շաղկապել երկրագնդի բոլոր ժողովուրդներին։ Գորկին մի գագաթով բարձրացրեց մարդկության գեղարվեստական զարգացումը։ Նա ռուս մեծ ժողովրդի պարծանքն է, ողջ մարդկության պարծանքը»։[1]

Իր հոդվածներում ու ելույթներում Զարյանը բազմիցս նշել է Գորկու մեծ դերը սովետական ժողովուրդների գրականության զարգացման գործում։ «Մեծ են Գորկու հայրական ծառայությունները,— գրում է Զարյանը,— մասնավորապես փոքր ժողովուրդների առաջ։ Սովետական Միության մեջ չկա մի ժողովուրդ, որի հակատագիրն ու կուլտուրան չդառնար Ալեքսեյ Մաքսիմովիչի ուշադրության առարկան»։[2]

Գրող Սիրասը ընդգծում է Գորկու հումանիզմը, նրա հայրենասիրությունը։ «Գորկու հումանիզմը,— գրում է Սիրասը,— ատելությունը դեպի կապիտալիզմը, սովորեցնում է մեզ սիրել, նվիրված ու անհուն սիրով սիրել մեր ազատ սովետական հայրենիքը, նոր մարդուն,

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 73, 1938 թ.։
[2] Նույն տեղում։

մարդկությանը ամեն տեսակ շահագործումից ազատող մարդուն»:[1]

Աշխարհի մեծանուն գրողներից և ոչ մեկը, թե իր ստեղծագործություններով և թե իր գրական ու հասարակական գործունեությամբ, սովետահայ իրականության մեջ այնպիսի անսահման հմայք չի ունեցել, այնպիսի սրտաբուխ սեր չի վայելել, ինչպես Մաքսիմ Գորկին:

Այդ անսահման հմայքը, սերը հանճարեղ գրողի, անմահ մրրկահավի հանդեպ արտահայտել են հայ բանաստեղծներից շատերը Մաքսիմ Գորկուն նվիրած իրենց բազմաթիվ բանաստեղծություններում:

Այդ բանաստեղծությունների մեջ առանձնապես ուշադրության արժանի է Գեղամ Սարյանի «Մրրկահավը»: Գեղամ Սարյանը մեր այն բանաստեղծներից է, որ իր ստեղծագործություններում բազմիցս երգել է ռուս մեծ ժողովրդին, որպես հայ ժողովրդի ազատարարի, երգել է ռուս ժողովրդի հանճարեղ զավակներին: Երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը Գեղամ Սարյանի սիրած թեմաներից մեկն է: Գորկուն նվիրած, խորը ոգեշնչմամբ գրված բանաստեղծության մեջ Գեղամ Սարյանը մրրկահավի կերպարում երգում է մեծ ռևոլյուցիան: Ահա այդ բանաստեղծությունը.

Ճախրեց երկինքներում մրրկահավն հզոր,
Եղավ մրրիկների հոգին բարձունքներում,
Իր սուր հայացքով նա կարդաց գալիքը նոր,
Չմոլորվեց երբեք մռայլ, մութ ամպերում.
Կայծակ սվիններին հանձնած կուրծքը իր՝
Մրրկահավն երգեց բարձունքների վրա:

---

1 «Խորհրդային գրականություն», № 6—7, 1938 թ.:

Եվ թափանցեց երգն այդ սրտերի մեջ մարդկանց,
Դարձավ ըմբոստության ոգի երակներում
Որպես հզոր արև՝ ընկեր դարձավ նրանց,
Որոնք ճշմարտության ուղին էին փնտրում.
Մրրկահավն անդուլ իր թևերով ահա
Սավառնում էր նրանց հոգիների վրա։

Եվ նա երգում էր դեռ, երգում խիզախ, անդուլ,
Մտնում էր նա հյուղեր և նկուղներ խորին,
Մարդկանց հոգիների քար խավարն էր քանդում,
Մրրիկների հզոր երգը շրթունքներին.
Մռայլ ամպեր էին կախվում երկրի վրա,
Հնչում էր դեռ խրոխտ հնչուն երգը նրա։

Եվ մրրիկը ճայթեց։ Ահավոր մի ամպրոպ
Պայթեց երկրի վրա, խառնվեց երկինք, երկիր,
Որպես տիեզերքի սրտի ահեղ տրոփ
Թնդաց հզոր ձայնը մրրկահավի երգի.
Ու դուրս ելան մարդիկ մարտնչումով համառ,
Կորած արեգակը որոնելու համար։

Ու մինչև արևը վառ, արյունափայլ, բոսոր,
Բարձրանում էր երկրի հորիզոնի վրա,
Սավառնում էր նա դեռ, մրրկահավն հզոր,
Նոր ցնծության երգեր շրթունքներին իրա,
Հայացքն ուղղած դեպի արևմուտքը հեռու,
Նա նոր մրրիկների ավետիս էր բերում։

Սակայն չկա արդեն մրրկահավն արի,
Կայծակներից խանձված իր թևերով նկուն,
Հանձնած իր ողջ կյանքը հրի ու պայքարի,
Նա ընդունեց մահվան բաժակը դառնացույն.
Մրրիկների երգը շրթունքներին իրա,
Մրրկահավն ընկավ իր բարձունքի վրա։

Ապրում է, բայց երգը, չի մարելու երբեք,
Թափանցելու է նա նոր դարերի հեռուն,
Լինելու է նա նոր մրրիկների մի երգ՝
Արևմուտքի մառայլ, խավար երկինքներում.
Որպես հզորաշունչ մրրիկների ոգի՝
Անթիվ բանակներ է հանելու դեռ ոտքի։

Բանաստեղծ Գուրգեն Բորյանը երախտապարտական կրքով ու ավյունով և ոգևորության մեծ թափով է երգում Գորկուն։ Նրա լավագույն ստեղծագործություններից մեկն է Գորկուն նվիրած «Խիզախ մրրկահավը» բանաստեղծությունը։ Բորյանին հաջողվել է Գորկուն պատկերել որպես «մարդկության տիտան, արև լուսագորով, խիզախ մրրկահավ»։ Նա ցույց է տալիս պայքարի այն դաժան ու դժվարին ուղին, որով անցել է Գորկու «որոտաձայն երգը»։ Նա երգում է Լենինի, Ստալինի ու Գորկու բարեկամությունը, ինչպես և սերունդներին թողած հանճարեղ երգչի անմահ ստեղծագործությունները։ Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Եղար ազնիվ ու մեծ, Դանկոյի պես հզոր,
Հավատարիմ՝ անմահ, Լենինյան վեհ խոսքին։
Հոգով անհուն ու խոր, երգով հրաբոսոր,
Դու սիրեցիր անմար Ստալին արեգակին։
Թշնամու դեմ եղար դու անսասան, անդող,
Նրա թունոտ գլխին միշտ քո սուրն էր շողում,
Չպետք է շունչ քաշի ոչ մի անարգ ոսոխ,
Մեր սրբազան, մեր մեծ Սովետական հողում.
Իժը դարանամուտ, կյանքիդ թելը կտրեց,
Բայց անզոր է, չնչին, նա քո ուժի դիմաց,
Դու քայլում ես ահա կրկին անհաս ու մեծ,
Դու լեգենդ ես դարձել, փարոս երկնասլաց։
Քո հանճարը վսեմ չունի պատնեշ, սահման,

Միլիոնների սրտում քո անունն է հնչում,
Հավերժության պես խոր դու քայլում ես անհ,
Սերունդներին ձուլված դեպի անմահություն...

Բանաստեղծ Սուրեն Վահունին՝ ոգեշնչված Գորկու վաղ շրջանի ռոմանտիկ, ռևոլյուցիոն ստեղծագործություններով, իր «Հուշարձան» փոքրիկ ու գեղեցիկ բանաստեղծության մեջ ծովի փոթորիկների, մրրիկների ու շանթերի կատաղի տարերքում է պատկերում Գորկուն.

Որպես պատվանդան ծովի եզերքին
Ընտրեցեք մի ժայռ, ապառաժ մի լեռ,
Եվ այնտեղ՝ ձուլված հողմերի երգին,
Ամենակործան շանթերից էլ վեր—
Թող հպարտ կանգնի նա բրոնզ դառած,
Եվ ծաղիկների, դափնու փոխարեն
Թող մրրկահավե՛ր գան թևատարած
Ու պատվանդանի բարձունքին թառեն։

Թող մրրկահավե՛ր իջնեն այդ գահին,
Ուր չեն հասնելու Արծիվն ու բազեն,
Եվ թող մրրկի, փորձության պահին
Ծով ու հող նրանց ռազմերգը լսեն...
Եվ թող մեզ թվա, թե խենթ տարերքում,
Դիտելով ծովի խռովքն անդադար,
Այդ նա՛ է հավերժ խնդությամբ երգում—
— Ողջո՜ւյն քեզ, մրրիկ, ողջո՜ւյն քեզ, պայքար։

Էպիքական ջերմ, հուզիչ ու ոգեշնչված տողերով է երգում Գորկուն բանաստեղծ Թաթուլ Հուրյանը։ Նա գիտե, որ դաժան մահը շատ պայծառ անուններ է խլել կյանքից՝

Բայց գործերը նրանց շեփորում են անմահ,
Բայց գործերը նրանց սերունդներ են կռում։

Գորկին անմահ է, նրա ստեղծած խիզախ ու մարտընչող հերոսները կենդանի են և ակտիվորեն մասնակցում են սովետական ժողովուրդների հերոսական հաղթանակների մեծ երթին։ Նրանք մասնակցում են պատմական այն մեծ իրադարձություններին, որ ապրում է այսօր սովետական ժողովուրդը։ Դիմելով Գորկուն, Հուրյանը հուզիչ պատկերներով վերհիշում է նրա ստեղծած դյուցազնական կերպարների անմոռանալի շարքը.

Քո Դանկոյի սիրտը դեռ վառվում է իմ դեմ,
Այնքան խիզախորեն, այնքան պայծառ,
Այնպես հո՛ւրն է լիզում խավարներն անդեմ,
Այդ անտա՛ռն է ձգվում խավարներով անծայր...

Կրակների կողքին ես տեսնում եմ ահա
Ծեր Մակար Չուդրային իմաստասեր,
Սիրտը տված քամուն ու կյանքին հողմահար,
Որ անմար զրույցներ կյանքի մասին ասեց...

Եվ տատ Իզերգիլը իմաստուն ու բարի
Խիզախների մասին հեքիաթներ է ասում,
Որքան տարան զրկանք, հազար սով ու կարիք,
Բայց ապրեցին դարեր, հա՛ր ու արևադուն...

Ես փակում եմ ահա իմ աչքերը նորից...
Եվ քո մայրն է տանում դրոշը արնամած,
Ցասումը սրտի մեջ, և կսկիծը խորին
Մայրական հույզերով ատամներում սեղմած...

Գորկու մահը ցնցում է երիտասարդ բանաստեղծին, անսահման վիշտ ու խոր կսկիծ է առաջացնում նրա հոգում։ Նա գիտե, որ աշխարհի բոլոր ծայրերում աշխա-

տավոր ու ազատատենչ մարդիկ նույնպես սգում են այդ մեծ կորուստը, գիտե, որ Գորկու մահը ողջ առաջավոր մարդկության մեծագույն կորուստներից է, և նա միլիոնների հետ խոնարհում է իր գլուխը Գորկու պայծառ հիշատակի առաջ։

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը «Երգ մրրկահավի մասին» բանաստեղծության մեջ երգում է խիզախ մրրկահավին, որն իր հպարտ կանչով ավետեց ռևոլյուցիայի մեծ փոթորիկը. այդ փոթորիկը եկավ «և կյանքով շնչեց աշխարհը հանկարծ...»։ Այդ աշխարհը ռուսական մեծ ու անծայրածիր երկիրն է, որտեղ ազատաբեր փոթորիկը պայթեց, շղթայազերծ արեց բոլոր կապանքները, խաղաղվեց ծովը և ամենուրեք՝

Այնտեղ, հեռավոր այն հորիզոնում,
Խաղաղված ծովի սահմանից անդին
Ահա ամպեր են նորից ծանրանում,
— Մրրի՜կ, օ՜, մրրի՜կ կլինի կրկին.
Թռչնի աչքերից շանթեր են ցայտում,
Չէ՞ որ մրրիկը այդ կյա՜նքն է նրա.
Եվ հաղթանակի մարգարեն անդուլ
Ճախրո՜ւմ է նորից աշխարհում արար.
Ճախրո՜ւմ է, սուրում՝ խիզախ ու հզոր
Եվ կանչում նորեն՝ ձայնով հուրհրան՝
— Թող շուտով պայթի փոթորիկը նոր
Աշխարհի բոլոր ծովերի վրա...

Բանաստեղծ Հենրիկ Թումանյանը իր բանաստեղծության մեջ պարզ ու լիրիկական ջերմությամբ երգում է Գորկու մարտական կյանքը, նրա համամարդկային նշանակությունը և այն մեծ ու անգնահատելի դերը, որ նա կատարել է ժողովուրդների համերաշխության և խա-

ղաղության գործում։ Գորկին խաղաղության մեծագույն դրոշակակիրն էր և պատերազմի հրձիգների կատաղի թշնամին։ Բանաստեղծը գրում է.

Քո խոսքերը հասնում էին
Բոլոր կողմերը աշխարհի,
Ամեն հողում տեսնում էին
Երգիչների հանճարին։

Խաղաղության դրոշն ես միշտ
Հպարտ պահել քո ձեռքին,
Դարձել դու, անմահ Գորկի—
Անմար մի ջահ մեր կյանքին։

Բայց չարանենգ թշնամիներն իրենց արյունոտ ձեռքը բարձրացրին մեծ գրողի ու քաղաքացու վրա։

Ժողովրդի թշնամիները, մարդկության այդ սոր վիժվածքները կտրեցին մեծ գրողի լուսեղեն մտքի թելը, սպանեցին Գորկուն։ Մարդակերների այդ չարանենգ արարքները մերկացվեցին։ Պրոլետարիատի հզոր դիկտատուրան սովետական բազմամիլիոն ժողովուրդների միահամուռ պահանջով հողմացրիվ արեց, առմիշտ ոչնչացրեց օտարերկրյա այդ պնակալեզների ստորաքարշ վարձկաններին, որոնք իրենց ողորմելի գոյությունը պաշտպանելու համար սպանեցին աշխարհի մեծ գրողին.

Բայց ժողովուրդն իր հաղթ կամքով
Ելավ կանգնեց միասին,
Եվ բնաջինջ արեց նրանց
Մեր սուրբ հողի երեսից։

Մաքսիմ Գորկու հիշատակին նվիրած սյուժետային բանաստեղծության մեջ բանաստեղծ Վաղգեն Տալյանը գեղեցիկ կերպով պատկերում է, թե ինչպես «Մայր» վեպի հերոսները՝ Պավելն ու մայրը հաղթական շքերթում համընթաց քայլում են մեր երկրի հերոսների հետ միասին։

Գորկուն երգել են և հայ ժողովրդի տաղանդավոր գուսանները։ Նրանց պարզ ու գեղեցիկ, անհուն ջերմությամբ ու անկեղծությամբ լեցուն ստեղծագործությունները վառ կերպով արտահայտում են ժողովրդական լայն մասսաների սերը դեպի Գորկին և զայրույթն ու ատելությունը՝ դեպի այն մարդակերները, որոնք ձեռք բարձրացրին նրա լուսեղեն կյանքի վրա։ Աշուղ Աշխույժը հետևյալ բանաստեղծությունն է հյուսել Գորկու մահվան առթիվ.

Այդ հուդայական ոճիրը ստոր
Սև դիմակի տակ հանդեպ մեր Գորկու,
Որին աշխարհն էր սիրում ու հարգում,
Իբրև մեծ գործիչ, քաջ և իմաստուն։
Բայց նենգ թշնամին ստոր, դավադիր,
Վերջ տվեց կյանքին այդ մեծ հանճարի,—
Որ հորդ աղբյուր էր բանաստեղծության,
Եվ արդարության մտքի բանալի։
Մի հանճար վսեմ, որից աշխարհի
Բոլոր ազգերի սիրտն է բաբախում,
Որի գրիչը միշտ խաղաղության,
Սիրո, հաշտության սերմեր էր սփռում։

Գորկուն նվիրված բանաստեղծությունների թիվը շատ է ու բազմապիսի։ Հանձին Գորկու հայ բանաստեղծներն ու գուսանները տեսել են մեր դարի մեծ հումանիստին, ժողովուրդների ազատության հանճարեղ

երգչին ու մեծ քաղաքացուն։ Հայ բանաստեղծները Գորկուն պատկերել են ազատատենչ, խիզախ մրրկահավի ու բազեի սիմվոլիկ կերպարների մեջ։

Սովետական բազմազգ ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մեջ տեսել են ռուս մեծ ժողովրդի մեծ զավակին, որն այնքան խոշոր դեր է կատարել փոքր ու ճնշված ժողովուրդների ազատագրման, նրանց կուլտուրայի զարգացման ու բարգավաճման գործում։

Մ. ԳՈՐԿՈՒ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաքսիմ Գորկու երկերը հայերեն թարգմանվել են սկսվել դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից։ Հայ պարբերական մամուլը լայնորեն բաց է արել իր էջերը մեծ գրողի առաջ։ Թարգմանվել են համարյա նրա բոլոր պատմվածքները, վիպակները, վեպերը ու պիեսները, ինչպես և գրական-քննադատական հոդվածները։ Մինչև այժմ կատարած մեր որոնումներից պարզվել է, որ Գորկու գրվածքներից առաջին հայերեն թարգմանությունը հանդիսացել է «Բազեի երգը», որը Լևոն Թումանյանի թարգմանությամբ տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1899 թվի 4—5 միացյալ համարում։

Գորկու երկերի հայերեն առանձին հրատարակությունները 900-ական թվականներից սկսած լույս են տեսնում Անդրկովկասի, Ռուսաստանի, ինչպես և արտասահմանյան զանազան քաղաքներում։

Գորկու երկերի հայերեն շատ թարգմանություններ

ցարական ցենզուրան արգելել է տպագրել: Այդպիսի փաստեր տեղի են ունեցել Թիֆլիսում, Բաքվում, Պետերբուրգում և այլուր: Բերենք մի փաստ: Գորկու երկերի առաջին հայ թարգմանիչ Լևոն Թումանյանը 1903 թվին թարգմանում է «Բազեի երգի» արտասահմանում լույս տեսած մի ուրիշ վարիանտը՝ «Երգեր» վերնագրով: Այդ վարիանտը նախկիններից տարբերվում էր նրանով, որ նրա մեջ ավելի ուժեղ, պարզ ու որոշակի էր արտահայտված գրվածքի ռևոլյուցիոն նպատակասլացությունը: Հայկական հրատարակությունների Պետերբուրգի գրաքննիչ Դրագոմիրեցկին, Լ. Թումանյանի այդ թարգմանության առթիվ գրած զեկուցագրի մեջ, ասում է. «Նկատի ունենալով միտումնավոր բովանդակությունն այդ գրվածքի, որը մի քանի անգամ արգելվել է ցենզուրայի կողմից, գրաքննողս հնարավոր չի գտնում թույլատրելու հիշյալ ձեռագրի տպագրությունը: Դրա հայկական տեքստը ռուսերեն բնագրի բառացի թարգմանությունն է»:[1]

Չնայած ցարական ցենզուրայի հարուցած բոլոր խոչընդոտներին, այնուամենայնիվ Գորկու երկերն ամենուրեք թարգմանվում ու տպագրվում էին, երբեմն էլ տարբեր վերնագրերով ու առանց հեղինակի անվան հիշատակության:

Գորկու գեղարվեստական երկերի հայերեն թարգմանության զուգընթաց՝ 1905 թվից սկսվում են թարգմանվել նաև նրա հրապարակախոսական ու գրական-քննադատական հոդվածները: Անհրաժեշտ է նշել հատ-

1 С.-Петербургский цензурный комитег. 1903, дело № 185. Заседание комитета 24 апреля 1903 г.

կապես Գորկու ընդարձակ նամակ-հոդվածը «Կովկասյան դեպքերի մասին», որն արգելվեց Ռուսաստանում տպագրվելու. սակայն դրա հայերեն թարգմանությունը 1905 թվին տպագրվեց արտասահմանյան մի շարք հայ թերթերում:

Ուրախությամբ պիտի նշել, որ դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից շատ առաջ Մաքսիմ Գորկու երկերի հայերեն թարգմանության դըժվարին, բայց պատվավոր գործին ակտիվորեն մասնակցում են հայ կլասիկ գրողները՝ Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Հակոբ Հակոբյանը, Նար-Դոսը, ինչպես նաև սովետական անվանի գրողներից Արազին և ուրիշները:

Գորկու մի քանի երկեր հայերեն են թարգմանվել բազմաթիվ անգամ: Հիշատակության արժանի են՝ «Բազեի երգը», որը թարգմանվել է 15 անգամ, «Մրրկահավի երգը»—13 անգամ, «Մայրը»— 4 անգամ, իսկ մի շարք պատմվածքներ՝ 5—8 անգամ: Կան թարգմանություններ, որ վերահրատարակվել են տասնյակ անգամ:

Մինչև հիմա Գորկու երկերից հայերեն լեզվով լույս է տեսել 52 անուն գիրք:

Հայպետհրատը այժմ հրատարակում է Գորկու երկերի ժողովածուն՝ տասը հատորով: Լույս է տեսել արդեն 7 հատոր:

Ստորև բերում ենք Մ. Գորկու երկերի հայերեն առանձին հրատարակությունների ցանկը:

1901 թ.

1. Մի անգամ աշնանը.—*Թարգմ. Ս. Շահումյանի, Թիֆլիս, 18 էջ։*

1902 թ.

2. Ամայի դաշտում.—*Թարգմ. Ս. Խաչակյանի, Ալեքսանդրապոլ, 31 էջ։*

1903 թ.

3. Մակար Չուդրա.—*Թարգմ. Բաբիյանի, Թիֆլիս։*
4. Մտքեր.—*Թարգմ. Հով. Ստեփանյանի, Շուշի, 18 էջ։*
5. Չելկաշ և հին ժամանակի պատմություններ.—*Թարգմ. Մուշե վարդապետի, Մ. Գորկու կենսագրությամբ, Թիֆլիս, 86 էջ։*
6. Քսանվեց տղամարդ և մի աղջիկ.—*Թարգմ. Մուշե վարդապետի, Թիֆլիս, 32 էջ։*

1904 թ.

7. Դանկոյի սիրտը.—*Թարգմ. Դ. Անանյանի, Թիֆլիս։*
8. Պատմվածքներ. *Ա. գրքույկ. բովանդակություն— 1. Ընթերցողը, 2. Տափաստանում, 3. Ձանձրույթից.— Թարգմ. Զ. Ջամբազյանի, Թիֆլիս, 80 էջ։*
9. Պատմվածքներ. *Բ. գրքույկ. բովանդակություն— 1. Մի անգամ աշնանը, 2. Խանը և իր որդին, 3. Ընկերներ.— Թարգմ. Զ. Ջամբազյանի, Թիֆլիս, 47 էջ։*
10. Չարաճճի.—*Թարգմ. Ա. Ա., Պետերբուրգ, 45 էջ։*
11. Դանկոյի սիրտը.—*Թարգմ. Ա. Ա., Թիֆլիս, 16 էջ։*
12. Իմ ուղեկիցը.—*Թարգմ. Ա. Ա., Թիֆլիս, 63 էջ։*

1914 թ.

13. Երկու պատմվածքներ.—*Թարգմ. Հակոբ Հակոբյանի, Թիֆլիս, 15 էջ։*

1922 թ.

14. Ֆոմա Գորդեև.—*Կոնստանտինոպոլ։*

1923 թ.

15. Մ ա յ ր ը.—*Մոսկվա, 308 էջ։*

1926 թ.

16. Երիտասարդ գրողը, մարդը.— Թարգմ. Վ. Ա., Մոսկվա, 25 էջ։
17. Վլադիմիր Իլիչ Լենին.— Թարգմ. Գ. Արով, Երևան։
18. Քսանվեց և մեկ.— Մոսկվա, 29 էջ։

1927 թ.

19. Արտասովորը.— Թարգմ. Ա. Տ. Հ., Մոսկվա, 55 էջ։
20. Մրրկահավի երգը.— Ժողովածու, բովանդակություն.— 1. Մըրրկահավի երգը, 2. Բազեի երգը, 3. Ընկերը, 4. Ծերունին.— Թարգմ Գ. Մելոյանի և Ա. Տ. Հ., Մոսկվա։

1928 թ.

21. Պատմվածքներ.— Հատոր առաջին. բովանդակություն.— 1. Մի անգամ աշնանը, 2. Իմ ուղեկիցը, 3. Տափաստանում, 4. Ընթերցողը, 5. Ձանձրույթից, 6. Ընկերները.— Թարգմ. Ստ. Շահումյանի, Զ. Զամբաքյանի և ուրիշների։ Խմբ. Ստ. Զորյանի, Պետհրատ, Երևան, 129 էջ։
22. Պատմվածքներ.— Հատոր երկրորդ, բովանդակություն.— 1. Դանկոյի սիրտը, 2. Բոլես, 3. Խանը և իր որդին, 4. Զարաձին, 5. Չելկաշ, 6. Արխիպ պապը և Լյոնկան։ Խմբ. Ստ. Զորյանի, Պետհրատ, Երևան, 110 էջ։
23. Հեքիաթներ.— Խմբ. Սիմակի, Երևան, Պետհրատ։

1930 թ.

24. Երբ թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են.— Երևան, Պետհրատ, 16 էջ։
25. Ամբողջ աշխարհի բանվորները և գյուղացիները պետք է ազատեն իրենց կապիտալի իշխանությունից.— Թարգմ. Ա. Հովհաննիսյանի, Կրասնոդար, 8 էջ։

1931 թ.

26. Վ. Ի. Լենին.— Թարգմ. Վ. Փոթեյանի, Երևան, Պետհրատ, 86 էջ։

1932 թ.

27. Ընտիր երկեր.— Հատոր առաջին, Մանկություն.— Թարգմ. Արազու, Երևան, Պետհրատ, 233 էջ։

1934 թ.

28. Ընտիր երկեր.— *Հատոր երկրորդ, Ծառայության մեջ.— Թարգմ. Արազու, Երևան, 334 էջ։*

29. Բանաստեղծություններ և լեգենդներ.— *բովանդակություն— 1. Մրրկահավի երգը, 2. Բազեի երգը, 3. Վալախական լեգենդ, 4. Աղջիկը և մահը, 5. Ստախոս սարյակի և ճշմարտության սիրահար փայտփորիկի մասին, 6. Խանը և իր որդին, 7. Բալլադ կոմսուհի Էլլեն դե Կուրսիի մասին, 8. Իմ թանկագին բարեկամ Լուիջի Յապելլի-ին։ Պետհրատ, Երևան։*

30. Խորհրդային գրականության մասին.— *(Զեկուցում Գրողների համամիութենական առաջին համագումարում), Պետհրատ, Երևան, 120 էջ։*

1935 թ.

31. Մի անգամ աշնանը.—*Թարգմ. Ս. Շահումյանի, Պետհրատ, 38 էջ։*

32. Կլիմ Սամգինի կյանքը.—*Պետհրատ, Երևան, 573 էջ։*

1937 թ.

33. Ընտիր երկեր.—*Հատոր երրորդ.* Իմ համալսարանները. *Թարգմ. Արազու, Պետհրատ, Երևան, 156 էջ։*

34. Պիեսներ. *բովանդակություն.— Հատակում, Թշնամիներ, Վասսա Ժելեզնովա, Քաղքենիներ, Եգոր Բուլըչև և ուրիշները.— Թարգմ. Գ. Ավետյանի, Ա. Տեր-Հովհաննյանի, Տ. Հախումյանի, Պետհրատ, Երևան, 396 էջ։*

35. Արխիպ պապը և Լյոնկան.—*Թարգմ. Հ. Ավագյանի, Պետհրատ, Երևան, 39 էջ։*

36. Երեխաները.—*Թարգմ. Ա. Դերենցի, Պետհրատ, Երևան, 13 էջ։*

1938 թ.

37. Մայրը.—*Պետհրատ, Երևան, 380 էջ։*

1939 թ.

38. Երիտասարդության և երեխաների մասին.—*Թարգմ. Հ. Բուրշյանի, Երևան, 335 էջ։*

1940 թ.

39. Կլիմ Սամգինի կյանքը.—*երկրորդ մաս, Պետհրատ, Երևան, 747 էջ։*

40. Չարլի Մենը.—*Թարգմ. Ս. Սուքիասյանի, Պետհրատ, Երևան, 20 էջ։*

1941 թ.

41. Աղջիկն ու մահը.—*Թարգմ. Մ. Կորյունի, Պետհրատ, Երևան։*

1947 թ.

42. Մանկություն, Ծառայության մեջ, Իմ համալսարանները.—*Թարգմ. Արազու, Հայպետհրատ, Երևան։*

43. Պատմվածքներ.— *Բովանդակություն. 1. Բազեի երգը, 2. Մակար Չուդրա, 3. Պառավ Իզերգիլը, 4. Չելկաշ, 5. Փականքների գործը, 6. Փո՛-որրիկ, 7. Արխիպ պապը և Լյոնկան, 8. Երեխաները, 9. Պատմվածք հերոսների մասին.— Թարգմ. Մ. Արմենի, Մուշե վարդապետի, Ա. Դերենցի, Հայպետհրատ, Երևան։*

1948 թ.

44. Աղջիկն ու մահը.—*Հայպետհրատ, Երևան, 24 էջ։*

1949 թ.

45. Գրական-հրապարակախոսական հոդվածներ.— *Բովանդակություն. 1. Գրականության մասին, 2. Սկսնակ գրողների մասին, 3. Արձակի մասին, 4. Պիեսների մասին, 5. Գրականության և այլ բաների մասին, 6. Երեխաներին՝ գրականություն, 7. Ինչպես սովորեցի գրել, 8. Գրական տեխնիկայի մասին, 9. Իրականության մասին, 10. Սոցիալիստական ռեալիզմի մասին, 11. Գրական զվարճանքներ, 12. Պրոլետարական ատելություն, 13. Նոր մարդու մասին, 14. Ֆորմալիզմի մասին, 15. բացման խոսք սովետական գրողների Համամիութենական առաջին համագումարում 1934 թ. օգոստոսի 17-ին, Զեկուցում սովետական գրողների համագումարում 1934 թվի օգոստոսի 17-ին։ 1934 թ. օգոստոսի 22-ի ելույթը։ Եզրափակման ճառ 1934 թ. սեպտեմբերի 1-ին։ Մեր գրակա-*

նությունը աշխարհում ամենաազդեցիկ գրականությունն է։ Ո՞ւմ հետ եք դուք «կուլտուրայի վարպետներ»։ Դեղին դևի քաղաքը։ Ռեսպուբլիկայի արքաներից մեկը։ Պատասխան ամերիկյան ամսագրի հարցաթերթիկին։ Բարոյականության բույրը։ Ձանձրույթի թագավորությունը.— Թարգմ. Հ. Թուրշյանի, Հայպետհրատ, Երևան։

46. Երկերի ժողովածու տասը հատորով.— *Խմբագրությամբ Սիմակի, Արազու, Հ. Մկրտչյանի։ Հատոր առաջին. բովանդակություն.— Մաքսիմ Գորկի— պրոֆ. Ռ. Հովհաննիսյան.— Մակար Չուդրա, Եմելյան Պիլյայ, Արխիպ պապը և Լյոնկան, Չելկաշ, Պառավ Իզերգիլը, Լաստերի վրա, Ճարմանդների գործը, Մի անգամ աշնանը, Չարաճճին, Կոնովալովը, Ընկերներ, Տափաստանում, Բոլես, Ձանձրույթից, Խարդախը, Ջուխտակներ, Բազեի երգը, Աղջիկը և մահը, Խանը և իր որդին, Սոսախոս սարյակի և ճշմարտության սիրահար փայտփորիկի մասին, Բալլադ կոմսուհի Էլլեն դե Կուրսիի մասին, Մրրկահավի երգը.— Թարգմ. Ստ. Շահումյանի, Հ. Հարությունյանի, Հ. Մազմանյանի, Ա. Խնդկարյանի, Հայպետհրատ, Երևան, 462 էջ։*

1930 թ.

47. Երկերի ժողովածու— *Հատոր երկրորդ. բովանդակություն.— Ֆոմա Գորդեև, Երեքը.— Թարգմ. Հ. Հարությունյանի և Ս. Սուքիասյանի, Հայպետհրատ, Երևան, 762 էջ։*

48. Երկերի ժողովածու— *Հատոր չորրորդ. բովանդակություն— Պիեսներ.— Քաղքենիներ, Հատակում, Բարբարոսներ, Թշնամիներ, Եգոր Բուլըչև և ուրիշները, Վասսա Ժելեզնովա.— Թարգմ. Գ. Ավետյանի, Ա. Տեր-Հովհաննիսյանի, Տ. Հախումյանի, Հայպետհրատ, Երևան, 573 էջ։*

49. Երկերի ժողովածու—*Հատոր հինգերորդ. բովանդակություն.— Մայրը, Ամերիկայում—Դեղին դևի քաղաքը։ Ձանձրույթի թագավորություն, „MOB".ի ինտերվյուները, Ռեսպուբլիկայի արքաներից մեկը, Բարոյականության բույրը, Կյանքի տերերը, Ռուսաց թագավոր, Գեղեցիկ Ֆրանսիան.— Թարգմ. Հ. Թուրշյանի և ուրիշների, Հայպետհրատ, Երևան, 598 էջ։*

1951 թ.

50. Երկերի ժողովածու— *Հատոր երրորդ։ Բովանդակություն.— Իմ ուղեկիցը, Մխալը, Օրլով ամուսինները, Զազուբրինա, Նախկին մարդիկ, Մալվա, Կայեն և Արտյոմ, Կիրիլկա, Քսանվեց տղամարդ և մեկ աղջիկ, Մարդը, Ֆիլիպ Վասիլևիչի պատմածը, Բանտը, Բուկոեմով Կարպ Իվանովիչը, Զինվորները—Պարեկ, Ընկեր, Հունվարի 9-ը.— Թարգմ. Ա. Խոնդկարյան, Հայպետհրատ, Երևան։*

51. Երկերի ժողովածու— *Հատոր վեցերորդ։ Բովանդակություն.— Ավելորդ մարդու կյանքը, Ամառ, Օկուրով քաղաքը, Հայպետհրատ, Երևան, 584 էջ։*

52. Երկերի ժողովածու— *Հատոր ութերորդ։ Բովանդակություն.— Մանկություն, Ծառայության մեջ.— Թարգմ. Արազի, Հայպետհրատ, Երևան, 710 էջ։*

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Աբեղյան Հ.—208, 209
Աբով Գ.—263
Ադամյան Ս.—193
Ալելուև—27
Ալիխանյան Ի.—196, 203
Ադայան Ղ.—26, 29
Աճեմյան Վ.—204
Անդրեևա Մ.—164—167
Աշխույժ—255
Ասաֆև Բ.—167
Ավագյան Հ.—210, 264
Ավետիսյան Ա.—210—211
Ավետյան Գ.—192—193, 264, 266
Արաբիձե Վ.—64
Արագի Մ.—238—239, 261, 263—267
Արծրունի Գ.—20, 33, 38

Բալզակ—23
Բալմոնտ Կ.—113
Բայրոն Ջ.—23
Բաշինջաղյան Գ.—29
Բեգելյան Գ.—
Բելինսկի Վ.—180
Բերբերյան Մ.—78—80
Բլոկ Ա.—110, 127
Բորյան Գ.—250
Բրյուսովա Ի.—122
Բրյուսով Վ.—8, 28, 108—110, 115, 122—124, 127, 129
Բունին Ի.—109—110, 158

Գարշին Վ.—241
Գերբել Ն.—123
Գերցեն Ա.—7, 180
Գլազունով Ա.—8
Գյոթե—23
Գյուրջյան Հ.—160—162
Գոգոլ Ն.—25, 58, 180
Գորյաինով Ա.—49
Գրանովսկի Ա.—166—167
Գրիբոեդով Ա.—7
Գուլազյան Օ.—193
Գուլակյան Ա.—204
Դադեշկելիանի—66
Դերենց Ա.—264—265
Դեմիրճյան Դ.—198, 240
Դեսնիցկի Վ.—164

Դորժինսկի Մ.—164, 166—167
Դոբրոլյուբով Ն.—23
Դոստոևսկի Ֆ.—199—200
Դրագոմիրեցկի—260

Զախավա Բ.—205, 208
Զարյան Ն.—247
Զորյան Ս.—241—246, 263

Թադևոսյան Ե.—7
Թամանյան Ա.—162—170
Թումանյան Լ.—260
Թումանյան Հեն.—253
Թումանյան Հով.—8, 116, 128, 146, 154, 261
Թումանյան Ն.—115
Թուրշյան Հ.—264, 266

Ժան-Ժակ Ռուսո—132
Ժդանով Ա. Ա.—16

Իսահակյան Ա.—108, 128, 142—145, 154, 261
Իսահակյան Ս.—262

Լենին Վ. Ի.—9, 12, 48, 57, 60, 62, 64, 71, 81—83, 89—90, 95, 97, 139, 160, 174, 213, 250
Լերմոնտով Մ.—7, 33
Լիսիցյան Ս.—185—186
Լուժսկի Վ.—186
Լունաչարսկի Ա.—8, 82, 160, 234, 235

Խաչատրյան Ա.—230
Խոդասևիչ Վ.—164
Խոնդկարյան Ա.—226—267

Ծատուրյան Ա.—108, 117

Կալյուժնի Ա.—30, 32
Կամո (Տեր-Պետրոսյան Ս.)—63—72
Կաչալով Վ.—186
Կապանաձե Պ.—41
Կապուտիկյան Ս.—253
Կարա-Մուրզա Կ.—32
Կարա-Մուրզա Ն.—20, 31—32
Կարա-Մուրզա Ք.—26
Կարինյան Ա.—96, 98, 100
Կորյուն Մ.—265
Կոջոյան Հ.—171—174
Կրասին Լ.—64, 65

Հախումյան Տ.—150—154, 210, 264, 266
Հակոբյան Հ.—8, 93—94, 96, 154, 194, 196, 234—238, 261—262
Համբիկ—210
Հարությունյան Հ.—266
Հոմերոս—16
Հովհաննիսյան Ա.—263
Հովհաննիսյան Հ.—108
Հովհաննիսյան Ռ.—266
Հովհաննիսյան Տ.—74, 124
Հուրյան Թ.—251—252

Ղարանֆիլյան Գ.—174—177

Մագմանյան Հ.—266
Մամիկոնյան Ա.—193, 196
Մայսուրյան Օ.—193, 196
Մանվելյան Մ.—108
Մարլինսկի Ա.—7
Մելիքյան Վ.—193
Մելոյան Գ.—263
Մելքումյան Վ.—205
Միրզոյան Գ.—193, 196
Մկրտչյան Հ.—266
Մոլոտով Վ.—174, 176, 233
Մոսկվին Ի.—186
Մռավյան Ա.—96, 98—99, 243
Մուշե Վ.—262, 265

Յուրև Յու.—163—168

Նազարյան Տ.—75
Նալբանդյան Ռ.—174
Նալբանդյան Մ.—7
Նայդենով—180
Նար-Դոս—128, 147—149, 154, 261
Նեգլեր Վ.—167
Նեկրասով Ն.—23
Ներսիսյան Հ.—210

Շալյապին Ֆ.—159—160, 167
Շահազիզ Ս.—108
Շահումյան Ս.—71—72, 82—90, 92, 96, 98, 122
Շահումյան 186—191, 234, 262, 264, 266
Շանվերդյան Ա.—159
Շեքսպիր Վ.—23
Շիրվանզադե Ա.—8, 26, 108, 125, 128—142, 209—210, 244
Շոլց Ա.—187
Շչեդրին Ս.—23, 58
Շչերբակով Ա.—72, 95
Շչուկո Վ.—164
Շչուսև Ա.—169

Ոսկանյան Ա.—211

Չեխով Ա.—79, 153
Չերնիշևսկի Ն.—21—23, 180
Չիտաձե.—27, 29, 32
Չուկովսկի Ե.—126—127

Պավլով Ի.—163
Պատկանյան Ռ.—108
Պեշկովա Ե. Պ.—158, 162
Պետրոսյան Մ.—239
Պլիսանով Ն. Կ.—13, 42
Պյատնիցկի Կ.—102—103
Պոլենով Վ.—8
Պուշկին Ա.—7, 15, 33
Պրոկոֆև Ա.—120
Պրոկոֆև Ս.—167

Ջամբազյան Ջ.—262
Ջանիբեկյան Գ.—211

Ռեպին Ի.—163
Ռոմանով Բ.—167
Ռոլլան Ռ.—128, 230, 153
Սամվելյան Խ.—76—77
Սարյան Գ.—248
Սարյան Մ.—170—171

Սեմյոնովսկի Դ.—112, 114
Սեումյան—193—194
Սիմակ—263, 266
Սիրաս—247
Սկվորցով-Ստեպանով—82
Սունդուկյան Գ.—7, 108, 116—117, 119—120
Սունդուկյան Մ.—105—106
Սուքիասյան Ս.—265—266
Սպանդարյան Ս.—82, 95—96, 98, 234
Սպենդիարով Ա.—8, 146, 155—157, 159—160
Ստալին Ի. Վ.—9, 12, 41, 44—47, 57, 60, 62—64, 71, 81—82, 89, 95, 139, 174, 250
Ստալսկի Ս.—16
Ստանիսլավսկի Կ.—178, 186
Ստարցև Գ.—84—86
Ստենդալ—148
Ստեփանյան Հ.—262
Ստուրուա Վ.—27
Սուլխաշվիլի—239

Վահունի Ս.—251
Վաղարշյան Վ.—205—206, 208, 210—212
Վանչեր Մ.—193
Վարդանյան Ռ.—211, 205
Վարդանյան Ս.—20—22, 24—26
Վեսելովսկի Յու.—108—117, 158
Վերեսաև Վ.—104
Վիշնևսկի Ա.—186
Վորովսկի—82

Տալյան Վ.—29
Տեր-Հովհաննյան Ա.—211, 263—264, 266
Տերյան Վ.—108, 110—119, 121, 125, 127—128
Տիխոնով Ն.—112—113, 118—119
Տոլստոյ Լ.—33, 83, 95, 130, 241
Տոտոմյան—25
Տուրգենև Ի.—241

Րաֆֆի—26, 29, 108

Փափազյան Վ.—26, 29, 149—150, 200
Փոթեյան Վ.—263
Քալանթար Լ.—108, 111, 197
Քափանակյան Ս.—192
Քեչեկ—209

Օլմինսկի—82
Օստրովսկի Ա.—7
Օրբելի Ի.—127
Օրջոնիկիձե Ս.—71, 174

Ֆլերով Ն.—65
Ֆոմին Ա.—179—180

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հեղինակի կողմից 7

Ներածություն 9

Մ. Գորկին հայ ինտելիգենցիայի շրջանում 1891—1892 թթ 19

Մ. Գորկին և 1905 թվի դեպքերը Կովկասում . . . 44

Մ. Գորկին և Կամոն 63

Մ. Գորկին և բոլշևիկյան հայ գրական քննադատությունը 73

Մ. Գորկին «Հայ գրականության ժողովածու»-ի խմբագիր 102

Մ. Գորկին և նախառևոլյուցիոն հայ գրողները . . . 128

Մ. Գորկին և հայ արվեստը 155

Մ. Գորկին և հայ թատրոնը 178

Մ. Գորկին Սովետական Հայաստանում 213

Մ. Գորկին և սովետահայ գրողները 233

Հավելված

Մ. Գորկու երկերի հայերեն առանձին հրատարակությունները 257

Անվանացանկ 266

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
խմբագրական-Հրատարակչական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Է.Դ. ԹՈՓՉՅԱՆ
Կազմը, ֆորզացը և անվանաթերթերը
նկարիչ՝ Ռ. ԲԵԴՐՈՍՈՎԻ

Հրատ. խմբագիր Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիր Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ   Սրբագրիչ Մ. ՏՈՆՈՅԱՆ

ԽՀԽ № 94   ՎՖ 02573

Հանձնված է արտադրության 12/V 1951 թ.։ Ստորագրված է
տպագրության 6/VI 1951 թ., պատվեր 182, հրատ. 812,
տիրաժ 3000. տպագր. 17 մամ.+1 ներդիր։
Գինը 6 ռ. կազմը 4 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 124։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220026408

A II
26408